

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹ**

**XII**



Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճանի  
հիշարժակին



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

НАРОДНАЯ КУЛЬТУРА АРМЯН  
XII

МАТЕРИАЛЫ РЕСПУБЛИКАНСКОЙ НАУЧНОЙ  
СЕССИИ

ARMENIAN REPUBLIC NATIONAL ACADEMY  
OF SCIENCES  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ARMENIAN FOLK CULTURE  
XII

REPUBLICATION SCIENTIFIC CONFERENCE



Издательство "Мугни"  
ЕРЕВАН - YEREVAN, 2004

008 (479, 25) ✓

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ՅԱԿԱԴԻՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

XII

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՔԻ  
ՆՅՈՒԹԵՐ

A 11  
89863



«Մուղնի» հրապարակչություն  
ԵՐԵՎԱՆ - 2004

ՀՏԴ 008 (091)

ԳՄԴ 63.3 (23)

Հ 241

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

**Պատ. Խմբագիրներ՝ Ս.Բ. Նարությունյան  
Դ.Ս. Վարդունյան**

Отв.редакторы: *С.Б.Арутюнян  
Д.С.Вардумян*

Հ 241 ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XII, (Խմբ. Ս.Նարությունյան,  
Դ.Վարդունյան, Եր., «Մուղնի» հրատ., 2004, 186 էջ:

ISBN 99941-33-15-2

ԳՄԴ 63.3 (23)

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Մարգիս Դարությունյան  
ԴԱԻ

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ, ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆԽՈՆՉ ՆՎԻՐՅԱԼԸ**

Կյանքից վաղաժամ հեռացավ Յայ Եկեղեցու, գիտության ու մշակույթի բազմարդյուն երախտավոր Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Ծնվել է 1941-ի հունվարի 3-ին Բեյրութում (կնքանունը՝ Հրայր), աղանացի և բալուեցի ծնողների ընտանիքում: Նախակրթությունն ստացել է Բեյրութի Ս. Նշան մայր Եկեղեցու Ազգային վարժարանում: Վաղ տարիքում նույն Եկեղեցուն եղել է դպիր, հասունացել Եկեղեցական միջավայրում և մանկուց իսկ դրսնորել իր հակումները վանական կյանքի նկատմամբ: 1957-ին ընդունվել է Անթիլիասի Դպրեվանքը, որն ավարտել է 1961-ին: Այդ ընթացքում ծեռնադրվել է դպիր, սարկավագ, աբեղա, իսկ վարդապետական աստիճան է ստացել 1963-ին Խոնեն Ա կաթողիկոսի կողմից: Անթիլիասում վարել է Դպրեվանքի Վերահսկիչի պաշտոնը, դասավանդել ֆրանսերեն, պատմություն, բարոյագիտություն և այլ առարկաներ:

1962-ին մեկնել է Շվեյցարիա, հետևել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջեկեղեցական ուսման կենտրոնի դասընթացներին: 1963-ին անցել է ԱՄՆ, հետևել քահանայության համալսարանական հասուկ դասընթացներին: 1964-1970թթ. Անթիլիասում և Յալեպում եղել է ուսուցիչ, «Հասկ» ամսագրի խմբագիր, ճեմարանի դասախոս, Մարտիկյան ազգային վարժարանի տնօրեն և Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ:

1967-ին թեհրանի թեմի առաջնորդ, Արտակ արք. Մանուկյանի կողմից նրան շնորհվել է ծայրագույն վարդապետի աստի-

ճան: 1970-ին մեկնել է ԱՄՆ, Նյու Զերսիի Պրինստոնի աստվածաբանական համալսարանում ուսանել աստվածաբանություն, Եկեղեցական պատմություն և Ծխագիտություն: Այստեղ նա Ներսես Լամբրոնացու «Հռոմկլայի ճառք» ուսումնասիրության և քարգմանության համար ստանում է մագիստրոսի աստիճան: Նրան շնորհվում է նաև Երկրորդ մագիստրոսական տիտղոսը և հասնում համալսարանական դոկտորի աստիճանի, սակայն ստիպված թողնում է ուսումը և ստանձնում իրանի և Հնդկաստանի հայոց Եկեղեցական թեմի առաջնորդի պաշտոնը: 1973-ին մեկնում է Նոր Ջուղա, ուր ծավալում է Եկեղեցական ու մշակութային աշխույժ գործունեություն. կառուցում է Նահատակաց հուշարձանը, ստեղծում Երգչախումբ և զարկ տալիս մշակութային այլ ծերնարկումների: 1977-ին հրաժարվում է առաջնորդական պաշտոնից, վերադառնում Անթիլիաս, ուր և հրատարակում է «Դիվան Մեսրոպ Թաղիաղյան» կոթողային աշխատությունը:

1977-ի հոկտեմբերին, Մեսրոպ Աշճյանը Կիլիկիայի Գարեգին Բ արքուակից կաթողիկոսի կողմից ծերնարկվում է եպիսկոպոս և նույն տարվա վերջին ընտրվում է Հյուսիսային Ամերիկայի արևելյան շրջանի և Կանադայի թեմի առաջնորդ: Նորընծա եպիսկոպոսը՝ ստանձնելով այս խիստ պատասխանատու պաշտոնը, Հյուսիսային Ամերիկայում ու Կանադայում իրեն հատուկ աննկուն եռանդով ծավալում է բացառիկ արգասավոր գործունեություն: Նրա առաջնորդության տարիներին են հատկապես ծաղկում Կանադայի հայոց Եկեղեցիներն ու նրանց կից ուսումնակրթական հաստատությունները: Նա ինքն է օժում Մոնրեալի Ս.Յակոբ, Տորոնտոյի Ս.Աստվածածին, Վանկուվերի Ս.Գրիգոր, Քեմբրիջի Ս. Նշան Վարժարանները, որտեղ այժմ ավելի քան 2000 հայ աշակերտներ են իրենց հայեցի կրթությունն ստանում ամենօրյա, շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներում: Նրա օրոք են ծաղկում ապրում Նյու Յորքի Ս.Լուսավորիչ, Բու-

տոնի Ս.Ստեփանոս վարժարանները, օծվում Չիկագոյի Ամերիկա Սրբոց, Ուստրիի Ս. Երրորդություն Եկեղեցիները: Նրա ծեռքով են ծեռնադրվում բազմաթիվ քահանաներ ու վարդապետներ: Նրա գլխավորած առաջնորդարանը հրատարակում է հայերեն և անգլերեն լեզուներով 60-ից ավելի գրքեր՝ կրոնական և պատմական բովանդակությամբ: 1978-ից հիմնադրվում և սկսում է հրատարակվել «Առևրիչ» հայերեն-անգլերեն ամսաթերթը, կազմակերպվում են կրոնական և հայեցի դաստիարակության գրասենյակներ: Առաջնորդարանի շենքը Ենթարկվում է հիմնովին վերանորոգման, բացվում է «Ա.Ներսես Շնորհալի» նոր գրադարանը, հիմնվում գրավաճառատուն, Մեսրոպ Սրբազնի օրոք հաստատվում է առաջնորդարանի հիմնադրամը, որի միջոցներով մինչև օրս բազմաթիվ բարեգործական միջոցառումներ են անցկացվում: Լայն թափ ու ծավալ են ստանում ազգային մշակութային միջոցառումները, որոնցից հատկանշական է Մեծ Եղեռնի 70-ամյակի աննախադեպ հորեվանը 1985-ին, ավելի քան 800 վերապրոդների մասնակցությամբ: 1983-ին Մեսրոպ Սրբազնին Կիլիկիայի Գարեգին Բ կաթողիկոսի կողմից շնորհվում է արքեպիսկոպոսի պատվանուն:

Մեծ է և նշանակալից Մեսրոպ արքեպիսկոպոսի դերը թե հայ Եկեղեցու և թե Եկեղեցիների համաշխարհային միության (Եկումենիկ շարժման) ասպարեզներում: Նա Մեծի տանն Կիլիկիայի կաթողիկոսության կողմից իրեն ներկայացուցիչ քանից այցելել է Ս.Էջմիածին (1979, 1986, 1987թթ.), սերտ կապեր հաստատել Մայր աթոռի, հայրենի ժողովրդի և պետության ներկայացուցիչների հետ: Իսկ 1962-ից ի վեր գործնական մասնակցություն է ունեցել Եկեղեցիների Յամաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) աշխատանքներին. Եղել է Արևելյան ուղղափառ Եկեղեցիների պետերի հանձնախմբի անդամ, մասնակցել է ԵՀԽ-ի Վանկուվերի և Կամպերայի համաժողովներին, 1991-95թթ. Եղել է ԵՀԽ-ի Յավատք և կարգ հանձնախմբի անդամ. 1984-ին ար-

Ժամացել է Կարինթիայի ասպետական ընկերության հոգևոր խորհրդատուի «Սուրբ Գևորգ» մեջ շղթային:

Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հովվության տարիներին Մեսրոպ Սրբազնը տեղափոխվում է Հայաստան (1996թ.) և այդուհետև, սկսվում է նրա եռանդուն գործունեության հայաստանյան ժամանակաշրջանը, որի ականատեսն ու վկան ենք եղել բոլորս:

Մեսրոպ Սրբազնը Մայր Աթոռ Ս.Էջմիածնում, իրեն հատուկ ջանադրությամբ, մասնակցում է միաբանության աշխատանքներին և իր լայնախոհ ու ազգաշեն բնավորությամբ նայր հայրենիքում դաշնում է նորանոր նախաձեռնությունների հեղինակ: Այսպես. տակավին Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի թեմի առաջնորդ, նա Երևանում 1993թ. իմանում է «Մեծն Ներսես» բարեգործական իմանադրամը: Իսկ երբ 1996-ին Մայր Աթոռ Ս.Էջմիածնում ստանձնեց մերօրյա կրոնաազգային մեծագույն հոբելյանի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի գրասենյակի վարիչ-տնօրենի պաշտոնը՝ Մեսրոպ Սրբազնը անձնադիր նվիրումով լծվեց այդ հոբելյանը կազմակերպական բարձր մակարդակով իրագործելու աշխատանքներին, որոնց արդյունքները շուտով զգացնել տվեցին իրենց: Սակայն, երբ հոբելյանի կայացմանը մնում էր ընդամենը մեկ տարի, 2000թ. Մեսրոպ Սրբազնը թողնում է այդ պաշտոնը առողջության վատքարացման պատճառով: Ինչեւ, հոբելյանի հետագա հաջող իրականացմանը պարտական ենք նաև Աշճյան Սրբազնի նախապատրաստական լուրջ աշխատանքներին (բազմաթիվ հոբելյանական գրքերի հրատարակություններ, տարբեր բնույթի ու մակարդակի գիտաժողովների գումարումներ, քարոզչական տարբեր միջոցառումներ), որոնց բուն նպատակն էր հոբելյանը դարձնել ոչ թե զուտ կրոնական, այլ համազգային ու համաժողովրդական:

Մեսրոպ արքեպիսկոպոսի եռանդուն ջանքերով և նյութական աջակցությամբ վերանորոգվեց Մուղնու Սուրբ Գևորգ վանքը, 2001-ին Երևանում հիմնադրվեց «Մուղնի» հրատարակչությունը, նրա անձնական ղեկավարությամբ և Հայաստանի մտավորականության տարբեր խավերի ներկայացուցիչների մասնակցությամբ երկու անգամ ուխտագնացություն կազմակերպվեց Արևմտահայաստանի տարբեր գավառներ, որտեղ նրանք այցելեցին հայ պատմամշակութային հուշարձանները, ականատես եղան հայկական նախկին բնակավայրերի ներկայիս տիսուր վիճակին: Հայաստանի մերօրյա մտավորականության համար այս ուխտագնացությունները բացառիկ իրադարձություններ էին, որոնք հնարավորություն ընձեռեցին ծանոթանալու և ճանաչելու իրենց կորսված հայրենիքի արդի հրավիճակը:

Բայց Մեսրոպ Սրբազնի հայաստանյան գործունեության տարիները հատկանշվեցին հայ գիտությանն ու մշակույթին մատուցած այնպիսի ծառայություններով, որոնք անջնջելի կմնան ներկայիս ու գալիք սերունդների հիշողության մեջ:

Այն տարիներին, երբ Հայաստանում գրահրատարակչական գործը գրեթե բարձիթողի էր արված, իսպառ կամ մասամբ գրկված էր պետական հովանավորությունից, Մեսրոպ Սրբազնի եռանդուն ջանքերի ու հոգածության շնորհիվ Հայաստանում հրատարակվեց ավելի քան 200 անուն գիրք՝ նվիրված հայոց եկեղեցու և հայագիտության բազմապիսի խնդիրների: Նրա նշանաբաններից մեկն այն էր, որ տարեց հայագետները, ովքեր ունեն պատրաստի աշխատություններ, գոնե իրենց աշխատանքների արդյունքները տեսնեն հրատարակված իրենց կենդանության օրոք: Այս նպատակն իրագործելու համար նա ջանք ու եռանդ չեր խնայում, մի ոտքը Հայաստանում, մի ոտքը արտասահմանյան մշտական երթևեկությունների մեջ, նա պարբերաբար, արտերկրի տարբեր բարեգործներից ու կազ-

մակերպություններից նյութական միջոցներ էր հայքայքում Հայաստանում գրքեր հրատարակելու և գիտամշակութային այլն-այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Նա մի առանձնակի ջերմ ու հոգեկցական հարաբերությամբ էր կապված Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ, անշուշտ, քաջ գիտակցելով հնագիտության և ժողովրդագիտության տեղն ու արժեքը ազգային մշակույթի պահպանման, ճանաչման և հետազոտման ասպարեզներում: Լինելով բարձրաստիճան հոգևորական գործիչ և հայ կրոնաեկեղեցական մշակույթի նորօրյա հետազոտող՝ նրա գիտական նախասիրություններն ամենից առաջ կապված էին կրոնաժողովրդական տոնների և ծիսակատարությունների, հայոց սրբերի ու սրբավայրերի, որանց հնօրյա ազգային ակունքների ուսումնասիրության հետ

Եվ բնավ պատահական չէ, որ նա հենվելով հայ հնագետների, ազգագրագետների, բանագետների, արվեստագետ-պարագետների գիտական ներուժի վրա, իր նյութական հովանավորությամբ և ակտիվ մասնակցությամբ մեր ինստիտուտի շրջանակներում կազմակերպեց հինգ գիտական նատաշրջան՝ նվիրված հայոց սրբերի և սրբավայրերի, Կարոս խաչ վիպերգի, Սուրբ Սարգսի, Թուիս Մանուկ սրբերի, նրանց սրբավայրերի, պաշտամունքի, ինչպես նաև հայոց ծիսական պարերի բազմակողմանի ուսումնասիրությանը, միաժամանակ առանձին գրքերով իրականացնելով այդ բոլոր նստաշրջանների գեկուցումների հրատարակությունը:

Հարկ է առանձանակի նշել, որ հիշյալ նստաշրջաններն ու դրանց նյութերի հրատարակությունները բացառիկ երևույթներ էին Հայաստանի գիտամշակութային կյանքում, քանզի խորհրդային աստվածամերժության տարիներից ի վեր մեզանում իսպառ դուրս էր մղված կրոնաեկեղեցական թեմաների, մանավանդ ազգային սրբերի ու սրբությունների գիտական հետազո-

տությունը: Յանգուցյալ Սրբազնը եռանդով նախապատրաստվում էր, դարձյալ մեր ինստիտուտի շրջանակներում, իրագործել մեր ազգային մեծագույն սրբի՝ սուրբ Կարապետին նըվիրված գիտական նստաշրջանի գումարումը, որը, ցավոք, ընդհատվեց նրա վերահաս մահվան պատճառով:

Մեր ինստիտուտի գիտահետազոտական արդյունքների նկատմամբ Աշխան Սրբազնի ցուցաբերած հաջորդ մեծագործությունը՝ գիտական աշխատությունների հրատարակությունն է: Նրա հոգածությամբ և հայթայթած նյութական միջոցներով հնարավոր եղավ մեր ինստիտուտի կողմից իրականացնել 14 անուն գրքերի ու մենագրությունների հրատարակությունը: Դրանցից են «Յայ ժողովրդական հեքիաթների» հերթական 13 և 14-րդ հատորները, «Դիվան հայ վիմագրության» 7 և 8-րդ պրակները, Քաջբերունու «ճանապարհորդական նկատողություններ» և Ռաֆայել Վարդանյանի «Յայոց տոնացույցը» մեծածավալ աշխատությունները, Ս.Յարությունյանի «Յին հայոց հավատալիքները» և Սվետլանա Վարդանյանի «Միքայել Սիանսարյանց» մենագրությունները. դրանց թվում են նաև արդեն վերը հիշատակված գիտական նստաշրջանների հինգ ժողովածուները և «Յայոց հնագույն մշակույթ - 3» գիտաժողովի նյութերը: Յանգուցյալ Սրբազնը խոստացել էր նաև հրատարակել իմ «Յայ հմայական և ժողովրդական աղոթքներ» մեծածավալ աշխատությունը, բայց աշխատանքների ծգձգման պատճառով այդ խոստումը մնաց չիրագործված:

Այս է գերիհամառոտ գծերով գերաշնորհ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշխանի կարծատև, բայց հարուստ կյանքի և բազմարդյուն գործի մոտավոր պատկերը, որն ինքնին խորին երախտագիտություն, հարգանք և պատկառանք է ներշնչում:

Մեսրոպ արքեպիսկոպոսը հայ Եկեղեցու, հայագիտության և հայ մշակույթի նկատմամբ ինքնամոռաց նվիրումով, հեռահար նպատակադրմամբ, լայնախոհ հայացքով ու մտահորի-

զոնով արմատապես տարբերվում էր ներկայիս (նաև անցյալի) հայ բարձրաստիճան եկեղեցական գործիչներից: Նրա կյանքի ողջ նպատակը համայն հայության հոգևոր վերանորոգումն ու վերածնունդն էր, առանց հատվածային խորականության և եկեղեցիների տարբերության: Օժտված լինելով արինքնող մեղմ ու հեղաքարո բնավորությամբ, միաժամանակ հոգեկան աննկուն կորովով, նա իր անշահախնդիր ազգաշեն գործունեությամբ ու անծնադիր նվիրումով շատ կարծ ժամանակամիջոցում նվաճեց Յայաստանի գիտական մտավորականության անկեղծ սերն ու հարգանքը: Դրա վառ ապացույցներից մեկը եղավ նրան Յայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտորի աստիճան շնորհելը: Մեծ, ազգանվեր քաղաքացու անհանգիստ հոգով էր օժտված հանգուցյալ Սրբազնը, որի գործունեության սահմանները վաղուց էին դուրս եկել եկեղեցու անձուկ շրջանակներից և նվաճել համազգային հորիզոններ: Եվ այս իմաստով նա շատ էր նմանվում իր մեծ անվանակցին՝ Մեսրոպ Մաշտոցին և նրա գործի հեռահար նպատակներին:

**ԵՎ ԹՈՂ ԵՐԻԳՍ ՕՐԻՄՅԱԼ ԼԻՄԻ ՀՈԳԵԼՈՒՍ ԱՉԾՅԱՆ ՍՐԲԱԶՆԻ ԱՆՄԱԿ ԻԻՇԱՏԱԿՐԸ:**

## ՀԱՌՈՒ ԱՐՐԱՀԱՄՅԱԲ ԴԱՒ

### ԲԱՎԻԴ-ԼԱԲԻՐԻՆԹՈՍ. ԱՐՏԱՎԱԶԴՅԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ ԿՈՎԿԱՍ-ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ԴԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է լեռան գագաթին գամված հերոսի առասպելաբանական սյուժեի համադրումը լաբիրինթոսի ոչ սակավ հայտնի սյուժեի հետ: Դամադրումը նախնական է, ընդհանուր բնույթ է կրում և չի հավակնում այդ երկու սյուժեների միջև ստույգ ծագումնաբանական կապեր հաստատելուն, չնայած դրանք սկզբունքորեն կարող են վերաբերվել մեկ ընդհանուր, այն է նախակովկասյան հնամենի էթնոմշակութային իրողությանը, որը, ըստ ժամանակակից լեզվաբանների, գոնե լեզվային առումով բուն Կովկասի տարածքից շատ ավելի ընդարձակ էր ներկայացված: Այստեղ մեզ առավել հետաքրքրում է խորքային ինաստաբանական կապը այդ երկու առաջին հայացքից տարբեր սյուժեների միջև: Եթե հաշվի առնենք Վ.Ն.Տոպորովի կողմից ուրվագծած ստուգաբանական ուսումնասիրությունների պատմության տարբեր փուլերը,<sup>1</sup> ապա սույն ուսումնասիրությունը կարելի է բնութագրել որպես ինաստաբանական առասպելաբանություն:

Լեռան (ժայռի) վրա կամ քարայրում (ժայռում) շղթայված (փականքի տակ դրած) հերոսին վերաբերող սյուժեների տարբերակների ողջ համալիրի վերլուծությունը<sup>2</sup> հնարավորություն է ընձեռում եզրակացնել, որ դրանցից գրեթե բոլորն այս կամ այն կերպ ակնարկում են հերոսին պատճելու պատճառ հանդիսացող մ ե ղ ք ի թեման: Եթե հաշվի չառնենք առասպելի բարոյախոսական, ըստ երևույթին, ուշ

<sup>1</sup> Топоров В.Н. Из индоевропейской этимологии. V (1). – Этимология. 1991-1993. М., 1994, էջ 126-131:

<sup>2</sup> Բուն սյուժեները և դրանց համակողմանի քննարկումը տես. Դարրուրյունյան Ս. Յայ առասպելաբանություն [Բեյրութ, 2000], էջ 447-463; Կոկօսնի Մ.Յ. Հարոնական գրականության պատճենները՝ պատճառ հանդիսացող մ ե ղ ք ի թեման: Եթե հաշվի չառնենք առասպելի բարոյախոսական, ըստ երևույթին, ուշ

մեկնաբանությունները,<sup>3</sup> ապա այդ մեղքն աստծո (հոր) հետ մրցակցությունն է: Նման մեղք են գործում հայկական արքայազն Արտավագդը, արխազական Աբրսկիլը, օսական Արտավըզը, վրացական Ամիրանին, հունական Պլոմեթևսը, հայկական Փոքր Միերը: Լեռան վրա գամված հերոսների շարքին կարելի է դասել նաև Քրիստոսին, որը խաչին գամվեց Գողգոթա լեռան վրա: Խաչելության հիմքում տեղադրվող պատկերագրական լեռն ավելի է մոտեցնում ավետարանական սյուժեն այստեղ դիտարկվողին. քան թե իրական բնապատկերի համապատասխանելը / չիամապատասխանելն առասպելաբանականին: Քրիստոսն իր վրա է վերցնում ոչ միայն մարդկության մեղքերը, այլև մարդկանց նախաձնողների առաջին մեղքը՝ Աստծուն չինազանդվելը (հմնտ. մրցակցությունն աստծո/ հոր հետ): Արտավագդի սյուժեի և ավետարանական խաչելության հետ հետաքրքրաշարժ չգիտակցված կապ վերջերս ստեղծել է մանրանկարիչ Լիլիթ Ամիրջանյանը. Գողգոթայի ստորոտում նա տեղադրել է Մասիս/Արարատի ուրվագիծը: Փոքր Միերի (ում անունն ու կերպարը մատնանշում են ծագումնաբանական կապը Միթրա / Միհրի հետ) սյուժեի մի տարբերակում նա գամված է ժայռին, ինչն այս կտրվածքով և աղերսում է ավանդորեն համադրվող Միթրայի և Քրիստոսի կերպարները:

Սակայն դիտարկվող սյուժեների մեղքի թեման նույնպես կարող է բավականաչափ ուշ ծևափոխություն լինել: Կարելի է բացահայտել, ըստ երևույթին, ավելի վաղնջական մոտիվ՝ պատմված հերոսի սկզբից ի վեր. ծագումնաբանական «մեղսականությունը»/վնասարարությունը: Իզուր չէ, որ նրանցից ոմանք կկործանեն աշխարհը, եթե ազատ արձակվեն: Այդպիսին են, օրինակ՝ հայկական Արտավագդը և Փոքր Միերը (որոշ տարբերակներում), օսական Արտավըզը, իրանական Զոհակը, որը սկիզբ է առնում վիշապ Աժի Դահակայից (Մովսես Խորենացու շարադրանքով՝ Բիլրասպի Աժդահակ) և նրա նման շղթայվում ու կախվում է մի լեռան իրարիսի խառնարանում:

Աստվածամարտի մոտիվները ենթադրում են գլխավոր/միակ աստվածության արդեն հաստատված գերագույն դիրքը, իսկ հիմնական առասպելի (Վ.Վ.Իվանով, Վ.Ն.Տոպորով) համատեքստում՝ այդ առասպելի ընտանեկան կառուցվածքը (որդու՝ հոր նկատմամբ գոր-

<sup>3</sup> Դիտարկվող առասպելների կատարածաբանական բնույթը և դրանց կապն աստվածային փորչի գաղափարի հետ քննարկվում են Ս.Հարությունյանի նշված գրքում, էջ 463-478:

ծած մեղքը), մինչդեռ ի սկզբանե վնասարարության մոտիվը, ըստ Երևույթին, սկզբ է առնում ավելի վաղնջական Երկվորյակային առասպելույթից, այն է՝ նրա օճային ցուցչից (Երկվորյակներից մեկը վիշապային բնույթ ունի):<sup>4</sup> Աստվածաբանական առումով այս մոտեցումները կարելի է համարել համապատասխանաբար միաստվածության և կրոնական դուալիզմի (Երկվորյան) հետ:

Արտավագոյան առասպելն ուշագրավ է այն բանով, որ համատեղում է գամված հերոսի սյուժեի երկու առումը՝ հայրամարտությունը և ի սկզբանե վիշապայնությունը: Մ.Խորենացին բերում է, ի լրումն իոր անեօթին արժանացած Արտավագոյի պատմությանը, նաև Երգիշների ասած՝ իր չվստահած մի տարբերակ, համաձայն որի Վիշապագունք (իմա՝ Աժդահակի սերունդները) գողացել էին մանուկ Արտավագոյին և փոխանակել դևով (II.ԿԱ): Այստեղից էլ, առասպելի տրամաբանությանը, նրա վիշապայնությունը՝ հիշենք. որ Աժի Դահակա նշանակում է «Վիշապ Դահակա»: Սկզբնական մեղսականությունը, վիշապայնությունը առկա է նաև Փոքր Միերի կերպարի հերոսական-քարոյախոսական շերտերի տակ. նրան գետինը չի պահում (հմնտ. մեղքի և ծանրաքաշության կայուն կապի հետ), ժայռից դուրս գալն էլ անուղղակի ծնով (երբեմն էլ՝ ուղղակիորեն) կապված է աշխարհի կործաննան հետ՝ նոր, լավ աշխարհ հաստատվելուց առաջ հինը պետք է կործան ու առ ն վ ի (հմնտ. Քրիստոսի Երկրորդ գալստյանը գուգաղիացված աշխարհի վերջը. ընդ որում, մինչ այդ Քրիստոսն «ազատագրվում է» խաչելության բևեռներից և, ապա՝ գերեզման-քարայրից): Զոհակի վիշապային բնույթի վառ հատկանիշ է (Աժի Դահակայի հետ ծագումնաբանական կապից զատ) իր թագավորման ժամկետի ոչ լրիվ թիվը՝ օրապակասությունը: Արխազական Աբրսկիլը կուրանում է քարանձավից դուրս գալու պահին հմնտ. արևի կողմից վիշապին այրելը վրացական և հայկական առասպելներում, ընդորում, «հայկա-

<sup>4</sup> *Լ.Ա.Աճրամյան, Ա.Գ. Դեմիրխանյան*, Միֆոլոգемա բлизнецов и мировое дерево. – Պատմա-քանասիրական հանդես (այսու՝ ՊԲՀ), 1985, № 4, էջ 66-84: Ուշագրավ է, որ վրացական գազանների տիրուհու կործանած որսորդի առասպելաբանական շարքում (որոն աղերսվում է Երկվորյակային առասպելույթի տարասեռ Երկվորյակների տիպին) հերոսն իր վերջն է գտնում ժայռի վրա/տակ (տես Ե.Բ. Վիրշալաձե, Грузинский охотничий миф и поэзия. М., 1976, էջ 115, 119):

կան» վիշապին այրում են, որպեսզի նրա տարիքը չհասնի կլոր թվի<sup>5</sup>: Վերջապես, իմաստ ունի հիշատակել նաև Պրոմեթեսի խթոնիկ ծագումը (նա տիտան Յապետոսի որդին է), չնայած այն բանին, որ նա փաստորեն արդեն անցում է արել մեկ ուրիշ՝ մշակութային հերոսի վարքերի ժանրը: Բնորոշ է, որ նրա ազատվելը շղթաներից ոչ մի կերպ չի անդրադառնում աշխարհի անվտանգության վրա:

Այսպիսով, քարայրում, ժայռում կամ ժայռին գանված հերոսն ի սկզբանե «վատն» է: Առաջին հայացքից, դրան հակասում է բիայնական խալդի աստվածը, որն ապրում է նույն ժայռում, ուր հայկական եպոսը տեղադրում է Փոքր Սիերին: Յամենատենք նաև միջագետքյան աստվածների հետ, որոնք ապրում էին լեռների խորհրդանիշ գիկուրատներում:<sup>6</sup> Սակայն հավանական է, որ վախը քարայրի/ լեռան տիրոջ հանդեպ ավելի վաղընջական է, քան թե նրա երկրագույն ազգությունը, կամ գոնե այդ երկու վերաբերմունքները զուգահեռ են (հմմտ. համատեղ վախն ու սերը հանդեպ հորը/ թագավորին):

Այստեղ մեզ առանձնապես հետաքրքրում է վնասաբեր՝ աշխարհի համար վտանգավոր եակի բանտարկության/բնակման վայրը՝ քարայրը: Դիտարկվող առասպելի համատեքստում այն մոտենում է լաբիրինթոսատիա ապաստարանի, որի իմաստն ավելի լավ է արտահայտում քարանձավային երանգով համենված հայերեն բավիղ քառը,<sup>7</sup> իսկ պատկերագրորեն՝ մեկ մուտք ունեցող «բնական» քարանձավային տիպի լաբիրինթոսները, որոնց լավագույն արտահայտությունը երկի թե կարելի է համարել Վալկամոնիկայի հայտնի ժայռապատկերը, որտեղ ներկա է նաև քարայր-քավիղի «տերը» կենտրոնում բնակվող վիշապը (նկ.1): Լաբիրինթոսի մյուս՝ «մշակութային» տեսակը (մեկ կամ մի քանի մուտք-ելքով) տիպաբանորեն ավելի մոտ է կրետական լաբիրինթոսին, որը կառուցել էր Դեղալոսը դրա բնակիչ-

<sup>5</sup> Հերոսի՝ կլոր, և հակահերոսի՝ ոչ լրիվ թվերի մասին տես. *Այրառելիք Վ. Толкуя слово: Опыт герменевтики по-русски.* М., 2001, 6123; *Աբրամյան Լ., Այրառելիք Վ., Առաքելյան Գ., Գյուլյան Ա.* Разговор о круглых и абсолютных числах. Եր., 1981-1984 (ձեռագիր):

<sup>6</sup> Stev Petrosyan H. The Sacred Mountain. – Armenian Folk Arts, Culture, and Identity. Bloomington and Indianapolis, 2001, էջ 33: Այստեղ չենք անդրադառնում լեռան/ժայռի/քարի (մեկ ուրիշ տարբերակ՝ անտառի) բոլոր տերերին /պահապահներին/ծնունդներին:

<sup>7</sup> Աճառյան Ջր., Յայերեն արմատական բառարան, հԱ, Եր., 1971, էջ 433. Զահուկյան Գ., Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1991, № 2, էջ 36-37:

բանտարկյալ Մինոտավրոսի համար, և որի միակ նպատակն էր իրեցին թույլ չտալ դուրս գալ այնտեղից: Լաբիրինթոս մուտք գործելու հետ կապված է մեկ ուրիշ համապարփակ ծխառասպելաբանական սյուժեն, որը վերաբերում է նվիրագործական թեմատիկային: Մենք արդեն առիթ ենք ունեցել անդրադառնալ այդ բավիղ/ լաբիրինթոսի հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող թեմային:<sup>8</sup> Շղբայված հերոսի սյուժեի համատեքստում վառ արտահայտված նվիրագործական երանգ ունի Ամիրանիի (մեկ ուրիշ՝ անվաճր և հատկություններով Միթրայական հերոսի) առասպելի մի տարբերակը, որը պատմում է հերոսին վիշապի փորում հայտնվելու և այնտեղից դուրս գալու մասին:

Գանված / Վնասագերծված խթոնիկ հերոսի մասին սյուժեների կովկաս-առաջավորասիական շաղկապումը, որը պայմանականորեն կարելի է անվանել բավիղա-լաբիրինթոսային, թույլ է տալիս նորովի գնահատելու ամբողջ քարայրա-լաբիրինթոսային համալիրը նախակովկասյան լայն իմաստով՝ բուն կովկասյան քարայրա-բավիղային սյուժեներից՝ մինչև կրետական և էտրուսկյան լաբիրինթոսները: Այդ առօւմով հատուկ հետաքրքրություն կարող է ներկայացնել վստահելի ստուգաբանություններ դեռ չունեցող այդ երկու անվանումների հմաստաբանական հետազոտությունը: Այսպես, նոր իմաստներով՝ լցվում ոչ գիտական (Ք.Աճառյանի և Գ.Զահորեկյանի գնահատմամբ) բավիղ բարի ստուգաբանական կապը Բաբելոն տեղանվան հետ:<sup>9</sup> Մյուս կողմից, անսպասելի լաբիրինթոսային մեկնաբանություն կարող են ստանալ Հայաստանի տարածքից հայտնաբերված բրոնզեդարյան նմուշները. լաբիրինթոսատիպ պատկերները կենտրոնում ցուլի գլ-

<sup>8</sup> Տես Արրահանյան Լ.. Բավիղի ծխառասպելաբանական ակունքները. – Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին (գեկուցումների հիմնադրույթներ), Եր., 1995, էջ 3-4:

<sup>9</sup> Երախտապարտ եմ Արծրունի Սահակյանին այդ կապը ցուցելու և ըննարկելու համար: Նման Բաբելոնի կայուն կապը լաբիրինթոսի հետ ինչպես ինը (տես Մեցերսկая Ե.Н. Դեյնիա Խудի Փոմы. Մ., 1990, էջ 170 և 209-210. ծանոթագր. 256), այնպես էլ նոր գրականության մեջ (տես Խ.Լ.Բորիխնի «Երկու թագավորները և նրանց երկու լաբիրինթոսները» պատմվածքը) և, հնարավոր է, նաև պատմական իրողության մեջ (տես Böhl F.M.Th. Zum Babylonischen Ursprung des Labyrinths. – Miscellanea Orientalia, Roma, 1935, S.6-23):

խով<sup>10</sup> (նկ.2) (հմմտ. Մինոտավրոսի հետ), նաև Երկսայր սակրի լաբիրինթոսին անուն հաղորդած լաքրիսի համակերպների սխեմատիկ պատկերները գալարազարդերի (լաբիրինթոսի հնարավոր խորհրդանիշի) գուգակցությամբ:<sup>11</sup>

Նկ. 1

Ժայռապատկեր  
Վալկամոնիկայից  
(Իտալիա)

Նկ. 2

Անհայտ նշանակությամբ բրոնզե  
առարկայի դետալ,  
մ.թ.ա. IX-Xդդ. (Սևանի ավազան)



<sup>10</sup> Երախտագիտություն եմ հայտնում Դամկետ Պետրոսյանին ուշադրությունս այդ հանգամանքին հրավիրելու համար:

<sup>11</sup> Սույն համադրման համար պարտական եմ Պավել Ավետիսյանին.

## Հիւյա Ավանեսյան ԴՊԹ

### ՕԺԻՏԻ ԳՈՐԳԵՐԻ ՈՒ ԿԱՐՊԵՏՆԵՐԻ ԱՐԱԿԱՆ ԵՎ ԻԳԱԿԱՆ ՍԿԻԶԲ ԽՈՐՅՈՂԱՆՇՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Յայոց մեջ հնուց ավանդույթ է եղել օժիտի համար հետաքրքիր գունագեղ պատկերներով գորգեր ու կարպետներ գործելը: Դրանց պատկերներն ունեցել են ինաստավորված հորինվածք ու զարդաձևեր և կոչված են եղել ոչ միայն զարդարելու նորապսակների անկյունը, այլև, որպես պահպանակ պաշտպանելու իրենց ու նրանց սերունդներին:

Օժիտի գորգերի ու կարպետների զարդաձևերի բազմազանությունը և դրանց ինաստարանական հագեցվածությունը, թույլ չեն տալիս սույն հոդվածում անդրադառնալ բոլոր պատկերների վերլուծությանը:<sup>1</sup>

Մեր ուշադրության կենտրոնում տվյալ դեպքում արական և իգական սկիզբ խորհրդանշող պատկերների ուսումնասիրությունն է. դրանք վերցված են Արցախի, Սիսիանի, Ուտիք-Տավուշի գորգագործ ու կարպետահյուս նմուշներից, որոնց հինգի վրա կամ եռաժամու պատկերներ. մի քանիսի վրա եռաժամին պատկերված է հորիզոնական դիրքով, երիտասարդ այրերի ոտքերի տակ կամ էլ կողքին: Տավուշի XIXդ. ջեջիմի վրա այն հանդես է գալիս առանձին ուղղահայաց գոտիների մեջ՝ արական հատկանիշով մարդակերպ պատկերների հետ: Սիսիանի XIXդ. № 11467՝ գորգի դրվագներից մեկում ջրային թռչունը (հավանաբար՝ ծկնկուլ) պատկերված է եռաժամու վրա, որից վար կա ոճավորված օճապատկեր: Ուշագրավ է, որ երեք պատկերն էլ կապված են ջրի պաշտամունքի հետ: Այունիքի ժայռապատկերներից մեկի վրա, եռաժամու կողքին կա այծի պատկեր, որից ներքև գույգ

<sup>1</sup> Յարսանեկան ծեսի խորհրդանշ-պատկերների մանրակրկիտ վերլուծությունը տես. *Աստղիկ Խորյայելյան, Օժիտի արցախյան մի կարպետ.- Յանդես ամսօրեայ, Վիեննա, 1997, էջ 461-488:*

<sup>2</sup> Յամարակալված նմուշները ԴՊԹ-ի հավաքածուից են:

օձերը պահպանում են ձվերով բույնը (գծանկար 1): Զրային թռչունը, այծը, օձը, եռաժանին ջրի և ջրային տարերքի խորհրդանշներ են և պտղաբերություն են իմաստավորում: Եռաժանու պատկերը հայտնի է հին աշխարհի մի շարք աստվածությունների՝ Թեշուրի, Պոսեյդոն-Նեպտունի, Շիվայի պատկերաքանդակներից: Թել-Ախմարում (Սիրիա) գտնված սյան վրա Թեշուրը (ռազմի, երկնային տարերքի, կայծակի, ամպրոպի աստվածություն) ծախս ծեռքին ունի եռաժանի, աջին՝ սակր, գոտկատեղին՝ դաշույն:<sup>2</sup> Հունա-հռոմեական Պոսեյդոն-Նեպտուն ջրային աստվածությունը անպայման եռաժանինը է:<sup>3</sup> Հինդուիստական արարող ու կործանող հզոր Շիվա աստվածությունը նույնպես եռաժանի ունի: Շիվայի հայտնի մակդիրներից է Գանգադիսարա՝ «Գանգեսը տանող» մականունը:<sup>4</sup>

Հայաստանի դամբարանների պեղումներից նույնպես հայտնաբերվել են եռաժանի և երկժանիներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. XIII-Խոդ:<sup>5</sup> Ե.Լալայանի կարծիքով, Պատաշարից և Արիամանից հայտնաբերված երկժանիները քրնական ցուպեր են, «իբրև երկրագործական նշանակ»:<sup>6</sup>

Եռաժանին (ինչպես և երկժանին) համարվել է նաև գենքի տեսակ և միշտ հանդիս է եկել այրերի կամ էլ մարտական հատկություններ ունեցող կերպարների հետ:<sup>7</sup> Վերստին նշենք, որ եռաժանին արական սկիզբ և պտղաբերություն է խորհրդանշում: Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկի վրա, կենաց ծառերի, թռչունի, այծի կողքին կա երկիրն արգասապորող աստվածության պատկեր (գծանկար 2), որի ընդգծված առնականությունը եռաժանու ձև ունի:

Ժամանակի ընթացքում վերանում են առասպելական աստվածությունների պաշտամունքները, բայց նրանց կերպարներին ուղեկ-

<sup>2</sup> А.Мартirosyan, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, с. 105.

<sup>3</sup> А.Лосев, Посейдон, Мифы народов мира (այսու՝ МНМ), М., 1992, т. 2, с. 323-324.

<sup>4</sup> П.Гринцер, Шива, МНМ, М., 1992, т. 2, с. 644. В.Бауэр, Энциклопедия символов, М., 1998, с. 33, 61.

<sup>5</sup> А.Мартirosyan, նշվ. աշխ., տախտ. XXXV:

<sup>6</sup> Ե.Լալայան, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 170-171:

<sup>7</sup> В.Афанасьев, Иштар, МНМ, М., 1991, с. 595. А.Эванс, Критское линейное письмо, Вестник древней истории, М., 1939, с. 33.

ցող հատկանիշները՝ նույն իմաստաբանական նշանակությամբ, շառունակում են պատկերվել և մեր օրերում: XIX-XXդդ. գորգերի ու կարպետների վրա եռաժամին դարձյալ հանդես է գալիս որպես այր մարդու ուժի և պտղաբերության խորհրդանիշ: «Եռաժամի» զարդածեր՝ արական ուժի խորհրդանշը, գործվածքի հորինվածքում չի անջատվում իգական սկիզբ խորհրդանշող պատկերներից: Պտղաբերության գաղափարը կրող հակադիր ուժերի՝ տղամարդու և կնոջ խորհրդանշական պատկերների օգտագործումը նույն հորինվածքում, ամբողջացնում է արարման գործընթացի նկարագիրը:

Իգական սկիզբ խորհրդանշող երկրաչափական զարդածերի մեջ ամենատարածվածը շեղանկյունածև պատկերներն են: Ընդգծված լայն որովայնով, դեպի բևեռները նեղացող իրանով վաղ արձանիկներն ունեն շեղանկյան ուրվագիծ:<sup>8</sup> Օժիտի կարպետների ու գորգերի մեղալիոնների հիմնական մասը շեղանկյունածև է, հիմնադաշտը նույնական զարդարում են շեղանկյուն զարդածերը: Հատկապես շատ են շեղանկյունները կնակերպ աղաքանների վրա: Աղաքանների զարդածերը միայն դիմային մասում են, որտեղ ենթադրյալ կնոջ որովայնն է գտնվում: Օժիտի գորգագործ առարկաների զարդանախշերի մեջ առանձնահատուկ են ծառերի պատկերները, որոնք պտղաբերություն, լիություն, կին են խորհրդանշում:<sup>9</sup>

Արցախյան կարպետների շեղանկյուն մեծ մեղալիոնների կենտրոնից տարածվում են կենաց ծառի ծաղկած ճյուղերը: Օժիտի կարպետների ու գորգերի հիմնադաշտը նույնական զարդարված է կենաց ծառերի պատկերներով (օրինակ՝ Արցախի Սզնեք գյուղի № 11277 օժիտի գորգի պատկերները):

XIXդ. տավուշյան նրբագեղ ջեջիմի գոտիներում տղամարդկանց, եռաժամինների, կանանց պատկերների կողքին կան կենաց ծառի պատկերներ: Կենաց ծառի պատկերներ ունեն նեղական շրջանի կանանց արձանիկները: Կինը՝ մայրը և ծառը, հանդես են գալիս որպես հողի գաղափարակիր ու խորհրդանիշ:<sup>10</sup> Մայր աստվածուհին հաճախ

<sup>8</sup> А.Демирханян, Б.Фролов, Первобытная символика вертикали, ՊԲՀ, Եր., 1985, № 3, էջ 73:

<sup>9</sup> Е.Антонова, Очерки культуры древних земледельцев Передней и Средней Азии, М., 1942, с. 117.

<sup>10</sup> Դ.Խորայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 144:

պատկերվել է ծառի ճյուղը ծեռքին կամ դրան միահյուսված: XIXդ. № 11595/11 աղաքսակը հիշեցնում է № 2260 վաղ հայկական շրջանի կնոջ կավե արձանիկը:<sup>11</sup> Ինչպես արձանիկի վրա, այնպես էլ աղաքսակի գլխամասում կան վերադիր ծամեր՝ վզիկի վրա կենաց ծառի պատկերներով: Կնակերպ աղաքսակները հիշեցնում են մայր աստվածուհու պաշտամունքի գոյությունը վաղ անցյալում: Նրա պատկերը հաճախ վերացական է, ինչպես ժայռաքանդակ արվեստում<sup>12</sup> և ընդգծված մարմնի ձև ունի:

Սեր աղաքսակներն իրենց գուգահեռներն ունեն ոչ միայն վաղ արձանիկների, այլև XIXդ. Ալաշկերտի կավե սքանչելի կնակերպ աղաքանների հետ:<sup>13</sup>

Կարպետների իգական սկիզբ խորհրդանշող շեղանկյունածև նախշերի որոշ տեսակներ ժողովրդական բարբառում կոչվում են «ինձոր»,<sup>14</sup> այսպիսով հաստատելով այդ զարդածկի կապը կիմպուղ-տղարերք գաղափարի հետ:

Պատկերների մեջ հաճախ կնոջ մարմինն անոթի, ծաղկամանի տեսք է ունենում, ինչպես Տավուշի XIXդ. մետաքս ջեղիմինն է (գծանկար 3): Առաջավոր Ասիայի մ.թ.ա. IV-III հազ. անոթների վրա պատկերված են տեսարաններ, որտեղ կնակերպ անոթներն օգտագործվել են հատուկ ծեսերի ժամանակ:<sup>15</sup>

Այսպիսով, մեզանում տարածում գտած կնակերպ իրերը, պատկերները, կենաց ծառի, շեղանկյուն զարդածերք հայտնի են տակավին շատ վաղ ժամանակաշրջաններից և պահպանվել են մինչև մեր օրերը: XIX-XXդդ. գորգագործների մեջ ավանդաբար մնացել էր այն համոզմունքը, որ կմոց-մոր-աստվածուհու պատկերը և դրա հատկանիշներն ու խորհրդանշից պատկերներն օժտված են գերբնական հատկություններով և հմայական գորությամբ: Արական և իգական սկիզբ խորհրդանշող զարդածերով գործվածքը (գորգը, կարպետը, աղաքսակը, անկողնապատկերը և այլն) օժիտի կարևորագույն մասն էր կազմում ոչ միայն կիրառական նշանակության, այլև հմայական, պաշտպանական բնույթի պատճառով:

<sup>11</sup> Հ. Հիսրայելյան, Անդ., էջ 157-158:


<sup>12</sup> Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարում, Եր., 1987, էջ 55:

<sup>13</sup> Յոթ-ի հավաքածու:


<sup>14</sup> Ս. Ղավթյան, Յայկական կարպետ, Եր., 1975, տախտ. II:

<sup>15</sup> Е. Антонова, նշվ. աշխ., էջ 131:

Գօանկար 1




ա) Ժայռապատկեր Ձերմաջուր-  
նից (Սյունիք): Գ. Կարախանյան,  
Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռա-  
պատկերները, աղ. 315




բ) Գորգ, XI-XII., Սիսիան

Գծանկար 2



Ժայռապատկեր Գեղամա լեռներից, Դ.Մարտիրոսյան,  
Գիտությունը սկսվում է նախնադարում, աղ. XXII

Գծանկար 3



Զեզիմ, XIX դ., Ուտիք-Տավուշ (մետաքս)

**Միսիթար Գարրիելյամ,  
Արտակ Դաբաղյան,  
Դամիետ Սարգսյան  
ԴԱԻ**

**ՇՈՒՇԻՌԻ ՎԵՐԱԲՆԱԿՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 1996-2000թթ.  
(Ըստ դաշտային ժողովրդագրական նյութերի)**

ԼՂՅ Շուշի քաղաքի բնակչության առանձնահատկությունները հասկանալուն ուղղված մեր հիմնական միջոցներից մեկը դաշտային ժողովրդագրական տվյալների հավաքումն էր: Տվյալները հիմնականում ձեռք են բերված 1996 և 2002թթ. դաշտային հետազոտությունների ընթացքում՝ Շուշի վարչակազմի վիճակագրության, կրթության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, զբաղվածության, վերաբնակության բաժինների և ԲՀԳ տրամադրած տարրեր բնույթի տեղեկանքներից, «Շուշի» թերթի և այլ լրատվամիջոցների հաղորդագրություններից:

Ցուրաքանչյուր քաղաքի բնակչության մեջ ընտանիքի կառուցվածքն եական նշանակություն ունի բնակավայրի զարգացման հեռանկարի գնահատման առումով: Թե՛ 1996թ., թե՛ 2002թ. հատուկ ուշադրություն ենք դարձնել այս խնդրին, փորձելով պարզել տարրեր կազմ ունեցող ընտանիքների հարաբերակցությունը, հաշվարկել միայնակների և թերի կամ «բեկորային» ընտանիքների տեսակարար կշիռը, ինչպես նաև՝ համեմատել դրանք ՀՀ և ԼՂՅ այլ բնակավայրերի առկա տվյալների հետ:

Ստորև ներկայացվում են Շուշիում բնակվող ընտանիքների քանակն ու կազմը 1996 և 2000թթ., ինչը թույլ է տալիս նկատելու կատարված փոփոխությունները վերաբնակության 4-րդ և 8-րդ տարիներին (աղ. 1):

**Այլուսակ 1. Ծուշիի ընտանիքների կազմի շարժմբացը 1996-2000 թթ.**

Տարի	ընտ. քանակ	միայ- նակներ	2 անդամ	3 անդամ	4 անդամ	5 և ավելի
1996	890	184	184 (20.6%)	203 (22.8%)	228 (25.6%)	295 (33.1%)
2000	562	247	157 (27.9%)	133 (23.6%)	132 (23.6%)	149 (26.5%)

Ակնհայտ է, որ բնակչության կառուցվածքում ավելացել է միայ-նակների բացարձակ թիվը, ինչի հաշվին նվազել է ընտանիքների, հատկապես՝ բազմանդամների քանակը: Համեմատաբար մոտ են եռանդամների և քառանդամների տոկոսային արժեքները, ինչպես նաև ընտանիքի միջին կազմի ցուցիչները (1996թ. 3.9, 2000թ. 3.8): Ինչպես երևում է այլուսակից, երկանդամ ընտանիքների տեսակարար կշիռն զգալիորեն ավելացել է, իսկ հինգ և ավելի անդամ ունեցող ընտանիքներինը նվազել է շուրջ 2 անգամ՝ ընտանիքների ընդհանուր թվի 1.6 անգամ նվազման պայմաններում: Այս հանգամանքը թույլ է տալիս առանձնացնելու բնակչության ընտանեկան կառուցվածքի փոփոխության երկու հիմնական պատճառ՝ ա) գյուղաբնակ բազմանդամ ընտանիքների հեռացումը քաղաքից 1996թ. հետո, թ) բազմանդամ ընտանիքների տրոհումը:

Ծուշիի վերը ներկայացված տվյալները նպատակահարմար է համեմատել Երևան քաղաքի 1979թ. համապատասխան տվյալների հետ (տես աղ. 2):

Ծուշիի ընտանիքների միջին կազմը գրեթե նույնական է ԼՂՀ մյուս շրջանային կենտրոնների փոքր քաղաքների նախապատերազմյան բնակչության համապատասխան ցուցիչն: 1987թ. Հարբուր, Ասկերան, Մարտունի, Մարտակերտ քաղաքներում բնակվող ընտանիքների միջին չափը տատանվել է 3.6-ից 4.5-ի սահմաններում: Այս քաղաքները, ինչպես նաև Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը, մեծ մասամբ երիտասարդ բնակավայրեր են՝ երկսերունդ փոքր ընտանիքների գերակշռությամբ: Միաժամանակ, դրանցում ապրող ընտանիքները միջին չափով ավելի խոշոր էին, քան գյուղական բնակ-

շուրջան ընտանիքները,<sup>1</sup> ինչը հետևանք էր շատ գյուղերում միայնակների և զավակներից առանձին ապրող տարեց ամուսինների զգալի տեսակարար կշռի:<sup>2</sup> 1980-ական թթ. Արցախի հայ բնակչության այս առանձնահատկությունը բացատրվում է երկու հիմնական պատճառով. ա) 1941-1945թթ. պատերազմական կորուստների հետագա ազդեցությամբ, բ) Աղրեջանի հակահայ մշակութային և տնտեսական քաղաքականությամբ, որը մղում էր երիտասարդությանը քողնելու ԼՂԻՄ տարածքը:<sup>3</sup> Նախապատերազմյան այս իրադրությունը դրսերվել է նաև Շուշիի արդի բնակչության կառուցվածքում, այսպես՝ երկու անդամ ունեցող 157 ընտանիքից 60-ը, կամ գրեթե 40%-ը տարեց (40 տարեկանից բարձր) ամուսնական գույգեր են, 40 տարեկանից բարձր են նաև միայնակների 45%-ը:

Շուշիի բնակչության մեջ մեծ տոկոս են կազմում միայնակները, ընդ որում, 1996-2000թթ. բնակչության թվի նվազման պայմաններում, բնակչության կառուցվածքում աճել է միայնակների ոչ միայն քանակը, այլև տոկոսային հարաբերակցությունը (աղ. 1): Միայնակների բարձր տեսակարար կշիռը հատուկ դիտարկել են նաև Երևանի բնակչության էբնոսոցիոլագիական հետազոտության հեղինակները: 1950-1970-ական թթ. Երևանում հաստատված 18-29 տարիքային խմբի կանանց 40%-ը, իսկ տղամարդկանց 49%-ն իրենց բնակությունը նոր վայրում սկսել են առանց ընտանիքի: Ընդ որում, այս տարիքային խմբին էր պատկանում բնակչների ընդհանուր թվի շուրջ 82%-ը: Բացառություն էր կազմում միայն հայրենադարձների խումբը՝ շնորհիվ ամբողջ ընտանիքով հայրենադարձության, այս խմբի 43.1%-ի միջին տարիքը 30-ից ավելի էր:<sup>4</sup>

<sup>1</sup>Արցախյան հակամարտության սկզբում հրատարակված շատ աշխատանքներում շեշտվում էր երկրամասի հատկապես՝ գյուղերի ժողովրդագրական ծանր վիճակը, արտահայտված բնակչության «օտրացնամբ» և այլ բացասական երևույթներով: Յննտ. Ս.Մելքոնյան, Լեռնային Ղարաբաղ. պատմատեսաշխարհագրական տեղեկատու, Եր., 1989 էջ 62-66; Վ.Խոջարելյան, Արցախը փորձության ժամին, Եր., 1991, էջ 61-67:

<sup>2</sup>Գյուղաբնակ և քաղաքաբնակ ընտանիքների միջին չափերի հարաբերակցությունը Հայաստանում հակառակն էր քաղաքայինը 4.6, գյուղականը 5.2. C.A.Կարապետյան, R.A.Օվսոլյան, Региональные особенности социально-демографического развития Армянского ССР. Ер., 1986, с. 73-81:

<sup>3</sup> Վ.Ե.Խոջարելյան, Աշխ. աշխ., էջ 64-68:

<sup>4</sup> P.C. Կարապետյան, Формирование населения Еревана. Население Еревана, с. 34-35, табл. 2 և 4.

**Աղյուսակ 2. Ծուշիի և Երևանի բնակչության ընտանեկան կառուցվածքը**

	Ծուշի		Երևան 1979 <sup>5</sup>
	1996	2000	
միայնակ բնակչ. (%)	5	10,6	3
ընտ. միջին կազմը (%)	3,9	3,8	4,4
2 անդամ	20,6	27,9	13,9
3 անդամ	22,8	23,6	16,4
4 անդամ	25,6	23,6	28,1
5 անդամ		20,5	20,5
6 և ավելի անդամ	33,1	4,8	21,1

Այս փաստերը թույլ են տալիս նման երևույթներ նկատել նաև Ծուշիի վերաբնակիչների ժողովրդագրական կառուցվածքում նախկին շուշեցիների և, մասամբ՝ Աղբբեջանից ու ԼՂՀ գրավված տարածքներից բռնագաղթածների վերաբնակությունը ընդհանրություններ ունի «հայրենադարձության» մոդելի հետ, այնինչ նյութ խմբերը գործել են քաղաքայնացման գործընթացներին բնորոշ օրինաչափության սահմաններում՝ Ստեփանակերտից, Քայաստանից և ԼՂՀ գյուղական բնակավայրերից վերաբնակների կառուցվածքում գերակշռել են երիտասարդները, որոնց մեջ բարձր տեսակարար կշիռ են ունեցել միայնակները։ Սակայն քաղաքայնացման և «հայրենադարձության» մոդելները միակ բացատրությունը չեն Ծուշիի պարագայում։

«ճակատամերձ» կամ որոշ վտանգավոր այլ իրադրությունում ընթացող վերաբնակությանը կարելի է բնորոշ համարել միայնակների, և դրանում՝ տղամարդկանց գերակշռությունը։ Քամենատության համար նշենք, որ նման տեսական երևույթ առկա էր նաև Խորայելի հրեա վերաբնակների, մասնավորապես 1910-1960-ական թթ. հիմնա-

<sup>5</sup> Յ.Տ. Կարապետյան, Этнические особенности семьи. - Арутюнян Ю.В., Карапетян Յ.Տ. (ред.) Население Еревана: этносоциологическое исследование, Ер., 1986, с. 118.

դրված կիբուցների բնակչության կազմում:<sup>6</sup> Ինչպես արդեն նկատել ենք, ավելի կարճաժամկետ՝ մի քանի շաբաթ կամ ամիս տևողություն ուներ իրենց ընտանիքները և համայնքները ներկայացնող միայնակ տղամարդկանց կենսափորձը նաև Քաշաթաղի շրջանի բնակավայրերի 1994-1996թթ. վերաբնակության ընթացքում:<sup>7</sup> Շուշիում նույնպես միայնակների և նրանց մեջ տղամարդկանց որոշ գերակշռություն էր նկատվել 1992-1993թթ. ձմռանը: Նման իրավիճակները, որոնք կարելի է բնութագրել որպես «սահմանային» ("frontier situation"), անշուշտ, իրենց ազդեցությունն են թողնում բնակչության կառուցվածքի վրա: Սա վերաբնակությունը նախաձեռնող հանրության արձագանքներից մեկն է վերաբնակեցվող տարածքում կենսապայմանների անսովորությանը, վտանգավորությանը, ընտանեկան կյանքով ապրելու պայմանների բացակայությանը:<sup>8</sup> Կենսական նոր տարածքի յուրացումը, տեղում անհրաժեշտ պայմանների ստեղծումը երբեմն ավելի նպատակահարմար է դիտվում ընտանիքով չծանրաբեռնված տղամարդկանց համար:

Այս տարբերակները հավասարաչափ էական էին Շուշիի բնակչության կառուցվածքային առանձնահատկությունների ծևավորման առումով, հատկապես վերաբնակության առաջին տարիներին: Սակայն 1996թ. համեմատությամբ միայնակների տեսակարար կշռի աճը 2000թ. լրացուցիչ բացատրություն է պահանջում, քանի որ, ըստ մեր դիտարկումների, վիճակագրական այս պատկերը դրսերում է Շուշիում 1996-2000թթ. ստեղծված որոշ յուրահատուկ պայմաններ: Քաղաքի բնակչության ընդհանուր կրծատման և ներհոսքի նվազման պայմաններում այս հանգամանքն ընդհամեն արտահայտում է ընտա-

<sup>6</sup> Selier, Frits J.M. Some Functional and Structural Aspects of Family Life in a Communal Society: The Financial Sector of the Kibbutz Family. B. Misra and J. Preston (eds). Community, Self and Identity. The Hague/Paris: Mouton Publishers 1978, pp. 134-139.

<sup>7</sup> Ա.Գարդիելյան, Ա.Դարայյան, Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման գործընթացը: - Արդի երնուժակութային գործնքներու Հայաստանում (հանրապետական գիտական նատաշրջանի գեկուցումների հիմնադրույթներ), Եր., 1997, էջ 8-9:

<sup>8</sup> Նման գործավորությունը հիմքեր ուներ թե Քաշաթաղում, թե Շուշիում: Վերջինը 1992թ. մայիսից նոյեմբեր աղբբեջանական հրետանու և օղուժի հասանելության գոտում էր, իսկ Քաշաթաղի շրջանում ռազմական գործողություններն ավարտվեցին միայն 1994թ. մայիսի 9-ի գինանդադարից հետո: Ավելի վաղ՝ 1992թ. անոանը Քաշաթաղում ձեռնարկված վերաբնակության փորձն ավարտվեց նորակազմ բնակավայրերի ոչնչացմանք և տասնյակ մարդկային գրիերով:

նիքների արհեստական տրոհումը: Շուշիում մնացող բնակչությունն այս եղանակով ամրագրում էր ազատվող բնակարանները և ձեռք բերում ընտանիքների հետագա իրական տրոհման հանար անհրաժեշտ հավելյալ բնակելի տարածք: Այսինքն՝ սա այն դեպքն է երբ վիճակագրությունն արձանագրում է ոչ այնքան տարաքանակեցման, որքան վերաբնակված ընտանիքների «վերարտադրության» հանգամանքները: Այս երևույթը դիտարկել ենք արդեն հետահայաց՝ 2002թ. ամռանը, ուշադրություն դարձնելով այն բանին, որ քաղաքի բնակչությունն ակնհայտորեն կրծատվել էր, իսկ ազատ բնակարաններ արդեն չկային:<sup>9</sup>

Նույն երևույթը նկատելի է Շուշիի բնակչության հաշվառման ևս մի ցուցանիշում՝ «բեկորային» ընտանիքների քանակը և դրա փոփոխությունը 1996 և 2000թթ. միջև: Թերի ընտանիքների թիվը, որոնց «զլսավորը» կին է, 1996թ. 113 էր, որից 41-ն ուներ մեկ, 45-ը՝ 2, իսկ 27-ը՝ երեք և ավելի երեխա: Սա բնակչության մոտ 10.5 %-ն էր, ինչը Հայաստանի 1982թ. նույնակարգ ցուցանիշից բարձր էր մոտ 2 անգամ:<sup>10</sup> 2000թ. բնակչության մեջ գրանցված «միայնակ մայրերի» ընտանիքներն արդեն կազմում էին 22.5%: Ինչ խոսք, նույնիսկ բնակչության սեռային կազմը, պատերազմական զոհերը և այլ հանգամանքներ հաշվի առնելու դեպքում, այս հարաբերակցությունը հեռու է իրական պատկերից: Այս դեպքում ևս, ինչպես նախորդում, ակնհայտ է ընտանիքի հեռանկարային բազմացմանը միտված հավելյալ բնակարաններ ձեռք բերելու բնակչության ծգտումը: Փորձելով մեկ ընտանիքի համար ունենալ երկու կամ ավելի բնակարան, վերաբնակիչ ամուսիններից ոմանք ապահովան են ծևակերպում, կամ, երիտասարդ ընտանիքների դեպքում, հետաձգում են իրենց համատեղ բնակության փաստի գրանցումը պետական մարմիններում:

<sup>9</sup> ԴԱՏ, 2000, Շուշի:

<sup>10</sup> 1982թ. ՀԽՍՀ բնակչության 6.7 %-ը կազմում էին միայնակ մայրերը, տես՝ C.A. Կարապետյան, P.A. Օվսուլյան, յկ. բաժ., ս. 7.

## Միհրան Գալստյան ՀԱՅԻ

### ՕՐԵՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՔԱՏՈՒՄ (սոցիոլոգիական հետազոտություն)

Ժողովրդավարական և իրավական պետության ստեղծումը Հայաստանում պայմանավորված է նաև օրենսդրական դաշտի և դատարակական համակարգի կայացմամբ, ինչը հասարակության կայունության, պետության հետ սոցիալական առանձին շերտերի համագործակցության ընդլայնման կարևոր երաշխիքներից է:<sup>1</sup>

Պետության կայացման գործում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող յուրաքանչյուր օրենք և դրա գերակայությունն ու հավասար գործառույթը ոչ միայն կարող են ապահովել հասարակության տարբեր շերտերի մասնակցության որոշակի աստիճան, այլև համընդհանուր սկզբունքների հոչակում և չափորոշիչների, արժեքների յուրացվածություն: Սա նշանակում է, որ պետություն-հասարակություն-իրավունք հարաբերակցությունում յուրաքանչյուր պետք է հանդես գա որպես հավասար կողմ, որում պետությանը չպետք է տալ առաջնայնություն, իսկ իրավունքը համարել քաղաքականություն իրականացնող միջոց:<sup>2</sup>

Հասարակական համագործակցության համար կարևոր է նաև այն հիմնադրույթը, ըստ որի՝ չնայած իրավունքն է ստեղծում պետություն, այն ոչ միայն կարգավորում է հասարակական հարաբերու-

<sup>1</sup> Հետազոտության կարևոր աղբյուր է ծառայել Հայաստանի տարբեր մարզերում դատարակական բարեփոխումների վերաբերյալ «Ակունք» հասարակական կազմակերպության կողմից 1999-2000թթ. բնակչության շրջանում անցկացրած սոցիոլոգիական հարցումը, (Ենութերը տես «Ակունք»-ի արխիվ): Հավելյալ՝ հեղինակի 2001 թվականին 300 զանգվածային և 22 ֆոկուս/խմբային հարցումները, որոնք անփոփաք են «Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի» 2001թ. լույս ընծայած «Օրենքի և դատարակական համակարգի դերը Հայաստանի ժողովրդավարացման գործընթացում» մենագրությունում:

<sup>2</sup> Տես Հ. Խաչատրյան, Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն, Եր., 1995, էջ 5-6:

թյունները, այլև սահմանափակում է պետության գործունեությունը՝ ստեղծելով գործունեության հավասար իմաստներով նորմեր և պայմաններ: Մինչդեռ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ շնորհիվ իշխանության, «հարստության», հանրապետությունում կարգավիճակային որոշ խնբեր՝ հատկապես իշխող քաղաքական, ֆինանսական, ռազմական ընտրախավն օրենքի աջև ունեն որոշակի «արտոնություններ»: Մինչդեռ դրանց համեմատությամբ դեռևս հավասարապես ապահովված չէ հասարակության մյուս շերտերի օրենքի գերակայությունը և նատչելիությունը, անձի պաշտպանվածության իմանախնդիրները: Նման իրավիճակում հասարակական հարաբերությունների կարգավորման գործում տակավին որոշակի դեր են խաղում այնպիսի կարևոր էթնիկ գործոններ, ինչպիսիք են միջանձնային ու դրացիական փոխհարաբերությունները, ազգակցական ու բարեկամական կապերը, սովորույթները և գործող սոցիալական նորմերը: Առևա են լուրջ իմանախնդիրներ քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության բնագավառում, ուստի սոցիալական որոշ շերտեր չեն կարողանում օգտվել իրենց իրավունքներից, ինչն առաջ է բերում օտարվածություն պետությունից և իրավագրկվածության գգացողություն: Բացի այդ, ըստ ուսումնասիրության արդյունքների, ցածր է նաև բնակչության իրազեկության աստիճանը իրենց իրավունքներից ու պարտականություններից: Այդ բոլորը, անշուշտ, խոր հետք է բողոքում բնակչության հասարակական գիտակցության վրա, որն էլ իր հերթին կարող է վտանգել ժողովրդավարացման գործընթացների հաստատումը Հայաստանում, որոնք Հանրապետությունում առաջին հերթին պայմանավորված են սոցիալական համակարգերի փոփոխության, նոր ենթակառուցվածքների և տնտեսահրավակական հարաբերությունների ձևավորման, գործող իրավական դաշտի և դատահրավակական մարմինների գործունեության անկատարության և օրենքի կիրարկման ոչ բավարար վերահսկողության հանգամանքներով: Ուսումնասիրության արդյունքներով, դատահրավական նոր համակարգի ներդրումը՝ բնակչությանը ոչ թե ավելի է մոտեցրել արդարադատությանը, այլև լուրջ իմանախնդիրներ է առաջացրել վստահության ձևավորման և հասարակական կարծիքի ոլորտում:

Եթե փորձենք անդրադառնալ Հայաստանի Հանրապետության հոչակումից հետո ընդունված մի շարք օրենքների և և դրանց կիրառմանը, կարելի է փաստել պետության և հասարակության տարրեր շերտերի համագործակցության, համերաշխության, հանդուրժողականության ու անհանդուրժողականության բազմաթիվ խնդիրներ: Ժողովուրդ-պետություն, հասարակություն-իշխանություն համագործակցության համատեքստում, ըստ ուսումնասիրության արդյունքների, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունված մի շարք իրավական ակտեր իիմքում ունեին էթնիկամախմբող նշանակություն: Այդ ժամանակաշրջանը կարելի է բնութագրել իբրև հայ հասարակության համախմբվածության և պետական կառույցների հետ բնակչության համագործակցության լավագույն օրինակներից, քանի որ քաղաքական նշանակություն ունեցող այդ ակտերը միակամորթն ընդունում է ժողովորի մեծամասնությունը: Սոցիալական բոլոր խնճերը համերաշխություն և աջակցություն էին արտահայտում գործող իշխանություններին և, շնորհիվ նաև այդ համախմբվածության, բնակչությունը կարողացավ դիմակայել բազում դժվարությունների: Հայաստանի բնակչությունը, ելնելով ազգի համար կենսական նշանակություն ունեցող այդ գաղափարներից, հիմնականում պատրաստակամորթն տարավ տնտեսական, սոցիալական և հոգեբանական բոլոր գրկանցները: Բայց իշխանությունների հետագա գործունեությունը ոչ միայն ժողովորին չդարձրեց հուսալի գործընկեր, այլև օրենքներ ընդունելիս և քաղաքական որոշումներ կայացնելիս չէր հիմնվում առկա հասարակական կարծիքի վրա և չկարողացավ իրականացնել բնակչության սպասելիքները, որի հետևանքով սկսեց թուլանալ էթնիկամախմբող սկզբունքներ պարունակող գործուների դերը:<sup>3</sup> Հայարակության արդյունավետ համախմբմանը երբեմն խանգարում է օրենքների անկատարությունը կամ դրանց ոչ լիարժեք կիրառումը և համապատասխան վերահսկողության բացակայությունը, ինչը համարվում է միջանհատական և միջնմբային համագործակցության վրա ազդող լուրջ հիմնախնդիր: Հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքով՝ Հանրապետությունում գործող օրենքներն անկատար են, իսկ

<sup>3</sup> Մարդկային զարգացման հիմք տարին Հայաստանում, Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան, Եր., 1999, էջ 49-54:

ըստ որոշ մասի՝ կատարյալ են, բայց չեն գործում: Նշված պատասխանները, կապված հարցորդների սեռատարիքային կազմի և կրթական մակարդակի, ինչպես նաև օրենսդրական դաշտի հետ նրանց շփման արդյունավետության աստիճանի ունեն որոշակի առանձնահատկություններ: Օրենքի անկատար լինելու կամ չգործելու հանգամանքը ոչ միայն ազդեցություն է թողնում բնակչության դիրքորոշումների, այլև նրանց գործառնության շրջանակների վրա: Հարցման մասնակիցներն այս առումով հաճախ էին անդրադառնում սեփականաշնորհման ոլորտին և ընտրություններին վերաբերող օրենքներին, որոնք կիրառվեցին կոպիտ խախտումներով և բազմաթիվ չարաշահումներով: Այդ ամենը, հարցման մասնակիցների կարծիքով, լուրջ հարված հասցեց սոցիալական արդարության գաղափարին և պետական կառույցների նկատմամբ բնակչության վստահությանն ու հետագա համագործակցությանը: Օրինակ՝ նախորդ, ինչպես նաև Հանրապետությունում վերջերս ավարտված նախագահական և Ազգային ժողովի ընտրություններն իրականացվեցին բազմաթիվ խախտումներով: Ըստ հարցորդների, որպեսզի համապատասխան տեղեր ապահովեն, հատկապես իշխանություններն օգտագործեցին վարչական բոլոր պաշարները, կուսակցությունները և որոշ անհատներ կոպտուեն խախտում էին այդ օրենքը և ընդհանուր առմամբ, դրանք անցան անարդարության՝ ճնշումների, բռնությունների, ընտրաթերթիկների լցոնումների, վերջնական արդյունքների կեղծման, համատարած ընտրակաշառքի մթնոլորտում: Օրենքի նկատմամբ նման վերաբերունքը երբեմն ոչ միայն խոչընդոտում է ժողովրդի ազատ կամքի արտահայտությանը՝ ներկայացուցական բարձրագույն մարմնի ձևավորման գործում, այլև թուլացնում է համայնքի բնակչության հետագա համագործակցությունը և կապերը՝ ունենալով սոցիալ-հոգեբանական բացասական լուրջ հետևանքներ: Օրենքի նման կիրառումը կարող է ավելի խորացնել պետության և ժողովրդի միջև ստեղծված օտարումը և անտարբերությունը: Նման իրավիճակում մարդիկ, դադարելով հավատալ օրենքից օգտվելու հնարավորությանը, պետական կառույցների հետ շփումներն իիմնականում իրականացնում են անձնական ծանոթությունների միջոցով:

Հարցման արդյունքներով՝ օրենքի գերակայության և դրա հավասարաչափ գործառության սկզբունքները Հայաստանում ընդհա-

Յուր առմամբ չեն գործում: «Ձեր կարծիքով, Յայաստանում օրենքները բոլորի համար հավասարաշափ ե՞ն գործում» հարցին մասնակիցների 69%-ը տվել է բացասական պատասխան: Յարցորդների 56%-ի կարծիքով՝ օրենքները պաշտպանում են հարուստներին և փողատերերին, 30%-ի կարծիքով՝ հեղինակություններին և պաշտոնյաներին, 9%-ի կարծիքով՝ «լավ թիկունք» ունեցողների շահերը: Յարցորդների միայն 5%-ն է գտել, որ օրենքը պաշտպանում է հասրակ ժողովրդի շահերը: Այսպիսով, ըստ հարցման մասնակիցների, օրենքի տեսանկյունից Յայաստանի բնակչությունը բաժանվում է երկու մասի. հարուստ շերտեր, որոնք, շնորհիվ իրենց տնտեսական, ֆինանսական հնարավորությունների և զբաղեցրած պաշտոնի՝ օրենքի առաջ ունենալու համար կարող է գործել նրանց նկատմամբ: Ֆոկուսիմբային հարցման ժամանակ հաճախ կարելի էր լսել «Օրենքն ուժեղների և փող ունեցողների կողմն է» արտահայտությունը: Յատկապես կաշառքի առկայությամբ օրենքը կորցնում է գործառնական նշանակությունը և ծառայում է առանձին խումբ մարդկանց շահերին («Եթե կաշառքը կա, օրենքը կաշառքի դեմ անզոր է», կանանց ֆոկուս խումբ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, կին, 41տ.»):<sup>4</sup>

Յետազոտության արդյունքները հնարավորություն ընծեռեցին պարզելու նաև, թե հարցման մասնակիցները որքանով են օրենքի կողմից իրենց պաշտպանված համարում: Յարցորդների 53%-ը տվել է «ոչ», իսկ 30%-ը՝ «մասամբ» պատասխանը և, ըստ եռթյան, նրանք ունեն իրավական անպաշտպանվածության զգացում: Նրանց միայն 7%-ն է, որ իրեն օրենքի կողմից լիովին պաշտպանված է համարել, իսկ 10%-ը դժվարացել է որևէ պատասխան տալ:

Իրավական պետության ստեղծման գործում կարևոր նշանակություն ունի Յանրապետության բնակչության իրավական գիտելիքների մակարդակի գնահատումը: «Ինչպես կգնահատեիք Ձեր իրավական գիտելիքների մակարդակը» հարցից կարելի է եզրակացնել, որ մարդիկ չունեն անիրաժեշտ իրավական գիտելիքներ, քանի որ

<sup>4</sup> Օրենքի և դատաիրավական համակարգի դերը Յայաստանի ժողովրդավարացման գործընթացում. հիմնախմնդիրներ, Եր., 2001, էջ 16-17:

նրանց միայն 10%-ը և 28%-ն այն գնահատել են «լավ» ու «բավարար», իսկ 62%-ը՝ «վատ»: Համապատասխան գիտելիքների բացակայությունը որոշակիորեն ազդում է անհատի պաշտպանվածության վրա:

Նույն պատկերն է տալիս Հանրապետությունում տեղի ունեցած դատաիրավական բարեփոխումներին վերաբերող բնակչության իրազեկության վիճակի վերլուծությունը: Սոցիոլոգիական հարցման նյութերից կարելի է եզրակացնել, որ մասնակիցների միայն մի մասն է տեղյակ գործող դատաիրավական եռաստիճան համակարգին, իսկ մյուս մասը լսել է միայն առաջին ատյանի դատարանի մասին: Ըստ այդմ, հստակ պատկերացում չունեն առաջին ատյանի, վերաքննիչ և վճրաբեկ դատարանների գործառույթների և դրանց դիմելու կարգի, նաև տեղյակ չեն օրենքով նախատեսված կարգով դատավորի կարգավիճակում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Միայն դատաիրավական համակարգին առնչվող անհատներն էին որոշ չափով իրազեկ դատավորի, դատախազության համակարգում և փաստաբանական ծառայությունում տեղի ունեցած փոփոխություններին:<sup>5</sup>

Սոցիոլոգիական հետազոտության կարևոր խնդիրներից էր նաև պարզաբանել, թե ի՞նչ աղբյուրներից են ձևավորվում բնակչության իրավական գիտելիքները, և դրանք բովանդակային առումով իրազեկության ինչպիսի որակ են ապահովում: Որպես իրազեկության աղբյուր՝ հարցման մասնակիցների գերակշռող մասը նշել է ԶԼՄ-ները՝ հեռուստատեսությունը, ռադիոհաղորդումները և նամուլը, որոշ մասն էլ առանձնացրել է միջանձնային կապերը՝ ծանրթներից, ընկերություններից, հարազատներից և շրջապատից ստացած տեղեկատվությունը: Հարցման արդյունքներով՝ իրավական գիտելիքների ծերպերնան կարևոր աղբյուր են համարվում նաև այդ համակարգի աշխատողների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփումները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, անհավասարաշափ գործառությունը և օրենքի գերակայության բացակայությունը, օրենսդրական դաշտի անկատարությունը լուրջ հարված են հասցնում բնակչության տարրեր սոցիալական խմբերի և պետության միջև հասարակական համագործակցության՝ առաջ բերելով սոցիալ-հոգեբանական լուրջ հետևանքներ:

<sup>5</sup> ՀՀ-ում դատարանակազմության մասին, տե՛ս *Ս. Դիլքանյան*, Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավական համակարգը, Եր., 2000, էջ 20-41:

## ՕՍԱԿԱՆ ՎԱՐԽԱԳԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԱԳՆԻ ՄԱՍԻՆ

Օսական Նարթյան դիցավեպում հերոս-դյուցազումների՝ նարթերի նախահայրը կոչվում է Վարխագ (Wærхæg), որը տոհմածին երկվորյակների հայրն է: Վարխագի առաջին կինը համարվում էր ժայռերի աստծո դուստր Սայնագոնը (բռց: ժայռային), իսկ երկրորդ կինը՝ ծովային աստծո դուստր Զերասան, որը պատկերացվում էր ծկնակերպ, աղավնակերպ կամ եղջերակերպ: Ըստ երևույթին Վարխագն օսական դիցաբանության մեջ հողմերի ու փոթորիկների վիշապային անձնավորումն էր, քանի որ դիցավեպում նա քշում է նարթերի նախիրները, խեղդում նրանց ծովում կամ բարձրաբերծ ապառաժներից նետում ցած: Եպոսում դա բացատրվում է այն հանգամանքով, որ նարթերն արհանարանքով էին վերաբերվում ծերացած Վարխագին և նրան հանձնել էին իրենց նախիրներն անընդմեջ արածացնելու պարտականությունը:

Ամենայն հավանականությամբ, օսական Վարխագի զուգահեռն է Վահագ(Ա)-ը՝ հայոց հեթանոսական դիցարանում քաջության, ամպրոպի ու կայծակի աստվածը, որին համապատասխանում է պարթևերն Varhag(n) ծևը: Օսական Վարխագը, կարծես արտացոլում է վիշապաքաղ Վահագնի առավել հին կերպարը, որում ամպրոպի և անձրևի պտղաբերիչ դրական հատկանիշներին զուգորդված են եղել փոթորկի և կարկտի կործանարար բացասական գծերը: Վերջիններս ավելի ուշ Միջագետքից անցել են հայոց դիցարան ներմուծված Բարշամինայա] (արամ. Յ' ՚՛տու «Երկնքի տիրակալ») աստծո կերպարին, որը, փաստորեն, դարձել է Վահագնի բացասական հակոտնյան:

Չի բացառվում, որ Բարշամ անվան ուղիղ ծև պետք է համարել Բաղաամ (\*Բաաղ[շ]ամ) տարրերակը (տես Մ.Աբեղյան, Ա, 73), քանի որ Յ' ՚՛տու>Բարշամ անցումը հայերենի հնչյունական օրենքներին

անսովոր է: Յավանաբար, Բարշամ տարբերակն առաջացել է առավել հին դիցանվան հետ բաղարկման հետևանքով. այդ անվան գուզահեռ կարելի է համարել թրակյան Յօրեաց հյուսիսային քամիների աստծո անունը, որի որդիները կոչվել են Բորեադներ և, ըստ հունական դիցաբանության, սպանվել են Յերակլեսի (=Վահագն) կողմից: Յետաքրքիր է, որ նարթյան որոշ պատումներում Վարխագի փոխարեն որպես Երկվորյակների հայր հանդես է գալիս Բորա (Յօրա) աստվածը, որը նաև նարթյան Երեք տոհմերից մեկի՝ Յօրեաց-ի նախահայրն է. Բորաքաներն Ախսարթագքաբար տոհմի ոխերիմ թշնամիներն էին, խորհրդանշում էին «յուլմեզիյան» Երրորդ գործառույթը և համարվում էին մեծ հարստության, նախիրների ու Երամակների տեր: Յայոց էպոսում, ըստ Երևույթին, Բաղաամ (Բարշամ) աստծո վիպականացված տարբերակն է ներկայացնում Բաղդադի խալիֆը, որը նույնպես տոհմածին Երկվորյակների խորը հայրն է:

Յարդագողի առասպելի տարբերակներում Վահագն-Բարշամ հակադրությունը ոչ միայն հին և նոր Երկնային աստվածների պայքար է, այլև ծմբան և գարնան, ծնախառն բքի և գարնանային հողմի, ծերության և Երիտասարդության հերթագայում: Այն, որ նշված Երևույթների Երկփեղկումն առանձին կերպարների միջև կատարվել է ավելի ուշ, Երևում է օսական Վարխագի մասին հետևյալ պատումից. Երբ նրա թոռները գտնում են նրան գիսախոհվ, հյուծված ու ծերացած, լողացնում են, կտրում մազերը և սափրում դեմքը, ինչից հետո պարզվում է, որ նա բավականին Երիտասարդ է: Միևնույն կերպարի Երկփեղկվածությունը Երևում է նաև Թուլս Մանուկի հետ կապված հավատալիքներում, որտեղ «մուգ» և «պատանի» Թուլս Մանուկը հակադրվում է «բաց գույնին» և «հասունին» (Ա.Պետրոսյան): Յետաքրքիր է, որ մի տարիքից մյուսն անցնողին, այն է՝ նվիրագործվողին, հաճախ տիրում է «գայլային կատաղություն» և նա համադրվում է գայլի հետ:

Վ.Աբակը օս. Յաշակաց դիցանունը բխեցնում է իրն. \*warka-«գայլ» արմատից, որը /w/ նախահնչյունով հայտնի է բազմաթիվ հյուսիս-իրանական ծերում. սրանից է կազմված նաև Varkāna (հայ Վրկանից աշխարհ, պր. Gurgān) Երկրանունը՝ Կասպից ծովից հա-

րավ-արևելք [ԱԲԻԵՑ-IV, 93-94, 96-97]: Սակայն \*warka - արմատն արդեն օսերենում տվել է \*wærg - ձևը, որը պահպանվել է միայն դարբին- աստծո անվան մեջ՝ դիցորական բարբառով՝ Wærgon, վերջինս դիցավեպում հանդես է գալիս որպես նարթյան հերոսների մարմին- ները երկնային հնոցում կոփող, ընդորում, առավել հին տարրերակներում այդ կոփումը կատարվում է գայլի կաթում, ինչը ցույց է տալիս գայլի առնչությունը դարբին-աստծո կերպարին [ԱԲԻԵՑ-IV, 94]: Մինչդեռ Wærхæg-ի հետ կապված պատումներուն ոչ մի ակնարկ չկա գայլային բնույթի վերաբերյալ:

Կարելի է որպես վարկած առաջարկել ու. Wærхæg դիցանվան առնչությունը Վահագ(ն) և Varhag(ն) ձևերին, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ օսերենում /h/ հնչյունի թացակայության պատճառով այն հաճախ արտացոլվում է /x/- ով: Այլ հարց է, որ պատերազմի գործառույթի պատճառով՝ նշված կերպարները երբեմն առնչվել են գայլի հետ, Wærхæg-ի անունը, թերևս, բաղարկվել է նաև հետևյալ առապելական հերոսի անվան հետ՝ ու. Wærxtænæg (\*varka-tanu «գայլամարմին»)> վրց. Vaxtang, նույն անունը կրող վրաց թագավորը կոչվում էր Վախթանգ Գորգասար (< Gurga-sar «գայլագլուխ»), հմնտ. նաև հայ. Գայլ Վահան, որը, ըստ Ա.Պետրոսյանի, պատերազմի գայլային աստծո վիպականացված կերպար է և Վահագնի վիպականացված տարրերակներից մեկը:

Ирина Долженко  
ИАЭ

## СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ РЕЛИГИОЗНЫХ ОБЩИН МОЛОКАН АРМЕНИИ

Повышение роли этнического фактора, наблюдающееся в мире в последние десятилетия ХХв., совпало по времени с актилизацией религиозной жизни,<sup>1</sup> которая характерна не только для основных конфессий, но и сект. Современное состояние религиозных общин молокан Армении – тема данного сообщения.

В настоящее время в Армении молоканство представлено последователями двух направлений – постоянными и прыгунами, среди которых преобладают последние.<sup>2</sup>

<sup>1</sup> Данное сообщение написано на основе полевых материалов, собранных автором в 1980-1990-е гг. среди сектантов в гг. Ереване, Дилижане, Красносельске, п.г.т. Цахкадзоре, сс. Лермонтово, Фиолетово Лорийской области.

<sup>2</sup> Молокане – последователи одной из сект духовных христиан, куда входят также христововерие, духоборчество и др. Характерными чертами этого религиозного направления, возникшего во второй половине XVIII в., являлись идея «спасения верой» и возможность непосредственного общения верующих с богом. Название секты, вероятно, основано на евангельском тексте «Возлюбите чистое словесное молоко», каковым молокане считают проповедываемое ими учение.

Подобно западному протестантизму молоканство отвергло внешнюю обрядность православия – иконы, крест, крестное знамение, святость храма, мощей, разного рода церковные «чудеса» и т.д., его сложный религиозный ритуал, привилегированное положение духовенства и подчиненное положение мирян, денежные и натуральные поборы церкви и священнослужителей. Во второй четверти XIXв. под влиянием религиозных противоречий в рамках молоканства образовалось новое течение – прыгунство. Сектанты, не отклонившиеся от вероисповедной и кульевой традиции своего учения, стали называться постоянными.

Основным мотивом религиозных проповедей и постоянных, и прыгунов является вера во второе пришествие Христа и наступление 1000-летнего царства, куда попадут только истинно верующие. Однако для проповедей прыгунов в большей степени характерна эсхатологическая направленность. Прыгуны считают, что «бог есть дух», и верят в то, что бог может воплотиться в праведных людей, признаком чего является религиозный экстаз. Поэтому молитвенные собрания прыгунов отличаются экзальтированностью. Особенностью религиозного культа прыгунства является наличие в составе каждой общины 1-2 «пророков»,

Система церковной организации сектантов не претерпела изменений. Верующие объединены в общины, во главе которых стоят выборные пресвитеры. Пресвитер – равный всем остальным, исполняет свои обязанности безвозмездно. В настоящее время возрастное старшинство в сочетании с религиозностью и знанием религиозных догматов перестало быть определяющим фактором при выборе пресвитера. В общине большим авторитетом пользуются «старцы» - лица, способные толковать священное писание и наставлять верующих, и певчие. Религиозный культ упрощен и сводится к собраниям, проводимым в обычновенных помещениях. Богослужения состоят в чтении текстов Библии и песни псалмов.

В отличие от молоканских организаций других регионов Закавказья, в частности Грузии, где уже в 1970-1980гг. существовали такие структуры административного управления общиной, как двадцатки, ревизионные комиссии, молоканские общины Армении сохранили традиционную организацию, что свидетельствует об их самодостаточности. Они не признают необходимости объединения разобщенных молоканских общин Закавказья и различных регионов России и создания центральных организационных структур. Нежелание подчиняться каким бы то ни было решениям сверху явилось причиной отказа большинства молоканских организаций Армении участвовать в работе Всесоюзного съезда духовных христиан-молокан, состоявшегося в Москве в июне 1991г. Молокане не регистрируют свои общины, считая регистрацию «не богоугодным делом». Подчинение властям признается сектантами лишь в той мере, в какой это не противоречит религиозным заповедям.

---

или «действенников». Во время молений они впадают в состояние экстатического возбуждения, во время которого часто бывает говорение «на иных языках». Свои галлюцинации они принимают за откровение свыше и затем доносят до верующих «мысли божьи», которыми руководствуется вся община. Также для молений прыгунов характерны одиночные или групповые прыганья (отсюда – название «прыгуны») как следствие религиозного возбуждения, что воспринимается верующими как схождение и вселение в них духа святого.

Несмотря на то, что молокане Армении имели высокий потенциал адаптированности к местным условиям, тем не менее миграционное движение последнего десятилетия не обошло стороной эту группу русских.

Результатом выезда явились сокращение численности и изменение возрастной структуры верующих, что имело место в религиозных общинах и постоянных, и прыгунов. В то же время эти негативные демографические изменения, являющиеся важнейшими показателями степени устойчивости той или иной группы, сильнее оказались на общинах постоянных. Некоторые из них распались, в других численность верующих сократилась до нескольких десятков человек.

По выражению известного исследователя религиозного сектантства А.И.Клибанова, уже в XIXв. постоянные представляли собой «постоянное непостоянство».<sup>3</sup> Это выражалось в отсутствии религиозного единства, догматизме молоканских «обрядников», в кризисе доверия руководителям общин со стороны верующих.

Нестабильное состояние осталось характерной чертой постоянных и в XXв. Уже в 1970гг. в результате миграции сектантов в города республики, а также за ее пределы общины постоянных были малочисленными с преобладанием лиц среднего и пожилого возраста. Среди членов общин было немало тех, кто индифферентно относился к религии. «Традиционная религия» таких людей на деле являлась религией их общественной и семейной среды.

Стремление сельской молодежи, выходцев из среды постоянных, работать на различных производственных предприятиях или заниматься другими несельскохозяйственными работами, в конечном итоге, означало постепенный уход из общины: с расширением профессиональной деятельности и социальных связей влияние религии на молодежь ослабевало. В свою очередь стар-

---

<sup>3</sup> А.И.Клибанов. Религиозное сектантство в прошлом и настоящем. М., 1973, с. 135

шее поколение не проявляло настойчивости в привлечении молодежи к религии. По бытовавшему среди них мнению каждый должен прийти к Богу сам.

Таким образом, отход от религии представителей молодого поколения нарушил традицию преемственности, результатом чего является современное состояние общин постоянных, характеризующееся невысокой численностью и преобладанием людей пожилого возраста. Отсутствие молодого поколения фактически обрекает религиозные общины постоянных на постепенное угасание их деятельности, поскольку воспроизведение духовной жизни не может происходить в полном объеме и на прежнем уровне. Их культура утрачивает свою специфику.

Иная картина наблюдается у прыгунов. Их собрания отличаются высокой численностью верующих всех возрастов. На протяжении последних десятилетий участие прыгунов в миграционных процессах было незначительно. Под влиянием специфических религиозных и этнокультурных традиций в их традиционной системе ценностей значение сельского образа жизни, прочных религиозных и родственных связей по степени важности опережало стремление к повышению образовательного и профессионального статуса, которого можно было достичь при жизни в городах Армении или в России.

Определенную роль в сдерживании миграции прыгунов играли высокий авторитет руководителей многих общин, отрицательно относившихся к выезду, а также пророчества «пророков», которые имели место в нескольких собраниях. Согласно им, выход в Россию закрыт и именно здесь, вблизи Араката, должно наступить тысячелетнее царство для «избранных», для чего надо пройти через страдания и лишения.

Низкая миграционная активность позволила прыгунам сохранить сбалансированную половозрастную структуру, обладающую высоким потенциалом демографического роста. Традиция многодетности, характерная для семей последователей этого направления, позволяет поддерживать численность общин на

постоянном и довольно высоком уровне. Численность некоторых общин достигает 200 – 250 человек.

Молодежь – объект повышенного внимания руководителей религиозных общин прыгунов. Уважение к старшим, посещение молений, запрет на употребление спиртных напитков, курение – все это является нормой поведения молодежи. Недостойное поведение одного из членов семьи может стать причиной отказа руководства общины совершить обряд бракосочетания или проводить в последний путь близких. В последние 10-15 лет такое строгое отношение общины к проступкам отдельных членов стало нормой религиозного поведения прыгунов и в сельской местности, и в Ереване.

Итак, в последние два десятилетия роль религиозных общин в жизни прыгунов возросла. Демографический состав общин омолодился, семейные обряды совершаются только по религиозным канонам. Религиозные общины осуществляют строгий контроль за поведением своих членов не только в селе, но и в городе.

В последние годы религиозная принадлежность определяет жесткий характер межконфессиональных контактов между постоянными и прыгунами. Некоторые различия в обрядовой практике, до недавнего времени игравшие несущественный характер, возводятся в ранг, наблюдается борьба за самосохранение, отстаивание идеологических позиций.

Общеизвестно, что в критические моменты развития общества значимость религиозных взглядов и ценностей возрастает и наблюдается, возможно, даже бессознательное стремление членов локальной группы сохранить свою целостность за счет обращения к своим собственным системам ценностей и символов идентификации. Вероятно, этим и объясняется усиление роли религиозных общин в среде последователей прыгунского направления, которые в современной жизни молокан Армении являются своеобразным защитным механизмом от воздействия негативных явлений.

## Եվա Զաքարյան ԴԱՒ

### ՈՍԿԵՐԻՉԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ<sup>1</sup>

Եթե իրական կյանքում դարբնի դերն ու կշիռն ամենամեծն է համարվում, ապա հեքիաթի ոգուն ավելի մոտ է ոսկերչի կերպարը: Այստեղ, ուր կան թագավորներ, հարստություն, ոսկերչի ներկայության կարիքն էլ կա: Դարբինն իր առասպելական կերպարով ավելի հարմար է գալիս իրաշապատում հեքիաթներին: Իրապատում հեքիաթներում հերոսականը տեղը զիջում է կենցաղայինին, առասպելական դարբնի զնդանը փոխում է իր չափսերը և վերածվում փոքրիկ զնդանիկի, որի առջև դարբնի փոխարեն իր նրբեղեն աշխատանքներն է արարում ոսկերիչը: Ոսկերիչը (զարգար, դոյումջի) դարբնի պես, բազմազան գործեր է կատարում: Նա և զնում է ակնեղեն, զարդեր, և զնահատում, և պատրաստում՝ մատանի, ապարանջան, գինդ, օղեր, քամար (հ. 9, էջ 261), նաև կնիքներ (հ. 13, էջ 379), ձիերի և ձիակառքերի զարդարանքներ (հ. 8, էջ 661): Նեքիաթի ոսկերիչը երբեմն սարքում է հսկայական առարկաներ, որոնց մեջ մարդ է տեղավորվում՝ ոսկե խոյ կամ ոսկե սննդուկ, հաճախ այնպիսի բաներ, որ կարծես չի համապատասխանում իր արհեստին՝ ոսկե մաշիկներ, շալվար, աբա, գլխարկ (ֆաս) և այլն:

Ոսկերիչն ապրում է հիմնականում թագավորանիստ, նաև մեծ, վաճառաշահ քաղաքներում՝ Սպահան, Թավրիզ, Չինի–Մաչինի քաղաք, Ստամբուլ: Ոսկերիչը հիմնականում հարուստ է, նրա մոտ են բերում իրաշքով ակնեղենի, ոսկու տեր դարձած աղքատ հերոսներն իրենց գտածը, և ոսկերիչը սիրով առնում է դրանք (հ. 8, էջ 658, 664, հ. 2, էջ 291): Որպես առավել հարուստ ոսկերիչ, հիշվում է «ջիուլ ոսկերիչը»: Ամենաթանկարժեք զարդերը, որոնք անմատչելի են մյուսնե-

<sup>1</sup> Իբրև բանահյուսական սկզբնադրյուրներ օգտագործված է հիմնականում «Դայ ժողովրդական հեքիաթներ»-ի 1-13 հատորներում ընդգրկված 30-ից ավելի հեքիաթ, որոնց մեջ հիշատակված է ոսկերիչը:

րին, հասանելի է ջիուդ ոսկերչին, որը գնում է դրանք՝ մեկ անգին քարին 1000 մանեթ վճարելով (հ. 2, էջ 162):

Ոսկերիչը երբեմն հիշատակվում է ի թիվս այլ արհեստավորների կամ այնպիսի դեպքերում, որտեղ նա հանդես չի գալիս իբրև իր արհեստի ներկայացուցիչ (հ. 4, էջ 371, հ. 2, էջ 324, հ. 13, էջ 400):

Ոսկերիչն ունի արհեստանոց, աշակերտներ: Երբեմն նույն քաղաքի բոլոր ոսկերիչները հավաքվում են խորհրդակցելու՝ ինչպես կատարեն թագավորի անհնարին թվացող պատվերը: Այս կամ հաճախ հիշվող «Ուստաբաշի» անվանումը հուշում են արհեստավորական միությունների՝ համբարարությունների գոյությունը:

Ոսկերիչներին բնորոշ է խարդախությունը: Եթե ոսկերչի մոտ որևէ թանկարժեք քար կամ ոսկյա իր են բերում, հատկապես, եթե բերողն անտեղյակ է դրա իրական գնին, ոսկերիչը փորձում է շատ էժան վերցնել դրանք, և ապա քիչ - քիչ ավելացնելով գինը, հաճախ տասնապատիկ թանկ է վճարում (հ. 2, էջ 291): Մի ոսկերիչ իր կախարդական շնորհի արժանացած աշակերտին վճարելով օրական մեկ մանեթ, ամեն օր նրա բարձի տակից 500 մանեթ փող է հանում և հարստանում (հ. 3, էջ 293): Մի այլ հեքիաթում (հ. 3, էջ 401) ոսկերիչն իր սիրուհու հետ նրա ամուսնու ողջ ունեցվածքն է յուրացնում: Ոսկերչի և իր կնոջ մասին տարածված դիպաշարում ոսկերիչը գոհ է գնում իր ազահությանը՝ ընդունելով ճարպիկ երիտասարդից թանկարժեք նվերներ, և արդյունքում կորցնում կնոջը:

Ոսկերիչը թեև հարուստ է, բայց իր վարկով երբեմն գիջում է այլ արհեստի տեր անձանց: Թագավորի աղջիկը փեսացու ընտրելիս նագիրի և վեզիրի որդիներից ընտրում է խառատի արհեստն ունեցողին, գերադասելով նրան ոսկերչից (հ. 1, էջ 98):

Այնուամենայնիվ, պատահում են նաև ազնիվ ոսկերիչներ: Քրիստոնեական կրոնաբարոյախոսական ակնհայտ շեշտադրություն ունեցող մի դիպաշարում ոսկերիչը ջերմեռանդ հավատացյալ է, և Աստված փրկում է նրան ամենադժվարին պահին: Այստեղ հայ-ջիուդ հակադրության մեջ գործում է քրիստոնյա-ոչ քրիստոնյա հակադրություն, որն ավարտվում է քրիստոնեական կրոնի առավելության գաղափարախոսությամբ (հ. 8, էջ 62, հ. 9, էջ 527):

Ոսկերիչը, ի տարբերություն դարբնի, չունի ընդգծված առասպեկտական գծեր: Ոսկերչի կերպարներ հանդիպում են առավելապես իրա-

պատում հեքիաթներում: Եթե դարբինը զենք և այլ առարկաներ է սարքում հիմնականում հրաշապատում հեքիաթի հերոսի համար, որոնցով նա պայքարում է չար ուժերի դեմ, ապա ոսկերիչը շինում է զանազան առարկաներ՝ ճարպիկ, խարդախ հերոսի համար, որոնցով նա իր անձնական հարցերն է լուծում: Եվ միայն որոշ ակնարկներ կան դևեր սպանող հերոսների մասին, որոնք վկայում են հեքիաթի՝ առասպելականից առօրեականի, հրաշապատումից իրապատումի վերափոխվելու ընթացքը:

Հեքիաթի մի դիպաշարում ոսկերիչը մասնակցում է թաքցված արքայադստեր տեղի հայտնաբերմանը: Նա մի ոսկե խոյ (հ. 5, էջ 38) կամ սնդուկ (հ.13, էջ 157) է շինում, որի մեջ թաքնված ճարպիկ, խորամանկ հերոսը՝ վիշապասպան հերոսին փոխարինած տրիխստերը, մուտք է գործում աղջկա թաքստոցը և տիրանում նրան: Թաքստոցը գտնվում է աղջկա հոր ապարանքի ստորգետնյա սենյակներում, ոչ մեկը նրան չի տեսնում, բացի սպասուիհներից: Աղջիկը, որն «արևի նըման շրջողող» ար» (հ. 5, էջ 38), առասպելական արև - աղջիկն է, որին հափշտակել է վիշապը (տվյալ դեպքում՝ աղջկա հայրը): Գետնի տակի պալատն էլ հենց վիշապների բնակարանն է: Աղջկան վիշապից ազատագրող հերոսն իր նպատակն իրագործում է ոչ թե կռվով, այլ խորամանկությամբ: Եթե կռվին նպաստում էր երկնային դարբինը, ապա խորամանկ հերոսի օգնականը ոսկերիչն է:

Այդուամենայնիվ, ոսկերիչը, լինելով առասպելական դարբնի ցեղակիցը, գերծ չէ համանման որոշ գծերից: Հեփեստոսը ոչ միայն դարբին էր, գինագործ, այլև ոսկերիչ: Նա ոսկուց և արծաթից կերտում էր ամենանբազեղ զարդերը, որոնք իհացմունք էին պատճառում օլիմպիական դիցուիհներին: Դարբինն էլ, ոսկերչի նման, կանացի զարդեր է պատրաստել: Եվ դարբինը, և ոսկերիչն աշխատում են գրեթե միևնույն գործիքներով, սակայն տարբեր են դրանց չափերը, հետևաբար և աշխատանքի նրբությունը: Ոսկերիչներն էլ, հավանաբար, դարբինի նման երբեմն գործ են ունեցել երկարի և պողպատի հետ և դարբինների հետ մասնակցել Զատկի Ավագ ուրբաթ կատարվող ծիսական կռանահարումներին: Այդ է վկայում Տ.Նավասարդյանը.

«Զարգարները պողվատը Յուլիի ուրբաթ օրը, կը դնին զնդանի վրայ, օխտը հետ չաքճով կը տին, եղ թլիսմն ա»:<sup>2</sup>

«Անմահական խնձոր» հրաշապատում հեքիաթի հինգ տարբերակում վիշապներից ազատագրված արև - աղջիկը, որպես ամուսնության նախապայման, պահանջում է ոսկուց սարքած այնպիսի զարմանահրաշ առարկաներ, որոնց պատրաստելը վեր է սովորական ոսկերիչների ուժերից: Այստեղ արդեն անհրաժեշտ է առասպելական ոսկերիչի միջամտությունը, ինչպիսին հին հունական Յեփեստոսն էր, որը պատրաստում էր հինավորց մարդկանց ամենավառ երևակայության ծնունդ՝ ինքնաշարժ եռոտանիներ,<sup>3</sup> որոնք իրենց վրա դրված առարկաներով, առանց որևէ մեկի օգնության, ոսկե անիվներով ներսուղուրս էին անում իր ապարանքում: Եվ կամ Յեփեստոսի կերտած «ոսկեծույլ աղախիններն աղջիկների պես շնչավոր, որոնք ունեն միտք ու լեզու»<sup>4</sup> և սպասարկում են իրենց տիրոջը: Ահա գրեթե այսպիսի շարժվող ոսկե առարկաներ (հ. 2, էջ 23, հ. 5, էջ 25, հ. 4, էջ 251, հ. 9, էջ 27, հ. 12, էջ 586) է պահանջում հեքիաթի աղջիկը, վստահ լինելով, որ դրանք կարող է բերել միայն իրեն ազատագրող հերոսը: Եղբայրների նախանձի և դավաճանության զոհ հերոսը, որը քաշալի կերպարանքով ոսկերիչի աշակերտ էր դարձել, իրագործում է աղջկա պահանջը: Այդ զարմանալի առարկաներն աղջկա տված կախարդական իրերի՝ մատանու կամ չախմախի օգնությանք տղան բերել է տալիս վիշապի այրերից և կամ ինքը սարքում: Անկախ այն բանից, թե տղան բերել է տալիս, թե սարքում, դա արվում է «գիշերը, խորհրդավոր առանձնության մեջ»,<sup>5</sup> ինչպես դարբինները ծիսական արարողություններում. միայն այստեղ դարբնի խորհրդավոր հարվածներին փոխարինում է նույնքան խորհրդավոր կախարդանքը:

Ոսկերիչների մասին ամենատարածված հեքիաթը ճարպիկ, հնարամիտ երիտասարդի կողմից ոսկերիչ գեղեցիկ կնոջը գողանալու պատմությունն է: Յայաստանի տարբեր պատմազգագրական մարզերից գրառած, մեզ հայտնի յոթ տարբերակներում (հ.2, էջ 95, հ. 3, էջ 533, հ. 4,

<sup>2</sup> *S. Նավասարդյան*, Յայ ժողովողական հեքիաթներ, 7-րդ գիրք, Թիֆլիս, 1891, էջ 31:

<sup>3</sup> *Դոմերոս*, Իլիական, Եր., 1955, էջ 357:

<sup>4</sup> *Անը*, էջ 357:

<sup>5</sup> *Ա. Թադևոսյան*, Դարբինը հայոց ծիսակարգում (թեկ. առ.), Եր., 1994, էջ 59:

էջ 257, հ. 6, էջ 336, հ. 12, էջ 401, հ. 13, էջ 130, «Դամշենահայ բանահյուսություն», էջ 160) ոսկերչի կինը գեղեցկուիի է, ինչպես ամենագեղեցիկն է առասպելական դարբնի՝ կաղ, անճոռնի Յեփեստոսի կինը՝ սիրո, գեղեցկության աստվածուի Աֆրոդիտեն: Եվ ինչպես Աֆրոդիտեն է դավաճանում իր ամուսնուն, այնպես էլ ոսկերչի կինն է անհավատարիմ գտնվում իր ամուսնու նկատմամբ: Յեփեստոսը, լինելով կրակի և դարբնության աստված, վիշապամարտիկ Զեսի օգնական, հրային տարերքի հետ միասին ունի նաև ստորերկրյա, ընդգետնյա ծագում. այն երկրի ընդերքից ժայթքող մահաբեր հուրն է, հրաբուխը: Նրա արհեստանոցը ետնա հրաբխային լեռան ընդերքում է,<sup>6</sup> և լեռան գագաթից բարձրացող ծուխը մարդիկ համարել են Յեփեստոսի դարբնոցի ծուխը: Յեփեստոսի հռոմեական տարբերակը Վուլկանն է՝ հրաբուխը: Այս ընդգետնյա, դիվային հատկությունն է դրսեորված նաև հայկական հեքիաբում: Ոսկին արևի խորհրդանիշն է: Արև է խորհրդանշում նաև ոսկերչի կինը: Եթզ նա լուսամուտից գլուխը դուրս է հանում, ողջ քաղաքը լուսավորվում է (հ. 2, էջ 99): Ոսկերիչը, որն ստորգետնյա, դիվային տարերքն է ներկայացնում, բանտարկել է արևադիկան, պահում է ստորգետնյա իր բնակարանում՝ «քառասուն օթախիցը նեքս ա դրել, քառասուն դուռը վրին փակել, մի -մին բաց ա անում, նեքս ա մտնում» (հ. 2, էջ 99): Բոլոր պատումներում նա բանտարկված է 40 կամ 7 դրսերի ետև, երբեմն նույնիսկ անլուսամուտ սենյակում: Եվ ոսկերիչ-դրե սիրուց կամ կորցնելու վախից հաճախ մտնում է նրա մոտ, ստորգում՝ տեղու՞մ է կինը:

Արև-աղջկան ազատագրող հերոսը նույն ինքը՝ վիշապի հետ մենամարտող հերոսից ճարպիկ, խարեբա մարդու վերածված տրիքստերն է: Նա իր նպատակին հասնելու համար դիմում է զանազան խորամանկությունների. առատ, բանկարժեք ընծաներով կաշառում և ոսկերչին, և նրա կնոջը, ծեռք բերում նրանց վստահությունը: Քիշենք, որ Արեսն էլ Աֆրոդիտեի մահին տիրանալու համար առատաձեռնություն էր ցուցաբերել.<sup>7</sup> Ապա խորամանկ հերոսն իր նախաձեռնությամբ կամ պառավի խորհրդով և կամ ոսկերչի կնոջ հորդորով ստորգետնյա անցը է փորում դեպի ոսկերչի կնոջ անմատչելի թաքստոցը,

<sup>6</sup> Մսֆոլոցսկու հայության անուշանական համար, Խ. 1990, ս. 152:

<sup>7</sup> «Ինչպես անբավ ընծանակությունը պղծեց մահինը Յեփեստոս մեծագորի», Ողիսական, Եր., 1988, էջ 118:

տիրանում նրան և նույն անցքով փախցնում կնոջը՝ չարաչար խաբելով նրա ամուսնուն, որն անձանք քավոր է կանգնում նրանց պսակին և ճանապարհ դնում դեպի իրենց երկիրը, իսկ հետո կատարվածն ընթռնելով՝ վշտից մեռնում է կամ վերջ տալիս իր կյանքին:

Ոսկերչի և նրա կնոջ դիպաշարի յոթ տարբերակից միայն մեկում կա շեղում, որտեղ խառնվել է այն մեկ այլ՝ հերոսի կնոջ վրա աչք դնողին պատժելու դիպաշարի հետ: Ոսկերիչն այստեղ էլ իր կնոջը թաքցրել է «յոթ հօդով ներս» (հ.13, էջ 130), բայց այս դեպքում նա կնոջ օգնությամբ թակարդն է գցում նրան սիրահետողին՝ կնոջ սենյակի լուսամուտի տակ փոս փորելով, ինչպես Յեփեստոսն էր ոսկե ցանցով որսացել իր կնոջ տարիքածու Արեսին:<sup>8</sup>

Դայկական հեքիաթների սույն մոտիվների տիպաբանական ընդհանրությունները Յոմերոսի հաղորդած Յեփեստոսի առասպելի համանման մոտիվների հետ՝ մի կողմից վկայում են տվյալ հեքիաթների առասպելաբանական հիմքերի խորին հնությունը, մյուս կողմից՝ այն սերտ կապը, որ գոյություն է ունեցել հունական հին բանահյուսության և հայոց բանավոր ավանդության հնագույն նմուշների միջև:

---

<sup>8</sup> Անդ, էջ 119:

## Աստղիկ Իսրայելյան ՀՊԹ

### «ԿԱՊՆ» ՈՒ «ԿՈԽԸ» ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ

Հայերի ժողովրդական պատկերացումներում կախարդանքի արդյունք են ոչ միայն հիվանդություններն ու մահը, այլև «կապը», որի բուն նշանակությունն է «կախարդանք»; «հմայություն»:<sup>1</sup> «Կապելը» մարդիկ իրականացնում էին կամ կախարդների օգնությամբ, կամ ինքնուրույնաբար հմայական համարվող զանազան հնարքներով: Ըստ որում, «կապվում» են և մարդիկ, և կենդանիները: Վերջինի օրինակներից է «գելկապը»: Գայլի բերանը «կապում» էին աղոթքներով և հմայական արարողություններով, որպեսզի նա չուտեր դրսում կորած կենդանուն (կովին, ոչխարին): Ենթադրվում էր, որ գայլը կարող է ընդհուած մոտեցած լինել, բայց «կապի» շնորհիվ չոփչել նրան, որովհետև քարանում - անշարժանում էր: Եթե նրան հմայաբափ չանեին, նա կսատկեր, ուստի, երբ գտնում էին կորած կենդանուն, հաճախ «գելկապ» անողին խնդրում էին, որպեսզի նա «բանար» գայլի բերանը և խեղծ կենդանին սովամահ չլիներ:<sup>2</sup>

Մարդկանց «կապելը» հիմնականում նոր ամուսնացող գույգին ամուլ դարձնելն է և հատկապես փեսացուին առնական զորությունից զրկելը: Այս «կապը» կատարում են պսակի ծիսակատարությունից անմիջապես առաջ և դրա ընթացքում: Կապողը յոթ գույնի թելերը յոթ հանգույց է անում համապատասխան աղոթքներով և գաղտնի դնում հարսի կամ փեսայի գրանը: Հմայությունն անում են նաև տղայի մազից թաքուն կտրելով ու «գիր անողին» կախարդին, տալով: Նա երկար ժապավենանման թղթի վրա աղոթքներ է գրում, եռամկյունածն ծալում, փաթաթում կապույտ գույնի կտորի մեջ և ծածուկ կարում

<sup>1</sup> Հ.Ածառյան, Հայերեն արմատական բառարան, հ.2, Եր., 1978, էջ 519:

<sup>2</sup> Եր.Հայայելան, Բորչալուի գաւառ.- Ազգագրական հանդես (այսու՝ ԱՅ), 10, Թիֆլիս, 1908, էջ 248:

հարսի կամ փեսայի հագուստի մեջ:<sup>3</sup> Փեսացուի մազերը, հատկապես սափրելու ծեսի ժամանակ, պետք է խնամքով պահել, նաև՝ որպեսզի այդպիսի «գիր» չանեն ու «չկապեն» նրան և, երկրորդ՝ որ այդ մազերը տրորելով փեսային «չկոխեն»:<sup>4</sup> Եկեղեցի գնալիս հարսնեվորները հսկում են, որ թագավորի և հարսնացուի արանքով մարդիկ չանցնեն և քար չնետեն, որպեսզի սրանք «կոխվածք» չլինեն: Հարսնաքույրը բռնում է հարսնացուի ծամերի արմատներից, որպեսզի նա «կապ» չընկնի:<sup>5</sup> Այսպիսով, «կապը»՝ ամլությունը, կարող է «կոխի» հետևանք լինել:

Բայց պսակադրելիս «կոխը» ոչ միայն «կապի» պատճառ է, այլև առհասարակ զավակ չունենալու պատճառներից մեկն է նաև հետագայում հատկապես ամուսնության արարողությանը հաջորդող 40 օրվա ընթացքում: Հարսն ու փեսան այս ընթացքում, արևը մայր մտնելուց հետո, չպետք է տնից դուրս գան, որովհետև մեկը կարող է նրանց ճանապարհին «գիր արած» ու գցած լինել և եթե նրանք չտեսնեն, վրայով անցնեն «կոկոխվեն»: Չի կարելի, որ նրանք գիշերով անցնեն ջրի վրայով, գերեզմանների մոտով... Վտանգավոր է նաև, որ դեռևս 40 օրը չլրացած՝ ուրիշ նորապսակներ գան սրանց մոտ, որի հետևանքով կիհվանդանան և երեխա չեն ունենա: <sup>6</sup> Որոշ շրջաններում հավատում են, որ եթե նորահարսի մոտ առաջին 40 օրերի ընթացքում չար և անմաքուր մարդ գա, նա յոթ տարի զավակ չի ունենա: <sup>7</sup>

Նորապսակներին պաշտպանելուց հետո, առաջնահերթ կարևորություն է ստանում երեխային նախքան ծնվելը և ծնվելուց հետո «կոխից» պաշտպանելը: Եղի կինը որևէ տեղ գնալիս՝ չպետք է անցնի ճանապարհին պատահող երկու մարդկանց արանքով, այլապես երեխան «կոկոխվի»:<sup>8</sup>

Երեխան ծնվելուց հետո դարձյալ մոր և նորածին մանկան համար ամենավտանգավոր ժամանակն առաջին 40 օրն է: Այս փուլում «կոխվելն» անվանվում է «քառսունքակոխ լինել», ուստի արևը մտնե-

<sup>3</sup> Ա. Խորայելյան, Կանո, Մարտունի. - Անձնական արխիվ, Դաշտային տետր (այսու՝ ՂՏ), 1982, էջ 81, 88:

<sup>4</sup> Եր. Լալայեամ, Բողչալուի գաւառ, ԱՐ, 9, Թիֆլիս, 1902, էջ 282:

<sup>5</sup> Եր. Լալայեամ, Մուշ – Տարօն, ԱՐ, 26, Թիֆլիս, 1917, էջ 169:

<sup>6</sup> Ա. Խորայելյան, Կանո, Մարտունի, ՂՏ, էջ 44:

<sup>7</sup> Ա. Խորայելյան, Դուկասյան, ՂՏ, 1985, էջ 9:

<sup>8</sup> Քենսէ, Բոլշանըիս կամ Հարք գաւառ, ԱՐ, Ե, Թիֆլիս, 1899, էջ 122. Տե՛ս նաև «Հայ ազգագրություն և բանահյուսություն», 3, Եր., 1972:

լուց հետո, դարձյալ օտար մարդ չպետք է մտնի տուն:<sup>9</sup> Ծննդկանն այս դեպքուն կարող է «քաշքակոխ» լինել՝ այսինքն քաջերից գժվել:<sup>10</sup> Իսկ նորածինները նիհարում են, շարունակ լալիս, չեն քնում, կերածը չեն մարսում, չեն աճում,<sup>11</sup> ժամանակին չեն քայլում:

«Կոխի» պատճառները բազմազան են: Բացի վերը նշվածներից, այն կարող է պատահել, եթե օրու մեկը փայտն ուսին դրած ներս մտնի, եթե միս բերեն տուն, եթե տան մոտով հանգուցյալ տանեն և այլն: Ամենատարածվածն այն համոզմունքն է, որ եթե 40 օրը չլրացած նորածնի տուն «քառասունքի» մեջ գտնվող կին գա, երեխան «կոխսվի»:<sup>12</sup> Երեխային փրկելու համար եկող կինը վերցնում է իր մանկանց և երկու այլ կանանց իրենց մանկանց հետ, և երկու ուրիշ կանանց ուղեկցությամբ, գնում են առվի ափը, և կերակրում միմյանց մանուկներին: Յետո ուղեկցող կանայք փոխում են երեխաններին, և ամեն մեկն իր երեխան գրկած, հեռանում է տարբեր ժամապարհով:<sup>13</sup>

Նորածինների հայրերը ևս կարող են «կոխի» պատճառ դարձնալ, եթե, օրինակ՝ քառասունքի միջոցին կտուրը բարձրանան<sup>14</sup> կամ քառասունքի մեջ գտնվող երկու կնոջ ամուսինները միմյանց տուն գնան: Եթե «կոխի» պատճառ դարձած մարդու կինը հրաժարվում է կուրծք տալ տուժած մանկանը, վերջինիս շորերը ծածուկ թափահարում են այդ մարդկանց տան երդիկից ներս:<sup>15</sup> Միևնույն ծևով «կոխսված» երեխային փրկելու համար այդ տղամարդու մահճակալի մոտի պատից մի փայտի կտոր են հանում կամ նրա պառկած կողմի կտուրի ծածկի տախտակներից մեկը գողանում, տուն բերում և երեխային վրան լողացնում: Յետո այդ տախտակը այնպիսի տեղ են գցում, որ ոչ ոք չկարողանա գտնել և նախկին տեղը դնել, այլապես «կոխը» կանցնի այդ տան երեխային:<sup>16</sup>

«Կոխի» պատճառ կարող էին դառնալ նաև կենդանիները: Առավել վտանգավոր էր համարվում օծից «կոխսվելը»: Եվ դա շատ դժվար

<sup>9</sup> Ա. Խորայելյան, Ղափան, ԴՏ, 1985, էջ 9:

<sup>10</sup> Ա. Խորայելյան, Սիսիան, ԴՏ, 1974, էջ 14:

<sup>11</sup> Ա. Խորայելյան, Մաքրավանք (Դրազդանի շրջան), ԴՏ, 1981, էջ 18:

<sup>12</sup> Եր. Լալայեան, Զաւախը, ԱՐ, Շուշի, Ա, 1985, էջ 273: Տես նաև Ե. Լալայեան, Երևեն, հ. 1, Եր., 1983:

<sup>13</sup> Յ. Մուլադեանց, Համշենցի հայեր, ԱՐ, 2, 1900, էջ 368:

<sup>14</sup> Ե. Լալայեան, Կասպուրական, ԱՐ, 20, Թիֆլիս, 1910, էջ 177:

<sup>15</sup> Քենսէ, անդ, էջ 128-129:

<sup>16</sup> Յ. Մուլադեանց, անդ, Յ, էջ 366-371:

է բժշկվում, որովհետև օծից «կոխվածին» բուժելու համար պետք է օծ բռնել, կիսահոգի անել, հիվանդին նրա վրա լողացնել, որ ցավը օծին անցնի, և ապա վերջինիս բաց թողնել: <sup>17</sup> Մսից «կոխվելն» էլ, փաստութեն, կենդանուց «կոխվել» է նշանակում :

«Կոխվում» են նաև իրենք՝ կենդանիները: Օրինակ՝ եթե մեկը ծնած կով կամ գոմեց ունենա և մի «քառասունքի» մեջ գտնվող կին գա այդ տուն, հորթը «կոխ» կլինի: Յորթուկ ունեցողը ևս չպետք է միս թերի տուն, այս անգամ արդեն՝ կենդանին կենդանուց է «կոխվում», ինչպես մարդը՝ մարդուց:

Կենդանիները «կոխվում» էին, երբ գաղթական ընտանիք էր գալիս տվյալ գյուղը: Այդ ժամանակ ծնած կենդանուն գոմից դուրս էին թերում, հետո ներս տանում: 40 օր տնից կրակ դուրս չէին տալիս, երբ հորթ էր ծնվում: Շայրահեղ դեպքում, կրակը ծեռքից - ծեռք չէին փոխանցում. տվյողը այն դնում էր շեմքի մոտ, իսկ եկողն ինքն էր վերցնում ու տանում: <sup>18</sup>

Ժողովրդական հավատալիքներում մարդը «կոխվում» է տարբեր առարկաներից, և առարկան ինքն էլ ենթակա է «կոխվելու»: Օրինակ՝ ով անցնի հրացանի վրայով, «կոխ» կլինի. Նախ՝ հրացանի մեղքերն են փոխանցվում անցնողին, ապա՝ հրացանն է «կոխվում» և նրա գնդակները ծռվում են իրենց նշանակետից և այն փչանում է: Փաստորեն, փոխադարձ «կոխ» է տեղի ունենում:

«Կոխ», «կոխվածք» հասկացությունը ոգեպաշտական պատկերացումներից է գալիս: «Կոխվելն» առաջին հերթին կապվում է մարդու կենսաշրջանի այն ժամանակահատվածի հետ, երբ տեղի են ունենում նրա կյանքի կարևորագույն իրադարձությունները՝ ամուսնություն, ծնունդ, մահ և դրանց հաջորդող քառասնօրյա շրջանը: «Կոխվելու» համար վտանգավոր է նաև օրվա այն հատվածը, որն ընկած է մթնշաղից մինչև լուսաբաց: Երկու դեպքում էլ սրանք տարբեր ոգիների գործունեության ամենաաշխույժ ժամանակահատվածներն են: Խիստ կարևոր է նաև «կոխի» տեղը՝ գերեզմանները, ջրերի շրջակայքը և բոլոր մյուս այն վայրերը, ուր ոգիներն առանձնապես շատ են կուտակվում: Հաճախ, որոշակի հիշատակվում է, թե որ տեսակի ոգին

<sup>17</sup> Յ. Մուրադեանց, անդ, Զ, էջ 127-151:

<sup>18</sup> Յ. Մուրադեանց, անդ, Ե, էջ 368:

է «կոխսի» պատճառը՝ «ալքի կոխած», «թպդի կոխած», «չարքի կոխած», «քաջքի կոխած», «հրեշտակակոխ»:

Բացի այդ, երբ մարդ «կոխսվում» է այլ մարդուց, ենթադրվում է, որ ումից «կոխսվել» է, նրա հոգին կամ ուղեկցող ոգին է ազդել «կոխսվողի» վրա. օրինակ՝ «քառասունքի» մեջ գտնվող նորապսակները և ծննդկանները, որոնք միմյանց համար շատ վտանգավոր են, ըստ հավատալիքի՝ շրջապատված են չար ոգիններով, և մեկը մյուսի մոտ գնալով, իր հետ է տանում այդ ոգիններին: Ավելին՝ վտանգավոր են ոչ միայն կենդանի մարդիկ, այլև մահացածները, որովհետև ըստ հավատալիքների, երբ մարդը մահանում է, նրա հոգին մարմնից անջատվելով՝ որպես չար էակ, կարող է մտնել մարդկանց մեջ և «կոխսելով» այնպես վախեցնել, որ նրանք վախից հիվանդանան:

«Կոխը» տեղի է ունենում նաև այն հոգեառ հրեշտակի կամ գրողի պատճառով, որն առել է մարդու հոգին և շրջում է նրա մարմնի մոտ այնքան ժամանակ, քանի դեռ նրան չեն հանձնել հողին: Ինչպես ցույց տրվեց հրացանի օրինակով՝ անշունչ առարկաներն ել են «կոխում» և «կոխսվում»: Պարզ է, որ սա ևս ոգեպաշտական այն համոզմունքից է բխում, թե որ առարկաները հոգիններ ունեն:

Եթե մարդիկ չեն իմանում, թե «կոխն» ինչից է, գուշակությամբ էին պարզում պատճառը՝ արծիճ, մոմ թափելով և այլ ծևերով, որից հետո համապատասխան միջոցներ էին ծեռք առնում: Օրինակ, Գետաշենում եթե «պարզում էին», որ երեխան քաջքերից էր «կոխսվել», քաջքածորի ժայռի մեջի «քաջքառուն» կոչվող անցքի մոտ էին տանում նրան, երեք անգամ այդ անցքով անցկացնում և ասում. «Իմը քե, քունը ինձ տուք» և նախապես պատրաստած մի տիկնիկ էին թաղում այդ ժայռի տակ:<sup>19</sup>

Առհասարակ «կոխից» խուսափելու համար առաջին հերթին պետք էր պահպանել մոգական արգելքները: Օրինակ՝ եթե գյուղում չքաղված մեռել կար, չէր կարելի գլուխ լվանալ ու լվացք անել, որպեսզի հրեշտակից ու գրողից «չկոխսվեն», կամ եթե նորածնի ծնողները «քառասունք» չպահեն, ապա նորածինն հորը կընկնի:<sup>20</sup>

«Չկոխսվելու» և «կոխսվելուց» բուժվելու համար անհրաժեշտ էր

<sup>19</sup> Եր. Լալայեան, Գանձակի գաւառ, ԱՅ, Զ, Թիֆլիս, 1900, էջ 283: Տես նաև Եր. Լալայեան, Երևան, հ. 2, Եր., 1988:

<sup>20</sup> Ա. Խորայեցյան, Հառիճ, ԴՏ, 1986, էջ 15:

նաև մոլորեցնել ոգիներին՝ դիցուք, ինչպես օտար մարդ տուն մտնելու կամ միս բերելու դեպքում, երեխային դուրս տանելն ու կրկին ներս բերելն էր: Այս արարողությամբ նպատակ էր հետապնդվում համոզել ոգիներին, որ դրսից ներս տարվող երեխան նա չէ, որ ներսն էր, այլ նա է, որ նոր է բերվում ներս:

Առվի մոտ երեխաներին կերակրելն էլ այն իմաստն ուներ, որ պեսզի «կոխված» երեխայի մայրը ցույց տար, թե նա չի իր երեխան, այլ մյուսը՝ չկոխվածը: Չար ուժերին խաբելն ու մոլորեցնելը ընդունված հավատալիք էր և ազատություն: Եթե որևէ ընտանիքում ծնված նախորդ երեխաները չեն ապրել և նոր երեխա էր աշխարհ գալիս, նրա կյանքը երաշխավորելու համար այլակրոնի անուն էին դնում: Դայերն, օրինակ, մահմեղականի անուն էին դնում, և՝ ընդհակառակը: Բացի այդ, հայտնի է, որ ալ և թպղա չար ոգիները ջրի մոտ էին տանում ծննդկանի ու նորածնի փորոտիքը կամ լարդը՝ լվանալու և ուտելու համար:

«Կոխը» նաև թոթափում էին երեխայի շորերը թափ տալով այն մարդկանց երդիկներից ներս, ումից որ երեխան «կոխվել» էր: Տան մոտով ննջեցյալ տանելիս երեխային գրկած, դուրս էին հանում, որ պեսզի նրա ցավը ննջեցյալի հետ գնար, իսկ եթե երեխան քնած էր, նրա շորերն են թափ տալիս հանգուցյալի հետևից, որպեսզի «կոխը» նրա հետ գնար:<sup>21</sup>

Երեխայի «կոխը» նաև կարելի է «լվանալ» ջրով. ջրից բացի, կարենոր է նաև այն առարկան կամ կենդանին, որի վրա «թափում են կոխը»: Մեծ մասամբ դա հենց այն օբյեկտն էր, որից «կոխվել» էր երեխան կամ տվյալ անձը: Դրանով «կոխվածքը» կարծես ետ էին ուղարկում. եթե օձից էր կոխվել, օձի վրա էին լողացնում, եթե հանգուցյալից գերեզմանի վրա, եթե կատվից՝ կատվի վրա, եթե մսից՝ մսի վրա և այլն: Նույն հավատալիքով լողացնում էին ոչ թե անմիջականորեն «կոխողի», այլև նրա հետ կապ ունեցող որևէ առարկայի վրա. դիցուք, շնից «կոխվածին»՝ շան ամանի վրա են լողացնում, հորից «կոխվածին»՝ նրա գուլպայի վրա...

«Կոխից» կարելի է ազատվել նաև «թպղի» նման՝ այն ուրիշին փոխանցելով. օրինակ՝ «կոխված» կիմը շան վրայով անցնելով՝ «կոխ-

<sup>21</sup> Ա. Խորայելյան, Կամո, Մարտունի, էջ 13:

Վածքը շանն է փոխանցում: Շատ ուշագրավ է Երեխայի հորը պատկանող իրով ծառին կոխս փոխանցելու արարողությունը՝ ոտքերով կոխոտելու, տրորելու միջոցով: Եթե Երեխան «կոխվել էր» վերցնում էին նրա հոր շալվարը, զցում տան մեջտեղը, տունն ավլում և ամբողջ աղբը լցնում այդ շալվարի վրա. հետո այդ շալվարով աղբը թափում պատվաստված մեկ տարեկան ծառի արմատների մոտ և Երեխային երեք օր շարունակ, առավոտմերը տանում այդ ծառի մոտ և ոտքով կոխսկրտում այդ աղբը:<sup>22</sup>

Ինչպես ցույց են տալիս վերը նշված օրինակները, հայոց ժողովրդական հավատալիքներում «կապից» և «կոխից» խուսափելու միջոցներն են հմայակն արգելքների պահպանումը, ճիշտ ժամանակին ծիսահմայական որոշակի արարողություններ կատարելը և, բազմապիսի հմայական պահպանակների կիրառությունը:

---

<sup>22</sup> Յ. Մուրադեանց, անդ, Ե, էջ 368:

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՎՔ-ԶՈՆԵՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱ- ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Զոներգերը (հուն. dithurambos) ծիսերգերի հնագույն տեսակ են, որոնք ծևավորվել են ծիսապարերգային բանահյուսության վաղնջական շերտերում: Դրանք իբրև «Խորհրդանշային ծևեր ու արարքներ»,<sup>1</sup> վերախնաստավորվել են գեղարվեստական գիտակցության և բանաստեղծական մտածողության մեջ՝ պահպանվելով քնարական երգերի տեսքով:<sup>2</sup> Զոներգ-ծիսերգերի ծևակառուցվածքային, իմաստաբանական և տեքստաբանական քննությունը ենթադրում է դրանց աշխարհայացքային, ազգային-հոգեբանական և գեղագիտական դերի, պատմական զարգացման օրինաչափությունների բացահայտում:

Զոներգերը գալիս են հնդեվրոպական ընդհանրության շրջանից և բնորոշ են նաև հինարևելյան (Չումերական, հերիթական, հին եգիպտական, հնուկական և այլն) առասպելաբանաստեղծական մտածողությանը, որոնց թեմատիկ-գաղափարական հենքը՝ աստվածներին նվիրված գովքն է ու փառաբանությունը: Հմնտ. հին հնուկական՝ հիմն Ինդրային, հիմն Ազնիին, հիմն Սոմայի՛<sup>3</sup> և այլն, ինչպես նաև՝ արևին նվիրված հերիթական հիմները.

=Արև, տիրակալ իմ արդարադատ:  
=Երկնքի ու երկրի արքա:  
=Դո՛ ես հաստատում ծեսն աստվածների:<sup>4</sup>

Ծիսերգերին բնորոշ նմանատիպ աղերս-դիմումային բանաստողերն ու արև-փրկիչ, փրկիչ-Քրիստոս, Քրիստոս-արդարության արե-

<sup>1</sup> О. Ф. Фре́йденберг, Поэтика сюжета и жанра, А., 1936, с. 192.

<sup>2</sup> К.С.Давлетов, Фольклор как вид искусства, А., 1966, с 257.

<sup>3</sup> Յին Արևելքի պեղիա, Եր., 1982, էջ 264-270:

<sup>4</sup> Անդ., էջ 171-175:

**գակ** լեզվահմաստաբանական նույնացումները հայ ժողովրդական ծոներգային բանահյուսության մեջ՝ քրիստոնեկան վերահմաստավորումներով, բազմիցս հանդիպում են աղոթքներում, միջնադարյան աշխարհիկ ու հոգևոր երգերում (շարականներում) և հատկապես Գրիգոր Նարեկացու տաղերում, ուր հաճախակի են հանդիպում նման կայուն դիմում-բանատողեր ու փառաբանություններ (=**Փրկիչ**, տեր Դիսուս Քրիստոս: =**Փա՛ռք լուսատուին այժմ և հավիտյան**),<sup>5</sup> ինչպես նաև՝ մարդու փառաբանությունն ու գովքը:<sup>6</sup> Փառաբանական, օրինաբանական գովքեր են նաև հնագույն արևագալի երգերը, որոնք կատարվում էին հարսանեկան առագաստի օրը՝ այգաբացին. օրինակ՝

= Եք բարև, եք բարև,  
Դարս ու փեսիմ՝ շատ արև.<sup>7</sup>  
= Բարով էկիր դուն բարկ արև  
Ծագեցար դուն մեր տան վերև.<sup>8</sup>  
= Բարի լուս, աղւոր, բարի լուս,  
Բարի լուսուն՝ բարին վրադ  
Ու ցաթէ արևն ի վրադ.<sup>9</sup>

Դմտ. հայոց մեջ «Առաւոտ լուսո» հոգևոր տաղը և սահարին (գուռնա-դիոլով) իբրև արևին, արևածագին նվիրված փառաբանական կանչ, որը կատարվում էր հարսանեկան և երկրագործական ծեսերի ժամանակ. (Արագածոտնում՝ վարի առաջին ակոսի հետ հնչում էր սահարին, որը դիտվել է իբրև պտղաբերություն ապահովող ծիսարար):<sup>10</sup> Փառաբանական, օրինաբանական, ծոներգային բնույթի երգերը համարվել են «ամենահին քնարական երգերը»:<sup>11</sup> Զոներգերը ծագումնաբանությամբ աղերսվում են նախամարդու պատմության և տիեզերաստեղծման առասպելների հետ: Վերջինիս հետ են կապվում

<sup>5</sup> Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Եր., 1957, էջ 81, 87:

<sup>6</sup> Անդ., էջ 16:

<sup>7</sup> Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 2, Վաղարշապատ, 1906, էջ 32-33:

<sup>8</sup> Գ. Արվանծոյան, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 519:

<sup>9</sup> Դ. ճանիկյան, Յնություններ Ալենա, Թիֆլիս, 1895, էջ 419:

<sup>10</sup> Լ. երնջակյան, Դ. Պիկիչյան, Ճիմն Արևին, Սահարին հայ երաժշտական մշակույթում, Եր., 1998, էջ 12-15:

<sup>11</sup> Մ. Սիանսարյանց, Քնար Դայկական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 34:

նաև բանաստեղծական տարրերն ու տեսակները<sup>12</sup> և հնդեվրոպական ավանդությամբ՝ խոսքն էր (vaz) կազմակերպում տիեզերքը:<sup>13</sup> Հմնտ. ՈՒզգեղայի տեքստերում «Դիմ Պուրուշային»՝<sup>14</sup> Պուրուշայի զոհաբերման, անդամահատման ծեսը, որից ծնվեց ողջ տիեզերքը (աչքարև, գլուխ-երկինք, ոտք-երկիր և այլն), ինչպես նաև՝ հիմները, երգերն ու բանաստեղծական չափերը:<sup>15</sup>

Տիեզերական բովանդակությամբ լեզվահիմաստաբանական նույնացումներն ու գեղարվեստական արտահայտչամիջոցները, որոնցով իրագործվել են ծոներգ-բանաստեղծություններն ընդհանրապես (գովք-ծոներգեր, ողբ-ծոներգեր), ի սկզբանե ծառայել են ծեսի հիմնական նպատակամիտմանը (արարչագործությանը)՝ ներառելով գեղարվեստական ստեղծագործության բոլոր հատկանիշները: Այս առումով կարևորվում է գեղագիտականի դերը ծիսառասպելական համալիր միջավայրում, ուր ծևավորվել է գեղագիտական միտքը<sup>16</sup> և որտեղ բառն ու բանաստեղծությունը կենտրոնացրել են ժողովրդի ողջ գեղագիտական կյանքը:<sup>17</sup> Քննելով հայ ժողովրդական ծոներգային բանահյուսության հնագույն նմուշները (դիցանում, անձնանում)՝ թագվորագովերը (հարս - փեսա - կենաց ծառ), ժողովրդական վեպում՝ գուսանների կատարած գովերը (խանդութ խանումի գովը «Սասմա ծռեր»-ում),<sup>18</sup> ակնառու է դառնում, որ դրանք կրում են հնագույն բանաստեղծության կնիքը: Այդ է հավաստում նաև հայ ժողովրդական ծոներգերի թեմատիկ-ձևակառուցման հիմքում ընկած՝ «սիեցերական առաջին զոհի առասպելի»<sup>19</sup> հիշատակը, ըստ որի՝ նախամարդու (կնոջ) մարմնի մասերը նույնացվել են տիեզերքի մասերի և երկրային տարրերի հետ: Ամբողջական-միահյուս կառուցվածք ունեցող ծոներգերում (օրինակ՝ «Երուսաղեմ ուխտ իմ արք», «Գքելեր» և

<sup>12</sup> Т.Я.Елизаренкова, В.Н.Топоров, Древнеиндийская поэтика и ее индоевропейские истоки. В кн. Литература и культура древней и средневековой Индии, М., 1979, с. 40-43.

<sup>13</sup> Там же, с. 64.

<sup>14</sup> Հին Արևելյան պոեզիա, էջ 270-273:

<sup>15</sup> Անդ., էջ 271:

<sup>16</sup> Е.М.Мелетинский, Поэтика мифа, М., 1976, с. 312-313.

<sup>17</sup> А.А.Потебня, Эстетика и поэтика, М., 1976, с. 190-191.

<sup>18</sup> Սասունցի Դավիթ, Եր., 1981, էջ 254:

<sup>19</sup> В.Н.Топоров, Мифы народов мира, т. II, Первочеловек, М., 1982, с. 300-302.

այլն) մարմնի մասերի (աչքեր, բերան, քիթ, ատամներ, շրթումքներ, թևեր, մեջք, ոտքեր, մատներ, եղունգներ, մազեր և այլն) առանձին-առանձին թվարկումն ու գովերգումը (մասնատում)<sup>20</sup> աստված - մարդարե - թագավոր - թագուհի - հերոս - նշանավոր անժ կապով՝ իրագործվում է յուրատիպ գեղարվեստական արտահայտչածերով ու լեզվահմատաբանական նույնացումներով (աչք-արեգակ, երես-լուսին, շունչ-հոգի, բերան-կրակ և այլն), որոնցով ընդհանրանում ու ամբողջանում է նորոգվող տիեզերքն ու վերակենդանացող աստծու (մարդու) կերպարը: Հմնտ. իին եգիպտական մեռնող և հառնող աստծու՝ Օսիրիսի թաղման ծեսը երրորդության (իպոստաս) տեսքով. մեռած աստված-մասնատված աստված-վերակենդանացած աստված:<sup>21</sup>

Առաջնազորի գաղափարն ակնառու է նաև հայ ժողովրդական երկրագործական ծիսա-արտադրական կենցաղին աղերսվող երգերում ու պարերգերում («Երկրագործի երգեր»),<sup>22</sup> ուր վար-ցանք-հունձ ընդգծող պատկերները դիտվել են իբրև խորհրդանշային արարքներ, իսկ մարմնի մասերը՝ նույնացվել արտադրամիջոցների հետ (թև-քիակ, ծեռք-մանգառն, պառեկ-բալխիր, մատներ-հորսելի և այլն): Հմնտ. «Դամբարձման երկուշաբթին» պարերգի տարբերակները:<sup>23</sup>

Թեմատիկ-ձևակառուցման այս սկզբունքը (տիեզերական առաջնազորի մասնատման և ապա՝ ամբողջացման գաղափարներով), որն ընկած է հայ ժողովրդական ձոներգ-ծիսերգերի հորինվածքի հիմքում, կարելի է դիտել իբրև ձոներգերին բնորոշ կառուցվածքա-տիպաբանական յուրատիպ հատկանիշ, հորինվածքային առանձնահատկություն: Կառուցման նման ձևերով են հատկանշվում նաև հայ ժողովրդական գովք-օրորոցայինները<sup>24</sup>: Թվարկվող աչուկ, բերան, քիթ, ականջ, մատներ, մազեր և այլն, ինչպես նաև աչուկ-խաչուկ, բերան-խնկաման, ականջ-ժամի զանգակ, կոճակ-դրմակ և այլ լեզվահմատային նույնացումներով: Մարդու մարմնի մասերի առանձնակի թվարկումը և ընդհանրապես մարդու մարմնակազմության նկարա-

<sup>20</sup> Զ.Ֆրեզեր, Ուկե Ծյուղը, Եր., 1983, էջ 441:

<sup>21</sup> Եր.Լավայան, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 381-383:

<sup>22</sup> Ո.Խաչատրյան, Դամբարձման երկուշաբթին պարերգի իմաստատեքստաբանական վերլուծության փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 6, 1991, էջ 90:

<sup>23</sup> Ո.Գրիգորյան, Դայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., 1970, էջ 181:

գրությունը՝ ողջ կազմախոսությամբ ու գեղարվեստական յուրատիպ համեմատություններով՝ հատկանշական է հայ միջնադարյան ժողովրդական և աշխարհիկ բանաստեղծությանը (հատկապես Գրիգոր Նարեկացու «Մատոյան ողբերգությանը», որը և դիտվել է իբրև վաղնջական ըմբռնումների արդյունք):<sup>24</sup>

Իբրև հնագույն խորհրդանշային պատկեր, գեղարվեստական հնարանք և կերպավորման եղանակ,<sup>25</sup> մարմնի մասերի թվարկումն ու գովքը (մասնատում) հայ ժողովրդական ծոներգերում ստեղծագործական զարգացման գործընթացում ձեռք է բերում զուտ բանաստեղծական արժեք և իրագործվում առավել առարկայական լեզվահմաստաբանական նույնացումներով ու պատկեր - համեմատություններով։ Օրինակ՝ «Երուսաղեմ ուխտ իմ արը»<sup>26</sup> ծոներգ-պարերգում (մեջք - եղեգ, թև - բամբակ, մատ - մոմ, կուրծք - շամամ և այլն)։

= Զքու ծամիր, որ ես գըսեք, խարծի խամշի է նման,  
Զքու թևիր, որ ես գըսեք, պամբակի օլուր նման,  
Զքու մաղպիմ, որ ես գըսեք, կառողի մոմի նման,  
Զքու ծձիր, որ ես գըսեք, հողով շամամի նման。<sup>27</sup>

Պատահական չէ, որ Նորտրոպ Ֆրայը ծեսը, ինչպես նաև գոհաբերությունը դիտում է իբրև բանահյուսական հնագույն ծևերի կառուցվածքային հիմք, որոնք գեղարվեստական մակարդակում անպայմանորեն պետք է հանդես գային այլարանական, թաքնված պատկերներով։ Նման խորհրդանշանային պատկերները, իբրև գոհաբերման արարքներ (մասնատում-ամբողջացում)՝ ընդգծված դրսերումներով ի հայտ են գալիս հայ միջնադարյան ժողովրդական երգերում (քրիստոնեական մահվան և հարության գաղափարներով), որոնք իրագործվել են բանաստեղծության հնագույն կառուցման ծևերով՝ կրկնակային ռիթմամասերով (տվյալ դեպքում ա՞յլ էի, ա՞յլ ելեմք), տողակրկնություններով և նմանահնչունությամբ, որոնք ունեն բանա-

<sup>24</sup> Վ.Նալբանդյան, Գրիգոր Նարեկացի, Եր., 1990, էջ 112:

<sup>25</sup> Ռ.Խաչատրյան, Կնոջ կերպավորման եղանակները հայ ժողովրդական երգերում. Բանքեր Երևանի համալսարանի, 1, 1995, էջ 166:

<sup>26</sup> Վ.Պետոյան, Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 392:

<sup>27</sup> Անդ.:

տողի իմաստն ամրագրող որոշակի անագրամային արժեք (օրինակ՝ *Ողբ կաքաւու*,<sup>28</sup> «Երգ սիրոյ» և այլն)<sup>29</sup>.

*Առնում զիմք, լեռկումք, ա՞յլ ելեմք.  
Զիմք տիքնմ – տիքնմ բաժանեմք,  
Զիմք տիքնմ – տիքնմ բաժանեմք, (նասնատում)  
Զիմք տիքնմ – տիքնմ բաժանեմք.<sup>30</sup>*  
*= Ուկորք ալ տաճար, ա՞յլ շինեմք,  
= Ու պահես տաճարս ի լուսով, (ամբողջացում)  
Ու պահես տաճարս ի լուսով.<sup>31</sup>*

Դմնտ. հայոց մեջ՝ ժողովրդական քրիստոնեական վարքաբանական ավանդություններում, քրիստոնեական սրբերի նահատակությունից հետո (*Արքարապետ, Արքարզիս, ԱրքԱնորդ*), նրանց մարմնի մասերը (գլուխ, մատներ և այլն) իբրև մասունքներ, բարձունքների վրա թաղելու և դրանց վրա վաճքեր կառուցելու սովորույթը՝ նահան և հարության քրիստոնեական գաղափարներով։ Ծիսառասպելական համալիր միջավայրում՝ ոչ միայն կառուցվածքային, այլև միևնույն աշխարհայացքային հիմքով էին պայմանավորված առասպելը, ծեսն ու բանաստեղծությունը,<sup>32</sup> որոնք մշտապես ներդաշն են ու միաձույլ՝ ապահովելով առասպելի ծիսական բնույթը,<sup>33</sup> ծիսական խոսքն իբրև լեյտմոտիվ և դրա գեղարվեստական ներգործում, հուզարտահայտչական դերն ու նշանակությունը ծիսական համատեքստում։

Հայ ժողովրդական **ծոներգ-պարերգերը**, հավանաբար, զարգացել են *դիցանում – կերպար – պատկերների* (Դերիկո-Նինա, Դերիկո հո ՝ Նար, <sup>34</sup> Նար, Նար, Նար, Նար)՝<sup>35</sup> հիմնատիպային հենքի վրա, որտեղ կրկնություններն իբրև գեղարվեստական արտահայտչամի-

<sup>28</sup> Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Եր., 1956, էջ 223-225:

<sup>29</sup> Անդ., էջ 130-131:

<sup>30</sup> Անդ.,

<sup>31</sup> Անդ., էջ 131:

<sup>32</sup> Ա.Ա.Պոտեբնա, նշվ. աշխ., էջ 14.

<sup>33</sup> Ս.Դարությունյան, Հայ առասպելաբանությունը, Բեյրութ, 2000, էջ 304:

<sup>34</sup> Ռ.Խաչատրյան, Թալին. Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսու՝ ՀԱԲ), հ. 19, Եր., 1999, էջ 122-123:

<sup>35</sup> Բննսե, ՀԱԲ, հ. 3, Եր., 1972, էջ 105:

ջոցներ և կրկնակները որպես կայուն ինվարիանտային բանատողեր՝ իրենց ծիսա-հմայական գործառությով, ունեցել են խոսքի հմայական ներգործման գորություն, որը դիտվել է իրեն ծիսական առանձնահատկություն և ապա՝ բանաստեղծական կառուցման հիմնածու - հիմնատիպեր: Նմանահունչ կրկնակ-կրկնությունների հիմքում թաքնված է այն դիցանունների կամ սրբազն անունների կրկնությունը, որոնց և նվիրված են գովք-ծոներգերը:<sup>36</sup> Դիմնականում, գովերգվում են նրանց արտաքինը, բարեմասնությունները, զարդերն ու հանդերձանքը՝ ստեղծելով որոշակի գեղարվեստական - կերպարային ընդգծվածություն ու հանդիսավորություն.

օրինակ՝ *Դերիկո – Նինա, Դերիկո – Նինա, Դերիկո ջամ,*  
*Դերիկոն մեգ էր, ծամիր շեգ էր, Դերիկո ջամ,*  
*Խուլքի քոփում՝ մխչուգ պուխ էր, Դերիկո ջամ,*  
*Ծըմամ դոշիր՝ պոլրուգ էր, Դերիկո ջամ,*  
*= Դերիկո հակին խուտնի խումաշ, Դերիկո ջամ,*  
*Կայմէ - կէնեն Դերիկոյ թամաշ, Դերիկո ջամ.<sup>37</sup>*  
*= Դերիկոն էավ, գէրտեր էգին, Դերիկո ջամ,*  
 (տարբերակ) *Գշորորեր մեծ օրտողին Դերիկո ջամ,*  
*Օվ օր դեսմեր՝ գէլեր հոկին, խանմէ ջամ,*  
*Դերիկո հոյ նար, հոյ նար, հոյ նար, Դերիկո ջամ.<sup>38</sup>*

Չոներգ-պարերգերին բնորոշ է նաև հնագույն տրամախոսական կառուցվածքը (հնմտ. տիեզերական բովանդակությամբ Վեդայական brahmodya-ն),<sup>39</sup> թվերգային- ասերգային շարակազմությունը, դիմումային սկսվածքներն ու ավարտ - բանածները, ծիսական խոսքը հաստատող և խմբային կատարումն ընդգծող՝ բայական հարադրավոր կայուն ձևերը (գըսեն, գըսին, գըսեք, կայմէ - կէնեն և այլն), որոնք և պայմանավորում են ծոներգերի ծիսական բնույթն ու հորինվածքային առանձնահատկությունները:

<sup>36</sup> В.В.Иванов, Эстетические наследие древней и средневековой Индии. В кн., Литература и культура древней и средневековой Индии, М., 1979, с.11.

<sup>37</sup> ԴԱԲ, հ. 19, էջ 123:

<sup>38</sup> Անդ. :

<sup>39</sup> Т.Я.Елизаренкова, В.Н.Топоров, О ведийской загадке тиона brahmodya, М., 1984, с. 21.

*Анаит Худавердян*  
ИАЭ

## ИСКУССТВЕННАЯ ДЕФОРМАЦИЯ ЧЕРЕПОВ ИЗ АНТИЧНЫХ ПОГРЕБЕНИЙ ШИРАКСКОЙ РАВНИНЫ

Хотя идея формирования человека по образу и подобию Бога имела всемирную популярность, почти столь же широкое распространение в традиционных культурах получили попытки исправить создания Творца. Причем если некоторые из этих попыток получили прагматическое объяснение, то другие еще хранят свою тайну.

Большой интерес представляет возможность использования определенных краниологических признаков для реконструкции некоторых социально-этнических характеристик, присущих группе в целом, или определяющихся на основании экстраполяции индивидуальных особенностей субъекта. К таким этносоциальным маркерам можно отнести деформированные изменения черепов и зубов, перфорация искусственного происхождения (обычай нанесения «лишних» отверстий на черепе), которые характеризуются как «... всякое морфологическое изменение» на черепе «в послеродовой период под влиянием извне» (4).

Мотивы деформации могут быть следующие бытовые традиции: непреднамеренное воздействие предмета быта (особый вид колыбели, приводящий к уплощению затылочной кости); подчеркование социального статуса и отличие от инородных групп исправление «неправильной» формы черепа и получение «красивой» формы головы, удовлетворяющей определенным эс-

метическим нормам; возможность изменить психотип человека; необходимость приостановить быстрый рост мозгового вещества; стремление ускорить процесс зарастания родничка; результат массажа (для снятия головных болей); желание защитить голову новорожденного от природных факторов: холода, ветра, жара (6, 8, 10).

В зависимости от способов преднамеренной деформации и распространения деформирующих воздействий на кости черепа Е.В. Жировым (1940) была предложена следующая классификация видов деформации: кольцевая, подразделяющаяся, в свою очередь, на высокую (с лобно-затылочным уровнем деформирующих воздействий) и низкую (при которой давящая повязка располагается на теменных костях или на теменно-затылочной области и нижней челюсти); лобно-затылочная; теменная и затылочная. Встречается и множество переходных видов деформации.

Все искусственные изменения формы черепа можно подразделить на преднамеренные и случайные. Средства и методы, используемые для получения необходимой формы и степени выражения деформации на черепе, были самыми разнообразными. У некоторых этносов, начиная с первых дней жизни новорожденного, производилась «формовка» головы ребенка руками (2,3). В ряде регионов наблюдается различная степень проявления деформирующей силы на женских и мужских черепах (1). Присутствует половой диморфизм и в характере используемых средств деформации.

Исследуемые черепа из различных могильников с территории Ширакского плато датируются I-IVвв. н.э. Вызывает большой интерес применение искусственной деформации у местного населения, но особенно необычными представляются виды деформирующих воздействий и оставленные ими следы деформационных изменений черепа. В Бениаминском могильнике (археологи Ф.Тер-Мартirosов, А.Хачатрян, Л.Еганян) наблюдается деформация двух типов: кольцевая высокая и низкая. Четкие следы преднамеренной деформации головы отмечены у 4 взрослых и 26

детских субъектов. Наиболее хорошо следы деформирующих воздействий заметны на черепах детей, подростков и молодой женщины (погребение 142). Ряд авторов полагают, что снятие всех деформирующих воздействий производилось задолго до окончания процессов роста костей—на это указывают появления компенсаторных изменений костей мозгового отдела черепа, степень выраженности которых находится в прямой зависимости от возраста субъектов, так как признаки деформации на детских черепах выражены значительно сильнее, чем на взрослых (5). Высокая кольцевая деформация хорошо заметна на детском черепе из погребения 18. От давления циркулярной повязки на лобной, теменных и затылочной костях остался след в виде неширокой уплощенной полоски.

Высокая кольцевая деформация хорошо заметна на черепной коробке женщины из погребения 142 (рис.1). Воздействие двух пластин (дощечек ?), закрепленных тугой горизонтальной повязкой, привело к уплотнению лобной кости и теменно-затылочного отдела. От давления циркулярной повязки на лобной кости остался след в виде неширокой уплощенной полоски, на затылочной кости—неглубокий желоб шириной 2-2,5 см. Циркулярная повязка вызвала уплощенность верхних отделов лобной и теменных костей, и резкое увеличение кривизны теменных костей, принялших куполообразную форму.

На черепе женщины из погребения 75 следы низкой кольцевой деформации (рис.2). Лобная кость имеет двугранную форму поверхности, обусловленную наложением на нее параллельно расположенных двух накладок (пластин). Воздействие 2 накладок, закрепленных тугой горизонтальной повязкой, привело к уплотнению лобной кости. В некоторых случаях способ и вид деформации сказываются на развитии лицевого отдела (1): усиливается или ослабляется уплощенность надпереносья, изменяется степень развития надглазничного рельефа и высота глазниц. Так, у женщины из погребения 75 наблюдается среднешироколицый морфологический тип с некоторым ослаблением горизонтальной профилировки. На черепе мужчины из погребения 176 имеются

нечеткие предположительные следы искусственной деформации. К особенностям проявлений деформационных изменений относятся: небольшое понижение его уровня на месте воздействия давящей повязки верхних отделов лобной кости, «размытость» рельефа верхнего отдела височной линии как результат давления циркулярной повязки.

Деформация мужского черепа из погребения 1 в Кармракаре (археолог А. Акопян) во многом напоминает деформационные изменения, описанные на черепе из погребения 142 в Бениамине. При взгляде сверху отчетливо видны следы двух накладок, крупные уплощенные площадки находятся на лобной кости, выше лобных бугров. Имеется также уплощенность обеих височных линий шириной около 2,5 см. В затылочном отделе заметны следы воздействия второй повязки.

Обычай преднамеренной кольцевой деформации головы был известен и у населения Ширакавана (археолог Ф. Тер-Мартirosов, антрополог А. Паликян), что свидетельствует о распространении названного обычая на территории Ширакской равнины в




Рис. 1. Кольцевая деформация (Бениамин, пог. 142).

эпохи античности.

Вызывает большой интерес применение преднамеренной деформации у населения Вардбаха (археолог С.Тер-Маркарян). Наличие черепов со следами искусственной деформации позволило выделить еще один вид искусственного воздействия—точечную деформацию. Она характеризуется локальным незначительным понижением свода и «точечной» реакцией (0.5-0.7мм в диаметре) костной пластины. Подобные видоизменения костной ткани мозговой коробки отражают длительное воздействие на свод предмета (или предметов ?) с постоянным положением относительно продольного и поперечного диаметров головы. Объективным критерием этого, в частности, является симметричное расположение точечных участков на черепе относительно сагиттального и венечного швов. Четкие следы преднамеренной деформации головы отмечены у двух субъектов: из погребения 4—женщина (30-40 лет) и погребения 9—женщина (20-30 лет). Высокая кольцевая деформация хорошо заметна на черепной крышке женщины из погребения 4 (рис.3). При взгляде сверху отчетливо видны следы трех накладок, крупные уплощенные площадки находятся на лобной кости. Циркуляная повязка вызвала уплощенность верхних отделов лобной и затылочной костей. Для получения необходимых изменений головы были использованы стягивающая повязка (закреплена лобно-затылочном отделе) и предметы определенной («мостообразной») формы, укрепленные на голове плотно стянутыми под подбородком повязками. На черепе женщины из погребения 9 имеются нечеткие следы точечной деформации. К особенностям проявлений деформационных изменений относится небольшое понижение на участках теменных костей, примыкающих к верхней трети сагиттального и венечного швов, и на месте воздействия давящей повязки верхних отделов лобной кости.

На основании сопоставления полученных данных мы можем предположить, что для получения преднамеренной деформации

черепа были использованы стягивающие повязки (возможно, ремни из кожи) и накладки, которые могли быть изготовлены из дерева, камня или кости. Формы и размеры накладок варьировали. Размеры давящих предметов определяются по величине оставленных ими «следов» - площадок уплощения. Особенно сильно уплощение




Рис. 2 Кольцевая деформация (Бениамин, пог. 75)

проявляется, вероятно, если повязка закреплена в течение длительного времени на голове молодого человека, у которого процесс роста костей свода еще не завершен.

Так, силу влияния давления накладок на ростовые реакции костной ткани можно отметить на примере особенностей зарастания участков швов, находящихся вблизи повязок (9). В этих областях отмечается наиболее раннее уплотнение и закрытие швов, появляются островки полного зарастания, т.е. имеется

нарушение скорости и направления облитерации (Бениамин, погребения 8, 17, 176).

Несмотря на необычность подобных признаков, единичные находки в Ширакской равнине не имели бы, вероятно, такого важного

значения, если бы мы неожиданно не нашли аналогий совсем в иных регионах – в неолитическом погребении в Приморье (Бойс-




Рис. 3 Кольцевая деформация (Вардах, пог. 3)

мана-2), на Алтае, в афанасьевском погребении Саргов Улус из Минусинской котловины. Преднамеренные изменения на этих разновременно датированных черепах почти идентичны. При сравнении всех черепов обращают на себя внимание некоторые особенности, часть которых можно рассматривать как закономерности—в ряде случаев точечная деформация сочетается с другими видами преднамеренной деформации, на черепах присутствуют следы двух (или трех) локальных воздействий. А.Н.Попов, Т.А.Чикишева, Е.Г.Шнакова при изучении искусственной деформации черепов из неолитического могильника Бойсмана-2, также отмечали следы воздействия накладок на костные пластинки свода (6). Авторы считают, что накладки «должны были каким-то образом соединяться друг с другом и образовывать устойчивую конструкцию, которая бы могла выдержать давление находящейся сверху повязки. Этим требованиям соответствует одна из возможных реконструкций—предмет, укрепленный в верхней части свода, имеет мостообразное основание, опирающееся на кости черепа небольшими выступами».

Поскольку длительное воздействия таких предметов на голову (выраженная в наличии устойчивой реакции костной ткани), можно полагать, что укрепленные на голове конструкции выполняли роль головного убора, украшения или предмета культа, т.е. могли являться знаками социального отличия. Возможно, обычай длительного ношения на голове «мостообразных» конструкций, сохранялся или передавался от одной этнической группы к следующей на протяжении тысячелетий. Длительное сохранение данного обычая, по-видимому, было связано с его определенной социальной значимостью—на это указывают, те неудобства, которые должен был испытывать человек при сильном давлении на голову (в ряде случаев отмечается значительная реакция костной ткани).

## *Список литературы*

1. Гинзбург В.В., Антропологическая характеристика древних аборигенов Кубы. Сб. МАЭ. Л., т. 24, 1967.
2. Дьяченко В.И., Воспитание детей у якутов. Традиционное воспитание детей у народов Сибири. Вып. 8, Л., 1988.
3. Жиров Е.В., Об искусственной деформации головы. КСИИМК, вып. 8, М., 1940.
4. Жиров Е.В., Разновидность брахицефалии. КСИИМК. М.-Л., 1941. Вып. 10.
5. Маклекова Н.П., Рентгенологическое изучение искусственно деформированных черепов древних эпох из Средней Азии и Поволжье. В кн.: Проблемы этнической антропологии и морфологии человека. Л., 1974, с. 165-172.
6. Попов А.Н., Чикишева Т.А., Шнакова Е.Г., Бойсманская археологическая культура Южного Приморья (по материалам многослойного памятника Бойсмана-2). Новосибирск, 1997, с.58-66.
7. Ходжайов Т.К., Этнические процессы в Средней Азии в эпоху средневековья. Ташкент, 1987.
8. Худаверян А.Ю., Искусственно-деформированные черепа и зубы из погребений античного могильника Бениамин. Вестник общест. наук, 2 (595), Ер., 1997, с. 138-144.
9. Худаверян А.Ю., Население Армянского нагорья в античную эпоху (по антропологическим данным Бениаминского могильника). Ер., издательство «Тигран Мец», 2000, с.141.
10. Խուդավերյան Ա.Յու., Վտանբերի արհեստական ծևախախտումներ Բենիամինի հինավուրց դամբարանադաշտից, Բանքեր Երեվանի Դամալսարանի, № 2, 89, Եր., 1996, էջ 215 – 217.

Թամար Դայրապետյան  
ԴԱԻ

ՀԱՅ ԲԱՆԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
«ԲԻՒՐԱԿՆ»-Ի ԷԶԵՐՈՒՄ

XIXդ. վերջին քառորդին, Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ, հայ հասարակական միտքը սկսում է կարևորել մեր ժողովրդի բանավոր ստեղծագործությունների գրանցան, հրապարակման և հետազոտման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Ս.Սիանսարյանցի, Գ.Սրվանձտյանցի, Գ.Շերենցի, Յ.ճանիկյանի, Տ.Նավասարդյանի, Մ.Քարիսուդարյանի, Գ.Տեր-Ալեքսանդրյանի և ուրիշների բանահյուսական ժողովածուները, մեր ազգային հերոսավեպի՝ «Սասնա ծոերի» պատումների հայտնաբերումն ու տպագրությունը և Վենետիկի Մխիթարյանների կողմից մեր բանահյուսական ավանդության գիտական ու մշակութային արժեքավորումը խթանում են նոր սկզբնավորվող հայ բանագիտության զարգացումը:

Ինքնարտահայտման այդ գործնթացի մեջ հրամայական պահանջ է դառնում մասնագիտական հանդեսներ ու պարբերականներ ունենալու խնդիրը:

1882թ. Կ. Պոլսում սկսում է լույս տեսնել «Բիւրակն»-ը՝ «հանդէս պիտանի և օգտակար գիտելեաց»՝ Գ.Անդրեասյանի և Դ.Խաչկոնցի խմբագրությամբ: 1898-1900թթ. իր էջերում գերակշիռ տեղ հատկացնելով բանահյուսական իին ու նոր հուշարձանների տպագրության, հետազոտության խնդիրներին՝ հայ բանագիտական մտքի սկզբնավորումը հարաբերում է ազգային ինքնագիտակցության ու մեր ժողովրդի պատմական զարգացման կարևոր խնդիրների հետ՝ ընթերցողներին պարզելով մի համապարփակ ծրագիր. «Ժողովուրդն իր մէջ աւանդութիւններ, սովորութիւններ ունի, զրոյցներ, ասացուածքներ, վէպեր, հեքիաթներ ունի, աղօքներ, անէծքներ, նախապաշարումներ

ումի, առաժմեր, համելուկներ ումի, հեթանոսականը՝ քրիստոնեականին, առասպելականն իրականին, դիւականը՝ իրեշտակականին, տրտմականն՝ ուրախականին հետ խառնուած, որոնք պեղելու, փորուելու, հետազօտելու և ի լոյս աշխարհի համուելու արժանի են, եւ որոնց քննութեմէն, զննութեմէն պիտի կրնանք իսկապէս ու իրապէս ճանչնալ մեր ժողովուրող»:<sup>1</sup>

Իր իիմնադրած պարբերականը անվանելով «Բիւրակն»՝ խմբագրությունը բանահյուսական բազմատեսակ նյութերը համարում է մեր ժողովրդի կյանքի ու բարքերի բյուր ակերից բխող գանձեր, «այլ յիշատակներու բրածումներ», որոնք մեծ դերակատարություն կարող են ունենալ ազգագրական, ծիսական, կենցաղային երևույթները գիտապատմական վերլուծության ենթարկելու գործում: Ուշադիր քննելով և հանրագումարի բերելով «Բիւրակնի» բանահյուսական և բանագիտական նյութերը նկատում ենք, որ պարբերականը հետևողականորեն ընդգծում է բանահյուսության դերն իբրև ազգային և ազգագրական երևույթ՝ երկուստեք կարևորելով դրանց պատմամշակութային գործառույթների միասնությունը: Համադրական այս մեթոդի շնորհիվ ոչ միայն բացահայտվում են պատմազգագրական տարրեր մարդերի սյուժեների ինքնատիպ տարբերակները, այլև հնարավոր է դառնում դրանց համեմատական ուսումնասիրությունը: Հենց այս մտահոգությամբ է բանահավաք-բանագետ Դ. Խաչկոնցը «Բիւրակն»-ի էջերում հանդես գալիս ժողովրդական ստեղծագործությունների առանձին փոփոխակները հավաքելու կոչ-դիմումով՝ ուղղված հայ հասարակայնությանը:<sup>2</sup>

Բանահյուսությանը վերաբերող նյութերը՝ ուսումնասիրությունները հանդեսի էջերում ներկայացվում են «Ազգային», «Ազգագրական», «Ժողովրդական բանահյուսություն», «Ազգագրական մատենագիտություն» խորագրերով: Հանդեսի էջերում լույս տեսած բանահյուսությանը վերաբերող նյութերը պայմանականորեն կարելի է խմբավորել հետևյալ կերպ. բուն բանահյուսական ստեղծագործություններ, ուսումնասիրություններ, օտար բարգմանական-բանահյուսական իրատարակությունների

<sup>1</sup> «Բիւրակն», Պոլիս, 1899, № 19, էջ 329:

<sup>2</sup> Անդ, 1898, 16, էջ 329-330:

մասին հաղորդումներ, արժեքավորող-գնահատող գրախոսություններ: Հաշվի առնելով ընթերցողների տարբեր շերտերի նախասիրությունները՝ խմբագրությունն այս բաժանման շնորհիվ նրանց հնարավորություն է ընծեռում առավել դյուրությանք որոնածը փնտրելու համապատասխան որևէ հատվածում:

Հայ ազգագրության և բանահյուսության նյութերի հավաքման և ուսումնասիրման բնագավառում առկա բացերը լրացնելու համար «Բիւրակն»-ն իր էջերում շարունակաբար հրատարակում է հայագետ Գր.Խալաթյանի ազգագրության ծրագրի<sup>3</sup> կարևորագույն հոդվածները, իսկ «Բանահյուսութեան ազդակներն ու տեսակները» խորագրով Դ.Խաչկրնցը հանգանանորեն վերլուծում է «Ծրագրի» հանգուցակետերը, բանավեճ ծավալում հարցումների վերաբերյալ:<sup>4</sup>

1898-1900թթ. «Բիւրակն»-ի է ջերում հրատարակվում է հեքիաթների, գրույցների, ամեօնների, օրինանք-քարեմաղթանքների, հիշոցհայույանքների, փաղաքական խոսքերի, վիպական մանր ժանրերի, բանաձևային-հմայական բանահյուսության բազմաթիվ նմուշներ:

Ուշագրավ է Ս.Դանիելյանի «Ժողովրդական առածների և ոճերի հավաքածուն», 101 միավոր,<sup>5</sup> որի շարունակությունն ընդգրկում է ոչ միայն Խիանի, այլև շրջակա բնակավայրերի խոսակցության ծերը, ոճերն ու զանազան ասացվածքները, 42 միավոր:<sup>6</sup> Դիարբեքիրի բարբառով գրի առած «Առածները»<sup>7</sup> նույն հեղինակի հավաքածուի շարունակությունն է, որը լույս է տեսնում հանդեսի տարբեր համարներում, 167 միավոր: Նույն տարում լույս է տեսնում Արսենի,<sup>7</sup> Պ.Սրապյանի,<sup>8</sup> Ս.Դավթյանի,<sup>9</sup> Ա.Շաբելյանի,<sup>10</sup> Տ.Պալյանի<sup>11</sup> և այլոց գրի ա-

<sup>3</sup> Անդ, 5, էջ 74, 7, էջ 100, 8, էջ 121-122: Գր.Խալաթյան, Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Ս., 1887: Գոյք մի գլուխը նվիրված էր ժողովրդական բանահյուսությանը (ժողովրդական բանավոր գրականության տեսակները), էջ 77-84:

<sup>4</sup> Անդ, 14, էջ 305, 18, էջ 353-356:

<sup>5</sup> Անդ, 14, էջ 301-302, 16, էջ 332-333:

<sup>6</sup> Անդ, 39, էջ 700-701:

<sup>7</sup> Անդ, 19, էջ 377-378, 21, էջ 413-414, 23, էջ 445:

<sup>8</sup> Անդ, 8, էջ 121, 9, էջ 133, 13, էջ 200:

<sup>9</sup> Անդ, 15, էջ 315-316, 17, էջ 345-346:

<sup>10</sup> Անդ, 41-42, էջ 744-745:

<sup>11</sup> Անդ, 20, էջ 396:

<sup>11</sup> Անդ, 32, էջ 580-582, 47-48, էջ 827-830, 21, էջ 406-408, 24, էջ 454-455, 32, էջ 580-582:

ռած ժողովրդական առածները, հանելուկները, աղոթքները և հեքիաթները՝ Քղիի, Խարբերդի, Կարնո, Ուլնիայի, Պարտիզակի, Կեսարիայի և Պալահեսի բարբառներով:

1898-99թթ. ընթացքում հանդեսի էջերում լուս է տեսնում Դ.Խաչկոնցի աշխատասիրած «Տեմիր դևի հեքիաթի վերլուծման առթիվ» (հայ ազգագրական հում նյութեր)՝<sup>12</sup> հոդվածաշարը՝ տոտեմի, կերպարանափոխության ու հոգեհածության մասին, ինչպես նաև «Բղուկ բարին առթիվ»<sup>13</sup> բանագիտական վերլուծությունը: Զհամածայնելով «Եվդոկիի գավառաբարբառ»<sup>14</sup> աշխատության հեղինակ Յովի Գագանճյանի հետ և չտեսնելով որևէ ընդհանրություն բղուկի և վիուկի միջև, Դ.Խաչկոնցը գտնում է, որ տարբեր գավառաբարբառներից հայտնի բղուկ բառը նշանակում է կավից շինած անան: Վերջինիս կարծիքի օգտին է վկայում համապատասխան բանահյուսական նյութը<sup>15</sup>: Նույն հեղինակի բանագիտական բնույթի այլ նյութեր ևս «Զրապաշտութիւնը հայոց մեջ ու Թուխ Մանուկ»,<sup>16</sup> «Աղամանութ ու Դրծան»,<sup>17</sup> «Աղամանութի վերլուծման նախափորձ մը»,<sup>18</sup> «Թիլ. նանեական Աթենաս ու մայր ամենայն զգաստութեանց»<sup>19</sup> տեղ են գտել «Բիւրակնի» էջերում: Բանագիտական փոքր ծավալի աշխատանքների շարքում ուշադրություն են գրավում Ս.Ակրյանի «Խունձկուլու ու Թուխ մանուկներ»,<sup>20</sup> Թուխ Կրպոյի «Դներ»<sup>21</sup>, Պ.Սրապյանի «Խուլութիկ»,<sup>22</sup> «Սոռացված նախապաշարումներ Քղիի մեջ»,<sup>23</sup>

<sup>12</sup> Անդ, 45-46, էջ 811-814, 1899, 9-10, էջ 133-137, 12, էջ 179-181:

<sup>13</sup> Անդ, 1898, 15, էջ 319:

<sup>14</sup> Աշխատությունը շարունակաբար լուս է տեսել «Հանդէս ամսօրեայ»-ում, 1898, էջ 97-105, 146-147, 174-175, 208-210, 256-258, 298-306, 1899, էջ 11-14, 46-49, 145-147, 176-177, 207-210, 1900, էջ 336-341:

<sup>15</sup> Յ. Ճըլճըլեան, Բողոք հեծնողին հեքեաթը, Մալարիա, Բիւրակն, 1899, 25, էջ 390-392, 26, էջ 408-410: Այս մոտիվը հաճախ է հանդիպում հայ ժողովողական հեքիաթներում և համապատասխանում է Ա.Գուլակյանի հայկական հրաշապատում հեքիաթների մոտիվային ուղեցույցի հետևալ համարներին՝ A009, A047, A098, A147, A314, A324, A364, A400, A408, A596: C.A.

<sup>16</sup> Շնակքան, Ակազատել մոտիւններ արմանական ստուգությունը և պատմությունները, Եր., 1983, էջ 300:

<sup>17</sup> Բիւրակն, 1898, 13, էջ 201-203:

<sup>18</sup> Անդ, 18, էջ 354, 19, էջ 373:

<sup>19</sup> Անդ, 23, էջ 438-442:

<sup>20</sup> Անդ, 1898, 30, էջ 551-554:

<sup>21</sup> Անդ, 20, էջ 411-412:

<sup>22</sup> Անդ, 24, էջ 461-462:

<sup>23</sup> Անդ, 12, էջ 184:

<sup>24</sup> Անդ, 30, էջ 556-557:

Յ.Մանվելյանի «Փայտապաշտութիւնը (ծառապաշտութիւնը) Արևելքի մէջ»,<sup>24</sup> Բարեկեն վարդապետի «Մուկը կրոնքին մէջ»<sup>25</sup> և այլն: «Բիւրակն»-ը նաև արտատպում է «Հանդէս ամսօրեայում» լույս տեսած բանագիտական և ազգագրական հրատարակությունների, գեկուցումների մասին հաղորդումները:

«Լեզվաբանական-բանագիտական» խորագրով Դ.Խաչկոնցը կատարում է «Զայնական ուսումնասիրութեան նախափորձ»<sup>26</sup> կարևորելով գրաբարի և գավառաբարբառների իմացությունը բանահյուսական նյութերի ծիշտ մեկնաբանության գործում: 1898թ. հանդեսի էջերում շարունակաբար լույս է տեսնում Կ.Մ.Վարժապետյանի «Քերականութիւն Մարաշի գավառաբարբառին» ուսումնասիրությունը:<sup>27</sup> Գավառաբարբառներն ուսումնասիրող հեղինակները, հընթաց ուսումնասիրության, ներկայացնում են նաև գավառներում կենցաղավարող բանահյուսության բազմաթիվ նմուշներ:

Ուշագրավ են «Մեծ Պահքի սկզբնավորութիւնը Բաղեշի մէջ»,<sup>28</sup> «Տերնտասը (=Տեռնընդառաջը) Քղիի մէջ»,<sup>29</sup> «Եղեսիոյ ամուսնական կեանքեն նմուշ մը»,<sup>30</sup> «Կանացի գարդարանքը Կիլիկիոյ մէջ»,<sup>31</sup> «Սիվ-ռիհիսարցի կինը»<sup>32</sup> ազգագրական նյութերը, ծիսական-կենցաղային երգերը, պարերգերն ու զուգերգերը՝ Մուշի,<sup>33</sup> Քղիի,<sup>34</sup> Վանի,<sup>35</sup> Բիթլիսի<sup>36</sup> և գավառաբարբառներով:

«Թարգմանութիւն և օտար մատենագիտութիւն» բաժնում «Բիւրակն»-ը հրատարակում է քրդերենից, թուրքերենից, չինարենից թարգմանված ավանդավեպեր, հեքիաթներ, զրուցներ, երգեր և ազգագրական նյութեր.<sup>37</sup>

<sup>24</sup> Անդ, 1900, 30, էջ 453-454:

<sup>25</sup> Անդ, 1898, 17, էջ 340-341:

<sup>26</sup> Անդ, 8, էջ 117-119, 11, էջ 162-164, 12, էջ 177-178, 14, էջ 290-292:

<sup>27</sup> Անդ, 12, էջ 178-180, 18, էջ 360-362:

<sup>28</sup> Անդ, 8, էջ 171:

<sup>29</sup> Անդ, 14, էջ 295-296:

<sup>30</sup> Անդ, 16, էջ 334:

<sup>31</sup> Անդ, 1899, 9-10, էջ 137-138:

<sup>32</sup> Անդ, 45, էջ 709-712, 46, էջ 741-745:

<sup>33</sup> Անդ, 1898, 15, էջ 313:

<sup>34</sup> Անդ, էջ 314:

<sup>35</sup> Անդ, 12, էջ 183:

<sup>36</sup> Անդ, 14, էջ 300-301:

<sup>37</sup> Անդ, 1898, 17, էջ 268-270, 1899, 18, էջ 294-295, 1900, 5, էջ 71-72, 11, էջ 166-167, 32, էջ 480-491:

1890-ական թթ. պարբերականն ամփոփ տեղեկություններ է հաղորդում պատմաքաղաքական հանգամանքների բերումով հայկական գաղթավայրերում և ավելի ուշ՝ բուն Հայաստանում սկզբնավորված աշուղական դպրոցների և նրանց ներկայացուցիչների պարսկահայ Ազբար Աղամի (Ասպար, Վահան), սիլիվրեցի Ախթերի (Յակոբ Նշանյան), դարաբաղջի Աղամ Նախաշովի (Աղամ Ներկարարյանց), սալմաստեցի Յարոյի (Յարություն) և այլոց մասին:<sup>38</sup>

Պարբերականի էջերում պատշաճ տեղ է հատկացված բնակավայրերի, լեռների, գետերի, պատմական հուշարձանների, նշանավոր դեպքերի, դեմքերի, բուսակենդանական աշխարհի հավերժությունն ու ընթացքը պայմանավորող չորս տարրերի (հող, ջուր, օդ, կրակ) մասին պատմվող ստուգաբանական-բացատրական ավանդություններին, վարքաբանական ավանդագրույցներին, աշխարհագրական և տեղագրական հոդվածներին:<sup>39</sup>

Անհրաժեշտ է նշել, որ պարբերականի հրատարակության հետագա տարիներին բանահյուսական և ազգագրական նյութերի տպագրությունը կտրուկ նվազում է: 1901թ. հունվարից «Բիւրակն»-ը հրատարակվում է որպես ազգային, գիտական, գրական և քաղաքական հանդես, որտեղ վիպական մեծ ու փոքր ծավալի բանահյուսական նյութեր չկան: Բացառություն են կազմում Գ.Շահինյանի «Օծ կրօնքին մէջ»,<sup>40</sup> «Զուրը կրօնքին մէջ»<sup>41</sup> և Խ.Քեշիշյանի «Զատիկը Լիբանամի մէջ»<sup>42</sup> բանագիտական-ազգագրական վերլուծությունները:

1906-1908թթ. «Բիւրակն»-ը լույս է տեսնում «Առևտուր» խորագրով: Յայ նշանավոր նարդկանց հորելյանների առթիվ «Բիւրակն»-ի տարրեր համարներում տպագրված արժեքավորող-գնահատող կենսագրականների շարքում աչքի է ընկնում «բանահյուսական և ազգագրական փշրանքներու վրայ ջերմ գուրգուրացող» հոգևոր հայրեր Տ.Վ.Պալյանին և Մ.Մկրյանին նվիրված «Սքեմին տակ երկու մշակները»:<sup>43</sup> Իսկ Միսիքարյան միաբանության անդամ Ա.Ս.Գարագաշ-

<sup>38</sup> Անդ, 1898, 14, էջ 299, 15, էջ 310-312, 17, էջ 344-345, 23, էջ 444-445:

<sup>39</sup> Անդ, 1898, 15, էջ 316-317, 43, էջ 757-760, 1899, 8, էջ 115-116, 11, էջ 166-168, 18, էջ 282-286, 37, էջ 584-586, 1900, 1, էջ 6-8, 5, էջ 68-71, 7, էջ 99-101:

<sup>40</sup> Անդ, 1901, 47, էջ 740-742:

<sup>41</sup> Անդ, 30, էջ 472-474, 31, էջ 488-491:

<sup>42</sup> Անդ, 18, էջ 279-281:

<sup>43</sup> Անդ, 1899, 21, էջ 322-323:

յանի գրական-իմաստասիրական գործումեռությունն արժևորվում է ժամանակի հրամայականով, որը, կարծում ենք, խիստ բնութագրական է նաև «Բիւրակն»-ին. «Խորիելու, զգալու, բնաշրջման, ժամանակի ոգուն համաձայն իմաստասիրելու պահանջքն է: Նախնեաց մէջ սերմանուածն այսօր մեր մէջ կը մարմնանայ, կամ հոն անթեղուածը կ'արժարժուի տարբեր կայծերով ու ճառագայթումներով»:<sup>44</sup>

---

<sup>44</sup> Անդ, 1898, 22, էջ 421-422:

## Սուրեն Դորոսյան ԴԱՒ

### «ԱՅԳԻՆ» ՄԻՋԱԿԱՐՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Հայերեն այգի բառն արդի հասկացությամբ նշանակում է խաղողի վազեր, ընդհանրապես՝ պտղատու ծառեր տնկած հողանաս:<sup>1</sup> Դրանք տարբերակվում են միայն ըստ առանձին մրգատեսակների՝ խնձորի, ծիրանի, խաղողի և այլնի:

Ըստ Հր.Աճառյանի, այգին բնիկ հայերեն բառ է, արմատն է՝ այց՝ խաղողի պարտեզ, խաղողի որթ նշանակությամբ, բուն իմաստն է՝ որթ. ի մասնիկը ցույց է տալիս ծառի հատկանիշը (հմնտ. կաղնի, ծիրանի և այլն):<sup>2</sup>

Այգի – պարտեզ, ուր խիտ առ խիտ տնկեալ իցեն որթք խաղողոյ, ևս և թգենից:<sup>3</sup>

Այգի – հող, որի վրա տնկված է որթ, խաղողի վազ.էգի.իքի.<sup>4</sup>

Այսպիսով, այգի բառի նախնական իմաստը որոշակիորեն նշանակել է միայն խաղողի այգի, խաղողի տունկ, որթ, վազ:<sup>5</sup>

Վաճում Այգեստանի տների անհրաժեշտ մասն էին կազմում այգիները: Դրանք երկու տեսակի էին՝ ափմի, որ միայն պտղատու ծառեր ունեին, և թուփի խաղողի այգի:<sup>6</sup>

Որ այգի բառը վերաբերել է միայն խաղողի որթին, հստակորեն ապացուցում են միջնադարյան հայերեն բազմաթիվ վիմական արձանագրություններ:

Միջնադարում թագավորները, իշխանները և մեծահարուսատները վաճառերին ու եկեղեցիներին էին նվիրում սեփական կամ գննամբ ձեռք բերված եկամտաբեր հաստատություններ, արտադրական ձեռ-

<sup>1</sup> Եղ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 39:

<sup>2</sup> Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 166:

<sup>3</sup> Նոր բառագիրք հայկակեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 80:

<sup>4</sup> Ստ.Սալիսասենց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Եր., 1944, էջ 74:

<sup>5</sup> Ռ.Ս.Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Ա, Եր., 2000, էջ 52:

<sup>6</sup> Ազգագրական հանդէս, գ. 20, Թիֆլիս, 1910, էջ 126 – 127:

նարկություններ՝ կուղակներ, ջրաղացներ, ծիթհաններ, հնձաններ, այգիներ, վարելահողեր, խոտհարքներ, անասուն և այլն:

Սյունիքի վաճական կալվածատիրության ոլորտում մեջ տեղ էր գորավում այգեգործությունը: Խահանգի Մաքենացոց, Տաթևի և մյուս խոշոր վաճերը բազմաթիվ այգիներ ունեին ինչպես մերձակա վայրերում, այնպես էլ Երևանում, Գառնիում և այլուր:<sup>7</sup>

Այն, որ այգի բարի նախնական իմաստը խաղողուտ է նշանակել, ցույց է տալիս Խլդ. մի արձանագրություն, որ գտնվել է Յաղբատի մոտ, Խոջակածոր վայրում. «ԾԼԵ Թ. (1086), ԵՍ ՏԵՐ ՍԱՐԳԻՍ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ. ՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱՅ ԱՐԿԻ ԵՒ ԶԱՅԳԻՍ, ՏՆԿԵՑԻ ԵՒ ԴՐԱԽՏՍ ԶԱՆԱԶԱՆ ՄՐԳԱԲԵՐՈՔ, Ի ՓԱՌՍ ՄՐԲՈՅ ՆՇԱԽԻՆ...»:<sup>8</sup>

Այս արձանագրությունը հնարավորություն է ընձեռում հստակորեն զանազանելու Տեր Սարգսի հիմնած (արկի եւ զայգիս) խաղողուտը, վազնուտը և, դրանից զատ, պտղատու այգին (դրախտս զանազան մրգաբերօք), որոնք կարող են գտնվել նույն վայրում: Քննարկվող վիմագրում դրանք դիտարկվում են որպես առանձին միավորներ:

Վիմական արձանագրությունների քննությունը հստակորեն ցույց է տալիս նվիրաբերված, գնված կամ հիմնված այգիների տեղադրությունը: Դրանք գտնվել են Յայաստանի խաղողագործական հիմնական շրջաններում՝ Արարատյան դաշտում և Վայոց ձորի, Լոռու, Արցախի, Սյունիքի և Տավուշի ցածրադիր մասերում, պատմական Յայաստանի այլ խաղողագործական վայրերում: Երկրագործական մշակույթի և հատկապես խաղողագործության խոշոր կենտրոն էր Արարատյան դաշտը՝ մերձակա շրջաններով հանդերձ: Բազմաթիվ վիմագրեր են պահպանվել, համաձայն որոնց, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և այլ բարձրադիր վայրերի (որտեղ խաղող չեր աճում) վաճերն ու եկեղեցիներն այգիներ ունեին վերոհիշյալ տարածքներում:

Անիի Աբղարիբ Պահլավունու Եկեղեցուն նվիրված այգիներից մեկը գտնվել է Աշուակում, որտեղ միջնադարում խաղողագործությունը տնտեսական կարևոր ծյուղ է եղել. «Ի :ՆՁԵ: (1036) Թ. Յ. ԿԱՍ ԵՂԵՒ ԻՆՉ ՏԵԱՌՈ ՊԵՏՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ՏԱԼ ԶԱՅԳԻՆ

<sup>7</sup> Գ.Մ.Գրիգորյան, Սյունիքի վաճական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Եր., 1973, էջ 101:

<sup>8</sup> Կ.Գ.Ղաֆարարյան, Յաղբատ, Եր., 1963, էջ 262 – 263:

ԱՇՆԿԻ, ՈՐ Ի ՄԵՐ ԿՈՐԴՈ ԱՐԿԱԾ ԵՐ...»:<sup>9</sup> Նույն եկեղեցին այդի է ստացել Արուճում. «...ՅԱՄԻ ՈԽԲ (1193) Թ. ԱՐԴ ԵՍ ՏՐՈՎԱՏ ԵՐԵՑ ԵՒ ԼԾԱԿԻՑ ԻՄ ԽՈՒՇՈՒԾ Ի ՄԵՐ ՅԱՅՐԵՆԻ ԺԱՌԱԳՈՒԹԵԱՆՑ Ի ՍՊԱՍ ՊԻՏԱՑ ՅԱՑԻ ԵՒ ԳԻՆԻՈՅ ՏՈՒԱՔ ՉՈՐՍ ԱՅԳԻ ՅԱՐՈՒԵ...»:<sup>10</sup>

Հոռոմոսի վանքին այգի է նվիրվել Կողբից. «Ի :ՆՁԵ: (1036) Թ.Յ. ԵՏՈՒ ԵՍ ՅՈՎՃԱՆՆԵՍ ՇԱՐԱՆՇԱՅ...ԶԻՄ ԱՅԳԻՆ, ՈՐ Ի ԿՈՂԲ, ՅԻՄ ԵԿԵՂԵՑԻՄ»<sup>11</sup>, Յափիծի վանքին՝ Արուճից. «Ի Թ:ՈԽԵ: (1196) ... ԵՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՏՈՒ ԶԻՄ ՅԱՅՐԵՆԻ ԱՅԳԻՄ, ՈՐ ՅԱՐՈՒԵ... Ի ՍԲ. ՈԽԵՆՏ ՅԱՈՒԵԱՅԻ»,<sup>12</sup> Մարմաշենին՝ «...ԵՒ ՅԱՒԾԱԿՆԻ ԱՅԳԻՔ... Ի ՅԱՇՏԱՐԱԿ ԱՅԳԻ, Ի ԿԱՐՈՅ ՂԱՇՏԻՆ ԱՅԳԻ, Ի ՍԵՐԿԵՒԼԻ ԱՅԳԻ, Ի ՎՃԱՆ ԱՅԳԻ, Ի ՄՐԵՆԻ ԱՅԳԻ»:<sup>13</sup>

Մաքենյաց վանքի մի վիմագրի վկայությամբ. «ԿԱՄԱՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՍՈՒՓԱՆ, ՍԻՒՆԵԱՑ ԻՇԽԱՆ, ՇԻՆԵՑԻ ԶԱՎԵՆԱՌՈՅԱՑ ԵԿԵՂԵՑԻՄ ...ԵՒ ԵՏՈՒ... :Ե: ԱՅԳԻ ՅԵՐԵՎԱՆ ԵՒ :Շ: ԱՌՈՒ ԱՅԳԻ Ի ԳԻՒՂԱՔԱՂԱՔ ԳԱՄՆԻ ԵՒ :Բ: ԱՅԳԻ ՅԵՂԵԳԻՄ ...»:<sup>14</sup>

Նման շատ վիմագրեր են հայտնի նաև Արցախից. «...ԵՍ ՍԵՒԱԴԱ ԻՇԽԱՆ, ՈՐԴԻ ՍՍՊԱՏԱ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԹԱճԵՐՆ ՏՈՒԱՔ Ի ՅԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՐՈՑ Ի ՂԱԴԻ ՎԱՆՍ ԶԿԱՐՄՆԶԱՏԱՓՈ ԱՅԳԵՆՆ...Թ. ՈՂ (1241):<sup>15</sup>

Յետաքրքիր է, որ Անիի դասական վիմագրերից մեկում տեղ է գտել բարբառային համարվող էզի բառաձեզ, այն դեպքում, երբ նույն արձանագրության մեջ այգի բառը կրկնվում է հինգ անգամ: Սա, հավանաբար, փորագրող վարպետի շեղում է.«Թ :ՈԿԴ: (1215) ... ԵՍ ՏԻԳՐԱՆ ԾԱՌԱՅ ԱՅ ... ՅԱԶԳԵՆ ԿՈՆԵՆՑ ... ԵՏՈՒ ԸՆԶԱՅՍ Ի ՎԱԼՔՍ ՍԲ. ԳՐԻԳՈՐՈՅ... ԱՅԳԻ :Ա: ՅԵՐԵՒԱՆ, ԱՅԳԻ :Ա: ՅՈՇԱԿԱՆ, ԱՅԳԻ :Ա: Ի ԿՈՇ, ԷԳԻ :Ա: ՅԱՐՈՒԵ, ... ԱՅԳԻ :Ա: Ի ՄՐԵՆ, ԱՅԳԻ :Ա: Ի ԾՄԱԿԻՆ...»<sup>16</sup>:

Էզի, իգատեղ, իգի բառաձերը հանդիպում են Լոռու, Շիրակի, Վայոց ձորի, Արցախի և այլ վայրերի վիմագրերում:

<sup>9</sup> Դիվան հայ վիմագրության (այսու՝ ԴՐԿ), Եր., 1966, պ. 1, էջ 47 – 48:

<sup>10</sup> Անդ, էջ 47:

<sup>11</sup> Կ.Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 21:

<sup>12</sup> Անդ, էջ 39:

<sup>13</sup> Կ.Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 17:

<sup>14</sup> ԴՐԿ, Եր., 1973, պ. 4, էջ 290:

<sup>15</sup> ԴՐԿ, Եր., 1982, պ. 5, էջ 202:

<sup>16</sup> ԴՐԿ, Եր., 1966, պ. 1, էջ 62 – 63:

Սանահին. «... Ես ԲԱՐՍԵՂ ... ԹՈՌԻ ԹՈՌՈՆ ՊՐ ԱՐԴՈՒԹՅԻՆ, ... ՏՎԻ ՎԱԽՄ ՍԱՄ-ԾԵՐԱ :Բ: ԷԳԻՆ ԻՐ ԸՆԶԱՆՈՎՆ, ԶՏԱՒԻԵՐՈՒ ԳԵՂԻՆ ԷԳԻՆ ԻՐ ԸՆԶԱՆՈՎՆ, ԶԽՈ-ՇՈՌՈՆ ԶՈՐԻ :Բ: ԷԳԻ, ....ԲՐՏԱՅՁՈՐԻ ԷԳԻՆ ԻՐ ԸՆԶԱՆՈՎՆ, ԿՈԾԱՅ ... ԷԳԻՆ ԸՆԶԱՆՈՎՆ, ՔԱՐՅՏԱԿԻ ԷԳԻՆ ԸՆԶԱՆՈՎՆ...»:<sup>17</sup>

Այս արձանագրությունը ուշագրավ է այն իրողությամբ, որ նվիրաբերվել է նաև հնծան. Ազգագրական իրականությունից հայտնի է, որ հայոց մեջ, մինչև ԽIXդ. վերջերը խաղողը վերամշակում էին այգիներում կառուցված հնձաններում, որոնք նաև ամառային կացարաններ էին: Դա հավաստվել է նաև հնագիտական պեղումներով (Աշտարակ, Աշնակ):

Հաղբատի վիմագրերից մեկը վկայում է, որ այգու հետ նվիրաբերվել են նաև այն սպասարկող մշակութական սուբյեկտները. «Ի թ. :ՈՂԲ: (1243)... ԵՍ ԴԱԻԻԹ ԵԿԻ Ի ՍԲ. ՆՇԱՆԻՍ ԱՌԱՋԻ ՈՒ ԶԻՆՉ ԻՄ ՊԱՊՆ ՔՈՒՐԴՆ... ՈՒ ԻՄ ՀԱՅՐՆ՝ ՈՒՔԱՆ ՍԲ. ՆՇԱՆԻՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԷԻՆ ՏՈՒԵԼ ՀԱՍՏ-ՏԵՑԻ. ԶԱՌՈՐ ՍԱՐԳԱԻՆ ՄՈՒՏՔՆ, ԶԿԱԹԱՆՑՆ ԱՅԳԻՆ ՄԵԶՐՈՎ ԵՒ :Գ: ՇԻՆԱԿԱՆ...»:<sup>18</sup>

Նման վիմագիր է հայտնի նաև Արցախի Հին Վաղուհաս գյուղատեղից, մի խաչքարի վրա. « Թ. :ՈԿԵ: (1216)...ԵՏՈՒ ԶԹՂԵԿԲԱ ԱՅ-ԳԻՆ ԻՒՐ ՀՈՂՈՎ ԵՎ ԿԱՏԱՊԱՆԱՒ...Ի ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԲԵՐԴԱԶՈՐԱ...»:<sup>19</sup>

Կատէպամ Երևանի բարբառով նշանակում է այգու պահապան:<sup>20</sup>

Ըստ Հաղբատի 1179թ. վիմագրերից մեկի, Եկամտաբեր հաստատություններ նվիրաբերվել են ոչ միայն վաճքերին կամ Եկեղեցիներին, այլև տվյալ միաբանության որևէ հաստատության, տվյալ դեպում՝ հյուրատանը կամ գրատանը. « Թ. :ՈՒԾ: ...ԵՏՈՒ ԶԻՄ ՀԱՅՐԵ-ՆԻՔ ԱՅԳԻՆ՝ ՈՐ ԱՌԱՋԻ ԵՂԱԶՈՐՈՅ, Ի ԳՐԱՏՈՒՆ ՀԱՐԱՏԱ...: ԵՒ ԵՍ ԿՈՒՏՍ ԻՄ ՀՈԳՈՅՆ ՊԱՇԱՐ ԶԻՄ ԱՅԳԻՆ ԱՅՆ ԳՐԱՏՈՒՆ ԵՏՈՒ: ԵՒ ԵՄ ՍԱՐԳԻՍ, ՈՐԴԻ ԶԽԻՆ ԶԻՄ ԱՅԳԻՆ ԵՏՈՒ»:<sup>21</sup>

Հայերենի տարբեր խոսվածքներում այգին հայտնի է նաև էքի,

<sup>17</sup> Կ.Գ. Ղաֆարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 136–138:

<sup>18</sup> Կ.Գ. Ղաֆարյան, Հաղբատ, էջ 206 – 207:

<sup>19</sup> ԴՀԿ, Եր., 1982, պ. 5, էջ 114:

<sup>20</sup> Դր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 537:

<sup>21</sup> Կ.Գ. Ղաֆարյան, Հաղբատ, էջ 208:

էզի, էզէ, յէզի, հէզէ, իզի, իկի, իքի ծևերով:<sup>22</sup>

Չատախում այն հայտնի էր հիկի ծևով, որտեղ նաև Շիզի անվանք գյուղ է եղել:<sup>23</sup>

Այզի և այդ բառի բարբառային արմատներով բազմաթիվ տեղանուններ կան պատմական Հայաստանի տարբեր, հիմնականում խաղողագործական շրջաններում: Դրանցից նշենք Լոռու մարզի Այեհատ գյուղանունը, որի խոսվածքային ծևն էր հքահատ-ը, հկըհատ-ը: Ներկայումս գյուղը խաղողագործական չի համարվում, քանի որ բարձր դիրքը նպաստավոր չէ այդ մշակույթի համար: Մինչև XIX դ. վերջերը այգեհատցիների համար տնտեսական որոշակի նշանակություն է ունեցել Ղերեդի ծախ ափի դարավանդային այգիների առկայությունը: Յիշյալ այգիներից դեպի հս.-արևելք, Ղերեդի հովտում, խաղողագործությունը տնտեսության կարևոր ճյուղերից էր: Եվ քանի որ հքահատին հարող այգիները վերցինն էին ու դրանցից վեր խաղող չէր աճում, վայրը ստացել է նման անվանում՝ իզի (այզի) և հատնել (վերջանալ) բառաբարդումից:

Ղերեդի հակադիր ափին գտնվող Մարց գյուղի հքատակ հնավայրի մի խաչքարի արձանագրությունում նշված է Ազադակ ծևը. «ԵՍ ԳՐԻԳՈՐԻ ՈՐՈՒ ՍԱՐԾՊԱՍՍ, ԹՈՂԻ ԶԱԳԱՊԱԿՈ ԶՈՐՈՅՍ ԶԱԲԳԱՍՍ... :ՈՉԵ: (1236)»:<sup>24</sup>

Վայոց ծորի Վերնաշեն գյուղից հյուսիս գտնվող Սպիտակավոր Աստվածածին վանքի 1339թ. արձանագրության «...ԵՍ ՍՄՐԱՏ, ՈՐՈՒ ԼԻՊԱՐՏԻ ... ՏՈՒԻ ԶՎԱԽՄԱՆԿԵՆՑ ԱՅՋԻՆ ԻՒՐ ԱՄԷՆ ՀԱՏԱՒՆ ԶԾԱՌ ԵՒ ՏՈՒՆԿ...ԹՎ :ԶԶԸ:»<sup>25</sup> հատվածը թույլ է տալիս ենթադրելու, որ արդեն 14-րդ դարում այզի բառի նախնական ինաստն սկսում է խաթարվել: Այն է, նույն տարածքում որոշակիորեն տարբերակվում են պլողատու ծառերն ու տունկերը:

Հայերենի որոշ բարբառներում օգտագործվող բաղչա (բաղչա, բախչա) օտար բառն առաջին անգամ հանդիպում է Արցախի Դադի վանքի 1558թ. վիհագրերից մեկում. «...ԻՇԽԱԱՆՈՒԹԻՒՆ ՇԱՅ ԹԱՅՄԱ-

<sup>22</sup> Շր.Աճառյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 166:

<sup>23</sup> Ռ.Գարունյան, Շատախ գավառի ազգագրական նյութերը (ձեռ.), 1964, ՀԱԻ ԱԲԱ, ֆ. 14, էջ 482, 5:

<sup>24</sup> Ա.Ա.Քալանքարյան, Նոր նյութեր Թումանյանի շրջանի պատմական հուշարձանների վերաբերյալ, Լրաբեր հաս. գիտ., 1975, թիվ 9, էջ 97 – 98:

<sup>25</sup> ԴՐԿ, Եր., 1967, պ. 3, էջ 98:

ԶԻՆ ԵՐ... ԳՆԱՑԻ ՆՈՐ ՇԵՍՆ ՇԻՆԵՑԻ ԵՐԵՔ ԶԱՂԱՅ, ԵՐԵՔ ԲԱՂՁԱՅ...  
Թ. :ՈՒ:»:<sup>26</sup>

Այսպիսով, չնայած այն բանին, որ գրական հայերենում այգի նշանակում է ընդհանրապես պտղատու ծառերի տարածք, ժողովողական խոսվածքում՝ առավելապես բարբառներում, ինչպես և հնում, այժմ էլ հստակորեն տարբերակվում են խաղողի (խաղողուտ, վազմուտ, իքի) և պտղատու ծառերի այգիները (այգի, բաղ, բաղչա, խնձորուտ, տանձուտ, ծիրաննոց, դեղձմուտ և այլն):

---

<sup>26</sup> ԴՅԿ, Եր. 1982, պ. 5, էջ 215:

## Նիկոլ Մարգարյան ԴԱՒ

### ԱՆՁԱՆՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ (Ըստ Վայոց ձորում արված հարցումների արդյունքների)

Անձնանուների ընտրության մոտիվների ուսումնասիրությունն ունի գուտ անվանագիտական և ընդհանուր ազգաբանական նշանակություն: Այն թույլ է տալիս բացատրելու թե ինչո՞վ է պայմանավորված որևէ էթնիկ հանրույթում կամ դրա ենթախմբում որոշակի քանակությամբ ու տեսակի անձնանունների առկայությունը, թե ովքե՞ր են դրանց ընտրողները, ինչպիսի՞ն է նրանց հասարակական, ազգակցական և սեռատարիքային կարգավճակը, ի՞նչ հանգամանքներու՞մ է դրսևորվում անվանակոչության մեջ նրանց մասնակցությունը:

Նշված առումներով անձնանունների ընտրությունը հայերի մեջ ցարդ ուսումնասիրվել է բանավոր և դիպվածային հետազոտությունների միջոցով, ինչը հնարավորություն է ընձեռել բացահայտելու անունների ընտրության մոտիվների հիմնական տիպերը և դրսևորման ծերը, բայց ոչ դրանց տարածվածության աստիճանը և որոշակի ժամանակամիջոցում դրանում տեղի ունեցող փոփոխությունները: Այդ առումով առաջին փորձը ծեռնարկեցինք 2000թ. Գյումրիում, որը թույլ տվեց վեր հանելու խնդրո առարկա երևույթի հիմնական գծերը շարժընթացի մեջ:<sup>1</sup> Ընդլայնելով ուսումնասիրության շրջանակները, դրա մեջ ընդգրկեցինք Հանրապետության այլ բնակավայրեր: 2001թ. ուսումնասիրություններ անցկացվեցին Վայոց ձորի մարզի Արենի և Արտաբույնք գյուղերում, նախապատվություն տալով հետազոտության հարցաթերթային եղանակին, որը, գուգակցվել է բանավոր հարցումներով: Տաս տարվա կտրվածքով անունների ընտրության հիմնական մոտիվների շարժընթացն ու միտումները պարզելու նպատակով, հարցորդների մեջ առանձնացվել է տարիքային երկու խումբ (1983-1987թ. և 1989-1993թ. ծնվածներ), յուրաքանչյուրում՝ 100-ական հոգի: Տարիքային խմբերին առանձնացնելու սահմանաբաժան է որոշվել 1988թ սկսված ազգային ինքնագիտակցության զարթոնքը,

1988թ երկրաշարժը, ինչպես նաև խորհրդային շրջանում սկսված և այնուհետ շարունակվող տնտեսական, սոցիալական, քաղաքական վերափոխումները: Տղա և աղջիկ զավակների անուններն ընտրելու մոտիվների նմանություններն ու տարբերությունները պարզելու նպատակով հարցորդների յուրաքանչյուր տարիքային խմբում առանձնացվել են ամեն սերի 50 հոգուց բարկացած ենթախմբեր:

Դարցմամբ ստացված տվյալների քննությունից պարզվում է հետևյալը.

**1.1. Առաջին տարիքային խմբի 24.5%-ին տրվել են իրենց ազգականների և մերձավորների անունները, այսինքն՝ անունները փոխանցվել են կամ ժառանգվել: Անունների փոխանցմամբ անվանակոչվել են նույն տարիքային խմբի տղաների 33%-ը, աղջիկների 22%-ը: Այսինքն՝ երկու խմբում էլ անվան փոխանցման դեպքերը բավական շատ են:**

Նույն տարիքային խմբում «գեղեցիկ»<sup>2</sup> անվան պատճառաբանությամբ անուններ են տրվել ընդհանուր հարցվածների 43.4%-ին, այդ թվում՝ տղաների 42%-ին, աղջիկների՝ 44%-ին: Դայկական կամ հայեցի անվան պատճառաբանությամբ անուններ են տրվել նույն տարիքային խմբի բոլոր հարցվածների 32.1%-ին, այդ թվում՝ տղաների 25%-ին, աղջիկների 34%-ին:

Այլ մոտիվներով (օրինակ՝ բարեբախտության ակնկալիքով) ուղղակի<sup>3</sup> տրված անուններ այս տարիքային խմբում չեն հանդիպել: Ինչ վերաբերում է վերը բերված տվյալների ընդհանրացմանը, ապա նկատելի է, որ ընդհանուր տարածվածությամբ առաջինը «գեղեցիկ» անվան մոտիվն է, որին հաջորդում են հայեցի անվան պատճառաբանությամբ և այնուհետ փոխանցման ճանապարհով տրված անունները: Տղա և աղջիկ հարցորդների կտրվածքով ստացված տվյալները դիտարկելու դեպքում նկատելի է տղաներին տրված անունների մոտիվների փոքր-ինչ այլ դասավորություն, ինչը պայմանավորված է այն հանգանանքով, որ տղաներին ավելի շատ փոխանցվող անուններ են տրվել, իսկ աղջիկներին՝ ավելի հաճախ հայեցի անուններ:

**1.2. Երկրորդ տարիքային խմբի հարցախույզով պարզվել է, որ փոխանցմամբ կամ ժառանգմամբ անուններ են ստացել հարցվածների 40.7%-ը, այսինքն՝ անունների փոխանցման դեպքերը նախորդ սերնդի համեմատ աճել է մոտ 16.5%-ով: Փոխանցմամբ անուններ են**

տրվել տղաների 28.6%-ին, աղջիկների 53.8%-ին: Սա վկայում է, որ նախորդ տարիքային խմբի համեմատ կտրուկ աճել է աղջիկ զավակներին փոխանցնամբ տրվող անունների թիվը: Նման միտում գրանցվել է նաև Գյումրիում անցկացված հարցախույզի արդյունքում, ինչը ըստ Երևույթին, պայմանավորված է Երկրաշարժի հետևանքով զոհ դարձած կանանց ու աղջիկների թվի մեծությամբ, որի հետևանքում ստեղծվել էր իգական անունների ժառանգման անհրաժեշտություն:<sup>4</sup> Այս դեպքում այդպիսի մեկնաբանությունը չի հիմնավորվում, ինչպես նաև մասամբ կասկածի է Ենթարկվում նախորդի հանդեպ որա իսկությունը: Վայոց ծորի մարզը դուրս է աղետի գոտուց և այստեղ, մեր հարցորդների մեջ աղետից տուժած ընտանիքների երեխաներ չեն եղել: Դետևաբար, հնարավոր է մեկ այլ մեկնաբանություն, որը կիմ - նվի այդ երևույթի դրսևորման ընդհանուր օրինաչափությունների՝ որոշակի քաղաքական-սոցիալական իրադարձությունների վրա, որոնք պայմանավորել են տարեց ազգականների անունների փոխանցման նշանակության կարևորությունը:

Որոշակի իմաստով վերը դիտարկված փոփոխության հետևանքը կարելի է համարել այն, որ նույն տարիքային խմբի ընդհանուր հարցորդների մեջ զգալիորեն նվազել է «գեղեցիկի» պատճառաբանությամբ անձնանուններ ստացածների քանակը՝ նախորդ տարիքային խմբի 43.4%-ի դիմաց, կազմելով 25.9%: Հատկանշական է, որ այդ նվազումը դրսևորվել է հատկապես աղջիկներին տրված անուններում: Նույն երևույթն է առկա նաև նույն տարիքային խմբի տղաներին տրված անձնանուններում:

Ըստ հարցախույզի արդյունքների տարիքային երկրորդ խմբի հարցորդների մեջ նկատելի է նաև հայեցի անվան պատճառաբանությամբ տրված անունների թվի նվազում, որը գերազանցապես պայմանավորված է իգական անուններում այդ մոտիվի կիրառման նվազմանք: Նույն տարիքային խմբի տղաներին տրված անուններում ընդհակառակը, այդ մոտիվի դրսևորումը ավելացել է 17.3 տոկոսային կետով, կազմելով 42.8%:

Այսպիսով, նկատելի են հետևյալ առավել ակնառու փոփոխությունները ա) երկրորդ տարիքային խմբում կտրուկ ավելացել է փոխանցվող անունների թիվը և այդ անուններում դրսևորվող մոտիվը տարածվածությամբ գերազանցել է մյուսներին, որը գլխավորապես

տեղի է ունեցել աղջկների անուններում այդ մոտիվի կիրառման տոկոսի հավելման հաշվին.

բ) կտրուկ ավելացել է հայեցի անվան պատճառաբանությամբ տղաներին տրվող անունների քանակը, ինչը թույլ է տվել այդ մոտիվը դասել երկրորդ տեղում իր տարածվածության աստիճանով.

գ) նշված փոփոխությունները տեղի են ունեցել գերազանցապես ի հաշիվ **գեղեցիկ անվան** պատճառաբանությամբ տրվող անձնանունների նվազման: Դետևապես, եթե թույլ տանք նտածելու, որ կատարվածը կարող է քաղաքական որոշակի իրադարձությունների և, մասնավորապես, ազգային գիտակցության զարթոնքի արգասիք լինել, ապա թե՝ տղաներին հայեցի կոչելը, թե աղջկներին տարեց ազգականների անուններով կոչելը կարող է համարվել դրա դրսնորումներից մեկը:

2.1. Արական և իզական անունների ընտրության մոտիվների միջև դրսնորվող տարբերությունները բացահայտելու առումով շատ կարևոր է փոխանցվող անունների նախկին կրողների ազգակցական, սեռատարիքային, հասարակական բնութագրերի հաշվառումը: Այն որոշ լույս է սփռում նաև ուսումնասիրվող բնատարածքի բնակչության ներհասարակական և ազգակցական հարաբերությունների, դրանցում ներգրավված կողմերի հեղինակության, դերի և կարգավիճակի վրա:

Առաջին տարիքային խմբում փոխանցվող անունների 69.2%-ը հայրական գծով պատի և տատի անուններ են, 23.1%-ը՝ հայրական գծով այլ ազգականների, 7.7%-ը՝ մայրական գծով ազգականների:<sup>5</sup> Ընդ որում, տղա երեխաններին փոխանցված անունները բացառապես հայրական գծով ազգականների անուններ են, իսկ աղջկի երեխանների դեպքում առկա են մայրական գծով ազգականի փոխանցման դեպքեր:

Երկրորդ տարիքային խմբում հայրական գծով ազգականների և գլխավորապես պատի ու տատի անունների փոխանցման օրինակները կտրուկ ածել են և կազմել ընդհանուր փոխանցված անունների 90.1%-ը, իսկ առանձին վերցրած աղջկների 100%-ը: Ի տարբերություն նախորդ տարիքային խմբի, այստեղ աղջկներին փոխանցմանը չի տրվել ոչ միայն մայրական, այլև հայրական գծով կողմնակի ազգականի անուն: Սա, թերևս, կարող է պայմանավորված լինել հարց-

ման ենթարկվածների սակավաթվությամբ: Սակայն նույնիսկ այդ դեպքում անհերքելի է անվանակոչողների անսքող հակումը դեպի արմատները:

2.2. Առանձնակի նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե փոխանցվող անձնանունների դեպքում անվանակոչության պահին նախկին անվանատերերի ո՞ր նաև է ողջ եղել: Մասնավորապես կարևոր է, թե տվյալ երևույթում դրսերվել է տվյալ մարդու մեծարու՞նը, թե՞ որոշակի միտմամբ՝ բարեբախտության հասնելու ակնկալիքը:

### Անվանակոչվածների տարիքային խմբերը

	1983-1987թթ. ծնվածներ			1989-1993թթ. ծնվածներ			Ընդամենը		
	տառ	ադիս	ընդամենը	տառ	ադիս	ընդամենը	տառ	ադիս	ընդամենը
	%	%	%	%	%	%	%	%	%
1. Փոխանցված անուններ	33	22	24.5	28.6	53.8	40.7	30.8	29.6	30
այդ թվում ա/ պապի և տասի	75	66.7	69.2	75	100	90.1	75	81.2	79.2
բ/ հայրական գծով այլ ազգականների	25	22.2	23.1	25	-	9.9	25	12.5	16.6
զ/ սերնդակիցների	-	-	-	-	-	-	-	-	-
դ/ մայրական գծով ազգականների	-	11.1	7.7	-	-	-	-	6.3	4.2
ե/ այլը (ոչ ազգա- կաններ)	-	-	-	-	-	-	-	-	-
2. գեղեցիկ անուն- ներ	42	44	43.4	28.6	23.1	25.9	34.6	38.9	37.5
3. հայեցի անուններ	25	34	32.1	42.8	15.4	29.6	34.6	29.6	31.2
4. այլ մոտիվներով ընտրված անուններ	-	-	-	-	7.7	3.7	-	1.8	1.25

Ըստ հարցման արդյունքների, Երկու տարիքային խճռում ընդհանուր առմամբ անունների փոխանցման 79.2% դեպքում նախկին անվանատերերն անվանակոչության պահին ողջ են եղել: Առաջին տարիքային խճռում այդ թիվը կազմել է 25%՝ տղաների, 11.1%՝ աղջիկների դեպքում: Երկրորդ տարիքային խճռում թվերի հարաբերակցությունը համապատասխանաբար 14.3% և 7.7% է: Այսինքն՝ ոչ շատ մեծ տարբերությամբ նկատելի է, որ երկու խճռում ել տղաներին ավելի հաճախ է տրվել հանգուցյալ ազգականի անուն, քան աղջիկներին, ինչը դժվար մեկնելի է: Նկատված է, սակայն, որ փոխանցված այն անունները, որոնք ոչ թե հայրական գծով պապի կամ տատի, այլ ուրիշ ազգականների են, անպայման հանգուցյալների անուններ են.<sup>6</sup> Ինչ վերաբերում է կենդանության օրոք հարազատների անունների փոխանցման դեպքերի քննությանը, ապա նրանց մեջարելու բացատրությունից բացի, դա պայմանավորված է ժողովրդագրական գործոնով, մասնավորապես ծնունդների թվի սահմանափակմամբ, որի հետևանքում անունը փոխանցվում է առաջին զավակներին, այսինքն՝ այն ժամանակ, երբ պապը կամ տատը ոչ միայն ողջ են, այլ նույնիսկ տարեց չեն:

## Ծանոթագրություններ

1. **Տես՝ Ն.Մարգարյան,** Անձնանունների ընտրության մոտիվները (ըստ Գյումրիում անցկացված հարցախույզի արդյունքների), (գեկուցման հիմնադրույթներ).- Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական չորրորդ գիտաժողով, Գյումրի, 2002, էջ 44-46: Նույնի, Անվանակոչության որոշ յուրահատկություններ հայոց ընտանիքում (ըստ Գյումրիում անցկացված հարցախույզի արդյունքների), Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001, էջ 70-75:

2. «Գեղեցիկ»-ի ընկալումն առկա է գրեթե բոլոր անուններն ընտրելիս, սակայն միշտ չէ, որ այն հանդես է գալիս իբրև առաջնային մոտիվ: Բացի այդ, նախնական հարցումների ժամանակ հարցվողների մեծ մասն այդ մոտիվը կտրուկ առանձնացրել է մյուսներից:

3. Ուղղակի տրված կարելի է համարել այն անձնանունը, որի իմաստի կամ հանրությանը ծանոթ նշանակության մեջ ամրագրված է անվանակոչողի ակնկալիքը, ինչը հավաստվում է անվանակոչողի կամ անվանակոչվողի կող-

մից: Օրինակ՝ տրվել են **Երջամիկ, Գեղեցիկ** անունները, որպեսզի Երեխաները Երջանիկ և գեղեցիկ լինեն:

4. Նորածիններին հանգուցյալ ազգականների անուններով կոչելու երևույթի նշանակության մասին տես, **Ն.Մարգարյան**, Անձանվան ընտրությունն արևելահայոց մեջ /XIX-XXդդ/ (ազգաբանական ուսումնասիրություն): Աստենախոսություն, (անտիպ), Եր., 2000, էջ 69-86, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարան:

5. Դրանցից երեք դեպքում առկա է Երեխանների մայրական գծով ազգականի տանը մեծանալու հանգամանքը:

6. Այս երևույթը նկատված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում և կարիք ունի հատուկ ուսումնասիրության:

## Արտակ Մարկոսյան ԴԱԻ

### ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1996-2001թթ.

XXդ. վերջերին Հայաստանի քաղաքական իրավիճակը բավականին բարդացավ, որն իր անմիջական ազդեցությունն ունեցավ երկրի տնտեսության անկման և բնակչության սոցիալական պայմանների վատթարացման վրա: Այս պայմաններում անխուսափելի դարձան բնակչության տեղաշարժերը, որոնք ուղղված էին համեմատաբար կայուն տարածաշրջաններ:

1990-ական թթ. սկզբներին Հայաստանի բնակչության մի մասը հեռացավ մեծ զանգվածներով, որի արդյունքում, միայն 1992-1994թթ. ընթացքում, ըստ մեր կողմից կատարված հաշվարկների, կորուստը կազմեց ամբողջ բնակչության շուրջ 15%-ը: Դետագա տարիներին (1995-1996թթ.), զանգվածային արտահոսքի չափերն աստիճանաբար փոքրացան, որոշակի փոփոխություն կրեց նաև արտագաղթի բնույթը. բնակչության զգալի մասը մեկնեց առավելապես արտագնա աշխատանքի:

Արտագաղթի մեծ մասը բաժին էր ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, ընդ որում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում հաստատվեցին Հայաստանից մեկնածների 25%-ը,<sup>1</sup> Մոսկվայում և Մոսկվայի մարզում՝ 8%-ը:<sup>2</sup> Ուշագրավ է, որ վերը նշված վարչատարածքներում տեղափոխվեց Ռուսաստան գաղթած հայերի գրեթե կեսը (47%):

Արտագաղթի համեմատաբար մեծ չափերը պայմանավորված էին՝ 1) Ռուսաստանի՝ Հայաստանին ամենամոտ երկիր լինելու և 2) նշված երկրամասերը հայերով վաղուց բնակեցված իրողության հետ: Միայն 1995-1996թթ. Հայաստանից այդ տարածաշրջան են

<sup>1</sup> 1992-1997թթ. ՀՀ-ն արտաքին միգրացիայի գործնթացի հետազոտում, ՀՀ Միգրացիայի և փախստականների վարչություն (ՄՓՎ), 1998թ., էջ 7:  
<sup>2</sup> Ասդ, էջ 6:

արտագաղթել 93 հազ. մարդ (Կրասնոդարի երկրամաս՝ 25 հազ., Ստավրոպոլի երկրամաս՝ 48 հազ., Ռոստովի մարզ՝ 20 հազ.):<sup>3</sup> Հաշվարկները ցույց են տալիս, որ իրականում նշված վայրեր մեկնած հայերի թիվը զգալիորեն մեծ է: Հեռավոր արտերկրներ Հայաստանից արտագաղթի ամենամեծ մասը բաժին է ընկնում ԱՄՆ-ին (8%), Հունաստանին (3%) և Իսրայելին (1%):<sup>4</sup>

1995-1996թթ. արտագաղթի ծավալները կարող էին շատ ավելի մեծ լինել, եթե Ռուսաստանում չխստացվեր մարդկանց մուտքի և ելքի բույլտվությունը, և, որ կարևոր է, չիրահրվեին հակահայկական տրամադրություններ ու արարքներ:

Արտագաղթի ներքին պատճառներից էր նաև Հայաստանում օդենսդրական ոչ բարենպաստ դաշտի առկայությունը, որը հնարավորություններ չի ընծեռել մասնավոր ձեռներեցության խթանման ու զարգացմանը և իշխանության լծակներից հեռու կանգնած մարդկանց ազատ գործունեության հեռանկարների բացակայությունը:

1997թ. Հայաստանի Հանրապետությունից սկսվում է բնակչության արտահոսքի նոր ալիք: Այս շրջանում նկատվում է միգրացիոն իրավիճակի որոշակի կայունացում, որը նախորդ տարիների համեմատությամբ բնութագրվում է բացասական ցածր գործակիցով (տարեկան 40-50 հազ.):<sup>5</sup>

Արտագաղթը շարունակվեց նաև 1998թ. նախագահական և դրան հաջորդած Ազգային ժողովի ընտրություններից, առանձնապես, հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունից հետո: Հայաստանից հեռանում էին հիմնականում նյութական հնարավորություններ կամ արտերկրում բարեկամներ ու ընկերներ ունեցողները: Դրա հետևանքն Հայաստանի առկա բնակչության զգալի մասը, որը հարազատներ չուներ արտերկրում, գնալով համալրում էր աղքատների շարքերը: Անկախ փորձագետների նախնական գնահատականներով 1999թ., նախորդ տարիների համեմատ, միգրացիայի բացասական մնացորդն աճել է գրեթե երկու անգամ՝ կազմելով 75-80 հազ. մարդ, որը բացատրվում է

<sup>3</sup> Միգրացիա, 2000, 3, ց. 35.

<sup>4</sup> Անդ, էջ 36: Մյուս երկրների վերաբերյալ քիչ թե շատ հավաստի վիճակագրական տվյալներ չկան:

<sup>5</sup> Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ, ՀՀ ՍՓԿ, 2000թ., էջ 7:

սոցիալ-տնտեսական իրավիճակով: Ըստ իս, տեղաշարժերը փոխարինվում են, այսպես կոչված սոցիալ - հոգեբանականով, որի կարևոր դրսնորումներից է ընտանիքների վերանայումը նպատականված արտահոսքը: Այսինքն, եթե առաջ արտագաղթի հիմնական նպատակը դրսում աշխատելն էր և Հայաստանում մնացած իրենց ընտանիքներն ապահովելը, ապա այժմ արտերկրում հիմնական աշխատանք և գոյության այլ միջոցներ գտնելով, ընտանիքներին տանում են իրենց մոտ: Դա այս փուլի տագնապահարույց երևույթներից մեկն է:<sup>6</sup>

2000թ. Հայաստանից արտագաղթի բացասական հաշվեկշիռը կազմեց 57499 մարդ,<sup>7</sup> իսկ 2001թ. այդ ցուցանիշն աճեց ու հասավ 60389 մարդու:<sup>8</sup>

Ըստ պաշտոնական տվյալների՝ մեկնողների հիմնական մասը բաժին է ընկնում Երևանին՝ 34,3%, Լոռու մարզին՝ շուրջ 11,1%, Շիրակին՝ 10,9%, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերին համապատասխանաբար՝ 10,8% և 9,1%:<sup>9</sup> 1998-1999թթ. Ազգային վիճակագրական ծառայության հաշվարկները ցույց տվեցին, որ ընդհանուր առմանը, Հայաստանից հեռացել է 760-780 հազ. մարդ, որոնցից 600 հազարը մշտական բնակիչներ էին:

Այսուսակում բերված թվային արժեքները թերի են և չեն ներկայացնում նշված ժամանակահատվածում ՀՀ բնակչության տեղաշարժերի իրական պատկերը: Ամենալավատեսական հաշվարկներն անգամ ցույց են տալիս, որ 90-ական թթ. սկզբից ծայր առաջ զանգվածային արտագաղթը գրեթե 2.5 անգամ գերազանցում էր բնական աճի ցուցանիշները: Սա վկայում է, որ պաշտոնական ծառայություններն արտագաղթի իրական չափերին վերաբերող վիճակագրական տվյալները պակաս են ներկայացնում՝ արիեւստականորեն մեծացնելով առկա բնակչության թիվը:

<sup>6</sup> Статистический ежегодник Южно-Кавказских стран., с. 63.

<sup>7</sup> Հայաստանի Համբապետության սահմանային ուղևորահոսքի ուսումնասիրություն, Եր., 2001, էջ 23:

<sup>8</sup> Անդ, էջ 24:

<sup>9</sup> Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2002, էջ 12:

**Համրապետության բնակչության տեղաշարժերը 1996-2000թթ.<sup>՝</sup>  
ըստ Վիճառայության պաշտոնական տվյալների**

Տարի	Բնակչ. թիվը (մլն.մարդ)	Ծնված թիվը	Մահացած թիվը	Բնական աճը	Մեխանի- կական աճը	Ընդհա- նուր աճը
1996	3766,4	48100	24900	23200	-8900	14300
1997	3780,4	43900	24000	19900	-9400	10500
1998	3791,2	39800	24100	15700	-8700	7000
1999	3798,2	36500	24100	12400	-7200	5200
2000	3803,4	34300	24000	10300	-	-

Վերը նշված տվյալները հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմելու Հայաստանի բնակչության միգրացիոն առավել էական հետևանքների մասին:

1. *Ժողովրդագրական հետևանքներ.* Խաթարվել է բնակչության սեռատարիքային համամասնությունը: Մեծացել է երեխաների ու հատկապես ծերերի տեսակարար կշիռը, նվազել է աշխատանքային ու վերարտադրողական տարիքի բնակչության, հատկապես տղամարդկանց տեսակարար կշիռը:

Երևոյթների այս համալիրը դարձել է Համրապետության ժողովրդագրական գործընթացների համաշափ ու բարենպաստ ընթացքի ապակայունացման, մասնավորապես ամուսնությունների և ծնունդների թվերի կրկնակի կրծատման բնորոշ գործոններից մեկը:

2. *Սոցիալական հետևանքներ.* Տեղի է ունեցել ամուսնալուսանելկան հարաբերությունների հիմքերի զգալի թուլացում: Ընտանիք ստեղծելու հնարավորությունների սահմանափակման, ամուսնական զույգերի և ընտանիքի անդամների տևական անջատման, երեխաների լիարժեք դաստիարակության խաթարման, ինչպես նաև սերունդների բարդ փոխհարաբերությունների հետևանքով զգալի նվազել է հասարակության ստեղծարար ներուժը, դրանով իսկ նպաստելով սո-

ցհալական հիվանդագին դրսերումների ավելացմանը: Սակայն, նշված բացասական անդրադարձներին առընթեր, զանգվածային արտագաղթը, ըստ որոշ մասնագետների, մեծապես նպաստել է աշխատանքային շուկայի լարվածության մեղմացմանը, կանխելով հասարակության տարբեր խավերի և շերտերի միջև հակամարտությունների ծայրաստիճան սրումը ու զգալի ներդրում է ունեցել հանրապետությունը սոցիալական ծանր բախտումներից գերծ պահելու գործում:

3. *Տնտեսական հետևանքներ*. Զանգվածային արտագաղթը ուղեկցվել է ֆինանսական և մտավոր կարողությունների մեծ ծավալների արտահանմամբ, նվազեցրել է Հայաստանի տնտեսական ներուժը, դանդաղեցրել նյութական կայունացման գործընթացը, որով էլ արգելակել է նշմարվող տնտեսական առաջընթացը:

Զանգվածային արտագաղթը միաժամանակ եղել է Հանրապետության բնակչության զգալի մասի կենսապահովման միջոցների կարևոր աղբյուրներից մեկը: Ապահովելով ներդրումային կապիտալի արտահանվածին ոչ համարժեք որոշակի ծավալների ներհոսք, այն վճռական դեր է ունեցել տնտեսական կայունացման ու աճի գործընթացներում:

Հայտնի է, որ հասարակությունն արտագաղթի արդյունքում ծերանում է, խորանում է հասարակության բևեռացումը, եթումշակութային արժեքները ենթարկվում են փոփոխության, նվազում է հասարակության ակտիվությունը, որն իր հերթին ազդում է տնտեսության զարգացման վրա:

Այսուհանդերձ, բնակչության թվի նվազման հետևանքով մասամբ լուծվում է գործազրկության խնդիրը, առկա բնակչության մի մասն ապրում է արտագաղթած կամ արտերկրում բնակվող բարեկամների օգնությամբ, որը նպաստում է սոցիալական լարվածության մեղմացմանը:

## Դարություն Մարտության ԴԱՒ

### ՍԳՈ ԵՐԹԵՐԸ, ԱՆՄԵԴ ԶՈՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԶԵՎԵՐ<sup>1</sup>

Հայկական սովորույթը պահանջում է նշել մահվան յոթերորդ և քառասուներորդ օրերը: Այնպես էր ստացվել, որ 1988թ. փետրվարի 27-29-ին աղբբեջանական Սումգաիթ քաղաքում իրականացված հայկական ջարդերի ավարտի յոթերորդ օրը երկուշաբթի էր: Հաջորդ օրը՝ մարտի 8-ը, Կանանց միջազգային օրվա առթիվ տոնական էր (ոչ աշխատանքային), որն ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում սիրված տոներից էր: Սակայն այս անգամ հազարավոր, հաճախ սևազգեստ հայ կանայք (նրանց շարքերում՝ նաև տղամարդիկ) այդ օրն «առավոտից մինչև երեկո սուգի հոժ երթերով քայլեցին դեպի Ծիծեռնակաբերդ, դեպի Եղեռնի հուշարձան՝ ժողովրդի իմաստուն բնագդով զգալով, որ Սումգաիթը շարունակությունն է 1915թ. ապրիլի 24-ի...»:<sup>2</sup> Այդպիսով, մարտի 8-ը նշվեց որպես մահվան յոթերորդ օր՝ մեռելոցը մեկ-երկու օրով տեղափոխվեց, որպեսզի այն համընկնի հանգստյան օրվան, որը ներկայում լայնորեն կիրառվում է ժողովրդի կողմից, եկեղեցին նույնպես չի արգելում նման տեղափոխությունը: Սումգաիթյան ողբերգության յոթերորդ օրը նշելով հենց մարտի 8-ին, այլ ոչ թե, ասենք, մարտի 6-ին, որը նույնպես հանգստյան օր էր, հայ կանայք ընդգծում էին, որ տոնի օրը նրանց հա-

<sup>1</sup> Հեղինակը շնորհակալություն է հայտնում Լևոն Աբրահամյանին՝ համատեղ քննարկումների և օգտակար խորհուրդների համար:

<sup>2</sup> Ա. Կապուտիկյան, Եջեր փակ զգողոցներից, Եր., 1997, էջ 309: Տես նաև. Հայոց Կարաբախ: Историческая справка. Ер., 1988, с. 65.

մար վեր էր ածվել սգի օրվա:<sup>3</sup> Քառասուներորդ օրը, որ գալիս էր ապրիլ ամսին, չնշվեց, ամենայն հավանականությամբ, այն պատճառով, որ այդ ամսին արդեն իսկ ուներ հիշատակի օր՝ ապրիլի 24-ը Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրը: Այդպիսով, Սումգայիթի զոհերի մահվան քառասուներորդ օրը միացվեց սգո ավելի նշանակալից օրվան, իսկ երեք տասնյակ զոհվածների հիշատակը միացվեցին 1915թ. ցեղասպանության ավելի քան 1.5 միլիոն զոհերի հիշատակին:

1989թ. փետրվարի 28-ը նույնպես նշվեց. Թատերական իրապարակից՝ ցույցերի անցկացման հիմնական վայրից, դեպի ցեղասպանության զոհերի հուշահամալիր ուղղվեց սգո բազմահազարանոց երթը: Ինչպես և մեկ տարի առաջ, ապրիլի 24-ին մարդիկ տանում էին սումգայիթյան զոհերի մեծադիր լուսանկարները: Այլ խոսքով, սումգայիթյան ջարդերի զոհերը հիշվեցին համաձայն մահվան առաջին տարեղարձի նշան ժողովրդական սովորության:

\*

\* \* \*

Մեծ Եղեռնի ու Սումգայիթի, այն է՝ իին ու նոր զոհերի նույնացման առումով ուշադրության է արժանի «ցուցապատճենային համադրության» ստեղծման հետկայլ ձևը, որ կիրառվեց 1988 թ. ապրիլի 24-ին: Այսպես, սգո երթի մասնակիցների մի խումբ տանում էին սկ շրջանակների մեջ առնված, սկ ժապավեններով երիզված Սումգայիթի զոհերի մեծադիր լուսանկարները,<sup>4</sup> մեկ այլ խումբ՝ նույնպես սկ շրջանակների մեջ առնված, 1915թ. զոհերին մարմնավորող հայ մտավորականների՝ Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Գրիգոր Զոհրապի դարձյալ մեծադիր լուսանկարները: Այս պահը ևս համադրելի է հայ ժողովրդական՝ մինչև վերջերս լայնորեն տարածված մի սովորույթի հետ, երբ նոր մահացածի հիշատակին նրա մերձավոր հարազատները, բարեկամները կամ ընկերները մի որոշ ժամանակ (հիմնականում՝

<sup>3</sup> Այս աշխարհով տես Սիփան Շիրազի «8 մարտ 1988» վերնագրով քանաստեղծությունը, որտեղ կան հետկայլ տողերը. «Երբ այդ առավոտ նայրերն աշխարհի /Գարնան առաջին մեծ տոնն են տոնում, / Յայոց մայրերը այդ տոնը թողած / Սրբավայր դարձած Եղեռն են գնում». - Երկաթ շերեփ, 1988, հունիս, թիվ 13, էջ 36:

<sup>4</sup> Սումգայիթյան ողբերգության մի քանի զոհերի լուսանկարները չեր հաջողվել ձեռք բերել, ուստի և ցուցարարները տանում էին միայն նկարների դատարկ շրջանակներ՝ երիզված սկ ժապավեններով:

7-40 օր) անընդմեջ թևքերին ամրացնում էին սև ժապավեն և կամ էլ բաճկոնի կամ վերնաշապկի ծախս վերնամասում, սրտին մոտ մահացածի փոքր չափի լուսանկարը: Մեծ եղեռնի նահատակ հայ մտավորականների լուսանկարների եզրերին չկային սև ժապավեններ, ինչը բնական է, եթե նկատի առնվի նրանց ավելի քան 70 տարի առաջ գոհված լինելու հանգամանքը: Դիտարկվող թեմայի առումով, կարևոր է շեշտել այն փաստը, որ քսաններորդ դարասկզբի և նույն դարավերջի ցեղասպանությունների գոհերի լուսանկարները դրվեցին եղեռնի գոհերի հուշարձանի հավերժական կրակի շուրջն սփռած ծաղիկների զանգվածի մեջ ու, այդպիսով, կարծես թե կազմեցին մի ամրողական, իին և նոր գոհերի միջև տեսանելի կապով ստեղծված հոյնվածք:

Նոր գոհերի հնին «միացման» հավաստումն է նաև այն, որ Սումգաիթի գոհերի հիշատակը հավերժացնող խաչքարը դրվեց հենց Եղեռնի գոհերի հուշահամալիրի տարածքում և հենց ապրիլի 24-ին: Ուշագրավ էր խաչքարի հորինվածքային լուծումը՝ խաչքարի կենտրոնական մասը կազմող մեծ խաչի շուրջն ստեղծված էին 26 ավելի փոքր խաչեր, որոնք ասես մարմնավորում էին սումգայիթյան ցեղասպանության գոհերի գերեզմաններին դրված և չդրված խաչերը:

1988թ. մարտիության ցուցապաստառներից մի քանիսը ցուցում էին ժողովրդի մեջ արդեն արմատացած այն համոզմունքը, որ սումգայիթյան իրադարձությունները Մեծ Եղեռնի շարունակությունն են: Այսպես, այդ գաղափարի պատկերագրական հետաքրքիր լուծում էր առաջարկված մի պլակատում, որտեղ «1915» գրություն ունեցող Եղեռնի գոհերի հուշարձանի պատկերին կից նկարված էր այդ նույն հուշարձանի փոքր չափերի, պառկած եռանկյունի հիշեցնող ոչ ամրողական հատվածը, որի տակ գրված էր «1988», այդպիսով, կարծես ցանկանալով նկատել, որ նոր ցեղասպանությունը նախորդի ավելի փոքր չափերի շարունակությունն է: Պատկերի վերնամասում գրված էր. «Մы не забудем кровавое воскресенье Сумгаиту!» («Մենք չենք մոռանա Սումգայիթի արյունոտ կիրակին»),<sup>5</sup> իսկ պլա-

<sup>5</sup> Պետք է լինի կամ «Сумгаит» կամ էլ «в Сумгаите»: Ընդհանրապես, այս պլակատն այն եզակիներից է, թերևս միակը, որտեղ մեկ ցուցապաստարին հանդիպում են երկլեզու, սակայն թարգմանություններ չհանդիսացող և տարբեր ինաստներ ունեցող գրություններ:

կատի ցածի մասում «Մենք թույլ չենք տա, որ կրկնվի Եղեռնը»:<sup>6</sup> Պլակատի առաջին գրությունում առկա «Արյունոտ կիրակի» արտահայտությունը թերևս «մեջբերումային մտածողության» դրսուրում է, քանզի այն իշխեցնում է 1905թ. հունվարի 9-ի Ռուսաստանի պատմության մեջ «Արյունոտ կիրակի» բնորոշումն ստացած դեպքերը: Պատմության այդ դրվագը համենայն դեպք հայտնի է խորհրդային երկու երեք սերնդի դպրոցական տարիներից և մատուցվում է իբրև մի օր, երբ տեղ գտած իրադարձությունների հետևանքով («հայր-ցարին» ուղղված խնդրանքներով Զմեռային պալատ դիմած խաղաղ ցուցարարների գնդակոծումը ոստիկանության կողմից) մարդկանց մեջ կորավ հավատը ցարի՝ ժողովրդի հոգացող «հայր» լինելու նկատմամբ: Փաստորեն, նույն բանն էր խոստանում նաև պաստառային գրությունը: Նետաքրքիր է, որ այս նույն համեմատությունն առկա է նաև սիրված բանաստեղծուիի, Ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում իրադարձությունների «խոհանոցին» մոտ կանգնած Սիլվա Կապուտիկյանի 1988թ. ապրիլի 5-ին գրված և այդ օրերին ձեռքից-ձեռք անցնող «Ս.Ս.Ավերինցևին, Վ.Վ.Իվանովին, Վ.Ա.Կավերինին, Մ.Ա.Ուլյանովին, գիտության, մշակույթի և մամուլի բոլոր ազնիվ գործիչներին» ուղղված բաց նամակում:

«Յիրավի, մարդկային հոգու ուժերը փորձարկող այս երկամսյա ոգորումներից մենք դուրս եկանք ինչ-որ փոխված, հասունացած: Դառը եղավ այդ հասունացումը, մի մեծ հավատի փլուզման գնով, որը ինչ-որ տեղ իշխեցնում է 1905 թվի հունվարի 9-ը: Մենք՝ նախ Ղարաբաղի, այնուհետև Յայաստանի ժողովուրդը, Զմեռային պալատ-Ստեփանակերտի Լենինի հրապարակ և Երևանի Թատերական հրապարակ գնացինք՝ հուսալով, որ մեր կենտրոնական կառավարությունը կհասկանա ու կընդառաջի մեզ: Գնացինք՝ սոցիալիզմի երկրին, ոուս ժողովրդին, վերակառուցմանը հավատալու ու վստահելու լոգունգներով, կուսակցության գլխավոր քարտուղար Ս.Ս.Գորբաչովի մեծադիր նկարներով: Սակայն մեզ վրա կրակ բացեցին: Կրակ բացեցին ՍՍԿԿ Կենտկոմի և Գերագույն սովետի նախագահության ...անարդար որոշումներով, մասսայական իմֆորմացիայի

<sup>6</sup> Լուսանկարը տես. Երկաթէ շերեփ, 1988, թիվ 12, մայիս, բացարիկ, էջ 4:

որոշումների ծավալած՝ ստարան պրոպագանդայով, աղոքեցանական կողմի հանդեպ բռնած անսքող կողմնապահությամբ, Սումգահթով։ Ովքե՞ր էին կրակ բացողները, մենք այդպես էլ չենք կարողանում հասկանալ, ավելի ճիշտ՝ մեզ համար չափանց ծանր է հասկանալ։ ...Այսպես, թե այնպես՝ մեզ վրա, հույսով ու խաղաղորեն փողոց ելած զանգվածների վրա, բարոյական կրակ բացվեց, և մենք այլևս հունվարի 8-ի ժողովուրդը չենք, այլ հունվարի 10-ի՝ մեկ օրում հասունացած ժողովուրդ...»<sup>7</sup>

1989թ. փետրվարի 28-ից հետո սումգահթյան եղեռնագործության զոհերի հիշատակը դադարեցին այդպես զանգվածային ձևով նշելը, նոր զոհերն ամբողջությամբ «ձուլվեցին» հին զոհերին, ինչպես ժողովուրդը կասեր՝ «գնացին խառնվելու հազար տարվա մեռելներին»։ Նույն կերպ և հանգուցյալը հայերի մեջ հիշվում է որոշակի ժամանակ միայն՝ յոթերորդ, քառասուներորդ օրերը, տարին, և այս ամենը միայն մեկ տարվա ընթացքում։ Հետագայում նա հիշվում է միայն բոլոր հանգուցյալների ավանդական հիշատակի օրերին՝ մեռելոցներին։ Հանգուցյալի «անհատական» հիշատակի օրերը նշվում են միայն նրա ընտանիքի նեղ շրջանակում։ Նույն կերպ և փետրվարի 27-29-ը մեր օրերում նշվում է գերազանցապես նախկին սումգահթցիների և Ադրբեյջանից բռնազարթվածների լոկ մի քանի տասնյակ հոգանոց խմբերի դեպի Շիհեռնակաբերդի բարձունք ուղղված երթերով միայն։<sup>8</sup>

1)

<sup>7</sup> Տես. *Մ. Կապուտիկյան*, նշվ. աշխ., էջ 313-314։

<sup>8</sup> Անգամ սումգահթյան իրադարձությունների տասնամյակին, չնայած 8Եղասպանության զոհերի հուշահամալիր եկածների թիվը «երկու-երեք անգամ գերազանցում էր նախորդ տարվանը, «ցուցանիշը», սակայն, դարձյալ անբավարար էր՝ ողբերգական տարեթվի նկատմամբ դրսնորվող ուշադրության առօնությունը դարձյալ «բացակայում էր» (ոնանք տարակուսած էին իշխանությունը փոխվել է, պետության նոտեցումը՝ մնացե՞լ)…»։ Տես. *Հիլիք Պողոսյան*, «Յայերն ապրել են, ապրում են և կապրեն»։ Միայն թե առանց հիշողության կորստի. - Ազգ, 28 փետրվարի 1998 թ., թիվ 34 (1537)։

## Սամվել Մկրտչյան ԴԱՒ

### ՄԵՐՐԵՑԻՆԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՁԻՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՈՒՄ (Էթնոսուցիոնգիական - ազգագրական հետազոտություն)

Մեղրեցիների տոնածիսական համալիրի պատմահամեմատական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ համալիրը ժամանակի ընթացքում որոշակի փոփոխությունների է ենթարկվել:

Այսօր կենցաղում ամբողջությամբ մոռացված են Նավասարդը (Շըմքը կամ Շըմքե), ինչպես նաև հայոց կրոնավանդական տոնացույցի հենքը կազմող գլխավոր տոները (Քրիստոսի ծնունդ [Զրոխնեք], Տեառնընդառաջ [Տնդալեց], Սուրբ Սարգիս, Բարեկենդան [Բըրգինդան], Միջինք [Մաջինք], Զատիկ, Համբարձում, Վարդավառ [Վըրդիվուր], Սուրբ Աստվածածին [Խաղողօրինեք] և այլն):<sup>1</sup>

Մեղրեցիների կենցաղն ու մշակույթը շատ ավելի ընդհանություններ ունեն Գողթն գավառի հետ, քան թե Սյունիքի (Զանգեզուրի): Պատմականորեն ծևավորված այդ ընդհանրությունները դրսևսորվում են նաև նրանց տոնածիսական համալիրներում: Այդ են վկայում Մեղրի (Արևիքի), Գողթնի<sup>2</sup> և Սյունիքի<sup>3</sup> բնակչության կենցաղի և մասնավորապես տոնածիսական վարքագծային ուսումնասիրությունները, ինչպես նաև դրանց համադրական վերլուծությունը:

1 Մեղրեցիների տոնածիսական վարքագիծը հետազոտվել է պատմական և արդի տեսանկյուններով: Այս առումով մենք արժենորում ենք ինչպես անցյալին Վերաբերող ազգագրական ուսումնասիրությունները, այնպես էլ 2002թ. ներ Էթնոսուցիոնգիական և ազգագրական հետազոտությունները: Վերջիններս անցկացվել են խորացված անհատական գրույցների, ֆոկուս-խնբային և սոցիոյոգիական հարցումների մեթոդներով: Հարցազրույցներում ընդգրկվել են սեռա-տարիքային և սոցիալ-մասնագիտական տարբեր խնդեր ներկայացնող բնակիչներ և քննարկվող հիմնախսնդիրներին առավել իրազեկ փորձագետներ:

2 Ստ. Լիսիցյան, Մեղրի, 1931, Անձնական արխիվ, էջ 27/29-30/32, 38/40-43/4:  
3 Եր. Լալայան, Գողթան գավառ.- Ազգագրական հանդես (այսու՝ ԱՅ), գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 142-154:

Եր. Լալայան, Զանգեզուր.- ԱՅ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 8-112, նաև Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Եր., 1969:

Ավանդական Ամանոր-Նավասարդը կամ Շըմբըլքեն, որ նշվում էր աշնանը՝ նոյեմբերին, և պահպանվել էր մեղրեցիների կենցաղում ընդհուած մինչև ՀՀԴ. 30-ական թթ., աստիճանաբար տեղը գիծեց քրիստոնեական ամանորին՝ հունվարի 1-ին, որն այսօր մեղրեցիների ամենատարածված և սիրված տոնն է:<sup>4</sup>

Անցյալում մեղրեցիների կենցաղում տարածված տոներից էր նաև Վարդավառը (Վըրոիվուրը),<sup>5</sup> որի կապակցությամբ ուխտագնացություններ էին կազմակերպվում Զվար և Խուստուփի:՝ “Ի դեպ, այդ ուխտագնացություններին մասնակցում էին և քրիստոնյաները, և մահմեդականները”<sup>6</sup>:

Այսօր, ցավոք, Վարդավառի տոնի հետ կապված ավանդույթները գոեթե մոռացվել են: Ներկայում այն մասամբ նշվում է, որը, սակայն, խաղային երանգներ ստացած գուտ շրջանության բնույթի արարողություն է:<sup>7</sup>

Եիշտ է, վերջին շրջանում նկատվում է ավանդական տոների զարթոնքի մասնակի միտում (հատկապես Քրիստոսի ծնունդ (10%), Զատիկ (33%), Վարդավառ (13%), Տեառնընդառաջ (6%) և այլն), բայց դրանք, ըստ երևույթին, առավելապես արժեքային փոփոխություններ են, պայմանավորված Ղարաբաղյան շարժման ալիքով ձևավորված ազգային զարթոնքի գործոնով: Այդ տոների «Վերակենդանացումը» որոշ չափով արագ կընթանար, եթե Մեղրիում գոյություն ունենար գործող եկեղեցի. մինչդեռ ներկայում ոչ միայն Մեղրիում, այլ նույնիսկ ողջ շրջանում չկա որևէ հոգևոր սպասարկում: Չնայած իրենց աշխարհիկ վարքագծին, այս խնդիրը որոշակիորեն հուզում էր մեղրեցի գոեթե բոլոր բանասացներին:<sup>8</sup>

<sup>4</sup> Ս.Մկրտչյան, Ղաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ՂԱԸ), Մեղրի 2002, թ/14:

<sup>5</sup> Ստ.Լիսիցյան, Մեղրի, 1931, էջ 15/17-16/18: Նաև՝ Զանգեզուրի հայերը, էջ 280-282:

Ըստ Ստ.Լիսիցյանի, մահմեդական գլխավոր ուխտավայրեր համարվող Զվարը և Փիրոյուղանը (կամ՝ Կովկաս, Փիր-Դովկանին) ծագումով հայկական են: Առաջինը Զվար քրիստոնեական տաճարն է, որը բազիյիկ կառույց է, իսկ երկրորդը կապված է սուրբ Ղավքի հետ, որի գերեզնանը մահմեդականները սեփականել և անվանափոխել են:

<sup>6</sup> Ստ.Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 282:

<sup>7</sup> ՂԱԸ, Մեղրի, 2002, թ/14:

<sup>8</sup> ՂԱԸ, բանասաց՝ Կարմեն, Մեղրի, 2002, տետր 5, էջ 9: ՂԱԸ, բանասաց՝ Ազգուշ Մանուչարյան, Մեղրի, 2002, տետր 2, էջ 44: ՂԱԸ, բանասաց (փ/գ) Միրուն Սարգսյան, Մեղրի, 2002, տետր 1, էջ 27:

Ներկայում մեղրեցիների նախնիների կենցաղում երբեմնի տարածված այդ տոների վերաբերյալ տեղեկատվության գլխավոր աղբյուրը և քարոզչության հիմնական միջոցը մնում է ազգային հեռուստատեսությունը:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մեղրեցիների կենցաղում այսօր առավելապես տարածված են աշխարհիկ քնույթի, հիմնականում խորհրդային ծագում ունեցող տոները: Այս առումով նաև նավորապես առանձնանում է Կանանց միջազգային օրը (Մարտի 8) /83, 3%/, Հաղթանակի տոնը (Մայիսի 9) /33%/ և Աշխատավորների միջազգային օրը (Մայիսի 1) /23, 3%/:<sup>9</sup> Նույնը վերաբերում է նաև նախնիների հիշատակի հետ առնչվող արարողություններին, ուր ամենից տարածվածը շուրջ կեսդարյա պատմություն ունեցող Գերեզմանների օրն է հունվարի 2-ը, որը գրեթե ամբողջությամբ այսօր դուրս է նղել ավանդական տաղավարային տոների մեռելոցներին:

«Գերեզմաններ գնալու ամենատարածված օրն այսօր հունվարի 2-ն է, – ասում է բանասացը: Այդ օրը Մեղրիում բոլորն անխտիր այցելում են գերեզմաններ: Թե ինչո՞ւ են հատկապես այդ օրն այցելում՝ չգիտեմ: Գնում են, որովհետև պապերից եկած սովորույթ է»:<sup>10</sup> «Ընդհանրապես, «մեռելոց» հասկացությունը մեղրեցուն շատ խորթ է, – նշում է երևանաբնակ մեղրեցին: Ամենից տարածվածն այս առումով հունվարի 2-ն է, որը կոչվում է «Գերեզմաններ գնալու օր»:<sup>11</sup>

Սակայն պետք է նշել, որ ինչպես ողջ հայ էթնոսի, այնպես էլ մեղրեցիների համար, ընդհուպ մինչև XX դ. 30-ական թթ., խորթ չեն եղել ավանդական մեռելոցները, ինչը հաստատում են ազգագործական հետազոտությունները:<sup>12</sup>

Հետազոտված խնդիրների այս համալիրում նաև ուշադրություն է դարձվել այն հարցերին, որոնք միտված են Մեղրիում միջազգային մշակութային գրոսաշրջության խթանմանն ու զարգացմանը: Այս առումով կարևորվել է մեղրեցիների նախընտրելի տոների ու ծեսերի բացահայտումը, որն անհրաժեշտ է արտասահմանցի գրոսաշրջիկների անմիջական մասնակցությանն առնչվող խնդիրներին:

<sup>9</sup> ԴԱՆ, Մեղրի, 2002, թ/14:

<sup>10</sup> ԴԱՆ, բանասաց՝ Կարմեն, նշվ. տեղը, էջ 63:

<sup>11</sup> ԴԱՆ, բանասաց՝ Գրետա Սահմայան, Մեղրի, 2002. տեսր 2, էջ 40:

<sup>12</sup> Ստ. Լիսիցյան, Մեղրի, էջ 43/45:

Այսօր մեղրեցին նախընտրությունը տալիս է Նոր տարի և հատկապես՝ Կանաչ-կարմիր կիրակի տոնահանդեսներին:

Ինչ վերաբերում է Նոր տարվան, ապա այն ոչ միայն մեղրեցիների ամենասիրված ընտանեկան տոնն է, այլ նաև հաճահամայնքային ամենատարածված և նախընտրելի հանդիսությունը, որի առթիվ քաղաքի կենտրոնում կազմակերպվում էին թատերականացված միջոցառումներ: Մեղրեցիների մեծամասնությունը հավանություն է տալիս ամանորյա նմանատիպ միջոցառումների կազմակերպմանը, որը, անշուշտ, կգրավի նաև արտասահմանցի գրոսաշրջիկներին: Ի դեպ, մեղրեցիների գերակշռող մասը (73.3%) ընդհանրապես կողմն է թատերականացված միջոցառումներին: Այս խնդրում դժվարացել են կողմնորոշվել հարցման ենթարկված մեղրեցիների 23.4%-ը: Իսկ կտրուկ բացասական դիրքորոշում ունեցողները կազմում էին ընդհամենը 3.3%,<sup>13</sup> որոնք մեծ մասամբ դրանք համարում են արհեստական միջոցառումներ:

Այս խնդիրներից իրազեկ մեղրեցի բանասացների կարծիքով, առավել նախընտրելի տոնը Կանաչ-կարմիր կիրակին է, որը ցանկալի է վերականգնել իր երեմնի թատերականացված տոնախմբության ողջ համալիրով: Կանաչ-կարմիր կիրակին կամ Արևիքը նշվում էր հոկտեմբերին և դա բերքին կամ բերքահավաքին նվիրված համաժողովրդական մեծ տոնախմբություն էր: Մեղրու քաղաքային մարզադաշտում ավանդաբար նշվող այդ տոնն արդեն շուրջ 15 տարի է, ինչ դուրս է մնացել ասպարեզից: Այդ տոնահանդեսը Մեղրու և շրջանի բոլոր գյուղերի բերք ու բարիքի, կենցաղի ու նշակույթի, ըստ այդմ նաև ավանդական արհեստների ու գրադարանների ցուցադրման մի յուրատեսակ միջոցառում էր, որի ժամանակ տեղի էին ունենում Մեղրու պատվավոր քաղաքացու շնորհումներ, հարսանեկան հանդիսություններ և այլն: Այդ ամենն ուղեկցվում էր երգ ու երաժշտությամբ, մարզական միջոցառումներով:

Մեղրեցիներն անցյալում ունեցել են նաև շատ գեղեցիկ մի տոն՝ «Չիմպելիքի օրը»,<sup>\*</sup> որը բանասաց Թևոս Ալեքսանյանի կարծիքով՝

<sup>13</sup> ՊԱԾ, Մեղրի, 2002, թ/15:

\* Կարծում ենք, որ բանասացի նշած այս տոնը, նույն ավանդական և ավանդապահ է, որը կենցաղում հայտնի էր Շընքըլք կամ Շընքը անվաննամբ, իսկ «Չիմպելիքի օրը», վերը նշած անվանումների վերափոխված տարրերակն է: Բացի այդ, նշված տոնները նշան են ոչ միայն անվանամբ, այլև կա-

«աշխարհում ոչ մի տեղ չկա, բացի Մեղրիից»:<sup>14</sup> Դա նշվել է դեկտեմբեր ամսվա երկրորդ կեսին, որի հիմնական արարողությունը կապված էր Մեղրու չոր մրգերի, չարազների մեծարման և մատուցման հետ: Այս տոնը ևս հանգամանալից ուսումնասիրության կարիք ունի՝ այն վերականգնելու նկատառմամբ: Որոշ բանասացների կարծիքով՝ թատերականացված միջոցառումների ձևերով շատ գեղեցիկ կլինի ներկայացնել նաև Տրնեզը, Բարեկենդանը, Ս Աստվածածինը՝ և, բնականաբար՝ ավանդական Նավասարդը:

Ընդհանուր առնամբ այս պատկերն ունեն մեղրեցիների տոնածիսական վարքագծային փոփոխությունները վերջին հարյուրամյակում և նաև ավանդական պատկերները՝ դրա արդի բնութագիրը, որը շատ կարևորում էնք նաև այդ բնակավայրում մշակութային զբոսաշրջության զարգացման առումով:

---

տարրան ժամկետներով (տեղի էր ունենում աշնանը՝ նոյեմբերին): Եվ որ անենակարներն է, և Հոմքըթ-Սավասարդի, և Չինպելիք տոնների կենտրոնական պատկերն արարողություններն են նվիրված չոր մրգերի մեծարմանը: Հոմքըթելի կապակցությամբ բավական տարածված էր չոր մրգերների փոխնվիրատվությունը հատկապես նորապակների ազգականների միջև (նվիրում էին նաև այսուր, մեղր, հալվա, յուղ և այլն): *Ստ. Լիսիցյան*, անդ, էջ 28/30, 38/40:

Շատ ուշագրավ է, որ հայոց ներեքնիկ առանձին խմբերի, այդ թվում, անենայն հավանականությամբ, նաև մեղրեցիների խոսվածքներում «չափազանց արատ» ածական ունեցել է իր զուգահեռ կամ հոնամիշը, որը «շնրյան» (տես, *Ստ. Մայրապայան*, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Եր., 1944, էջ 522) էր կոչվում և հետագայում նորացվել է: Վերոհիշյալ անվանումները, ըստ իս, «շնրյան»-ի տարբերակներն են և, որն ամբողջությամբ արտացոլում է ավանդական նպասարդ-բերքի տոնի եռւթունը:

.. ԴԱՅ, բանասաց թեսու Ալեքսանյան, Մեղրի, 2002, տետր 2, էջ 70:

Ս. Աստվածածին-Խաղողօրինեք տոնի ընտրությունը պատահական չէ: Այսօր գրեթե մոռացված այդ տոնն անցյալում մեծ ավանդույթներ է ունեցել: Տոնի նյապակցությամբ մեղրեցիները Մեծ քաղի Ս. Աստվածածինի եկեղեցում օրինել են խաղողը, որից հետո մեծ տոնախմբություն կազմակերպել բազարի չինարիների տակ: Այդ խճույքը ուղեկցվել է երգ ու պարով, սագանարների նվագով, որից հետո մեղրեցիները սովորաբար այցելել են Լիջևագ իրենց ավանդական գեղատեսիլ հանգստավայրը և այնտեղ շարունակել տոնախմբությունը: Տես, *Ստ. Լիսիցյան*, անդ, էջ 43/45

Բարեկենդանի տոնն այսուր ևս շատ բանասացներ կարևորում են թատերականացված ծեփ ներկայացնելու անհրաժեշտությունը: Մեր օրերում մոռացված այդ տոնը նախկինում ևս լավ ավանդույթներ է ունեցել:

ԿՈՐԴՎԱՑ ԼԵՌԸ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ԴԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ՏԻԵԶԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԾՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Դին մերձավորարելյան առասպելներում կորդվաց լեռը, այլ անուններով՝ Նիբուր, Արարադ, Զուղի, հանդես է գալիս որպես մի սրբազն կենտրոն, արարչագործության՝ տիեզերածնության, մարդածնության առասպելների տեղայնացման վայր, այս և այն աշխարհների սահման:

Դայոց նախահայր Յայկը, Բաբելոնից շարժվելով հյուսիս՝ «յերկիրն Արարադայ», հանգրվանում է մի լեռան ստորոտում: Յետո նա այս երկիրը թողնում է իր Կաղմոս թռոանը (որն այդպիսով հանդես է գալիս որպես այդ շրջանի անվանադիր), իսկ ինքը տեղափոխվում և հաստատվում է Վանա լճի հյուսիսարևմուտքում: Յայկի երեք որդիները դառնում են Յայաստանի որոշ տարածքների անվանադիրներ:

Այս լեռան ստորոտն ասորեստանյան աղբյուրների Կամսի /Կամսի/Կումսի, հայերեն՝ Կաղմեայ տու՛ երկիրն է Յայաստանի ծայր հարավում, որից ավելի հարավ ձգվում է Տուրարդին լեռնաշղթան: Յայկը Յարը հասնելու համար իր հանգրվանից շարժվում է «ընդ արևմուտս հիւսիոյ». Ըստ այդմ, այդ լեռը պետք է տեղայնացվի Տուրարդինից արևելք, որտեղ և կորդվաց լեռն է, որն ասորեստանյան աղբյուրներում հանդես է գալիս որպես Կաղմուխի արևելյան սահման: Ըստ Մովսես Խորենացու, Նոյի որդի Սեմը նույն շրջան (Տարոն) է գալիս, շարժվելով դեպի հյուսիս-արևմուտք, և Յայկը փաստորեն կրկնում է Սեմի երթուղին:

Ըստ տեղական՝ հայկական, ասորական և արաքական հին լեգենդների, կորդվաց լեռան վրա է հանգրվանել Նոյն իր տապանով: Նոյի երեք որդիները՝ Սեմը, Բամը և Յարեթը հանդես են գալիս որպես մարդկության տարեր հատվածների անվանադիր: Նոյի ավանդությունը Մ.Խորենացին պատճում է Բախսութրեսի մասին, որի անունը, հու-

նական միջնորդությամբ, ծագում է Նոյի շումերական նախատիպից՝ Զիուսուդրայից:

Ուրարտական դարաշրջանում այստեղ Կումե / Կումենու Երկիրն էր՝ Ուրարտուի Երկրորդ մեծ աստված ամպրոպային Թեյշեբայի պաշտամունքի կենտրոնն իր «արքայական» քաղաքով (լեռը Երկգագաթ է, բայց հիշվում են մի շարք քաղաքներ նրա բարձունքներում):

Որոշ հանգամանքներ թույլ են տալիս այս առասպելների հիմքերը հասցնելու մինչև պատմական ամենահնագույն շումերական դարաշրջանը: Կորդվաց լեռան ասորեստանյան անվանումը՝ Նիբուր/Նիպուր համապատասխանում է շումերական մեծ աստված Ենլիլի պաշտամունքի կենտրոնի Նիպուր անվանը, իսկ ջրհեղեղի շումերական առասպելում՝ Ենլիլի ցասումն է, որը սպառնում է կործանել մարդկությունը: Մի այլ առասպելում անդրաշխարհի ճանապարհին Ենլիլը հղիացնում է իր կնոջը Երեք անդրաշխարհիկ աստվածներով:

Դին սեմական ժողովուրդների պատկերացումներում Զայաստանի հարավը և նրա լեռները համարվել են «մթության» կամ «գիշերվա» Երկիր և լեռներ, տեղայնացած դրախտի կամ անմահության Երկրի ճանապարհին (Է.Լիպինսկի): Յրեական լեզենդներում Զայաստան մթին լեռներն են զալիս Ալեքսանդր Մեծն աննահություն որոնելիս: Ալեքսանդրի ասորական վեպում մինչև «մթության Երկիրը» հասնելը հերոսը հանդիպում է Մասիս անունով սարին (սա թեև համահունչ է Այրարատի Մասիսին, բայց պետք է տեղայնացվի Զայաստանի հարավում): Ենոքը, դրախտի ճանապարհին, հասնում է մի մութ տեղ և տեսնում մթության լեռները:

Այս պատկերացումների հնագույն տարբերակը ներկայացված է աքաղական «Գիլգամեշ» էպոսում, որտեղ հերոսն անմահություն որոնելիս հասնում է Մաշս «Երկվորյակ» լեռանը, ինտո տասներկու անցում կատարում համատարած մթության միջով՝ հասնելու Ուտնապիշտիմին՝ աստվածաշնչյան Նոյի նախատիպին, որը փրկվել էր ջրոհեղեղից և անմահություն ծեռք բերելով՝ ընդունվել աստվածների հավաքույթ: Մաշուն էլ համադրելի է Կորդվաց լեռից արևոտք գտնվող Տուրաբդին լեռների հունարեն *Masion oros* և լատիներեն *Mons Masius* անվանումներին:

Ուգարիթյան մի առասպելաբանական տեքստում որպես անդրաշխարհի մուտք հիշվում են Targhuzziza և Sharrumagi Երկվորյակ գագաթները, որոնք նույնացվում են աքաղական Մաշս-ին և հայկական Մասիսին (Թ.Գաստեր): Այս անունները կապված են անատոլիական ամպրոպի աստված Տարհս-ի և լեռների աստված Շարրումա-ի հետ:

Ըստ Բ.Լինկոլնի, հնդեվրոպական տիեզերածնության և մարդածնության առասպելի կենտրոնական կերպարներից մեկը կոչվել է \*յեմո-«Երկվորյակ»: Targhuzziza բնորոշ անատոլական անունը ցույց է տալիս հնդեվրոպական ներկայություն այս շրջանում գոնե մ.թ.ա. Երկրորդ հազարամյակի կեսերից: Ակնհայտ է, որ հնդեվրոպական և սեմական բնակչության շփումների ընթացքում \*յեմո-ն պետք է համապատասխանեցվեր Մաշս-ին (կան նաև այլ համապատասխանություններ):

Հայկական միջնադարյան աղբյուրների քննությամբ ենթադրվում է, որ Նոյի հանգրվան համարվող լեռն Այրարատի Մասիսի հետ նույնացվել է XI-XIIդդ.: Բայց Այրարատ լեռան Մասիս անունն անբաժանելի է թվում Մասիոն-Մասիուսից (Արտավազդի առասպելում Մասիսի հիշատակությունը ցույց է տալիս, որ լեռն այդպես է կոչվել V դարից ավելի վաղ, իսկ Ալեքսանդրի ասորական վեպի նշված Մասիսն էլ հուշում է, որ այդպես կարող էին կոչվել նաև Մասիոն / Մասիուս լեռները): Այս ձևերը կարող են հանգեցվել հին աքաղական Մաշս-ին և նրա ասուրական Մաշս տարբերակին, տեղանուններին բնորոշ հնդեվրոպական \*իյս / իսա ածանցով՝ \*Masiyos > լատ. Masius, \*Masiyā > հայ. \*Մասի-, հոգնակի ուղական՝ Մասիք, սեռական՝ Մասեաց, հայցական՝ Մասիս: Նոյի ավանդությանն առնչվող լեռները Հայաստանում կոչվել են համահունչ անուններով՝ Մասիոն / Մասիուս, Մասիս, Նեխս-Մասիք (Սիփան): Ընդ որում, Այրարատի Մասիսը նույնպես Երկգագաթ է և կոչվել է նաև «Սև սար» ու «Մութն աշխարհ», որը համահունչ է Մաշս «Երկվորյակ» և «մթության լեռների» հետ. համահունչ են նաև Այրարատ և Արարատ/դ ձևերը: Մաշուի

անվան և առասպելույթի տեղաշարժը դեպի հյուսիս թերևս վկայել Կովկասի Մաշուկ լեռը, որտեղ տեղայնացվել է լեռան մեջ փակված առասպելական հերոսի մի տեղական տարբերակ: Մասիսի հին առասպելը նույնպես լեռան մեջ փակված առասպելական հերոսի՝ Արտավազդի մասին է, որին գումարվել է հարավային ջրհեղեղյան առասպելը:

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՂՄԱՆ ԾԵՍՈՒՄ

Ժամանակակից ծխական համակարգում ավանդականի ու նորի յուրօրինակ միահյուսմանը առանձնանում է բաղման ծեսը։ Ծխակարգի յուրաքանչյուր փուլն ավանդաբար կանոնակարգված կառույց է։ Փոխանցվելով ժամանակի ու տարածության միջով՝ այն միաժամանակ ներառում է տվյալ կենսակերպի բնորոշ բաղադրիչներն ու ստեղծում իրականության ծխային պատկերը։ Թաղման ծեսի երաժշտական տեքստը բարդ ու ինքատիպ կառույց է, որի երգային ու նվագարանային կերպերում ներդաշնակորեն համակցվում են տարբեր երաժշտական ոճերն ու ժանրերը։ Հանկարծաբանական մտածողությամբ աչքի են ընկնում հատկապես ողբ-գովքերը, որոնց նպատակը հանգուցյալի գովքն է, հարգանքը, հարազատներին միսիթարելը, մահացածի մասին հուշեր արթնացնելը, ներկաների մեջ արցունք ու ափսոսանք առաջացնելն ու ողբալը։ Այսօր էլ Տափուշում, Գեղարքունիքում, Արարատում, Արցախում, «առանց գովել-ծաղկեցնելու մեռելին չեն թաղում. պատվի խնդիր է»։ Երգային ժանրում դրանց տարբերակները գերակշռում են գյուղական (նաև գյուղի հետ կապված քաղաքաբնակների) միջավայրում, իսկ երգային-նվագարանային ձևը՝ քաղաքային կյանքում։ Ողբ-գովքերը բազմաթիվ տարբերակներով արվում են ննջեցյալի տանը, բակում և գերեզմանոցում։ Արեգակնահորի (Ինքնահող), Յոթի, Քառասունքի, Տարելիցի, Մեռելոցների արարողակարգերի ու Ար. Խաչի տոնի ընթացքում։<sup>1</sup> Ողբ-գովքերն անվանվում են նաև բայաթի, իսկ ողբասացը՝ բայաթի կանչող/ասող։ Բայաթի են կոչվում նաև դուդուկով, կլարնետով, երբեմն նաև գուրնայով կա-

<sup>1</sup> Հայ պատմագրության մեջ ողբի արարողակարգի մասին տե՛ս. Դ. Ստեփանյան, Երաժշտությունը իին հայոց ողբական արարողակարգում.- Ծխական պարզ հայոց մեջ (գիտաժողովի նյութեր), Եր., 2002, էջ 63-74:

տարվող մահերգերն ու տիսուր մեղեղիները:<sup>2</sup> Ըստ Մ.Աբեղյանի, բայրի (բեյթ. արաբերեն՝ տուն) բառն ստացել է նաև մեռելի ողբի երգ նշանակությունը, թեև այդ բառով անվանվում են երկտող տներից-բեյթերից կազմված երգերը:<sup>3</sup> Տարբեր ժամանակներում և պատմագ-գագրական մարզերում ողբերի անվանումները փաստում են այս ժամանակաշրջությունը. ողբ, մահերգ, սգերգ, եղերերգ, ողբերգ, լալիք, լացի երգ, ձեմով լաց, լաց ու կոծ, կոծի երգ, մեռելի երգ: Մեր օրերում այս երգերը կատարում են հաճուցյալի հարազատները, հրավիրված ժողովրդական ողբասացներն ու ժողովրդապարհեստավարժ երգիչները: Զուգահեռաբար կենցաղավարում է և նվազարանային ողբ-մուղամի ժամրը: Ժողովրդապարհեստավարժ երգիչների կատարումները գերազանցապես աչքի են ընկնում կանոնավոր կառուցվածքով. դրանք ժողովրդական ու գուսանական երգեր են, կամ այդ ժիրում ինքնուս հորինվածքներ: Նման երգերին բնորոշ է նախանվագի, կրկներգի, կրկնակային տողի ու վերջնամասի հանպատրաստից հենքը, որ գուգորդվում է երգի որոշարկված կաղապարին: Դանգուցյալի հարազատների և ողբասաց երգիչների կատարումներն ասերգային հանպատրաստից հորինվածքներ են, թեև հանդիպում են նաև մեղեղային նմուշներ: Ասերգային բնույթը պայմանավորվում է խոսքին տրվող առաջնային նշանակությամբ ու երգային-կատարողական տվյալներով: Այսպիսիք սովորաբար կատարվում են որպես երաժշտականացված մենախոսություն, որն ուղեկցվում է սգակիրների արձագանք-ձայնարկություններով, ընդհատվում լաց ու հեծկլտանքով, «ռեպլիկով» (հմտ. մենակատար>խումբ կատարման կերպի հետ): Ողբ ասացողը (հնում եղերամայր, լալկան մեր, մայր ողբոյ, գովք ասող, մեռել ծաղկացնող) սկսում է ներկայացնել իրենցից հեռացողին՝ թվարկելով նրա բոլոր արժանիքները (իրական և վերագրվող), բնութագրում իրեւ անհատ, քաղաքացի, ընտանիքի անդամ, մեկնաբանում կյանքի անցած ժանապարհը՝ հասնելով մինչև մահվան պատճառն ու հարազատների համար նրա կորսույանը հետևող իրավիճակը, բողոք արտահայտում ճակատագրի դեմ, ինչպես նաև հան-

<sup>2</sup> Խոսակցական լեզվում «բայարի» բառն իմաստային առումով լայնանում է վերաճելով ընդհանրապես նվազարանային երկարաշունչ և մելամաղձոտ մեղեղիները բնութագրող բառի:

<sup>3</sup> Մ.Աբեղյան, Երկեր, Եր., 1975, հ. է, էջ 403-405:

գուցյալի փոխարեն զոհաբերվելու պատրաստակամություն հայտնում: Այս տեքստը ևս կերպավորվում է մենախոսություն>երկխոսություն կամ մենակատար>խումբ սկզբունքով: Զանգեզուրին նվիրված հետազոտության մեջ Ստ.Լիսիցյանը նկատում է, որ լալկան կանանց գովերգերի մեջ շարունակ կրկնվում է ողբասացի պատրաստակամությունն իրեն մատադ բերելու ննջեցյալին, որը միտված է ննջեցյալին գոհ ճանապարհ դնելուն: Ինչպես հանպատրաստից հորինվող այլ կառուցվածքներում, ողբ-գովերտում ևս ասացողը հաճախ օգտվում է ժողովրդական ու գուսանական հայտնի մեղեդիներից ու երգերից: Երբեմն դրանցից ինքնաբերաբար ազդվելով՝ ստեղծում իր երաժշտական դարձվածք կամ երգը: Այսուհանդերձ, երաժշտական մտածողության ու լեզվաօճական առումով որոշարկվում են տարրեր պատճազգագրական մարզերում, ինչպես և գյուղում ու քաղաքում կենցաղավարող ողբ-գովերը:

Ըստ Մ.Մազոյի, ռուսական ավանդական մշակույթում հարսնացուի իմացությունների շարքում պարտադրվում էր նաև ողբ ասելու արվեստը:<sup>4</sup> Ի տարրերություն ռուսականի, հայոց մեջ ընդունված չէր այս ժամանակակից աղջիկներին փոխանցելու ավանդույթը. ընդհակառակը՝ դիտվում էր իբրև կենսափործի ցուցիչ և «տվածուրիկ» շնորհ: Նկատելի օրինաչափություններ կան տարրեր տարիքային խմբերի ու սեռերի ողբասացների երաժշտական ու բանահյուսական լեզվում: Թիչ չեն օրինակները, երբ ողբ-գովերն արվում են հարցպատասխանային եղանակով՝ որպես երկխոսություն: Այս տարրերակում, գլխավոր ողբասացը սովորաբար հանգուցյալի տարեց և ներկաների հարգանքը վայելող արյունակցուիհին է լինում: Նա իր վիշտն ու ափսոսանքն արտահայտում է ձգվող ձայնարկություններով ու հառաջով, ի մի դառնալով սգակիր հանրութիւն հետ, ապա հրետորական երանգավորում տալով խոսքին, անշտապ հանդիսավորությամբ փաստարկում է ավանդական ընկալումներն աշխարհի, ճակատագրի կյանքի ու մահվան վերաբերյալ միաժամանակ, սեփական խոհական դիտարկումները կապակցելով հանգուցյալի կյանքի ու մահվան

<sup>4</sup> *М.Мазо, Никольские причитания и их связи с другими жанрами местной песенной традиции.- Музыкальная фольклористика, вып. 2, М., 1978, с. 213-235.*

իրողության հետ: Երկրորդ ողբասացը, որը հանգուցյալի մերձավորն է լինում համեմատաբար երիտասարդ ու երաժշտական տվյալներով օժտված, «արձագանքում» է առաջին ողբասացի մտքերին հանգուցյալի նաևին հիշողություններ պատմելով, մեկ անգամ և գովում (հաճախ չափազանցնելով և նոր հատկանիշներ վերագրելով), «ձենով ասելով» «ծաղկեցնում» մեռնողին: Հանպատրաստից ստեղծվող այդ երաժշտաբանաստեղծական տեքստը, մերթընդերթ ընդմիջվելով, ամբողջանում է ներկաների արտաքերած համաձայնություն արտահայտող ձայնարկումներով ու թևավոր խոսքերով: Նույն իմաստային դաշտում են նաև ոչ խոսքային շարժումների լեզվով արտահայտվող համանուն բովանդակությամբ տեքստերը: Այս ամենի հնչյունային հենքը, բնականաբար, դառնում են վիշտ, ցավ, ափսոսանք, նաև զայրույթ արտահայտող ձայնարկումներն և ոիթմիկ հնչյունային դարձվածքներն ու լացը (հմնտ. մենակատար>խումբ գուգորդ կերպի հետ): Երբ ողբասացների թիվը երկուսից ավելին է, գովեն ասվում է հերթականությամբ մեկը մյուսին փոխանցելով: Այսպիսի դեպքերում առաջին գլխավոր ողբասացը, սովորաբար, հանգուցյալի ամենամտերիմն է լինում, իսկ 2-րդը, 3-րդը և այլք՝ ազգականները, հարևանները, ծանոթները, որոնք ողբն սկսելուց առաջ ներկայանում են: Հաճախ, ողբասացը ննջեցյալի մոտ է հրավիրում ներկաներին՝ մեկնաբանելով հանգուցյալի հետ ազգակցական կամ հոգևոր կապը, ուստի՝ կորստի ծանրությունը, ապա, եկողն է շարունակում ընդհանուր ողբացը, շարժումներով ու դիմախաղով արտահայտում իր հոգեվիճակը: Երբեմն ողբասացը դիմում է ներս մտած (նորերս հարազատ կորցրուած) որևէ բարեկամի, հեծկլտալով գրկում ու շարունակում ողբը՝ եկած սգավորի ու իրենց ցավալի ճակատագրերը գուգորդելով: Ողբն ամեն անգամ նորոգվում է յուրաքանչյուր նոր եկողի հետ, հատկապես՝ լուրն ուշ իմացողի, հեռվից հատուկ այդ առիթով ժամանողի, առաջին անգամ այդ շեմքը ոտք դնողի կամ ինչ-որ առիթով խռոված ու մահվան լուրով հաշտված ծանրթ-ազգականի հետ միասին: Եթե հանգուցյալը զավակներ ունի, ապա գլխավոր ողբասացը նրանց կանչում է ածյունի մոտ, որ ողբան ծնողի կորուստը: Այսպիսի ողբերում խոսքային տեքստը կցկտուր է լինում, առանց բանաստեղծական ու մեղեղային հենքի, ընդհակառակը, հագեցվում է բացականչություններով, ծորուն կամ կտրտված ձայնարկություններով: Գլխավոր

ողբասացն ուշադիր է Երիտասարդների ու Երեխաների նկատմամբ՝ չի թողնում Երկար մնան ննջեցյալի կողքին (հնմտ. XIXդ. գրանցված «Ազգագրական հանդեսի» նյութերի հետ): Այսու, գլխավոր ողբասացին վերապահված է ծիսակարգի ղեկավարի դերը և անկախ ցավից ու կորստից, նա պատասխանատու է ավանդույթի պահպանան և հանգուցյալին «առջով ու փառքով վերջին ճանապարի ուղեկցելու» համար: Ողբ-գովքերն ավելի սրտաճմլիկ են, երբ մահացողն «անմուրազ գնացած» Երիտասարդ է: Ի տարրերություն արդեն «կյանք տեսած» ու «տարիքն առած» ննջեցյալների, որոնց ողբալու նպատակը հարազատներին միխթարելն է և հանգուցյալի անցած կյանքը ներկայացնելով՝ նրա գովքն անելը: Երիտասարդ՝ «կյանք չտեսած» հանգուցյալին ծոնված գովքը միտված է տվյալ դժբախտությունը ողբալուն, անողոք ճակատագրի դեմ ուղղված բողոքին և ներկաներին «մղկտացնելուն»: Ողբ-գովքերուն հանգուցյալը դիտվում է իրեւ մի յուրօրինակ կապ Երկու աշխարհների միջև, որը հատկապես դիտելի է «Բարեկամության...» և «Կգնաս-կասես...»-ների ու նմանօրինակ բովանդակության հնչյունաբանաստեղծական շարքերում: Նշված տեքստերը հաճախ միահյուսվում են՝ վերաճելով մի ընդհանրական կառույցի: «Բարեկամության...»-ների շարքում ողբասացը խնդրում կամ պատվիրում է հանգուցյալին այս աշխարհից լուր տանել մեռյալների աշխարհում գտնվող իրենց ծանոթ-բարեկամներին, որոնք շուտով պիտի դիմավորեն նրան ու հարցուվիորձ անեն այս աշխարհի մասին: Տեքստում նկատելի է բացնված վախը, որ լուր իմանալու համար մահացածն ինքը զգա կամ կարոտելով՝ սիրելիներից մեկին չտանի: Այնքան հավատով ու բնական է ընթանում նրա ողբ-պատգամը, կարծեք բանասացը կասկած չունի «այն աշխարհի» ու «մյուս կյանքի» իրողության նկատմամբ: Ըստ ժողովրդական պատկերացումների, քանի դեռ հանգուցյալը հողին չի հանձնվել, այս աշխարհին է պատկանում, դեռևս կապված է կյանքին, շրջակա տարածքին ու մերձավորներին: Ուստի, նույնիսկ մահից հետո պետք է կատարել նրա բոլոր կիսատ մնացած ցանկություններն ու պատգամները, իսկ չհասցնելու պարագայում՝ Երդմանը խոստանալ իրականացնելու, որ «աչքը ետևը չգնա»:

Մրանով կարելի է բացատրել նաև հանգուցյալին սիրելի անձանց անպայման լուր ուղարկելը, նրա սիրած կերակրատեսակը հո-

գեհացին մատուցելը, սիրած հագուստը հազցնելը, երաժշտությունը լսելը: Այս ամենը հանգուցյալին սիրաշահելու միտում ունի, որ «հետևից մարդ չտանի»: Թերևս ննջեցյալի մասին եղած ավանդական պատկերացումներով է մեկնաբանվում նաև նրան միայն լավով հիշելու սովորությունը: Մեզ հաջողվել է ողբ-գովքի սոսկ մի օրինակ գրանցել, որտեղ հանգուցյալի մասին հիշվում է նաև վատը, սակայն, անմիջապես շարունակության մեջ, իրեն մեղավոր զգալով՝ ողբասցն աշխատում է քողարկել ասվածի տպավորությունը: Ողբ-գովքերը հաճախ ավարտվում են «մեռնողի բերնով ասված» պատգամներով և նրան տրվող խոստումներով: Վերջիններս առնչվում են նրա ընտանիքի անդամների նկատմամբ հոգածության հավաստիացումներին: Այս տարբերակում ասացողը հանդես է գալիս մերթ առաջին, մերթ՝ երկրորդ դեմքով, անձնավորելով իրեն (երբեմն՝ նաև մյուս հարազատներին) և ննջեցյալին: Դիմելով հանգուցյալին, պատվիրում է «Երազ գալ» և գգուշացնել յուրայիններին սպառնացող վտանգից, քանզի նրա ոգին վերևից ամեն ինչ տեսնում է: Եթե հանգուցյալի հարազատների գովքերն ինքնարուխ ու զգայական են՝ խարսխված ցավի ու հիշողության վրա, ապա իրավիրված ողբասացները դրանք մատուցում են արդեն պատրաստի կաղապարներով, որոնք ընթացքում հանպատրաստից վերամշակվում են: Յաշվի է առնվում մահացողի սեռը, տարիքը, ընտանեկան ու ընկերային դրությունը, մահվան պատճառները, ներկաների երաժշտաբանաստեղծական հակումները և դրանցով ամբողջացնում ողբի կառույցը: Յիշյալ կերպ են ծնվում ինքնուս երգասացների և ռարիսի երաժիշտների ողբ-գովքերը: Եթե համեմատենք այսօրվա ողբ-գովքերը վաղ միջնադարից մինչև մեր օրերը նկարագրվածների հետ, կարելի է ասել, որ XI դարասկզբի ողբասացը «մայր ողբոցի», «լալկան մոր», «եղերամոր», իսկ նրան ծայնարկող հարազատները՝ «ձայնարկու կուսանց» և «լալկան կանանց» արդի փոխակերպումն են: Յիշյալ կերպարների մերօրյա արտահայտությունն ավելի է ընդգծվում իրավիրված ողբասացների առկայությամբ, երբ նրանք են ստանձնում կոժի ողջ արարողությունը, իսկ սգակիրները միայն ծայնակցում են: Այսօր գրեթե վերացել է ողբասաց իրավիրելու սովորույթը: Սովորաբար, տեղեկանալով համագյուղացու մահվան մասին, նրանք գնում են սգատում՝ ողբալու և գովք ասելու, առանց վարձատրության ակնկալիքի: Եթե XIXդ. ողբ ասելու

իրավունք ունեին միայն տարեց, որոշ բացառություններով՝ նաև 40-50 տարեկան կանայք, ապա այսօր տարիքային սահմանափակումներ չկան (թեև տարեցներն ակնհայտորեն գերակշռում են):

Ողբ-գովքերն առանձնակի սրտաճմլիկ ու բազմազան են հուղարկավորման ծեսի ժամանակ, իսկ հիշատակման ու ոգեկոչման ծեսերինն ավելի գուսակ են, սակավաթիվ և նվազ տարածված: Դրան փոխարինում է ծայնարկություններով ու հանգուցյալին ուղղված տարբեր դիմելածներով լացը: Ի տարրերություն արդեն ավանդական դարձած ողբերի, հանդիպում են նաև երգիծական երանգավորում ունեցողները, երբ ասացողը ենթագիտակցաբար սկսում է կենցաղային և խիստ անձնական, ընտանեկան կյանքի տարաբնույթ դրվագներով կենդանացմել պատում-վերհուշը՝ հանգուցյալի կերպարը մտերմիկ ու անմիջական նկարագրելով: Յիշյալ «անկեղծ գրույց» հիշեցնող ողբ-գովքերից շատերն առանց վկաների են ասվում. երբ լացողին թվում է, թե միայնակ է հանգուցյալի (կամ նրա շիրիմի) հետ՝ ի տարրերություն ավանդական կատարումների, երբ ողբ-գովք ասողը գիտե, որ «հանդիսատես» ունի: Իհարկե, դրանք «զավեշտական» կամ «երգիծական» են սոսկ «օտար աչքի» համար, որոնք էլ հետագայում սրամիտ ականատեսների ջանքերով վերապատմվում են իբրև անեկդոտ: Ողբ-գովքի ժամրում նկատվում է նաև ռիթմիկ կառույցի ու մեղեդու փոփոխություն, որի ժամանակ ծորուն մեղեդին ամբողջությամբ կամ մասնակիորեն ժողովրդական երգերին կամ պարերգերին բնորոշ եղանակով է երգվում՝ աղերսվելով հնամենի սգո պարերին: Ողբ-գովքերի հաջորդ տեսակը, որ կատարում են ռաբիսի երգիչ-ողբասացները,<sup>5</sup> առավելապես հիմնվում է ժողովրդական և աշուղական տիտուր երգերի ու մեղեդիների վրա և հանպատրաստից վերամշակվելով՝ հարմարեցվում առկա իրավիճակին: Այս ենթաժանրում ասերգային, կատարման կերպը փոխարինվում է վոկալ-նվազարանայինով: Նվազախմբերը՝ դաստա, հիմնականում փողային (դուդուկ, կլարնետ) և հարկանայիններից (դիոլ, դափ) կազմված եռյակ կամ քառյակներ են: Նման դաստաններում երգիչն է նվագում հարկանային

<sup>5</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս, *Լ.Աբրամյան, Բ.Պոկուչյան*, Заметки по этнографии современного города (на примере Еревана) 1. Рабиз и изменчивость городской социальной иерархии.-Этнические группы в городах Европейской части СССР, М. 1987, с. 136-146.

Նվագարանը: Սակավ համոյիպում է զուռնաչի, դամբաշ և դիոլչի կազմով նվագախումբ: XXդ. կեսերից ակորդեոնահար երգիչները ևս սկսեցին ներգրավվել սգո դաստաներում: Այս նվագախմբերում գլխավորը երգիչ-ողբասացն է, իսկ նվագարանը՝ գերազանցապես նվագակցող: Առանձին կատարումներում նվագարանը կարող է դառնալ առաջատար՝ նվագարանային մուղամների, նախանվագի, կրկներգի, վերջնամասի մենանվագի ժամանակ փոխարինելով մենակատար-երգչին: Այս խմբի ողբ-գովքերում համադրվում են ժողովրդական, աշուղական երգը, մուղամաթը, ասերգը և բանահյուսական տարրը: Յատկապես քաղաքային կենցաղում, վերը ներկայացված ավանդական ասերգային ենթաժանրում ողբ-գովք ասացողների թիվը XXIդ. սկզբին գնալով նվագում է, տեղը գիշելով վոկալ-նվագարանային կատարումներին: Եթե գերեզմանատանը ռարիս ժանրն է գերիշխում, ապա տանը՝ հոգեհանգստի ընթացքում ողբ-գովքերն աստիճանաբար նվագում են՝ ի հաշիվ մագնիտոֆոնային ձայնագրությունների (հոգեոր և դասական երաժշտություն) և ջութակ, ալտ, թավջութակ կազմով դասական երյակի կամ քառյակի նույն ժանրի կենդանի կատարումների: Գյուղերում եվրոպական նվագախմբին փոխարինում է ավանդական դաստան: Քաղաքում ևս, որոշակի խավերի շրջանում հաջորդաբար կարող են հնչել թե եվրոպական, թե ավանդական նվագախմբերը: Այս երաժշտախմբերի համադրությունը շատերի պատկերացմանը բարձր ճաշակի և նյութական ապահովվածության առհավատցյա է: Միայն դուդուկահարներից (3-7) ու դիոլ/դափից կազմված դաստաները բարձր համարում ունեն գրեթե բոլոր խավերում: Դրանք ընկալվում են իբրև ինքնության խորհրդանիշ և արդի երաժշտական համաշխարհային չափանիշներին համահունչ կատարողական արվեստ (հմնտ. Արամ Խաչատրյանի, Զորավար Անդրանիկի հոգեհանգստյան արարողակարգում դուդուկահարների նվագախմբի պարտադիր ներկայությունը, որը զուգորդվում է սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի ռեժիսումային կամ շարականների կատարումներին):

## ՄԵՂՐՈՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԱՐԱՁԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Մեղրին, ընդգրկվելով Սյունիք-Արցախի պատմազգագրական մարզի սահմաններում, մշակութային նկատելի գուգահեռներ է դրսելորում Գողթան գավառի մշակույթի հետ: Մեղրու մշակույթը սյունյաց մշակութային խճանկարի մի ուրույն մասն է:

Գողթնի և Մեղրու կնոջ տարագում ինքնատիպ տարր էր կրծկալ մանդիլը, որը, ի տարբերություն Բարձր Հայքի, Վասպուրականի, Տուրուբերանի տարագախմբերի (որտեղ կրծկալը կապվել է զգեստի տակից, փակելով կրծքանասի բացվածքը), կրել են վերնազգեստի, անգամ քուրքի վրայից: Սյունիք-արցախյան տարագախմբում այն բոլորովին բացակայում է: Ըստ Ն.Ավագյանի<sup>1</sup> կրծկալը Գողթնից տարածվել է Մեղրի, հատկապես Ագուլիսի աղջիկների մեղրեցի տղաների հետ ամուսնանալու և Մեղրի տեղափոխվելու շնորհիվ: Այս տարագանասն, ըստ Էության, փոխառված է Վասպուրականյան տարագախմբից: Մեղրին յուրատեսակ միջանկյալ գոտի է, այդ սահմանայնությունը երևում է մշակույթի, այդ թվում և տարագի առանձնահատկությունների մեջ:

Գլխաշորի վրայի խաչաձև ամրացող կտորը կեռազարդի հետ միասին ընդհանրական են Սյունիք-Արցախին: Շատ ուշագրավ է այդ զարդերի տեղաբաշխվածությունը, դրանք թոշնի ճանկեր են հիշեցնում:

Տարագն ամբողջացել է նախշազարդ գուլպաներով և ոտնամանով: Հայտնի էր միշերի անվանք կեռ կտուցով,<sup>2</sup> առանց կրունկների, չստերի ձևով ոտնամանը: Այստեղ ևս օգտագործված է կենդանու դիմանասի անվանումը:

<sup>1</sup> Ն.Ավագյան, Գողթն գավառի տարագը 19-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ.- ՀՊՊԹ, 6, Եր., 1975, էջ 93-114:

<sup>2</sup> Վ.Փարսադանյան, Մեղրու անցյալը, ՀԱԻ ԱԲԱ, 82, էջ 81:

Մեղրեցի կնոջ տարագահամալիրը կազմված էր ուսկյա կամ արծաթյա մատանիներից (հայտնի են արծաթյա գլանաձև, թագային հորինվածքով, փորագիր բուսանախչ օրինակներ), ականջօղերից և զարդանախշերով գոտուց: Կանայք բութ մատին կրել են բթանոց, որն եղել էր նաև վասպուրականում: Գլխազարդերից գործածել են արծաթյա կեռազարդը, երեսնոցը և ճակատի դրամաշարդը: Կեռազարդն ամրացվել է գլխաշորի վրա, յուրաքանչյուր մասը բաղկացած է երեք տարբեր զարդատախտակից՝ հնգական շղթաներով:

Բացի շարժական զարդերից, կանանց հագուստի մասերին կցվել են զարդերի տարրեր: Զգեստը գեղազարդվել է մետաքսաթելերով հյուսված տրեզով, ուկերելով: Զգեստի թևքաբերանը հարդարվել է շեղանկյունաձև, տափակ ու սնամեջ կախիկներով և բոժոնների շարանով:

XXդ. սկզբներին Մեղրիի կնոջ ավանդական տարազը դուրս է եկել կենցաղավարումից, դրա փոխարեն կիրառության մեջ է մտել քաղաքային եվրոպական հագուստը՝ Երևանի և Թիֆլիսի կանանց գլխի հարդարանքի տարրերով: Այն կազմված էր ճակատակալից՝ կենտրոնական քորոցով, դրա վրայից կրել են սպիտակ նշանեկազարդ քոր, քունքամասերի մազափնջերը ոլորել, **ծավալեր** են արել:

Ազգային տարազը, իր տեղային խմբերով հանդերձ, բազմագործառութային է և որպես մշակութային կարևոր տարր, ունի սոցիալական խմբերի, սեռատարիքային և էթնիկ ընդհանրության հոգեւոր պահանջմունքների ցուցիչի դեր: Տարազը յուրատեսակ նշանային համակարգ է, որոշակի տեղեկությամբ՝ նրա կրողի վերաբերյալ, որը հաղորդվում և դրսորվում է կրվող համալիրի, տիպի, գույնի, ձևվածքի, զարդարանքի միջոցով: Նագուստի նշանային գործառույթներում գեղագիտական հատկանիշները միահյուսված են կրոնա-ծիսական ոլորտներին:

Ազգային տարազը, մասնավորապես տղամարդկանց տարագի համալիրը, որպես համեմատաբար բաց համակարգ, նկատելիորեն արձագանքում է տվյալ հանրույթի պատմամշակութային, սոցիալ-տնտեսական գործընթացների փոփոխություններին: Ազգային տարագում խորհրդանշական դեր ունեն բոլոր տարրերը, սակայն, եթե ձևվածքը, ուրվագիծը, չափերը պակաս նշանայնացված են, ապա գեղազարդման և գունային համակարգն ուղղակիորեն կապված է հո-

գեոր ոլորտի հետ, իմաստային խորը ծանրաբեռնվածությամբ մատնանշում է հագուստը կրողի դերն ու կարգավիճակը:

Հագուստի նշանայնությունն առանձնապես ակնհայտ է ծիսական հանդերձանքում: Հագուստը ծիսական նշանակություն ստացել է որոշ տարրերի պարտադիր կիրառմամբ: Տղամարդկանց հագուստի նշանային համակարգի միտվածությունը դրսորվել է գոտու, չուխայի, գլխարկի, ուսկապի, նարուտի առկայությամբ, իսկ կանանց տարագում՝ գոտու, գոգնոցի, թագի, գլխի հարդարանքի տարրերի, զարդերի միջոցով:

Մեղրու ավանդական տարագում ծիսական հանդերձանքն ուներ հետևյալ նշանային դերն ու իմաստային ծանրաբեռնվածությունը. օրորոցախազի դեպքում նորածին աղջկա կրծքից կախված արձաթյա դրամը կատարել է նշանի դեր:<sup>3</sup> Ծաղկազարդին նշանված տղան եկեղեցում ծեռքին մի զույգ մոմ բռնած կանգնել է աղջկա առջե, և մայրն աղջկա գլխին զցել է քող-չարդաթ, որպես նշանի հրապարակայնացում: Ուշագրավ է, որ Մեղրիում ուրախության առիթներով տուն եկողն ասել է պարլուս-պարհիս, անգամ երեկոյան՝ չար ոգիների վնասաբեր ազդեցությունն ու անհարկի ուշադրությունը փարատելու նպատակով: Որպես նշան-միշեն տվել են ոսկե մատանի, վզնոց, դրամաշարան և այլն: Նշանտվեքի ժամանակ փեսացուից և նրա ծնողներից հարսնացուին տրված նվերը կոչվել է երեսաջուր-իրսաջուր: Նշանը դրվել է խնձորի կամ նռան մեջ՝ ոսկե կամ արծաթե դրամի ծևով: Խնձորն ու նուռն արգասապորության, ամուսնական ապագա զույգի բեղմնավորության խորհրդանիշներն են: Նշանդրեքի վերջում աղջկան ներս են բերել՝ գլխին չարդաթ զցած, և նա համբուրել է տարեցների ծեռքը՝ նրանցից որպես նվեր ստանալով մանր դրամներ: <sup>4</sup> Տոներին տղայի տնից աղջկան ուղարկվել են նվերներ՝ խոնչաներ, մեջը միրգ, քաղցրավենիք, մեջտեղում՝ վառվող մոմ:

Նավասարդին ուղարկել են լուս՝ մի պղնձյա սինի (*մեժմահի*)՝ վրան մի գավ գինի կամ մի շիշ օղի, միրգ, անպատճառ խնձոր կամ նուռ, մեջը վառած մոմ դրած, անպայման մի քող/չարդաթ, որպես հարսնության խորհրդանիշ: Հարսնացուին նվերներ ուղարկել են նաև

<sup>3</sup> Ե.Լալայեան, Զանգեզուր, ԱՐ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 70:

<sup>4</sup> Ստ.Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 186:

Բարեկենդանին (Բիրգինդանին), Մեծ պասի առաջին օրը, Միջինքին՝ որպես մերձեցման, սիրաշահման դրսնորումներ: Զատկին հարսնացուին ուղարկել են ներկած ձվեր, յուղով հաց, երբեմն գառ՝ ճակատը ներկած, վզին թաշկինակ կամ չարդաթ կապած: Գառը կոչվել է *ախառնը*: Վարդավառին աղջիկն ու տղան միասին գնացել են խաչ: Գարնանը տղայի բարեկամ աղջիկները և հարսները հարսնացուին տարել են այգիներ-դաշտեր՝ զբոսանքի: Աղջկա կողմն իր հերթին խոնչաներին պատասխանել է դարձով՝ *ՀՀի բերանկալ կամ պօնի*<sup>5</sup> ուլունքներով զարդարուն խցան, գուլպա, թաշկինակ նվիրելով:<sup>6</sup> Վերջին երկուսը հատկապես կարևոր դեր ունեին ապագա խնամիների փոխադարձաբար ընծայվող նվերների մեջ: Ծեսերի, տոնների ժամանակ ընդունված նվերների մեջ կարևորվել են հագուստի տարրերը, որպես ընդհանրական փոխանակում՝ նյութական բարիքների ծևով: Նվերների փոխանակումը տուր և առ էր ամուսնացող կողմների միջև: Ըստ ազգագրագետ Զավեն Խառատյանի՝ դա նշանակել է նաև ամուսնություն-խնամիություն:<sup>6</sup> Յագուստի նվերները, ուտելիքի, համատեղ հացկերութիւն միասին կազմել են ընդհանրական փոխանակությունը՝ որպես ամուսնական փոխանակության ձև:

Յարսանիքից առաջ ընդունված էր կարգի բերել տունը՝ միկրոկոսմոսը, որպեսզի «*հարթնը*»/հարսը տուն մտնելիս կանգնի աստղագարդ երկնքի տակ՝ ակնկալելով ներդաշն, երջանիկ ամուսնություն և ապագա: Բնակարանը մաքրելուց, կարգի բերելուց հետո տան առաստաղին և սյուններին այսուրով տիեզերական պատկերներ են արել՝ աստղեր, արև, լուսին:<sup>7</sup> Այդ ծիսական նկարազարդումը արել է քավորկինը՝ կրկին նվեր ստանալով: Տղամարդկանց համար նախատեսված նվերների մեջ կարևոր էին հետևյալ տարազամասերը. գուլպաներ և սոնապաններ, ինչպես և թաշկինակ: Քավորին որպես նվեր մատուցվել է մի շիշ օղի, հավ, արխալուր կամ ոտնաման (չմոշկ), առանձնապես այն դեպքերում, եթե նա սգի մեջ էր:<sup>8</sup>

<sup>5</sup> Անդ, էջ 187:

<sup>6</sup> *Զ.Խառատյան*, Խոսքի փոխանակումը հայոց հարսանիքում.- Յայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, II, Եր., 2003, էջ 144:

<sup>7</sup> *Ստ.Լիսիցյան*, նշվ. աշխ., էջ 188:

<sup>8</sup> Անդ, էջ 189:

Փեսացուն և նրա նշանային համարժեք արջառը՝ մսացու եզը,<sup>9</sup> զարդարվել են ժապավեններով, վերջինս՝ նաև խնձորների շարանով։ Թագավորի (թաքավորի) և թագուհու պարանոցին, երբեմն նաև՝ ծեռքերին կապել են կարմիր, կանաչ, սպիտակ բրոյա թելերից ոլորուն նարոտ։ Նման կարմիր թել կապել են նաև օրորոցախազի դեպքում, օրորոցների լծերին՝ դանակով խաչ կամ գիր խազելուց հետո։ Այդ թելը կարող էր նույնացվել նարոտի հետ, որը կոչվել է նաև կանաչ-կարմիր։ Իմաստային առումով դա նշանակել է կարգել, ամուսնացնել,<sup>10</sup> իսկ խոսքը կանաչըցնել՝ ասածն անպատճառ կատարելը։

Փեսացուի կրծքին և ուսերին քավորկինը խաչածև ամրացրել է հուսպենք-օսկապ-ուսկապը՝ սպիտակ, կարմիր, կանաչ գույների թաշկինակներից։ Հարսնացուն և փեսացուն կրել են կարմիր, կանաչ, սպիտակ թելերից զարդարուն ասեղնագործ թագ-վարսակալ-ճակատակալ (որից կախված էին բազմագույն ծովիքեր), ուստի և կրողները կոչվել են թագավոր և թագուհի։ Տղայի գգեստավորունը ևս ծիսական բնույթ է ունեցել։ Նախ օրինվել է քթեթք՝ հարսանեկան հանդերձանքը, որ տղայի կողմից ուղարկվել է աղջկա տուն։ Դրա հետ մեկտեղ օրինվել են նույն սկուտեղի վրա դրված քաղցրեղեննը, շաքարը, տղայի գլխարկն ու քավորի սուրը։ Դրան հաջորդել է տղայի երեսի սափրունը. մազերը խուզել են, մատը թաթախելով այն գինու մեջ, որ քավորը պահել է աջ ծեռքում, վառած՝ մոմք՝ ծախ ծեռքում։ Դա անցնան նվիրագործման ծես էր, որով տղան սահմանային վիճակից անցնում էր նոր, ամուսնական տարիքային խունք։

Քթեթք բերողին ևս նվեր են տվել՝ թաշկինակի, գուլպայի ծեսով։ Աղջկա կողմից նվիրվել է գոտի, գլխարկ։ Քավորը քթեթք հանձնել է հարսին զգեստավորող կնոջը՝ մի քանի կոպեկ դրամի ծեսով նվեր տալով։ Հարսնացուին հագցրել են տան օքախ/սենյակում։ Գոտին կապել է քավորը կամ սկեսրայրը՝ երեք անգամ աջից ծախ պտտեցնելով, վերցրել ոտքերի կողմից և կապել մեջքին՝ կամացուկ խփելով՝ որդեծնությունն ապահովելու միտումով։

<sup>9</sup> Երինջ-աղջիկ, արջառ-տղա նշանային համարժեքներ են, իմաստային նույնությանը։ Զհարաւայան, Եզն նորթելու սովորույթը և փեսան հայոց ընտանիքում, ՀՊՀ, 1991, 2, էջ 116-125։

<sup>10</sup> Դր. Ածառեան, Հայերն զաւառական բառարան.- Եմինեան ազգագրական ժողովածու, հ. թ, Թիֆլիս, 1913, էջ 498, 546։

Քավորկինը չարդարի վրայից կապել է թագը՝ նախշուն բազմագույն ծոփքերով ժապավենը: Նարոտն ու ուսկապը հանել են ամուսնական առագաստից առաջ:

Յարսնացուի գլխի հարդարանքուն կատարված փոփոխությունները խորհրդանշել են նրա սոցիալ-ընտանեկան կարգավիճակուն տեղի ունեցած առաջընթացը: Գլխի հարդարանքը ներկայացնում է հագուստի հմայական, պաշտպանական գործառույթները:

Ավանդական տարագի դերն այսօր լրիվ փոխվել է: Այն դուրս է եկել կենցաղավարումից, կորցրել երբեմնի կիրառական նշանակությունը և դարձել ազգային մշակույթի եթոսինվոլիկ հատկանիշ, կատարելով էթնիկ ցուցիչի դեր:

## ՎՐԱՑ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՈՒՅՑՈՒ ԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վրաց դարձի պատմությունը վաղ լեզնդային փուլում (IV-Նդդ.) հերոսուիու հատուկ անուն չի ունեցել. հունա-լատինական գրառումներում հերոսուիին կոչվել է գերի կին: Քրիստոնեական դարձի տարաշխարհիկ իրաշքներով ընթերցողին զարմացնելու համար եկեղեցական պատմիչները Յոռմեական կայսրության մեջ տարածում էին վրաց Բակուր իշխանի բանավոր պատումը Գերի կնոջ մասին բնավ չկասկածելով, որ այն իր հայրենիքում վանական բանահյուսական բնույթի մի անվավեր-անանուն գրույց է անտեսված եկեղեցական շրջանակներում: Վրաստանում պաշտոնական կյանքի անցնելու համար հիշյալ դարձաբանական սյուժեն դեռ զարգացման երկար ժամապարհ պիտի անցներ ընհանրացման ու պատմականացման ուղղվ:

Դարձի հետագա պատմականացման առաջին նշաններից մեկը պետք է համարել հերոսուիու անվանադրությունը: Ինչո՞ւ՝ են վրաց քարոզչուիուն կոչել Նունե (= Նինո): Անձնանվան ստուգաբանությանն անդրադարձել են ավելի քան երկու տասնյակ գիտնականներ, որոնց ջանքերով գոյացել է վեց տեսակետ (ըստ Լ.Մելիքսեթ-Բեկի): Ամփոփելով ասենք, որ եղած բացատրություններն ունեն մի սկզբունքային ընդհանրություն, որը երևում է նրանց բացատրման եղանակում: Յեղինակները, ջանալով գտնել կամ հաստատել վրաց դարձի իրական պատմական հերոսուիու անունը, նրան վիպական հերոսի անվանը հատուկ ստուգաբանություն են տալիս և փորձում այն հիմնավորել գրական վարքի հերոսուիու արարքներով ու հատկանիշներով (միանձնուիի լինելով, աստվածաճանաչությամբ, մոր դեր ունենալով): Յերոսուիու կյանքի իրական ու գրական մակարդակներն իրար հետ խառնելուց առաջ եկած այս հակասությունը չի նկատվել գիտնականների կողմից, որովհետև բոլորն էլ, գոնե ստուգաբանության հարցում, բանեցրել են այն ընդհանուր մշակութաբանական մոտեցումը, ըստ

որի Նունեն իրական, պատմական գործիչ է, և նրա կյանքն ու գործն էլ ճշգրիտ արտացոլվել է նրա վարքում: Մինչդեռ (I) կամ պետք է հերոսուհու անունը լինի պատմական և կապ չունենա նրա մասին հյուսված գրական պատմության հետ, (II) կամ պետք է հերոսուհու անունը լինի վիպական բխելով այդ պատմության սյուժեից և կապ չունենա պատմական գործչի իրական անվան հետ, (III) կամ էլ հերոսուհու անունը պետք է լինի իրական, բայց հարմարեցվելով նրա մասին պատմող սյուժետային որևէ դրվագի հետ, բացատրվի նաև վերջինով և ծառայի իբրև հուզականության ու ճակատագրայնության զգացում հարուցելու հուետորական միջոց:

Ընդհանրապես, բանավոր վիպական ավանդույթում հայտնի բան է հերոսին կոչել ըստ իր գործառույթի, հատկանիշի: Ուրեմն, էլ ո՞վ կարող էր հայտնվել լուսավորիչ-գերու դերում, եթե ոչ նա, ով նախաքրիստոնեական իհն ավանդույթում ուներ մոտավորապես նույնայսի դեր ու հատկանիշ՝ դա ծուկն է, որ եբրայերենում առաջ էր բերել Նոն, բարել. Նոնա, Նոնիա՝ հասուկ անվան, իսկ ասուր. Նոն, ասորերեն ոնոն, արար. ոնն հասարակ անվան ձևերը (ըստ Յր.Աճառյանի): Զկան առասպելույթն իր պտղաբերական, լուսավորչական (=իմաստության շնորհում, =բուժում) կամ հարութենական բովանդակությամբ, պահպանվելով կոլեկտիվ գիտակցության մեջ, իր վերարթնացումն է գտնել վրաց քրիստոնեական դարձաբանական պատմության սյուժետավորմամբ: Զկան առասպելաբանական արժեքի բացահայտման խնդրում կարևորվում են ծկնակերպ Աստղիկ-Դերկետոն, ծովկ դարձած իրիցկինը, հայ ժողովրդական հեքիաթներում կույր թագավորի աշքերը բուժող (=լուսավորող) ծովկը, որ անպայման բուժում (=լուսավորում) է գերի ընկնելուց հետո: Իբրև ծկան նախաքրիստոնեական ընկալման ավելի ուշ օրինակ, թերևս կարելի է վերիշել քրիստոսի հունարեն ծածկագիրը՝ Շխնչ (= ծովկ), որի վերծանությունը բառացի թարգմանությամբ կլինի Յիսուս Քրիստոս, Աստծո Որդի Փրկիչ: Զկան վաղնական ընկալման հայտնի վկայություններ են ծկնորս առաջալները, որոնք Քրիստոսի լույսի առաջին կրողներից են: Զկան խորհրդանշիչի քրիստոնեական ընկալման օրինակներից մեկը գտնում ենք Մատթեոսի Ավետարանում (4, 19, 20): Այդ հատվածը, ըստ որի Քրիստոսը խոստանում է իր ծկնորս հետևորդներին դարձնել մարդ որսացողներ, փաստորեն, ծկնորսի քրիստոնեական խորհրդանշային ելության բա-

ցահայտման իիմքն է: Զկան ընկալման ավետարանական արտահայտությունը հետագայում հետք է թողնում հայ միջնադարյան հոգևոր գործունեության տարբեր ժամրերում («խորհրդավոր ընթրիք», «Ավետարանիշ» թեմաներով մանրանկարներում, խորանների մեկնություններում և այլն):

Այսպիսով, միևնույն քրիստոնեական մշակութային դաշտում գոյություն ունի ձկան երկու ընկալում՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական: Դրանց միջև եղած սկզբունքային տարբերությունն արտահայտվում է ծուկ-ձկնորս հարաբերության մեջ, որի տիպը բնորոշվում է իբրև երկու իրարամերժ սկզբունքների հակադրություն: Ըստ առաջին ընկալման՝ ծուկը լուսավոր ու ներգործող սկզբունքի կրողն է, հետևաբար, սրբազնացած է, իսկ ըստ երկրորդի՝ ծուկը խավար սկզբունքի կրողն է, հետևաբար և ապասրբազնացած է: Չուգահեռաբար՝ նախաքրիստոնեական ընկալման մեջ ձկնորսը խավար (= հեթանոս) կրող սկզբունքն էր ներկայացնում, իսկ երկրորդ ընկալման մեջ ձկնորսը լուսավոր ու ներգործող սկզբունքի կրողն է դառնում և ստանձնում խավարից նարդիկ որսալու և նրանց նոր, ճշմարիտ ուսմունքի լույսի հետ հաղորդակցելու առաքելությունը: Ասվածի հավաստումն են հեթանոսությունից քրիստոնեության անցման հետևյալ օրինակները. մինչև Քրիստոսի գալն առաջալները հեթանոս ձկնորսներ էին (ոչ բոլորը), Քրիստոսի հայտնվելուց հետո առաջինը քրիստոնյաներ պետք է դառնան հակոտնյա այն ստորին ուժերը, որոնք անմիջապես գտնվում են այդ վերին ուժի ազդեցության ոլորտում, այսինքն՝ լույսի դեմ՝ խավար, ներգործման դեմ՝ կրող ուժերը: Հաղորդման և ընդունման այս ակտի հետաքրքիր ծածկագրման ենք համովապում, երբ Քրիստոսը, նույնացվելով ձկան հետ, հաղորդակցվում է տվյալ դեպքում իր միակ հակոտնյայի՝ ձկնորսի հետ: Հեթանոս ձկնորսը, որսալով, գերելով ձկանը, կրում է նրա լույսը և վերածվում քրիստոնյայի: Ենիշտ է, նա ֆիզիկապես հաղթում է, բայց գերյալի հոգևոր ուժի ու բարոյական հաղթանակի ծննդմամբ դարձի է գալիս: Այս հայեցակարգը հետագայում դրվում է վաղ վկայաբանությունների հիմքում, և վկան (=գերի) ֆիզիկական մահվան արժանալով, իր ետևից սակայն դարձի է բերում բազմաթիվ մարդկանց:

Այժմ, երբ վերիիշում ենք տարբեր ժողովուրդների քրիստոնեական ավանդույթներում առաջինը դարձի եկածներին, տեսնում ենք,

որ նրանք, ըստ իրենց գործառութային հատկանիշների, միավորվում են հետևյալ խճբերում. (Ա) կանայք, (Բ) որսորդներ, (Գ) ձկնորսներ, (Դ) հիվանդներ: Ա շարքը, որը գլխավորում է Մարիամ Աստվածածինը աշխարհում Քրիստոսի առաջին ընկալողն ավետումից ի վեր, համալրվում է գրեթե բոլոր ժողովուրդների դարձաբանական պատմությունների տվյալներով: Կին լինելու հատկանիշն այդ պատմություններում գործառութային է նրանով, որ կինը գիտակցվում է իրեւ կրող, ընկալող, ստորին սկզբունք, և դրանով իսկ քրիստոնեության լույսը մարմնավորողի հակոտնյա: Բ շարքում որսորդ լինելը դառնում է գործառութային հատկանիշ այն բանի շնորհիվ, որ սովորաբար առաջին քրիստոնյա թագավորները որսի գնալիս են հաղորդակցվում վերին ուժին (օր. Տրդատ, Միհրան): Գ-ի մասին արդեն խոսեցինք, իսկ Դ շարքը բազմաթիվ հայտնի օրինակներ ունի: Միայն ասենք, որ այդ օրինակներում վերին, ներգործող սկզբունքը հիվանդի հետ հակադրության մեջ է մտնում իր բուժչական (նաև լուսավորչական, եթե հիվանդը կույր է) գործառույթի շնորհիվ:

Դառնալով Նունեի Պատմությանը՝ նշենք, որ այն ուշագրավ է նաև այս առումով: Վրաց դարձի այդ համահավաք բնագրում առկա են բոլոր չորս շարքերը միաժամանակ, որոնցից ամեն մեկը մի ինքնուրույն միկրոդարձի պատմության սյուժետային հենք կարող էր կազմել: Վերջապես, Նունեի վարքին եզակի արժեք է հաղորդում այն փաստը, որ հերոսուիկն ընկալվում է և իրեւ առաջին քրիստոնյա-կին վրաց կողմերում, և իրեւ լույսը կրող ծուկ, և իրեւ լույսը տարածող առաջյալ:

Քննարկենք Նունեի՝ այդ ընկալումները պայմանավորող հատկանիշները: Ո՞վ է նա: «Կին ոմն, գերեալ ի վրաց», որի գլխավոր գործառույթն աչքերը բուժելը=լուսավորելը=խավարը ցրելն է:

Նա վրաց աշխարհից դուրս կանգնած ու այդ աշխարհին հակադրված մի անծանոթուիկ է, «կին ոմն»՝ ըստ Նունեի վարքի հնագույն տարբերակների (հունա-հռոմեական պատմիչներ, Մովսես Խորենացի), որոնցում քարոզուիկն դեռևս պատմականացած չէ և տոհմաբանություն չունի: Նրա ձկնային բնության առաջին հետքը մնացել է «գերեալ ի վրաց» արտահայտության մեջ: Իր լուսավորչական գործունեությունից առաջ նա գերի է ընկնում՝ ինչպես Քրիստոս-ծուկը, հայկ. ժող. հեքիաթի հերոս-ծուկը և այլն: Նրան գերողները հեթանոս վրացիներն են, ինչպես հեթանոս ձկնորսները, որ հետո առաջյալներ

դարձան: Նա իրեն գերողների (Միհրան թագավորի) աչքերը բուժում ու լուսավորելով դարձի է բերում (իշխնք, որ Միհրանին ու նրա ուղեկիցներին որսի ժամանակ խավար է պատում): Ուրեմն, քարոզչուհու բուժչական-լուսավորչական գործունեությունը և «գերեալ» վիճակը փոխապայմանավորված լինելով՝ կազմում են այն միակ առասպելաբանական համատեքստը, որում հերոսուհու անունը պիտի նշանակեր ծուկ (ռնո):

Զկան նախա- և վաղքրիստոնեական առասպելույթի մեջ գոյավարող ծուկ-ծկնորս հարաբերության տիպի վերլուծության համաձայն՝ Նունե-ծուկը պետք է հակադրության մեջ մտնի ծկնորսի հետ: Եվ իրոք, Վրաստան կատարած իր ուղևորության ժամանակ Նունեն, հովիվներից զատ, հանդիպում է նաև ծկնորսների, որոնք ծուկ էին որսում Փարվանա լճում և որոնց մոտ օթևանում է երկու օր շարունակ: Այս հեթանոս ծկնորսների հիշատակությունն աղոտ հետքն է առապելաբանական այն պատկերացման, ըստ որի՝ ծկնորսները, առաջինը հաղորդակցվելով սրբազն ծկան հետ, ենթարկվում են նրա ներգործությանն ու լուսավորվում:

Հետաքրքիր է ևս մի փաստ, որը բացատրելի է դառնում միայն հերոսուհու ծկնային բարքով: Դա Նունեի ջրային ուղին է, որն սկսվում է Փարվանա լճից, նրանից սկիզբ առնող գետով շարունակվում է ու Կուր գետն ի վար՝ հասնում մինչև Ուրբնիսի, այնտեղից էլ՝ Մցխեթա:

Այսպիսով՝ Նունեի մականունը, գլխավոր գործառույթը, ծկնորսների հետ հաղորդակցությունը և ջրային ուղին թույլ են տալիս (ա) հաստատել այդ անձնանվան ստուգաբանությունը (< ծուկ), այն կրող հերոսուհու ծկնային էությունը և (բ) եզրակացնել, որ Նունեն ներկայանում է որպես Քրիստոսի տեղական տարբերակ՝ վրաց ժողովրդաքրիստոնեական միջավայրում:

## Ամայս Սարգսյան ԺԱԹ

### ՓԱՅՏԵ ԶԱՐԻԱՓԱՆ ՊԱՐՊԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒՄ



Տակավին վաղնջական ժամանակներում մարդը, զգալով իր անզորությունը բնության, շրջապատող միջավայրի գերբնական ուժերի նկատմամբ, աշխատել է զանազան չարիքներից ու անհաջողություններից պաշտպանվել պահպանակների ու հմայիլների օգնությամբ։ Ըստ որոշ

ռևսումնասիրողների, «ամուլետ» բառը ծագում է կամ արաբական *hamail*, *hamal(i)et*-կապ, ժապավեն (*hamala-կրել*) կամ ուշ լատինական *amuletum* (*amoliri-վաճել*) բառերից,<sup>1</sup> իսկ թալիսման բառը՝ արաբերեն *tilsam-ամայական*, կախարդական բառից:<sup>2</sup>

Ամուլետ-պահպանակները և թալիսման-հմայիլները տարբերվում են ինաստով, կիրառման նպատակներով ու միջոցներով։ Պահպանակները հմայակամ եղանակներով մարդկանց պահպանում են տարբեր դժբախտություններից՝ մարդկանցից ու իրերից վանելով «չար աչքի», չար ուժերի ազդեցությունը, իսկ հմայիլները կարող են ազդել շրջապատի վրա, փոխել շրջապատող բնության երևույթները, գործուն ազդեցություն ունենալ իրերի և եակների վրա, ապահովել կրողին, զանազան բարիքներ՝ հարստություն, երջանկություն, հաջողություն պարզել և այլն։ Փաստորեն, պահպանակներն ունեցել են

<sup>1</sup> Евг. Кагаров, Культ фетишес, растений и животных в древней Греции.- Журнал Министерства народного просвещения, ч. 40, СПб., 1913, с. 304-306; Г.Ф. Чурсин, Амулеты и талисманы кавказских народов.-Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 46, Махачкала, 1929, с. 197.

<sup>2</sup> Г.Ф. Чурсин, Եշվ. աշխ., էջ 197-198, տես նաև՝ Ֆ. Պողածեան, Յանառուտ բառարան տաճկերեն-հայերեն, թալասիմ արար. յգ. թղթարկ եզ.- բժնամք, ուլունք, Վիեննա, 1858, էջ 180:

անգործությա, կրավորական, իսկ հմայիլները՝ գործուն, ազդող բնույթ: Ուստի, պահպանակները հիմնականում կրել են բացահայտ՝ տանը, իրենց, իրերի ու կենդանիների վրա, այգում և այլն, իսկ հմայիլները, ընդհակառակը, աշխատել են խնամքով թաքցնել կողմնակի աչքից:

Դնագիտական, ազգագրական, արվեստաբանական հարուստ և բազմազան նյութի հավաստմամբ՝ մարդու մարմնի և հագուստի զարդարման բոլոր ձևերը սոցիալական և պաշտամունքային հարաբերությունների առումով սկզբնապես ունեցել են շատ կարևոր նշանակություն՝ ծառայելով որպես պահպանակներ և հմայիլներ, ունենալով սրբազն, հմայական իմաստ, խորհրդանշելով մարդու հարստությունը, հզորությունը, քաջությունը, հասարակական և կրոնական բարձր դիրքին պատկանելությունը, և, հետագայում, վերածվելով զարդարանքների, կորցնելով նախնական իմաստն ու նշանակությունը, հիմքում, այնուամենայնիվ, պահպանել են նախնական գործառությունը:<sup>3</sup>

Դայոց մեջ պահպանակների ու հմայիլների կիրառման ավանդույթն ակունքներով ծգվում է դեպի բնապաշտական հավատալիքներ, Բիայնա (Ուրարտու), հեթանոսական շրջան, և, դարերի ընթացքում գոյատևելով, այս կամ այն կերպ ձևափոխվելով, պահպանել է կենսունակությունն ընդհուպ մինչև XIX-XXդդ.:<sup>4</sup>

Փայտե չարխափան պահպանակ սարքելիս կիրառվել են սուրբ համարվող ծառատեսակները, որոնք, ըստ ժողովրդական հավատալիքների, իրենց հմայական, սրբազն հատկությունները փոխանցել են պատրաստված պահպանակներին, ինչպես նաև՝ փշոտ ծառերն ու բույսերը, օրինակ՝ մասրենին, մամխին, սզնին, դժնիկ չար փուշը և



<sup>3</sup> M.C.Kagan, О прикладном искусстве, А., 1961, с. 10.

<sup>4</sup> Ա.Սարգսյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ) -81, տ. I-IV (Տավուշ), ԴԱՆ-83, տ. I-VI (Լոռի), ԴԱՆ -86, տ. I-VI (Սյունիք):

այլն, որոնք սուր փշերով պետք է վանեին դժբախտություններն ու չարիքները:<sup>5</sup>

Պահպանակները իիմնականում պատրաստվել են ծառի բնից, արճատից, կեղևից, միաժամանակ չարխափան է համարվել նաև ծառի ճյուղը, ծառն ամբողջությամբ (հատկապես փոշնին): Փոշնի ծառին վերագրվել է հմայական, պահպանիչ ուժ, ժողովրդի պատկերացումներում այն օժտված է եղել չարխափան հատկությամբ, դրանից պատրաստված պահպանակները համարվել են չարը վանող լավագույն միջոց:<sup>6</sup>

Հնուց ի վեր հայոց մեջ որոշակի հավատալիքներ են ձևավորվել և զանազան ծիսահմայական արարողություններ արվել պահպանակների պատրաստման առումով՝ ակնկալելով պահպաննելու դրանց չարխափան հատկությունները և առավել զորացնելու դրանք: Պահպանակները պատրաստվել են ամենատարբեր ձևերի՝ մահիկաձև, եռանկյունաձև, գորտաննան, քառանկյունի, կլորավուն, խաչաձև և այլն:<sup>7</sup> Հատկապես մեծ կիրառություն են ունեցել մահիկաձև պահպանակները, կապված լուսնի պաշտամունքի հետ՝ որպես պտղաբերության, առատության, իհվանդությունների բուժման, ընդհանրապես հաջողության խորհրդանիշ:<sup>8</sup>

Գորտաննան, երբեմն ոճավորված պահպանակների կիրառությունը կապվել է պտղաբերության պաշտամունքի հետ, ընդ որում, գորտը, որպես չարխափան նշանակություն ունեցող, ողջ Արևելքին է հատուկ եղել:<sup>9</sup>

Պահպանակի դեր են կատարել նաև, դարձյալ փոշնուց պատրաստված, փոքրիկ կժերը, որոնք կախվել են երեխայի վզից, օրո-

<sup>5</sup> *Ա.Սարգսյան*, Ծառի և փայտամշակման հետ կապված ժողովրդական հավատալիքները հայոց մեջ (XIXդ. լի կես - XXդ. սկիզբ). - Հայաստանի բնակչության հասարակական կենցաղի և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նոտաշրջան (գեկուցումների թեզիսներ), Եր., 1985, էջ 47-49:

<sup>6</sup> ԴԱՍ-81, տ. I-IV, ԴԱՍ-83, տ. I-VI, ԴԱՍ-86, տ. I-VI:

<sup>7</sup> *Ա.Խորանյան*, Փայտը պահպանակ.- Կուլտուրա-լուսավորական աշխատանք, Եր., 1988, թիվ 7-8, էջ 48-52: *Ա.Սարգսյան*, ԴԱՍ-81, տ. I-IV, ԴԱՍ-83, տ. I-VI, ԴԱՍ-86, տ. I-VI:

<sup>8</sup> *Առ.Լիսիցյան*, Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 183-184. *Ա.Ահարոնեան*, Հոռ կինը (Ծիւթեր մեր ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար), Թիֆլիս, 1897, էջ 31:

<sup>9</sup> *Վ.Դ.Բղոյան*, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 478:

ռոցից, Երբեմն՝ անասունի պարանոցից:<sup>10</sup> Որպես պահպանակ ծառայել են փոշնուց պատրաստված ուլունքները, որոնք կիրառվել են կամ ինքնուրույն և կամ՝ մեկընդմեջ զուգակցված «աչքավոր» և կապույտ ուլունքների հետ:<sup>11</sup> Յայոց մեջ ուլունքն ամենամեծ և ամենատարբեր կիրառություն ունեցող հմայական պահպանակներից է եղել, որին բազմակի հմայական ուժ է վերագրվել:<sup>12</sup>

Պահպանակ-հմայիլները Երբեմն պատրաստվել են խաչաձև. փոշնու փայտից խաչ են պատրաստել և կախել Երեխաների վզից, հագուստից, օրորոցից, ինչպես նաև՝ անասունների ճակատից: Ըստ ժողովրդական հավատալիքների, հատկապես «խաչի» ձևով պատրաստված պահպանակները շատ զրոավոր են, «չար աչքն» ու չար ուժերը դրանց գորությունից վանվում են.<sup>13</sup> Ընդ որում, խաչի պահպանիչ, պաշտպանիչ զորության նկատմամբ հավատը հայոց, ինչպես նաև այլ ժողովուրդների մեջ ի հայտ է եկել հմագույն դարաշրջաններից՝ հանդես գալով ամենատարբեր դրսևորումներով:

Յայոց մեջ ամենուրեք պահպանակի դեր են կատարել նաև սուրբ համարվող ծառերի ծյուղերը: «Չար աչքից» պաշտպանվելու, օծերից ու չարքերից զերծ մնալու ակնկալիքով՝ դրանք ամրացվել են տան դռան վերև, տանիքի տակ, պահվել իրենց մոտ, տնկվել այգու ու արտի կենտրոնում և այլն:<sup>14</sup>

Սուրբ համարվող ծառերի նույնիսկ փայտի փոքր կտորն էլ համարվել է չարխափան ու պաշտպանիչ: Այսպես, փոշնու փայտիկներ են դրվել տան զանազան մասերում, հարսնացուի գրպանում՝ անուսնու տուն տեղափոխվելիս, ամրացվել են Երեխաների հագուստին, կապվել օրորոցին, նաև՝ անասունի ճակատին, կախվել պտղա-

<sup>10</sup> Ե.Լալայեան, Բորչալուի գաւառ.- Ազգագրական հանդես (այսու՝ ԱՅ), գ. 10, Թիֆլիս, 1903, էջ 237:

<sup>11</sup> Ա.Սարգսյան, ՂԱՆ-81, տ. I-IV, ՂԱՆ-83, տ. I-VI, ՂԱՆ-86, տ. I-VI:

<sup>12</sup> Ա.Խորայելյան, նշվ. աշխ., էջ 51:

<sup>13</sup> Ա.Սարգսյան, ՂԱՆ-81, տ. I-IV, ՂԱՆ-83, տ. I-VI, ՂԱՆ-86, տ. I-VI:

<sup>14</sup> Ե.Լալայեան, Վասպուրական, ԱՅ, գ. 25, Թիֆլիս, 1913, էջ 39. Բենս (Սահակ Սովոհսեան), Բոլանըն կամ Յարք գաւառ, ԱՅ, գ. 2, Թիֆլիս, 1900, էջ 38 (տես նաև ՀԱԲ, պր. III): Ստ.Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 130. Ա.Սարգսյան, Շառի և փայտամշակման հետ կապված ժողովրդական հավատալիքները հայոց մեջ, էջ 49:

տու ծառերից:<sup>15</sup> Փայտին չարխափան հատկություն վերագրելու մտայնությունն է գործում նաև «չար աչքի» ազդեցությունը վանելու նպատակով մատով փայտին թխկրխսկացնելու սովորութում, որը գուգահեռներ ունի նաև այլ ժողովուրդների մեջ:<sup>16</sup>

Ի վերջո, սուրբ համարվող ծառն ամբողջությամբ հայոց մեջ հնայական պահպանակի դեր է կատարել: Այդ մտայնությամբ, նույնիսկ մեր օրերում, հատկապես Սյունիքում փռշնի ծառեր են տնկված տանքակերում, արտում և այլուր:<sup>17</sup>

Ժողովրդական որոշակի հավատալիքներ են ծևավորվել պահպանակներ շինելու ժամանակի առումով՝ կապված տարվա եղանակի, շաբաթվա օրերի, նաև՝ ժամերի հետ:<sup>18</sup> Հատկապես զորավոր է համարվել Զատկի Ավագ հինգշաբթի օրը շինված պահպանակ-հնայիլը, ընդ որում, այն պատրաստելիս արգելվել է վրան փչել, այլապես պահպանակի զորությունը կկորչեր: Պահպանակները կախելուց առաջ դրանք հաճախ աղոթել են տվել, երբեմն՝ անպայման «յոթ տեղ»: Ժողովրդական պատկերացումներում մեծ տեղ է տրվել նաև պահպանակի կրնան՝ կախման ժամանակին, ըստ երևույթին, զորությունը պահպանելու նպատակով, այն մեծ մասամբ կախել են կիրակնամուտին:<sup>19</sup>

Փայտե պահպանակ-հնայիլները պարտադիր զարդանախշվել են երկրաչափական, բուսական, նաև հավերժությունը և արևը խորհրդանշող զարդանախշերով,<sup>20</sup> որոնք կառուցվածքային ու ոճական

<sup>15</sup> Ե.Լալայեան, Վարանդա, ԱՅ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 240, (տես նաև՝ Ե.Լալայեան, Երկեր, հ. II, Եր., 1988), Ա.Սարգսյան, ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI, Ա.Խորայելյան, նշվ. աշխ., էջ 47:

<sup>16</sup> Հնտու.՝ նախնադարյան մարդը, մշտապես ապրելով դժբախտության կանխազգացմամբ, ողջ կյանքուն աշխատել է խուսափել չար, աներեկույթ ուժերի ազդեցությունից, և այդ մտայնությունն է դրսնորում է գտել հետևյալ արտահայտության մեջ. «Քոնիր փայտից». - Լ.Լեօն-Բրուլ, Сверхъестественное в первобытном мышлении (первобытная мифология), М., 1937, с. 37.

<sup>17</sup> Ե.Լալայեան, Վարանդա, ԱՅ, գ. Բ, էջ 240, Ա.Սարգսյան, ԴԱՆ-86, տ. I-VI, Ա.Խորայելյան, նշվ. աշխ., էջ 47:

<sup>18</sup> Ա.Սարգսյան, ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI, Ա.Խորայելյան, նշվ. աշխ., էջ 48:

<sup>19</sup> Ա.Սարգսյան, ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:

<sup>20</sup> Ա.Սարգսյան, Ազգագրական նյութեր Լոռվա փայտամշակության վերաբերյալ (XIXդ. II կես XXդ. սկիզբ).- Հայ ժողովրդական մշակույթի հետազոտան հարցեր (թթնիկ ավանդույթը և մշակութային փոխառնչություններ).- Երիտասարդ գիտնականների կոնֆերանս (գեկուցումների թեգիսներ), Եր., 1984, էջ 20-21, Ա.Խորայելյան, նշվ. աշխ., էջ 52-53:

առանձնահատկություններով սերտ աղերսներ են ունեցել հայկական ճարտարապետական հուշարձանների, միջնադարյան խաչքարերի, գորգերի ու կարպետների, կենցաղային նշանակության բազմաբնույթ առարկաների հետ:

Չարիսափան փայտե պահպանակները մինչև օրս ել կիրառվում են Յայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում, իիմնականում նույն իմաստով ու նշանակությամբ, միաժամանակ վերածվելով նաև գեղազարդման առարկաների:

Կարլ Սեղբոսյան  
ԴԱՒ

## ՇԻՐԱԿԻ ԱՐԴԵՍՏՆԵՐԸ ԽԿ-ԻՑ ԽԿ ԴԱՐ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Շիրակի բնակչության կենցաղային մշակույթը, տվյալ դեպքում՝ արհեստավորական ավանդույթները, հիմնականում արևանտահայ կենցաղի արգասիք են: Դիշյալ պատմազգագրական մարզի ժողովրդական մշակույթը բավականաչափ ուսումնասիրված է, սակայն 1988թ. աղետալի երկրաշարժից ու դրանից հետո տեղի ունեցած քաղաքական և տնտեսական արմատական վերափոխություններից հետո առկա են այնպիսի փոփոխություններ, որոնք չեն կարող չափահանալ ավանդութային կենցաղի որոշ կողմերին՝ վերածելով նաև արտադրական կենցաղը, բնակչության գործունեությունն այդ ասպարեզում: Տեղի ունեցան և տեղի են ունենում նորայնացումներ, որոնց մի մասը կրեց ժամանակավոր բնույթ, իսկ մի մասն էլ արտադրին և ներքին դրդապատճառներով դեռևս գոյատևում է: Հայաստանում հասարակարգի և դրա հետ մեկտեղ տնտեսաձևերի կտրուկ փոփոխությունների պայմաններում, երբ ակտիվացավ անհատական արտադրական գործունեությունը, գյուղատնտեսության ասպարեզում տեղի ունեցավ հողի սեփականաշնորհում, ընդհանրապես սեփականաշնորհման քաղաքանության ընդլայնում գյուղում և քաղաքում: Սեփականության, մանավանդ մանր սեփականատիրության կապակցությամբ Շիրակում նույնպես արդեն առկա է արհեստների ու փոքր ծեռնարկությունների զարգացումը՝ մի կողմից, գյուղացիական արտադրություններն ու տնայնագործական արհեստները՝ մյուս:

Շիրակի քաղաքական, տնտեսական կյանքում նախկինում մեծ նշանակություն են ունեցել նաև զարգացած արհեստները: Դրա առհավատչյան է դեռևս 1837-1840թթ. Կումայրի - Ալեքպոյ քաղաքը, որն իր բնույթին համապատասխան էլ նշանավորվում էր որպես արհեստավորական քաղաք: Ալեքպոյ - Լեռնականն այնուհետև դարձավ արոյունաբերական խոշոր կենտրոն, Երևանից հետո Հայաստանի

Երկրորդ արդյունաբերական-մշակութային քաղաքը: Այդ քաղաքի կառուցապատման գործում մեծ է եղել Շիրակի ամեն կարգի պոտենցիալ հնարավորությունների օգտագործումը: Խորհրդային իշխանության դեռևս առաջին տարիներին եղած սև տուֆի պաշարների կողքին մեծ նշանակություն տրվեց Շիրակուն հայտնաբերված բազմագույն տուֆի պաշարներին, որոնք օգտագործելու նպատակով 1928թ. կառուցվեց Լենինական - Արթիկ երկաթուղագիծը, իսկ 1938թ. Անհամման վերածվեց քաղաքատիպ ավանի: Նշանակալի արդյունաբերական կենտրոն դարձավ Արթիկ քաղաքը: Ոչ միայն Դայաստանում, այլև Միության մեջ հոչակված էր ու այդպիսին էլ մնում է Արթիկի վարդագույն տուֆը, «Արթիկտուֆ»-ը արտադրում էր նաև պենզա, բնական և արհեստական տուֆաբլոկներ, շինարարական ավագ և խիճ: Քարհատների և որմնադիրների քաղաք Արթիկի կողքին քաղաքատիպ ավանների վերածվեցին Պենզաշենը (1958թ.), Մարալիկը (1962թ.):

Արդյունաբերական զարգացմանը զուգահեռ, զարգացում էր ապրում նաև արհեստագործությունը: Մասսայական արտադրությունն ամբողջովին չէր կարող ապահովել ազգային, նեղ, տեղական պահանջմունքների բավարարումը: Դարերի ընթացքում ազգային ավանդութային կենցաղի պահանջմունքները, նույնիսկ մշակութային առաջընթացն ապահովում էին տնայնագործ և արհեստավարժ արհեստավորները՝ երբեմն ծեռքի աշխատանքի արգասիքներով գերազանցելով գործարանային արտադրանքին (դարբնություն, գինագործություն, ոսկերչություն, խեցեգործություն, ոստայնանկություն, գրգագործություն և այլն): Դայտնի է, որ նույնիսկ Տուլայի գինագործարանի արտադրանքը չէր կարողանում երկար ժամանակ շուկայից դուրս մղել Ախալցխայի և Ալեքպոյի արհեստավորական արտադրանքը: Արհեստագործության պահպանումն ու զարգացումը, մասնավորապես, Դայաստանում հետևանք էին շատ հաճախ քաղաքական, տնտեսական և բնաադետային այն իրադարձությունների, որոնք պատճառ էին դառնում կյանքի ընթացքի անկանխատելի վերափոխությունների: Այսպիսի պայմաններում քաղաքային արհեստները երբեմն ստիպված են եղել ժամանակավորապես հանգրվանել գյուղերում: Ընդհակառակը, բարենպաստ հանգամանքներում կամ զանազան պատճառներով գյուղական արհեստները հաստատվել են քաղաքներում ու նպաստավոր վայրերում: Նման տեղափոխությունների և փոխազդեցություննե-

ոի հետևանքով բացառված չեր մեկի կամ մյուսի բնույթի փոխակերպումը զարգացման, նաև քայլայման ու վերացման հմաստով։ Արհեստագործության զարգացումն ընթացել է տարբեր դրսերումներով։ Արհեստների մի մասը ցայսօր էլ պահպանվել ու սպասարկում է բնակչության առտնին պահանջները, մյուս մասը՝ ընդգրկվելով կենցաղային սպասարկման արհեստանոցների կամ կոմբինատների կազմի մեջ, մեծ մասամբ վերածվել է արտադրական կամ սպասարկման ձեռնարկությունների, իսկ մի մասն էլ անցել է գեղարվեստական արտադրության ոլորտ, որը հատկապես այսօրվա պայմաններում ունի զարգացման ու տարածման լայն հնարավորություններ։

1988թ. վերջին տեղի ունեցավ ահռելի երկրաշարժը։ Շիրակն աղետի հարվածի գոտում էր և վերածվեց աղետի գոտու... Աղետի հետևանքների վերացմանը գուգահեռ, սկսվեց տնտեսական և քաղաքական վերափոխությունների շրջանը։ Այդ պայմաններում, բնականաբար, կրկին աշխուժացան արհեստագործության նույնիսկ մոռացված ճյուղերը։ Նկատվեց արհեստավորական արտադրանքի զգալի պահանջարկ, որը հետևանք էր, անկասկած, նաև տնտեսության անկումայնության։ Տնտեսության վերականգնման ուղղությանը ձգտումները նպաստեցին արհեստների և արհեստավորական ավանդույթների նկատելի աշխուժացմանը։ Սակայն դրսից ներհոսող արդյունաբերության ու կենցաղային ապրանքների մեծ ծավալների հետզինետե ավելացումը կասեցնում է և արդեն կասեցրել է այդ առաջխաղացումը։ Ներհոսքի ավելացման դեպքում արհեստագործությունը կարող է կրել հետագա անկանխատեսելի և անցանկալի փոփոխություններ։ Արդեն փաստ է մի քանի ավանդական արհեստների վերացումը հիշյալ մրցակցության հետևանքով, արհեստավորներից շատերի վերածումը նման ապրանքների վերավաճառողների։ Այդպիսի երևույթ առկա է ոչ միայն Շիրակում, այլև ընդհանրապես Հայաստանում։ Թվում էր, այսպիսով, որ ստեղծված «նպաստավոր» պայմաններում արհեստները զարգացում կապրեն, սակայն ստացվել է հակառակը։

Պետք է նշել, որ արհեստագործության վայրէջք ու անկում նկատվում են թե՝ քաղաքում և թե՝, մանավանդ, գյուղում։ Դրանց պատճառները, բացի ասվածից, բազմաթիվ են։ Պետության տնտեսական ու սոցիալական երթեմն ոչ ճիշտ տարվող քաղաքականության հետևանքով՝ մարզի հասարակության գրեթե ողջ զանգվածը աղքատության

Եզրին է կանգնել և մի կերպ նվազագույն ապրուստը հայթայթած գյուղացին կամ գործազուրկ շիրակցին միջոցներ չի ունենում դիմելու որևէ արհեստավորի՝ նույնիսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Առաջացած պահանջմունքները նարդիկ աշխատում են լուծել ինքնուրույնաբար, լավագույն դեպքում երբեմն միայն դիմելով բարեկամ, հարևան կամ ծանոթ արհեստավորի՝ ակնկալելով անվճար, մասնակի վճարով, ապահով, կամ փոխհատուցմամբ օգնություն: Մյուս կողմից, տնայնագործը կամ արհեստավորը չի կարող ձեռք բերել անհրաժեշտ հումք, գործելու համար անհրաժեշտ պիտույքներ, վառելիք և այլն: Դրանց գները բավականաչափ բարձր են, ոչ ձեռնուուր, քանի որ պատրաստի արտադրանքի գինն անհամեմատ ցածր է: Բացի այդ, շուկան լի է ներկրվող (արտասահմանից) պատրաստի, ավելի հաճախ անորակ արտադրանքով, որոնց վերավաճառողներ են դառնում մեծ նասամբ համապատասխան ապրանք պատրաստող նախկին վարպետները: Բայց չի կարելի ասել, որ Շիրակում իսպառ վերացել են արհեստներով գրադպողները: Դեռևս կենսունակ են սպասարկող շատ հին ու նոր արհեստներ, որոնք ավելի շատ համախմբված են մեկ ձեռնակության մեջ (կենցաղի տուն, նորոգման արհեստանոց, տաղավար ևն.), որպիսիք, այնուամենայնիվ, պահպանում են իրենց քիչ թե շատ բարվոք գոյությունը (ժամագործներ, դերձակներ, ոսկերչներ, դիմահարդարներ, վարսավիրներ, ռադիո-հեռուստացույցների վարպետներ, ավտովերանորոգողներ, էլեկտրասարքերի տեխնիկներ, վոլվկանիզատորներ ևն.): Արհեստավորների մի զգալի մասը նպատակահարմար չի համարում աշխատել կրպակում կամ ձեռնարկությունում: Շատերը գերադասում են աշխատել տներում՝ պատեհարիթներով, երբեմն չունենալով որոշակի եկամուտ: Մարզի գյուղերում նույնպես կարելի է հանդիպել մեկ-երկու տնայնագործ արհեստավորի, որոնք նույնպես հազվադեպ են աշխատանք ունենում: Կան նաև արհեստավորներ, որոնք ընդգրկված են որևէ մասնավոր կոռպերատիվի, հազվադեպ նաև՝ պետական արտելի մեջ (գորգարտել ևն.): Վերոհիշյալ բոլոր արհեստավորների եկամուտները հեռու են բավարար լինելուց, ուստի նրանք հաճախ արհեստը գուգակցում են առևտուրին: Այս դեպքում էլ բավարար եկամուտներ չունենալով նրանք հաճախ դիմում են արտագնացության այլ աշխատանքների՝ հուսալով երբեւ աշխատանք ունենալ հայրենիքում: Արհեստավարժ արհեստա-

վորներ ու մասնագետներ շատ կան նաև փախստականների մեջ, որոնք հազվագյուտ դեպքերում են աշխատանք գտնում մարզի բնակավայրերում, ուստի ստիպված են կատարել պատահած աշխատանք՝ ամենուր: Ավելի բարվոր են գեղարվեստական արտադրության ոլորտն ընտրած արհեստավարժները, որոնց նկատմամբ պետական կամ թեկուզ մասնավոր ձեռնարկատիրական հոգացողության դեպում կարելի է ունենալ թե՛ ազգային ժողովրդական արվեստի միջազգային տարածման և թե՛ գեղարվեստական արտադրության լայն շուկայի ձեռքբերման հնարավորություններ: Շիրակի մարզը բնօգտագործման և ժողովրդական արհեստագործության ու արվեստների աջընթացի ասպարեզում ունի հզոր ներուժ:

Այսպիսով, Շիրակցիների արհեստավորական ավանդույթներում նկատվում է մի անցումային շրջան՝ հատկանշական առանձնահատկություններով, որոնք ուշագրավ են արհեստագործության հետագա զարգացումը նպատակառության կամխորոշելու առումով:

### **Գրականություն**

1. **Կ.Ս.Կողմոյամ,** Թաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում, Եր., 1977:
2. **Կ.Վ.Մեղրոսյան,** Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները Լենինականցիների կենցաղում, - Հայ ազգագրություն և բանահյուսություն, 6, Եր., 1974:
3. **Կ.Վ.Մեղրոսյան,** Շիրակի թաղաքային բնակչության արդի կենցաղը, (հետադեսյան ազգագրության ուսումնասիրություն), 2001թ, անտիպ:
4. **Կ.Վ.Մեղրոսյան,** ԴԱ Ն (անձնական արխիվ):

ԴԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԿԱՆԵՐԻ  
ՀՈՒՇԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ-ՏԻՊԱԲԱՆԿԱՆ  
ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական ստեղծագործություններ, սակայն այդ գրականության մեջ բացակայել են պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես-վկա վերապրողների հուշերն ու ժողովրդական երգերը, որոնք ևս պատմածանչողական և փաստավավերագրական կարևորություն ունեն:

Այս ամենի խոր գիտակցությամբ, 1955թ. անձնական նախաձեռնությամբ, իսկ 1960թ. Դայաստանի ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ապա՝ 1996թ. ՀՀ ԳԱԱ Դայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հովանու ներքո, գրի եմ առել (նաև՝ ձայնագրել ու տեսագրել) նրանց պատմած սահմոկեցուցիչ հուշերն ու տարաբնույթ այլ նյութեր, որոնք անփոփել եմ «**Դայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ**» ստվարածավալ հատորի մեջ (Երևան, 2000): Ներկա ուսումնասիրության բնագրային հղումները՝ ականատես-վկա վերապրողների պատմած հուշերի և նրանց հաղորդած պատմական երգերի հատվածները մեջբերված են հիշյալ ժողովածուից: Ժողովրդական այդ նյութերը հաղորդած ականատես-վկաները գերազանցապես ավագ սերնդի ներկայացուցիչներն են՝ իրենց պատմական բնօրրանից բռնի կերպով արտաքսված հայեր, որոնք 1915-1922թթ. Դայոց ցեղասպանության ժամանակ տարագրվել են Արևմտահայաստանից, Կիլիկիայից և Անատոլիայի հայաբնակ 70 տեղավայրից:

Դայոց ցեղասպանությունից արևմտահայության գգալի մասն անխնա բնաջնջվել է, իսկ աքսորի ճամփաներին կողոպտված, ունեզրկ-

ված և ուժասպառ, իրաշքով փրկվածները, գաղթի ճամփաների զրկանքները ճաշակելով և բազմաթիվ զոհեր տալով, հասել են Արևելյան Հայաստան, կամ սփռվել աշխարհի տարբեր երկրներ: Յետազայում այդ մնացորդացի որոշ մասը պարբերաբար ներգաղթել է Մայր Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող Երևանի մերձակա նորակառույց թաղերում, ինչպես նաև Վաղարշապատում, Արմավիրում, Արարատում, Թալինում, Դրազդանում, Գյումրիում, Վանաձորում և այլուր:

Ծուրջ 50 տարվա ընթացքում մեր հետևողական պրատումներով, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Յունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ և Թուրքիա կատարած մեր անձնական կամ գիտաժողովային կարճատև ուղղությունների ընթացքում մշտապես որոնել, հայտնաբերել ենք Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատեսների ավագ, միջին և կրտսեր սերունդների ներկայացուցիչներին, ի մոտ ծանոթացել նրանց հետ, թափանցել նրանց հոգու խորխորատները:

Ականատես-վկաների պատմած հուշերը տարբեր թեմաներ են ընդգրկում: Դրանք արտացոլում են հայրենի բնաշխարհի գեղեցկությունները, նրա նահապետական առօրյա կենցաղն ու սովորութենքը, ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կյանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձությունները, երիտթուրքական կառավարության պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Զեմալ, Նազիմ, Բեհաեդին Շաքիր) գործադրած դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ռոջակեզ, բռնագաղթ, ջարդ, կրտորած), նրանց կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի ամայի անապատներ (Ղեյր-Էլ-Զոր, Ռաս-ուլ-Այն, Ռաքքա, Յոնս-Շամա, Մեսքենե, Սուլուու), հայերի կրած անասելի տառապանքները (քայլք ուժասպառվելու աստիճան, ծարավ, քաղց, համաճարակ, մահվան սարսափ), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության պաշտպանելու իրենց ապրելու տարրական իրավունքը (1915թ. Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյանարտեր, Մուսս լեռան, Ուրֆայի, ավելի ուշ՝ 1920-1921թթ., Այնթապի, Ջաջընի հերոսամարտեր), այդ ինքնապաշտպանական մարտերի ազգային հերոսներ (շապինգարահիսարցի Անդրանիկ Օզանյան, վաճեցի Արմե-

նակ Եկարյան, Մեծն Մուրադ [Յամբարձում Բոյաջյան], մուսալեռի Եսայի Յաղության, ուրֆացի Մկրտիչ Յորնեղբայրյան, այնթապցի Ադրբ Լևոնյան, գեյթունցի Արամ Չոլաքյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլերյան) և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ հայորդներ, որոնք ժողովրդական զանգվածների հետ միաձուլված պայքարել են, նահատակվել, նաև դիմակայել ու վերապրել:

Ականատես վերապրողներից յուրաքանչյուրն իր կյանքի հուշը պատմել է իրեն հարազատ հայերեն խոսվածքով, հաճախ՝ բարբառով կամ օտարախառն հայերենով, նաև թուրքերեն, քրդերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

Ականատես-վկա վերապրողների պատմած հուշերը հնարավորություն են ընծեռում գիտական հետազոտության ենթարկել նաև այդ կարգի նյութերի ժանրային տիպաբանական առանձնահատկությունները: Յայոց ցեղասպանության ականատես-վկաների պատմած հուշերը, որպես ժողովրդական բանավոր ավանդության տարատեսակ, իրենց կառուցվածքով կամ հակիրծ են ու սեղմ, կամ՝ ծավալուն ու երկարապատում, որոնք ներառում են նաև զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսության տարաբնույթ ժանրերի տարրեր (երգ, վիպերգ, զրույց, առած-ասացվածք, օրինանք, անեծք, աղոթք, երդում)` հաստատելու իրենց պատմածի հավաստիությունը՝ առավել արժանահավատ ու տպավորիչ դարձնելով բանավոր խոսքը: Մանավանդ, իրենք՝ վերապրողները, բարոյական պատասխանատվություն և պարտքի գիտակցություն են զգացել իրենց պատմածի նկատմամբ: Նրանցից շատերն իրենց հիշողությունները մեզ հաղորդելուց առաջ խաչակնքել են կամ՝ երդվել: Իսկ երդումը նվիրական խոսք է՝ սրբություն, որը կեղծիք չի ընդունում:

Խնդրու առարկա հուշերը, ենթարկելով քանակական ու որակական մանրակրկիտ վերլուծության՝ պարզել ենք, որ, ինչպես առանց հիշողության մարդ չկա, նույնպես և առանց հիշողության չկա ժողովուրդ, քանի որ հիշողությունը մարդու կամ ժողովրդի ապրած տարիների կյանքն է, նրա անցյալը, նրա պատմությունը:

Յայոց ցեղասպանությունը, որն իրագործվել է քսաներորդ դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսների զգայարաններով, և այդ բոլորն անջնջելի կերպով տպավորվել է նրանց հիշողության մեջ:

Վերոհիշյալ իրադարձությունների ականատես-վկաների հուշերն արևմտահայերին վիճակված պատճական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորություններն են, ուստի **հազեցած են խոր պատմականությամբ:**

Առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, նիստ ու կացը, բարքերը, քաղաքական-հասարակական հարաբերությունները, **վերապրողների հաղորդած հուշերն անմիջական են, ծշմարտացի, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք:**

Հետագա ամբողջ կյանքի ընթացքում ականատես վերապրողների կողմից մեկ առ մեկ հաշվված, կետ առ կետ վերլուծված այդ փաստացի վկայությունները, պատմական իրադրությունների հետ համադրելիս, դույզն իսկ կասկածի տեղիք չեն տալիս.

Հուշապատումի մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կերպարն է, որը ոչ միայն պատմում է պատմական նշանակալից իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի մասին, այլև իմաստավորում է դրանք՝ դրսկորելով իր աշխարհայացքի և անհատականության հիմնական հատկանիշները, իր մոտեցման ուրույն տեսակետը, իր յուրահատուկ լեզուն և ոճը: Հետևաբար, **ականատես-վկայի պատմած հուշը միանշանակ է իր եզակիությամբ:** Այն տվյալ անհատի անձնական կենսագրությունն է՝ անցյալի իր իմաստավորմամբ, որը, յուրաքանչյուր անգամ վերապատճելիս, հուշի առանցքային բովանդակությունը գրեթե մնում է անփոփոխ, քանի որ **նրանք այդ բոլորը պատմել են որպես սրբազն խոսովվանանք:** Եվ ես, բանագետ-ժողովրդագետին հատուկ մասնագիտական պատասխանատվությամբ, հավատարիմ մնալով ականատեսների բանավոր խոսքին, նրանց պատմածները բառ առ բառ գրի եմ առել, գիտակցելով, որ նրանք իրենց ներանձնական գաղտնիքներն են ավանդում **հետագա սերումներին փոխանցելու համար:**

Միաժամանակ, **վերապրողների պատմած հուշերը նաև համանան են.** Քանի որ տարբեր վայրերում, սեռատարիքային տարբեր խմբերի (տղամարդ, կին, ավագ, միջին, կրտսեր սերունդներ) պատմած հուշերը միմյանցից անկախ, գրեթե նույնությամբ նկարագրում են պատմական միևնույն ժամանակաշրջանի իրադարձությունները, պատմական համանման դեպքերն ու դեմքերը, իրենց տեսած ու զգա-

ցած նույն սարսափազդու տեսարաններն ու դաժանությունները, որոնք, համարվելով, գալիս են միմյանց հաստատելու, միմյանց շարունակելու, լրացնելու և ամբողջացնելու՝ միտվելով անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համագգայինը: Դետևաբար, ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությամբ՝ դառնալով արևմտահայոց հավաքական պատմական հիշողությունը:

Սակայն ժողովրդի պատմական հիշողությունը նաև հարատևելու կարողություն ունի: Թեպետ պատմական այդ իրադարձություններից շուրջ 90 տարի է անցել, և հրաշքով փրկված ականատես-վկաներից շատ-շատերն արդեն չկան, սակայն ավագ սերնդի ներկայացուցիչների պատմածներն ընտանիքներում այնքան են լսվել, այնքան են կրկնվել, որ դարձել են նաև հետագա սերունդների ժառանգությունը և, բերներերան անցնելով, շարունակում են հարատևել նաև հետագա սերունդների հիշողության մեջ:

Այսպիսով, ամենտ կորստից փրկված, սերունդներին ավանդվող ականատես վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնույթի երգերն իրենց պատմաճանաչողական արժեքով դառնում են Հայոց ցեղասպանությունը և դրան հաջորդած պատմական իրադարձությունները ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ, հավաստի, առարկայական և փաստագրական վավերագրեր, որոնք ոչ միայն անցյալի վկայությունն են, այլև ապագայի նախագծուացում:

Ահա թե ինչու առանձնապես կարևորվում է Հայոց ցեղասպանության պատմական ողջ ընթացքի, անմեղ նահատակների ու կորցրած երկրի մասին ականատես վերապրողների փաստավավերական, ժողովրդական վկայությունները սույն ուսումնափրությամբ լույս աշխարհ հանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը, քանզի ցեղասպանությունը ոճիր է, որը բացահայտվելու է նաև վկաների օգնությամբ: Իսկ ամենամեծ վկան ինքը՝ ժողովուրդն է, որը, ցավագնորեն վերապրելով, պատմել ու դեռ պատմում է՝ վկայելով իր ողբերգական անցյալը: Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը, նրա պատմական հավաքական հիշողությունը, որը պետք է ներկայացվի աշխարհին ու մարդկության արդար դատին:

## Արմենուհի Ստեփանյան ԴԱՒ

### ՀԱՅՐԵՆԱՊԱՐՁՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱՑԻՆԵՐԻ ՓՈԽԸՆԿԱԼՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ (ըստ 1946-1948թթ. ներգաղթի նյութերի)

1946-1948թթ. աշխարհասփյուռ արևմտահայության մի ստվար զանգված, արծագանքելով Խորհրդային Հայաստանի կառավարության տունդարձի կոչին, ներգաղթեց հայրենիք: Նրանք իրենց հետ բերել էին ինչպես տվյալ երկրի, այնպես էլ սփյուռքահայ մշակույթը, լեզուն:

Արևմտահայ և արևելահայ հատվածների տարանջատությունը, դարեր ի վեր մեկ ամբողջական էթնոմշակութային դաշտի բացակայությունը նպաստել էին երկրներ մշակույթի առաջացմանը, որի հետևանքով, ժամանակի ընթացքում, էթնոսի երկու հատվածներից յուրաքանչյուրը ծեռք էր բերել վառ արտահայտված յուրահատկություններ՝<sup>1</sup> որոնց թվում և լեզվամշակութային առանձնահատկություններ:

Ներգաղթածների ու տեղաբնակների համակեցությունը և մերձեցումն իրականանում էր առաջին հերթին կենցաղային շփումների միջոցով, որի ընթացքում ձևավորվում էր հայրենադարձ - տեղացի փոխընկալման մեխանիզմը: Այդ գործընթացն անցնում էր՝ մերժողական-օտարացման և հանդուրժողական - համակերպման որակական տարրեր փուլերով:<sup>2</sup> Այս համակեցությունը ներգաղթածների առջև հարմարվելու խնդիր էր դնում:

Տեղական պայմաններին հարմարվելուն խոչընդոտում էին մի շարք հանգամանքներ՝ քաղաքական, գաղափարական մտածելակերպի, աշխարհայացքի, հոգեբանության, լեզվաբարբառային տար-

<sup>1</sup> Սփյուռքի ուսումնասիրության աղիթով այս հարցին անդրադարձել է Ե. Մելքոնյանը (Յ. Մելքոնյան, Диаспора как исследовательская проблема на примере армянского рассеяния, в кн. Диаспоры, М., 2000, с. 1-2):

<sup>2</sup> Եկվոր և տեղաբնակ խմբերի փոխընկալման այս մոդելը դիտարկվում է և այլ ժողովուրդների մեջ:

բերությունները: Ասվածի համար խիստ պատկերավոր է հետևյալ մեջբերումը. «...արդեմ չորս ամիս է Սովետական քաղաքացի հանամնքով կը փորձենք մեր երազած հայրենիքի կարգ ու սարքին, սովորութիւններուն, մեզի խորք առօրեային, կեանքի ընթացքին և լեզուական կառոյցին հարմարուել»:<sup>3</sup>

Սույն հոդվածում նպատակ է հետապնդվում մասնավորապես քննարկել փոխընկալման լեզվամտածողական դրսևորումները՝ ներգաղթածների ու տեղացիների մերձեցման գործընթացում:

Տեղաբնակներն իրենց հերթին նշում էին, որ ներգաղթողները, ինչպես արտաքին խնամված տեսքով ու հագուստով, այնպես էլ բարբառով, չին ծովական տեղի բնանկարին, արևելախոս միջավայրին:

Այս առումով առավել բարդ էր վիճակը Յայաստանի հեռավոր շրջաններում, որտեղ տեղավորված հայրենադարձների ու տեղացիների լեզվական-խոսակցական շփումներում «չհասկցվելը» լուրջ խոչնդուտ էր: Բերենք մի ուշագրավ օրինակ. ռումինահայ Սիրարփի Յակոբյանը, հիշելով անցած օրերը, ասում էր. «Ես և ամուսինս Կոստանցա ապրած էինք, մեզի Սևանի գյուղ տեղը դրկեցին, խոսքերնին չինք հասկընար, անոնք ալ մեզի չին հասկընար»:<sup>4</sup>

Լեզվական խոչընդուտը պայմանավորված էր արևմտահայերենի և արևելահայերենի հնչյունական համակարգի և արտասանության տարրերություններով, որի պատճառով հաճախ միևնույն բառը տարբեր կերպ է ընկալվում: Այս առումով բնորոշ է հետևյալ օրինակը. շինարարությունում աշխատուն են հայրենադարձն ու տեղացին: Տեղացի բանվորը ներքեւից ծայն է տալիս. «Զգի, թող գա», հայրենադարձը վերևից պատասխանում է. «Ինտոր ծգեմ, գուլուխիդ կիյնա»: Տեղացի բանվորը բարկացած բղավում է. «Քեզ ասում եմ՝ ծգի»: Յայրենադարձը վերևից բաց է թողնում ծանրությունը:

Արևմտահայ և արևելահայ խոսակցականում ընդունված շատ բառերի և արտահայտությունների փոխադարձ թյուր ընթացքում զանազան զվարճախոսությունների առիթ էր ստեղծում: Այս առումով բնորոշ է հետևյալ օրինակը. հայրենադարձը տեղացի հարևանին

<sup>3</sup> Մովսես Բագարյան, Նամակներ Սովետական «դրախտից», Եր., 1997, էջ 12:

<sup>4</sup> Սիրարփի Յակոբյան, ծնվ. 1908թ., ներգաղթել էր 1946թ., Ռումինիայից:

<sup>5</sup> Ծգել բառն արևմտահայերեն արտասանվում է ցըէլ և նշանակում է բաց թողնել:

դժգոհում է ցածր աշխատավարձից: Վերջինս խորհուրդ է տալիս փափախ անել: Յայրենադարձը չհասկանալով՝ պատասխանում է. «Ե, փափախը գուլուս դնեմ նե, փարաս կ'ավելնա»<sup>5</sup>:

Ուստեղ շատ բառեր և արտահայտություններ, որոնք արևելահայերեն խոսակցականի մեջ էին ներթափանցել, միանգամայն անհասկանալի լինելով ներգաղթողներին, նույնպես թյուրիմացության տեղից էին տալիս: Ուշագրավ է ժամանակին անենից շատ տարածված զվարճախոսություններից մեկը: Յայրենադարձի աշխատավարձից պահում են անում, ասելով թե «պաղախողնի նալոգն է» (Եկամտահարկ): Վերջինս զարմացած բացականչում է. «Բէ աղբար, ասքան աղեն հոս ենք, սա փարախողնի նալոգը չընցավ»:

Ենտպատերազմյան շրջանի տնտեսական ճգնաժամի հետևանքով պարենային դժվարություններ էին ստեղծվել երկրում, հացը վաճառվում էր կտրոններով և հերթեր էին գոյանում: Յայրենադարձների համար անսովոր այս իրավիճակը կատակային բառախաղերի ու զվարճախոսությունների առիթ էր տալիս, ինչպես օրինակ՝ *Երհացառ - ը վերծանվում էր «Երանի հաց առնողներուն»*:

Տեղացի և հայրենադարձ լեզվական փոխընկալումներում, ամենաբնորոշը, սակայն, «աղբար» բառի երկատված ըմբռնումն էր: Արևմտահայերենում այն գործածվում էր որպես ընկերական, բարեկանական տարածված դիմելածն<sup>5</sup> (հմնտ. արևելահայ խոսակցականի ախպեր - ապեր և ծները), աղբար բառը դնելով հատուկ անունից հետո (Թորոս աղբար): Տեղացիները, կրկնելով հայրենադարձներին, այդ արտահայտությունը գործածում էին շրջված (ախպար Թորոս), թեպետև, Թորոս ախպեր, Թևան ապեր ծները նույնպես բնորոշ են արևելահայերենին:<sup>6</sup>

Կարևոր է նշել, որ աղբար բառի գործածումը տեղացիների լեզվում ուներ իմաստային տարբեր շեշտադրություն՝ ըստ իրավիճակների: Առօրյա կենցաղային փոխհարաբերություններում, այդ դիմելածնը հիմնականում բացասական վերաբերմունք չէր առաջացնում, թեպե-

<sup>5</sup> Արևմտահայ ընտանեկան կենցաղում գործածական էր նաև աղբարիկ բառը, որով քոյքը դիմում էր եղբորը, ինչը հայրենադարձությունից հետո տարածում չունեցավ:

<sup>6</sup> Կարևոր է նշել, որ եղբայր ծներ հավասարապես գործածական էր և արևմտահայ գրական լեզվում:

տև շատերը հեզնանք էին տեսնում, հատկապես, վերջինիս շրջված ձևի մեջ: Աշխատանքի վայրում նման դիմելածեր արդարացված էր անվանակիցների առկայությամբ (ինչպես՝ լենինականցի այսինչը, կիրովականցի այնինչը ևն):

Այլ էր իրավիճակը սրված բախումնային պայմաններում, դրացիական կամ այլ բնույթի վեճերում, երբ աղբար բառը արտասանվում էր հատուկ՝ օտարող շեշտադրությամբ: Հայրենադարձներն այն դիմադարձում էին տեղացի բառով: Այս պարագայում աղբար - տեղացի բառերը ձեռք էին բերում մենք-դուք սահմանային, անջրպետող նշանակություն, և ինչ խոսք, երկուստեք ընկալվում էին իբրև վիրավորանք:<sup>7</sup>

*Ախպար* արտահայտության հոգնակի ծև գործածումը բարի ընկալումը փոխադրում է մեկ այլ հարթություն: *Ախպարներ*<sup>8</sup> բառը, որպես արտասահմանից ներգաղթած հայության ընդհանրացնող անվանում, վերածվում է այդ ենթաէթնիկ խնբի յուրովի եթոնիմի: Որոշ ժամանակ անց, այն դառնում է առհասարակ հայրենադարձների ենթաէթնիկ մշակույթի բնորոշիչ (ախպարական կնունք, ախպարական ճաշ և այլն):<sup>9</sup>

Ուշագրավ է այն պարագան, որ 1960-70-ական թթ. աղբար բառն արդեն ուներ առավել ընդհանրացնող նշանակություն, որը տրվում էր նաև իրանից ներգաղթածներին, չնայած, որ վերջիններս լինելով արևելահայ լեզվամշակույթի կրող, այդ բառը բնականորեն չէին գործածում:

Եթնիկ կենսատարածքից դուրս՝ սփյուռքի այլէթնիկ միջավայրում առկա երկեղզվության պարագայում, արևմտահայերենն ուներ (և ու-

<sup>7</sup> Հարկ է նշել, որ նման իրավիճակներում վերն ասվածը վերաբերում է նաև մյուս ենթաէթնիկ խնբերը բնորոշող անվանումներին, (գաղթական, կռո և այլն):

<sup>8</sup> Մեր նյութերը ցույց են տալիս, որ *ախպար* բառը գործածության մեջ մտավ 1946-48թթ. հայրենադարձության տարիներին՝ իր առանձին դրսերումներով պահպանվելով առ այսօր: Այդ տարիներին, զուգահեռաբար գործածվում էր և նորեկող տերմինը, որը սակայն, 1949-ից կիրառությունից դուրս եկավ: Նորեկող անվանում էին և 1930-ականների հայրենադարձներին, ի տարերություն 20-ականների ներգաղթածների, որոնք արդեն համարվում էին հին եկող:

<sup>9</sup> Ուսախոս հայերի միջավայրում օգտագործվում են (նաև այսօր) “Ахнарские блюда” “Ахнарка” և նման արտահայտություններ:

նի) հայապահպան գործառույթ: Յայտնի է, որ լեզուն էթնիկ ինքնագիտակցության դրսուրումներից մեկն է: «Որքան ատեն հայերեն կխոսին և հայերեն կխորհին, անքան ատեն հայ եմ» սփյուռքահայոց ասուլյում բացակայում է հայերենի երկրարբառ տարբերակվածությունը, կա մեկ լեզու մեկ խոսք ընկալումը: Մայր էթնոսի ներսում, 1946-48թթ. հայրենադարձության տարիներին հայերենի երկրարբառ տարբերակվածությունը մղվեց առաջին պլան, խոչընդոտելով հայրենադարձների ու տեղացիների մերձեցման գործընթացին: Եթե լեզուն էթնիկ սահմանային է,<sup>10</sup> ապա տվյալ դեպքում արևմտահայերենն ու արևելահայերենը սուբէթնիկ սահմանային էին: Լեզվաբարբառային տարբերությունները խանգարիչ լինելով հայրենադարձների կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ միաժամանակ նաև թելադրում էին տեղական լեզվին հարմարվելու պարտադրանքը: Լեզվաբարբառային պատճեշը հաղթահարելուն ուղղված հայրենադարձների ճիգերը արդեն 1950-60-ականներին հանգեցրին արևմտա-արևելահայերենի յուրօրինակ խառնաբարբառի ստեղծմանը:<sup>11</sup> Այս իրավիճակն է ցուցադրում հետևյալ ուշագրավ օրինակը. երկու հայրենադարձ հանդիպում են իրար, մեկը մյուսին հարցնում է.

- Դուն ա՞լ լեզուդ փոխած ես:

- Զփոխիմ մե, ինչ պիտի ընեմ. չէ՞ս գիտեր, հայաստանցի ըլլալու, հասկցելու համար լեզուդ պետք է հարմարեցունես:

Այդ խառնաբարբառով խոսում էր ներզաղթածների միջին սերունդը, մեծահասակները կամ ավագ սերունդը խոսում էր անխառն արևմտահայերենով կամ բնօրրանի բարբառով:<sup>12</sup>

Հայրենադարձներին ու տեղացիներին անջրպետող լեզվական խոչընդոտը վերջնականապես հաղթահարվեց Հայաստանում ծնված

<sup>10</sup> Տես C. A. Արյունօն, Նароды и культуры (развитие и взаимодействие), М., 1989, с. 115, 119.

<sup>11</sup> Այս երևույթն առավել դիտարկելի է Հայաստանի շրջաններում, որտեղ տեղաբաշխվել էին հայրենադարձները: Մեր բանասացներից շատերը Ստեփանավանում բնակվող բուլղարահայեր էին, որոնք իրենց արևմտահայերենին խառնել էին Լոռվա խոսվածքը:

<sup>12</sup> Հայրենադարձների ավագ սերունդը, հատկապես Հունաստանից ու Միջին Արևելքի երկրներից ներգաղթածները, հայերենից զատ ընտանիքում խոսում եր նաև թուրքերն, իսկ միջին սերունդը՝ այն երկրի լեզվով որտեղից ներգաղթել էր:

սերնդի մեջ: Հետ հիսունականներին հայրենադարձների ընտանիքներում ծնված սերունդն արևմտահայերեն չէր խոսում: Ներկայումս հայրենադարձներին հիմնականում դավաճանում է արևմտահայ առօգանությունը, մի բան, որ սովորաբար չի հաղթահարվում տվյալ սերնդի կողմից:

Մեր օրերում, արևմտահայոց և արևելահայոց լեզվական փոխընկալումները տարրեր, բոլորովին նոր դրսևորումներ են գտնում: Բազմիցս առիթներ ենք ունեցել նկատելու, որ Հայաստան ժամանած ծանոթ ու անծանոթ սփյուռքահայերի հետ տեղացիները փորձում են հաղորդակցվել արևմտահայերենով: Դիտվում է նաև հակառակ՝ Հայաստանում սովորող սփյուռքահայ ուսանողությունը ջանում է, գոնեամսամբ, յուրացնել արևելահայերենը:

Տեղացի ու ներգաղթած տարրերի փոխընկալման լեզվական դրսևորումները որպես մերձեցմանը խոչընդոտող գործոն, կարելի է տեսնել և այսօր՝ Աղրբեջանից գաղթած հայերի բարբառի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, որով տարանջատվում են հայաստանցի – դարաբաղցի (բաքվեցի) ենթաէթնիկ խմբերը: Պատճառներից մեկը գուցե այն է, որ վերջիններս խոսում են ռուսերեն՝ խուսափելով իրենց բարբառից: Կարևոր է նշել, որ էթնոսի ներսում ներէթնիկ խմբերի ու նրանց մշակույթի ընկալումը մենք-դուք տարբերակմանը առհասարակ դիտարկելի է եկվոր տարրի նկատմամբ, բավական է միայն թվարկել սուրբենոնիմի կարգավիճակով ծեռք բերած այնպիսի անվանումներ, ինչպես կոռ, գյալմա, թաժա խայ, պարսկաստանցի, գաղթական և այլն: Ասվածից կարելի է եզրակացնել, որ ներգաղթած և տեղացի խմբերի փոխընկալումներն ի վերջո հայ էթնոսի ինքնընկալման ձևերից են, մի գործընթաց, որը տակավին ավարտված չէ:

Лилия Варданян  
ИАЭ

## СОБИРАТЕЛЬСКО-ПОЛЕВАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ С.Д. ЛИСИЦИНА В 1920-е гг.

Многогранная деятельность С.Д.Лисицина на этнографическом поприще началась в 1920-е гг., когда он, уже признанный ученый, был приглашен в крупнейший академический центр своего времени- Кавказский историко-археологический институт (далее КИАИ) в Тифлисе. Здесь он развернул обширную научную, организационную и собирательскую деятельность.

Начало полевым изысканиям ученого положило его участие от КИАИ в комплексной экспедиции для всестороннего обследования Зангезура, Нагорного Карабаха и Нагорного Курдистана, организованной Научной Ассоциацией при ЦИК Закавказья летом 1924 г. И хотя для С.Д.Лисицина это был первый экспедиционно-полевой опыт, собранный им огромный разносторонний материал лег в основу одной из лучших его работ по армянскому народному жилищу<sup>1</sup> и первой этнографической монографии<sup>2</sup>. Оба исследования по уникальности представленного материала и актуальности поставленных проблем не утратили своей значимости и в настоящее время. Карабахская экспедиция, по оценке ученого, «первая попытка охвата этнографическим описанием широкого района после советизации Закавказья», стала для него важной вехой в формировании и определении круга дальнейших научных интересов.

<sup>1</sup> Лисицян С.Д., К изучению крестьянских жилищ. Карабахский карадам .- Известия КИАИ, 1925, т.5, с.97-108.

<sup>2</sup> Лисицян С.Д., Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк. Ереван, 1992. *Եղօ յան Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)*. - Յայ ազգագրություն և բանահյուսություն, Եր., պր. 12, 1981:

1926г. по заданию КИАИ С.Д.Лисициан организовал экспедицию в Мегри, никем, как он писал в письме Н.Я. Марру, до того не исследованный. Этот окраинный самобытный, «совершенно обособленный уголок» Армении, пограничный с Нахичеванской АССР, «один из кантонов исторической провинции Сюнии», интересовал ученого именно в силу географического и историко-культурного своеобразия. Это стало своего рода продолжением исследования единой культурно-исторической общности, начатого С.Д. Лисицианом в предыдущей карабахско-зангезурской экспедиции. Он много времени и сил отдал специальному этнографическому и географическому изучению этого региона. В сел. Мегри, Гудемнис, Карчеван, Вагравар, Личк, Гумеранц и др. Д.С.Лисициан самостоятельно и с помощью корреспондентов собрал огромный материал по различным аспектам традиционной культуры армян и проявлению новых, современных черт жизни и быта, «проникающих в Мегринский район, как и другие местности южного Кавказа, под влиянием русско-европейской культуры».<sup>3</sup> Он записал также значительный лингвистический материал по мегринскому диалекту, составив схему спряжений и склонений мегринского, вагриварского, карчеванского и шиваниздзорского говоров, выявив, что «устанавливается тесная взаимная связь всех этих говоров между собою и далее с акулисским, распространенным на запад, за Зангезурским хребтом, в пределах Нахкрайя».<sup>4</sup> По материалам указанной экспедиции С.Д.Лисициан тогда же написал работу «Мегринский район», где на фоне историко-географического исследования сумел показать, как географический фактор, в частности, характерный для данного региона принцип вертикальной зональности, диктовал своеобразие местных форм хозяйства и бытовой культуры; он исследовал также тип традиционного народного жилища мегринцев.<sup>5</sup>

<sup>3</sup> Национальный архив Армении (далее - НАА), ф.428, оп. 4, д. 92-102, 115-117, 351, 355, 370, 371, 374.

<sup>4</sup> Лисициан С.Д., О поездке в Мегринский район. - Известия КИАИ, 1926, т. 4, с.137.

<sup>5</sup> Лисициан С.Д., Мегринский район.- НАА, ф.428, оп. 4, д. 53. Его же. Из материалов по изучению жилищ Армении. 1. Крестьянское жилище Мегринского района.- Известия КИАИ, 1927, т.6, с. 119-140.

Этнографическое обследование Мегринского района убедило ученого «в принадлежности основного армянского населения этого бассейна к группе говорящих на так наз. «зокском» наречии и занимавшего ... горные долины по другую сторону Зангерурского хребта, в пределах Нахичеванской республики, и потому оказалось необходимым произвести параллельные изыскания и в армянских «зокских» селениях этих долин». <sup>6</sup>

Следующая этнографическая экспедиция С.Д.Лисициана по заданию КИАИ состоялась летом 1928 г. по маршруту: Нахичевань - сел. Аза (близ городища Хараба-Гилан) - сел. Цгна (основное место работы) - Парака - Рамис - Танакерп - монастырь св. Креста-Верхн. и Нижн. Акулисы - Ордубад. Им был собран обширный разносторонний полевой материал<sup>7</sup> (по хозяйственной деятельности, формам землевладения и водопользования, календарным праздникам, семейной обрядности, верованиям, местным святыням, местам паломничества, описанию церквей, надгробий), «подвергнуты проверке и значительно пополнены материалы, зафиксированные т. Ервандом Алаяном в его работе «Гохтн, ... установлены на месте караванные пути, соединявшие этот район с рынками Средиземного моря, с одной стороны, и приволжскими и московскими, с другой... В сел. Цгне, Акулисе и Рамисе обнаружены остатки пребывания католических миссионеров, широко развернувших свою деятельность в конце XVII в. в районе Нахичевани, в частности, области «зоков».<sup>8</sup> С.Д.Лисицианом был собран также весьма ценный эпиграфический материал - «записаны многочисленные надписи». Он был обеспокоен состоянием и судьбой армянских культурно-исторических ценностей Нахичевана. Отмечая скучность сведений об этом в письменных источниках, он особое внимание обращал на богатый материал, который «сохранился на стенах храмов и на могильных плитах, дающий иногда картину хозяйственной жизни нескольких поколений в

<sup>6</sup> Лисициан С.Д. Отчете командировке в «зокский» Акулисский район. - Там же, д. 228, л. 1.

<sup>7</sup> НАА, ф. 428, оп. 4, д. 108-102, 363, 365.

<sup>8</sup> Лисициан С.Д., Отчет о командировке... с. 2

одной и той же семье», настойчиво подчеркивая при этом необходимость «поторопиться с фиксацией этих эпиграфических данных ввиду быстрого уничтожения уже обработанных камней для использования их в новом строительстве»<sup>9</sup>. Учитывая, что в конце 1927 г. «джульфинские надписи списаны С.В. Тер-Аветисяном», С.Д. Лисициан предложил свою помощь «в сборе надписей по более восточным бассейнам», если Закавказский филиал АН СССР сочтет целесообразным организовать двухмесячную экспедицию. «Выполнение этой работы я мог бы взять на себя при участии специалиста фотографа по р.р. [рекам— Л.В.] района Ордубата, Акулис, Танакерта и Цгны. Это область т. наз. «зокских» поселений, по которой я собирал этнографические материалы в 1928 г.»<sup>10</sup>. Изучение этой самобытной группы армянского этноса С.Д. Лисициан продолжил и позже, в рамках сотрудничества с Институтом кавказоведения им Н.Я. Марра. Согласно заключенному с институтом издательскому договору, в конце 1935 г. он представил исследование на тему «Армяне зокской группы» в объеме 6 печ. л. Однако работа эта так и не была опубликована, а следов ее в архиве ученого обнаружить не удалось.

По заданию КИАИ С.Д.Лисициан провел огромную собирательскую работу для всестороннего изучения проблемы армянских беженцев и традиционного армянского жилища. Он прекрасно осознавал специфику и сложности текущего момента в связи с массовым переселением армян из Турции на территорию Советской Армении после геноцида 1915 г. и последствий Первой мировой войны, а также первой волны репатриации зарубежных армян. В современном контексте это была одна из важнейших в том период задач неотложной этнографии. В этих условиях сбор и фиксацию материала среди армян-беженцев и репатриантов, пока не успевших ассимилироваться и еще сохраняющих свою этнографическую специфику, он считал первоочередной и

<sup>9</sup> НАА, ф. 428, оп. 4, д. 638, л. 1.

<sup>10</sup> Там же.

безомлагательной задачей. Благодаря энергичной деятельности С.Д. Лисициана (запись материала им самим, организация корреспондентской сети на местах, привлечение студентов-уроженцев тех мест), уже к середине 1920-х гг. были составлены подробные обстоятельныйные этнографические описания ряда историко-этнографических районов: Мокса, Шатаха, Сасуна, Алашкerta и др.<sup>11</sup>

Не менее важной была задача «изучения крестьянских армянских жилищ с выяснением особенностей их типов в различных районах в связи с причинами, их обуславливающими». В подобном аспекте эта проблема ставилась впервые, несмотря на имеющиеся в дореволюционной этнографической литературе обширные сведения описательного характера. С середины 1920-х гг. Д. Лисициан развернул широкую собирательскую деятельность в этом направлении, скрупулезно и детально записывая материал как среди беженцев, так и среди местных жителей в различных районах Армении.<sup>12</sup> Он первым в армянской этнографии подошел к изучению традиционного народного жилища с позиций типологической классификации и связи его с армянскими культовыми сооружениями и храмовой архитектурой.<sup>13</sup>

<sup>11</sup> Там же, д. 103-107, 113, 114, 123, 360, 362.

<sup>12</sup> Там же, д. 90, 91, ч. 1, 2.

<sup>13</sup> Գարույունյան, Ղվինի V-VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Եր., 1950, էջ 72; Գարույունյան, Յայոց ժողովրդական բնակարանը (գլխաւուն)՝ սրբատուն.-Յայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 357-358:

## ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՀ

### ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ (1840-1890)

Հայ մշակույթի, մասնավորապես բանագիտության պատմության մեջ ուրույն տեղ ունի XIX դարի 60-80-ական թվականների մշակութային, հասարակական գործիչ, բնահավաք-բանագետ Գ.Տեր-Ալեքսանդրյանցը: Իր «Թիֆլիսոց մտավոր կյանքը» (1885) ժողովածուով նա նոր որակ հաղորդեց հայ բանագիտությանը: Եթե բանահյուսությամբ զբաղվողները նախկինում ժողովրդական մշակույթը որոնում էին խուլ գյուղերում, գրին ու գրականությանն անհաղորդ ռամիկների միջավայրում, ապա նա իր բանահավաքչական պրատումներն իրականացրեց բազմազգ մի քաղաքում՝ Թիֆլիսում, վեր հանելով տեղի հայ համայնքի մտավոր կյանքը, կենցաղն իր բազմաշերտ խավերով (մտավորականներ, մանր ու խոշոր վաճառականություն, արդյունաբերական, համքարական միջավայր, կինտոններ, ոչ միատարր ազգաբնակչություն, սովորություներ, ծեսեր, հակատալիքներ, յուրատիպ բարբառ, աշուտական ավանդույթներ): Այս ամենի մեկտեղմամբ ու վերհանմամբ, Գ.Տեր-Ալեքսանդրյանցը մի քայլ առաջ անցավ իր նախորդներից՝ բանահյուսության կենցաղավարնան, աշխարհագրականության նկատմամբ ծեավորելով նորովի պատկերացումներ ու սկզբունքներ՝ քաղաքը նույնպես համարելով բանահյուսության կենցաղավարնան յուրօրինակ միջավայր:

Գևորգ Տեր-Ալեքսանդրյանցը ծնվել է 1840թ. Թիֆլիսում, Դավիթ քահանա Տեր-Ալեքսանդրյանցի ընտանիքում: Հայրը մեծ ավանդ ուներ հայ մշակույթի պատմությանը նվիրված իր արժեքավոր աշխատություններով: Ուշագրավ են էրգումների գաղթի պատմության, Ախալցխա քաղաքի հիմնադրման, թիֆլիսահայ ուսումնակրթական խնդիրներին նվիրված նրա աշխատությունները: Նա ռուսերենից հայերեն է թարգմանել Պետրոս Խուցյանի «Քրիստոնեություն ի Կովկաս»

աշխատությունը: Մշակութային խնդիրներով մտահոգ հայրը որոշակի հետք է թողել Գ.Տեր-Ալեքսանդրյանցի հայացքների ձևավորման ու զարգացման վրա: Նա սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա՝ 1858-60թթ. շարունակել ուսումը տեղի դասական գիմնազիայում: Գիմնազիատները, նրանց թվում և Գ.Տեր-Ալեքսանդրյանցը, ոգևորված նոր ձևավորվող ազգային ինքնաճանաչման զարթոնքով, ծեռնամուխ են լինում հայ ժողովորդի կրթության, դաստիարակության խնդիրներին: Գ.Տեր-Ալեքսանդրյանցը անդամակցում է Թիֆլիսում գործող «Սիրագումար» գրական ընկերությանը, որը զբաղվում էր և գրական խնդիրներով, և հասարակության լայն խավերի համար դասախոսություններ կազմակերպելով: Ընկերության կազմում ձևավորվում է Գ.Տեր-Ալեքսանդրյանցի և Ալեքսանդր Երիցյանի համագործակցությունը: 1866թ. նրանց համատեղ ջանքերով իրատարակվում է «Վաճառական» կամ «Թիֆլիսի առևտրական գագեթ» շաբաթաթերթը: Գործի կարևորությունը պայմանավորված էր վաճառականության հանդեպ ժամանակին իշխող ոչ հարգալից վերաբերմունքով, որը բխում էր իիշյալ բնագավառի նկատմամբ ճշգրիտ գիտելիքների սակավությունից: Անհրաժեշտ էր վաճառականության դերի ու նշանակության վերաբերյալ թերթում տպագրած հոդվածներով հասարակության լայն խավերին ծանոթացնել Ռուսաստանում և Եվրոպայում ձևավորված բարեկիրթ առևտրական աշխարհում ճգնաժամերի ու ցնցումների պատճառներին, դրանցից խուսափելու եղանակներին: Վաճառականներին մասնագիտական գիտելիքներ հաղորդելու նպատակով, թերթի գլխավոր թղթակից Ալ.Երիցյանը որոշում է կազմել «Առևտրական բառարան», որտեղ պետք է ամփոփված լինեին առևտրին վերաբերող գործածական բառերը: Թերթը հայ վաճառականների ուշադրությունն ուղղորդում է նաև մշակութային խնդիրներին, ոգեկոչում նրանց գործուն մասնակցությամբ աջակցելու հայրենիքի վերածննման ու մտավոր զարգացմանը: Գ.Տեր-Ալեքսանդրյանցն իրեւ թերթի խմբագիր, մեծ տեղ է հատկացնում իրապարակախոսական, գրական, գրաքննադատական հոդվածներին: Նա թերթում տպագրում է նաև իր մասլահաթերթը, կենցաղապատկերները «Տանու աղջիկը անկտրիլ խարբուզակ է», «Գանդիկիզիրենց Սալոմի պիկնիկը» և ուրիշներ, որոն-

ցում ի հայտ են գալիս նրա ազգագրական լայն գիտելիքները: Յետագայում, 1870-ական թթ., նա «Մեղու Յայաստանի», «Կռունկ հայոց աշխարհի», «Արծագանք», «Նոր դար» պարբերականներում տպագրում է սոցիալական պատմվածքներ՝ «Խճնտանքով միջի մարդկանց վճիռը», «Պրիկազչիկ Միշելս», ինչպես և գրախոսականներ Գ.Սրվանձտյանցի «Գրոց-Բրոց», Գ.Սունդուկյանի «Գիշերվա սաբրը խեր է», «Խսթաբալա» ստեղծագործությունների վերաբերյալ: Վերոհիշյալ լրագրերում նա տպագրվել է «Գեռ Ավետով», «Դարադ Ղազո», «Շաքար Մանուշակյանց», «Արդվինցի Դավիթ» ծածկանուններով: 1850-ական թթ. ազգային երգարաններ հրապարակելու հայ մտավորականության շրջանում ծավալված աշխատանքներին (Ղ.Ալիշան, «Ուամկական երգը հայոց» (1852), Գամառ Թարիպա, «Ազգային երգարան» (1856), Մ.Միանսարյանց, «Քնար հայկական» (1868)) արծագանքում է նաև Գ.Տեր-Ալեքսանդրյանցը՝ 1871թ. Թիֆլիսում հրատարակելով իր «Լիակատար երգարան» 137 էջանոց ժողովածուն: Յեղինակի իսկ վկայությամբ՝ երգարանը հեռու է լիակատար լինելուց, քանի որ «Մեկ մարդու համար և մեկ որևէ քաղաքում անկարելի է ժողովել ամեն հայարնակ տեղերում երգվող բոլոր երգերը»:<sup>1</sup> Երգարանում տեղ են գտել 100 երգ, իսակ ու տաղ: Իր նախորդների նման, նա ևս ժողովրդական և ժողովրդական ոճով գրված ստեղծագործությունները մեկտեղել է ժողովածուում: 1885թ. Թիֆլիսում հրապարակած նրա «Թիֆլիսեցոց մտավոր կյանք» ժողովածուն սկզբունքորեն տարբերվում է վերոհիշյալից: Այն աչքի է ընկնում վիպական ու քնարական ստեղծագործությունների բազմազանությամբ և ներկայացված նյութերի բուն ժողովրդական բնույթով: Ժողովածուում ամփոփված նյութերը նրա 26 տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն են: Ժողովածուի հրատարակման դրդապատճառներն են. 1) Ուսև և եվրոպական ազգերի մեջ ժողովրդական «մտավոր պտուղների հավաքումը», որի բացը հայ իրականության մեջ լրացնելուն է միտված նրա նախաձեռնությունը. 2) ժողովածուում ամփոփված նյութերը հիմք պետք է ծառաեին Վ.Դալլի «Տօլկօվայ սլովար խաղող և ելուկօրուսկոց յազեկա»-ի նման մի բառարանի ստեղծման, որի իրականացմամբ, իր իսկ վկայությամբ «վաղուց եր պարապում»: 3) Գա-

<sup>1</sup> Գ.Տեր-Ալեքսանդրյանց. Լիակատար երգարան, Թիֆլիս, 1871 (Առաջաբան):

վառական բարբառներով որքան ինարավոր է շատ ժողովածուների հրատարակման անհրաժեշտությունը, քանի որ տվյալ ժամանակաշրջանում բարբառագիտությունը գիտական հետազոտությունների առաջնահերթ խնդիրներից էր: Գ.Տեր-Ալեքսանդրյանցը նյութերը դասակարգել է որոշակի սկզբունքով: 5000-ից ավելի միավոր նյութ պարունակող ժողովածուն ըստ բնույթի բաժանել է 18 խմբի. առաջասացվածք՝ 2080 միավոր, օրինանք-բարենադրանք՝ 137, անեքք, հիշոցներ՝ 300, սպառնալիք՝ 109, ողջույն-շնորհավորություն՝ 81, ծաղրու ու հանաք՝ 86, կենաց՝ 19, փողոցե-փողոց շրջող մանրավաճառների, կինտոնների բացականչություններ՝ 20, զանազան երկրացիների ածականներ և ավելի հին անուններ ու ազգեր՝ 222, երեխանց թոթովանք՝ 69, ոճեր և դարձվածներ՝ 2700, երդում՝ 109, փաղաքշանք և խմարանք՝ 60, հանելուկ՝ 37, աղոթք՝ 23, երեխանց երգեր և խաղ՝ 16, դանդաններ՝ 12, ժողովրդական և աշուղական երգ՝ 25, ջանգուլումներ՝ 63, հեքիաթներ՝ 50: Նյութերի դասակարգման և մատուցման խնդրում նա հիմնականում հետևել է հայ բանագետ հրատարակիչների սկզբունքներին ու մոտեցումներին հատկապես առած-ասացվածքները ներկայացնելով այբբենական դասակարգմանք: Ուսւ և եվրոպական բանագիտության մեջ արդեն իսկ կիրավող առած-ասացվածքների բովանդակային դասակարգման սկզբունքներին չհետևելու դրդապատճառների մասին գրում է. «...նախ, որ նման եղանակով կարող էի սիսակել ասացվածքի ուղղակի և անուղղակի իմաստը բացատրելիս, և երկրորդ՝ միևնույն ասացվածքը անհրաժեշտարար մի քանի բաժանման մեջ կրկնվում է, և երրորդ՝ հետևելով Քերովք Պատկանյանի խորհրդին, դասավորել եմ այբբենական կարգով, որպեսզի արագ հրատարակի ժողովածուն»:<sup>2</sup> Գրքի հրատարակումից հետո նա փորձեց իրականացնել առած-ասացվածքների բովանդակային դասակարգման սկզբունքը. «Արձագանք»-ում հրատարակած «Թիֆլիսեցու հանճարը յուր առածների և ասացվածքների մեջ» հոդվածը առած-ասացվածքների ժամրային հատկությունների բացահայտման և դրանց բովանդակային դասակարգման յուրահատուկ մի փորձ է: Իր նախաձեռնած գործի դրդապատճառների մասին գրում է. «Իբրև այդ գործի աշխատասիրող և ավելի մոտիկ ասացվածքների բնավորու-

<sup>2</sup> Գ.Տեր-Ալեքսանդրյանց, Թիֆլիսեցոց մտավոր կյանք, Թիֆլիս, 1885, էջ

թյանը, փորձում եմ թիֆլիսեցու հանճարը յուր առաջների և ասացվածքների մեջ ավելի շոշափելի կերպով ցույց տալու դիտավորությամբ դասավորել նյութն ըստ բովանդակության, ավելի ամփոփ պատկեր տալու թիֆլիսեցու մտավոր կյանքի, նրա բանաստեղծական ծաշակի և աշխարհծանաչողության մասին»:<sup>3</sup> Իր տեսակետները նա իմնավորում է կոնկրետ օրինակների վկայակոչմամբ: 1.«Փող - իրեւ դրամագլուխ» բաժնում այն առաջ-ասացվածքներն են, որոնք բացահայտում են թիֆլիսեցու վերաբերմունքը փողի նկատմամբ («փուղը միր պստի Աստուծն ի», «Մարդուս բարեկամը իր զիբն է», «Ով փուղ ունե, խոսկը նրանն է»): 2.Փողի արժեքի գիտակցումը, դրա պահպանումը թիֆլիսեցու կողմից. «փուղը պահիլ գուգի»: 3.Փողը մարդուն անիրավությունների է մղում. «փուղի համա իր հորը կու ծախե»: 4.Կենսափորձը մարդուն այլ եզրահանգումների է բերում. «փուղ ծեռի կիղտ է», «ով որ փուղ ունե, խիլք չունե, ով խիլք ունե, փուղ չունե»: 5.Թիֆլիսեցին նաև պարտաճանաչ է պարտքի հանդեպ. «Ասիլ իմ՝ առ ու տուր, խոմ չին ասիլ՝ առ ու կուլ»:

Գ.Տեր-Ալեքսանդրյանցը հեքիաթների տարբերակների վերաբերյալ ուներ որոշակի պատկերացումներ: Յայ և այլ ժողովուրդների հեքիաթային սյուտենների գուգորդմանը, նրանց միջև առկա ընդհանրություններից ելնելով, նա հանգում է տարբերակների իրողության ու միջազգային գուգահեռների խնդրին: «Աշուղ Ղարիբ» հեքիաթի տողատակին գրում է. «Այս հեքիաթը հետևություն է հանգուցյալ Գ.Ախվերդյանի հաղորդած ավանդությանը և բանաստեղծ Լերմոնտովի «Ասսկ Կերսի» անունով հեքիաթի»:<sup>4</sup> Ժողովածուում ներկայացված որոշ հեքիաթներին կից տրվում է դրանց տարբերակների համարոտ շարադրանքը «Խուրթ մերը» հեքիաթին կից ներկայացվում է հինգ տարբերակի համարոտ շարադրանքը:

Բանահյուսական նյութերին առընթեր նշել է նաև դրանց ազգագորական կիրառությունը: Յեղինակի մի վկայությունից պարզվում է, որ «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուի երկրորդ մասը պատրաստում է հրատարակության «Թիֆլիսեցոց սովորությունք» խորագրով, որը «յուր մեջ պետք է պարունակի թիֆլիսեցոց ծեսք, արարո-

<sup>3</sup> Արձագանք, 1886, № 13, էջ 191-192:

<sup>4</sup> Գ.Տեր-Ալեքսանդրյանց, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, էջ 334:

**ԴՈՒԹՅՈՒՆԾ, ԱԽԻՍԱՊԱՉԱՐՄՈՒՆԾ, ԱՎԱՄԴՈՒԹՅՈՒՆԾ»:** Հիշյալ ժողովածուի ճակատագիրը, ցավոք, մինչև օրս անհայտ է: «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուի ծանոթագրություններն ընդգրկում են հավատալիքներ, ծեսեր, սովորույթներ, պատմաշխարհագրական, լեզվաբարբառային բազում տվյալներ: Ժողովածուն գիտաճանաչողական, սկզբնաղբյուրային նշանակությամբ հայ բանագիտության կարևոր նվաճումներից է:

Գ.Տեր-Ալեքսանդրյանցն իր կարճատև կյանքը (50 տարի) նվիրաբերել է հարազատ ժողովողին բոլորանվեր ծառայելու վսեմ գաղափարին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԵՐՍՆԵՐԸ

Հայ-բյուզանդական մշակութային առնչությունների թեման չափազանց տարողունակ է: Նույնը կարելի է ասել նաև հայ-բյուզանդական երաժշտական աղերսների մասին: Ինչ վերաբերում է գուտ հոգևոր երգեցողության ոլորտին, ապա հայկական և բյուզանդական եկեղեցական երաժշտության բնագավառում առկա ընդհանրությունները, անշուշտ, բխում են այդ մշակույթների ծագման ընդհանուր ակունքներից: Գրեթե միաժամանակ ընդունելով ջրիստոնեությունը որպես պետական կրոն, հայերն ու հույները, դարեր շարունակ ապրելով սերտ հարևանությամբ, մշտապես հարստացրել են միմյանց երաժշտական արվեստը նորանոր տարրերով: Բյուզանդիան, լինելով հսկայական մի կայսրություն, բազմազգ պետություն էր, իսկ նրա մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը, տարբեր ազգերի մշակույթների մի հսկական խառնարան: Եվ այս խայտաբղետ միջավայրում հայերի դերը հնուց անտի միշտ էլ բավականաչափ զգալի է եղել: Ջրիստոնեական մշակույթի արևելյան ծյուղին պատկանող այս երկու ազգերի հոգևոր երաժշտության գլխավոր ընդհանրությունը դրանց միաձայն (մննողիկ) բնույթն է, որը նախատեսում է միայն վոկալ (երգային) կատարում (մեներգ և երգչախումբ): Սա շատ կարևոր ընդհանրություն է, քանի որ այն ծևակազմական որոշակի նշանակություն ունի:

Հայոց եկեղեցական երգեցողությունն սկիզբ է առել հինգերորդ դարում՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի օրոք և նրանց ջանքերով, որոնք էլ իենց հայ հոգևոր երգաստեղծության երջանկահիշատակ հիմնադիրներն են: Վաղ միջնադարում, երբ ժամերգությունը դեռևս խստորեն կանոնակարգված չէր, ստեղծագործական ծիրճով օժտված անձինք կարող էին հորինել եկեղեցական որևէ տոնի նվիրված երգեր, որոնք կատարվում էին համապատասխան առիթներով: Սակայն VII-VIIIդդ. այդ երգերն այնքան բազմացան, որ հարկ եղավ

կանոնակարգել դրանք: Կանոն բառը և այդ երևույթը հայոց եկեղեցի է ներթափանցել բյուզանդական եկեղեցուց, սակայն հայոց եկեղեցում այն արագորեն տեղայնացվել է և շուտով ստացել նաև շարական հոմանիշը, որը բազմիմաստ բառ է: Այն չափազանց տարողունակ և ծկուն է՝ նեղ իմաստով նշանակում է հոգևոր երգ, միաժամանակ արտահայտում է կանոնի իմաստը, այսինքն՝ երգերի շարք, կարգ կամ սարք, իսկ ավելի լայն իմաստով՝ շարակնոց (շարականների ժողովածու): Այսուհանդերձ նշելի է, որ հունարեն կանոն բառը դարերի ընթացքում ոչ միայն դուրս չի մղվել շրջանառությունից, այլև ներթափանցել է այլ բնագավառներ ևս, այսինքն՝ հայկականացել է:

Բյուզանդական եկեղեցական երգեցողության մեջ կանոնը սկզբնապես (VIIIդ. սկզբներին) բաղկացած է եղել ինը միավորից, որոնցից առաջինը իրմոսն էր, իսկ հաջորդները տրոպարներն էին: Վաղ միջնադարում իրմոսը իին կտակարանի հարասությամբ տեքստով մի երգ էր, որին հաջորդող տրոպարները պետք է նմանակեին իրմոսի սիլլաբիկան (հունարենի առանձնահատկություններից բխող տաղաչափության առանձնահատուկ շեշտադրությանը): Այս ինը երգի շարքից շուտով դուրս է մղվում երկրորդ երգը, իսկ տրոպարները դառնում են 4-6, սակայն ինը գաղափարը հարատևում է, հավանաբար որպես սրբազն թիվ:

Հայոց Շարակնոցի կանոնները նույնպես բաղկացած են ինը միավորից (Եթե Հարց-ի գործատունը համարենք առանձին միավոր): Սակայն բուն երգերը մեզանում այլ բնույթ ունեն: Սրանք են՝ Օրինաթիւն (Մովսես մարգարեի «*Օրինացուք զտէր, զի փառօք է փառաւորեալ*» բնաբանից), Հարց (Բաբելոնի երեք մանկանց «*Օրինեալ ես տէր հարցն մերոց*» սկզբնատողի նախավերջին բառից), Մեծացուսց (Սրանք Աստվածածնին ձննված ներբողներ են, սերված «*Մեծացուսց անձմ իմ զտէր, և ցնծասցէ հոգի իմ փրկչավ իմով*» բնաբանից), Ողորմեա (Դավթի 50-րդ Սաղմոսի «*Ողորմեա ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեամ քում*» սկզբնատողից), Տէր յերկնից (Դավթի 142-րդ Սաղմոսի «*Օրինեցուք զտէր յերկնից*»-ի վերջին բառերից), Մանկունք (Դավթի 112-րդ Սաղմոսի «*Օրինեցէր մամկունք զտէր, և օրինեցէր զանում տեառն*» սկսվածքից), ինչպես նաև ճաշի ժամին երգվող, իենց ճաշու կոչվող շարականներն ու երեկոյան ժամերին

Երգվող Դամբարձի-ները («Դամբարձի զաշս իմ ի լերիմս, ուստի եկեսց իմմ օգնութիւն» բնաբանից):

Ինչպես բյուզանդական, այնպես էլ հայոց հոգևոր երգերի թե՛ տեքստը, թե՛ երաժշտությունը հորինում էր միևնույն անձը, այսինքն, կարելի է ասել, որ սրանք ստեղծվում էին բացառապես երգելու համար: Յեղինակների անունները հիմնականում կարելի էր գտնել երգերի տների սկզբնատառերի աջրոստիկուներում:

Դաջորդ կարևոր ընդհանրությունն այն է, որ և հայոց Շարակնոցի, և բյուզանդական Օկտոքոս-ի հիմքում ընկած է ութայնի (օսմորգասու) համակարգը, որոնցից չորսը պլազալ են, իսկ մյուս չորսը՝ ավտենտիկ: Այս ութ հիմնական ծայնեղանակներից յուրաքանչյուրը թե՛ հայոց, թե՛ հունաց Եկեղեցիներում տոնացույցի տարեկան պարբերույթի ընթացքում մեկական շաբաթ համարվում է օրվա գլխավոր ծայնը՝ սկսած Առաջին ծայնից, որը Քրիստոսի Դարության կամ Սուրբ Զատկի տոնի առաջին շաբաթվա ծայնն է: Հայոց Եկեղեցական այս ծայնեղանակները, ինչպես և բյուզանդական էքոս-ները կամ իխոս-ները, գործնականում ոչ թե իին հունական ծայնաշարի պատճենումն են սոսկ, այլ դրանցից յուրաքանչյուրին հատուկ մեղեդիական Ելեջների մի-մի ուրույն համակարգ: Սրանց երաժշտական բաղադրիչը ծավալվում է տվյալ ծայնեղանակին կամ իխոս-ին ավանդաբար ներհատուկ ծիրում: Այս համատեքստում տեղին է նշել, որ «Մուզիկալիա Թափուկուու»-ն (թ. I, M., 1973, ս. 774) հավաստում է, որ Բյուզանդական կայսրության բնակչության բազմաթեզվությունն ու դրա մշակութային ավանդույթների բազմազանությունն արտացոլված է հենց բյուզանդական երաժշտության մեջ, և որ Եկեղեցական արարողության մեջ, հունարենի կողքին, գործածվում էին նաև ասորերենը, հայերենը, դպտերենը և այլն: հատկապես կարևորվում է զարգացած միջնադարում (XIV-XVդդ.) հայկական մեղեդիական Ելեջների ինտենսիվ ազդեցությունը բյուզանդական Եկեղեցական երգեցողության վրա: Չմոռանանք, որ արդեն XVդ. կեսին՝ 1453-ին արծանագրվեց Կոստանդուպոլիսի անկումն օսմանյան բարբարոսական ներխուժմամբ: Սակայն մշակութային ոչ մի հակակշիռ չունենալով Կոստանդուպոլսում դարեր ի վեր գոյություն ունեցող ավանդական արվեստներին, մահմեդական այս տիրահռչակ ցեղը ստիպված էր համա-

կերպել այդտեղ գործող հարյուրավոր հայկական ու հունական եկեղեցիների և դրանցում մշտապես հնչող քրիստոնեական ժամերգության հետ: Ուշագրավ է, որ հայոց և հունաց որոշ եկեղեցիներ այնքան մոտ էին գտնվում միջյանց, որ մեկում հնչող երգեցողությունը երբեմն հստակորեն կարելի էր լսել մյուսում: Եվ բնավ էլ պատահական չէ, որ դեռևս վաղ միջնադարում, հունարենից կատարված առաջին թարգմանությունների շարքում առկա են նաև մի քանի սիրված հոգևոր երգերի տեքստեր, որոնցից երկուսը մինչև օրս էլ հայոց ժամագրքի կարևոր ծիսական նմուշներն են համարվում: Դրանք են՝ առավոտյան ժամու «*Փառք ի բարձունս*» և երեկոյան ժամու «*Հոյս զուարք*» հոգեթով երգերը, որոնք վաղուց ի վեր դարձել են համարիստոնեական ծիսական երգեր:

Նշելի է նաև այն խոսուն փաստը, որ XIX դ. սկզբներին (1815-ին), գրեթե միաժամանակ, Կոստանդնուպոլսում ստեղծվեցին Նոր հայկական կամ Լիմոնճյանի, ինչպես նաև նոր հունական կամ Քրիզանթեսի ծայնագրության ոչ գծային (առանց հնգագծի) համակարգերը, որոնց երկուսի նպատակն էլ նույն էր, այն է՝ հետագա աղավաղումից փրկելու համար ծցգրտորեն գրառել իրենց ազգային հոգևոր երաժշտական ժառանգությունը:

Այսպիսով, վերը նշված բոլոր ընդհանրություններով հանդերձ, հայկական և բյուզանդական հոգևոր երաժշտական մշակույթներից յուրաքանչյուրն ինքնատիպ երաժշտական մտածելակերպի արգասիք է: Դրանց մեղեղիները, խարըսխված լինելով իրենց ազգային լեզուներին հատուկ ինտոնացիաների յուրահատկությունների վրա, ինչպես նաև դարերի ընթացքում սնվելով ժողովրդական և աշխարհիկ մասնագիտացված երգարվեստի լավագույն ծեռքբերումներից, հույժ ազգային և ինքնատիպ բնույթ ունեն:

## ԽԱԶԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ (Ծննդյան 130-ամյակի առթիվ)

Ականավոր հայագետ՝ իրավագետ, ազգագրագետ, պատմաբան Խաչիկ Ստեփանի Սամվելյանը ծնվել է 1873թ. օգոստոսին, Ղրիմի (Տավրիկյան նահանգ) Կերչ քաղաքում: Թեոդոսիայի գիմնազիան ավարտելուց հետո, իրավաբանական իիմնավոր կրթություն է ստացել Սանկտ Պետերբուրգի (1895-1900թթ.), ապա Ենայի (Գերմանիա, 1901-1903թթ.) համալսարաններում: Այնուհետև, շուրջ մեկ քսանամյակ, աշխատել է Կովկասի մի շարք հայաբնակ կենտրոններում՝ ծավալելով բազմաթեղուն գործունեություն՝ որպես լրագրող աշխատակցել է հայերեն ու ռուսերեն մի շարք պարբերականների, հրատարակել-խմբագրել «Հոսանք» (Թիֆլիս, 1906-1907թթ.) և «Փայլակ» (Շուշի, 1915-1917թթ.) լրագրերը: Նրան նույնքան էլ հարազատ է եղել մանկավարժությունը՝ դասավանդել է Եջմիածնի Գևորգյան ճեմարանում, Նոր-Նախիջևանի և Շուշու թեմական դպրոցներում, Թիֆլիսի Հովհաննյան օրիորդաց դպրոցում, Բաքվի և Ալեքսանդրապոլի գիմնազիաներում, ակտիվության մասնակցել է ժամանակի հասարակական-քաղաքական կյանքին:

Այդուհանդերձ, Խ.Սամվելյանի տարերքը հենց սկզբից առավելապես դրսնորվել է գիտական գործունեության ասպարեզում:

Ելակետ ունենալով իրավագիտությունը և հասարակագիտությունը, նա խորացավ հատկապես հայ սովորութական իրավունքի ու պետական իրավունքի և այս երկուսի փոխառնչակցության կճռուտ խնդիրների հետազոտման մեջ: Տակավին ուսանողության տարիներին (1902թ.) «Կավկազսկի վեստնիկ»-ում հանդես գալով հայերի ընտանեկան սովորութական իրավունքի քննությանը նվիրված ակնարկներով, հետագայում նա այս և հարակից մի շարք հարցերի անդրադարձավ «Ազգագրական հանդես»-ի էջերում հրապարակված հոդվա-

ծաշարով՝ հանգամանալից հետազոտմանք ընդգրելով հարցերի առավել լայն շրջանակ: Սովորութական իրավունքին վերաբերող նյութի խոր իմացությունը և տեսական-մասնագիտական լիակատար պատրիաստականությունը հնարավորություն ընձեռեցին Խ.Սամվելյանին՝ արմատական քննության ենթարկելու Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» (Վիեննա, 1911թ.) որպես հայոց քաղաքացիական իրավունքի հուչարձան և, ըստ ամենայնի, լուծելու վերջինիս ակունքների խնդիրը: Խ.Սամվելյանն այս ամենի հետ մեկտեղ, որպես «Ազգագրական հանդես»-ի խնդրագրական հանձնախմբի և Հայոց ազգագրական ընկերության անդամ՝ գործուն մասնակցություն է բերել դրանց աշխատանքներին:

1920թ. նոր հեռանկարներ են բացվում Խ.Սամվելյանի առջև: Շուրջ չորս տարի աշխատելով, նախ, Ալեքսանդրապոլի քաղաքային գրադարանում, ապա Եջմիածնի գիտական ինստիտուտում, Հայկական ԽՍՀ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատում, 1924-ին կառավարության որոշմանք նա նշանակվում է Հայկական ԽՍՀ Պետական կենտրոնական արխիվի տնօրեն, և պաշտոնավարում է մի ամբողջ տասնամյակ: Խ.Սամվելյանը գործի անցավ այն խոր գիտակցությամբ, որ արխիվն ամեն մի պետական կազմավորման տարեգրության վավերագրապահոցն է, որպիսին նորինորո պետք է ստեղծվեր նորակազմ Խորհրդային Հայաստանում: Կարծ ժամանակամիջոցում արխիվում կենտրոնացվեցին քաղաքական աննպաստ անցքերի բերումով, աստ ու անդ սփռված վավերագրերի կորստից մազապուրծ պատառիկները, համակարգվեցին գիտականութեն և դարձան հայ ժողովրդի պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրներ, ժամանակի ընթացքում համալրվելով բազմաթիվ ու բազմազան նորանոր փաստաթթերով: Այսպիսով, Խ.Սամվելյանը եղավ Հայաստանի պետական կենտրոնական արխիվի հիմնադիրը:

Այնուհետև Խ.Սամվելյանը բովանդակ ուժերը կենտրոնացնում է գիտահետազոտական և ուսումնամանակավարժական աշխատանքների վրա՝ երկար տարիներ, մինչև կյանքի վերջը (16.10.1940թ.) դասավանդելով Երևանի պետական համալսարանում և Հայկական մանկավարժական ինստիտուտում, միաժամանակ աշխատում ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղում (1920-1940թ.), ուր դրսևորվում են Խ.Սամվելյանի՝ այդ լայն մտահորիզոնով ու խոր

իմացություններով օժտված գիտնականի ողջ կարողությունները: Խ.Սամվելյանին հատուկ է եղել քննախույզ՝ համադրական, միաժամանակ վերլուծական մտքի ուժը, որը հստակորեն դրսևորվել է տակավին դարասկզբի նրա երկերում, մասնավորապես ազգագրության բնագավառում: Նա առաջիններից էր, եթե ոչ առաջինը, որ ժամանակի գիտության մակարդակի ընծեռած հնարավորություններով, արդեն բավականաշափ կուտակված նյութերը փորձեց ենթարկել պատմական հետադարձ վերլուծության: Այդ բանը լիակատար դրսևորում ստացավ արդեն նրա խորհրդային շրջանի երկերում, մասնավորապես, «Հին Յայաստանի կուլտուրան» եռահատոր աշխատության մեջ (Երևան, հ. 1, 1931, հ. 2, 3, 1941թթ.), ուր համահավաք հետազոտության ենթարկվեցին մինչ այդ հայտնի ազգագրական, մատենագրական, հնագիտական, բանահյուսական, վիմագրական, պատմագիտական ու այլ կարգի նյութերը, և այդ ամենի հիման վրա վերականգնվեց հին Յայաստանի մշակույթի հնարավոր ամբողջական պատկերը՝ հասարակագիտական ու մշակութաբանական նորովի պարբերացման կուր համակարգով:

Խ.Սամվելյանի արդեն դասական դարձած սույն երկասիրությունը նախապատրաստված էր նրա շուրջ քառասնամյա մեղվածան գիտական գործունեությամբ: Մինչ այդ, մասնակի հարցերի քննությանը նվիրված տասնյակների հասնող հոդվածներից բացի, նա իրատարակել էր նաև մի քանի ստվարածավալ աշխատություն՝ «Նախնադարյան հասարակության պատմություն», «Հին Արևելքի պատմություն», «Խալդական հասարակություն» բուհական ծեռնարկները (1930-ական թթ.), շարադրել հայ ժողովրդի պատմության դասագրքի՝ այդ ժամանակ տակավին անմշակ հնագույն և վաղ ավատատիրության շրջանի բաժինը՝ նախնադարյան հասարակությունից մինչև Արշակունիների անկումը, «Յայ հին իրավունքի պատմությունը» (1939թ.) ստվար աշխատանքը, ինչպես նաև «Խմբային ամուսնության մնացուկները հայերի մեջ», «Մայրական իրավունք», «Արյան վրեժ և փրկանք», «Առևանգում և փրկանք», «Յայերի ժառանգական իրավունքը», «Սիմբոլը հայ սովորույթներում», «Ստրկությունը հին Յայաստանում» և այլ մանրապատում, բայց հույժ արժեքավոր գործերը, կազմել «Յայ ազգագրության պատմություն» և «Յայ ազգագրության

մատենագիտություն» (Ե.Լալայանի համահեղինակությամբ) աղբյուրագիտական աշխատությունները (վերջիններս՝ անտիպ):

Այնքան համապարփակ է Խ.Սամվելյանի ժառանգությունը, որ անհնարին է սեղմ հոդվածի շրջանակներում սպառել դրա գեթ հակիրճ բնութագիրը: Ավելացնենք, սակայն, որ նա նույն հաջողությամբ զբաղվել է բանագիտությամբ և բանասիրությամբ՝ Արմֆանի հրատարակությամբ 1941թ. (Ետմահու) լույս ընծայված «Քյոռ Օղլի» վիպերգության համար գրել է հետազոտական բնույթի ծանրակշիռ առաջարկան, «Դայ աշխատանքային երգերը» հետազոտությունը, տարրեր առիթներով գրականագիտական հմտալից վերլուծության է Ենթարկել XIXդ. երկրորդ կեսի և XXդ. դարասկզբի ռուս գրականության խոշոր ներկայացուցիչների (Գարշին, Գոգոլ, Չեխով, Տոլստոյ, Տուրգենև, Գորկի) գեղարվեստական ստեղծագործությունները և այլն:

Խ.Սամվելյանն ինչ ձեռնարկել է, արել է բարձր պատասխանատվությամբ, հասցնելով այն հնարավոր կատարելության: Ահա ինչու նա դասվում է հայագիտության մեջ երախտավորների շարքը:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՍԻԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

ԱՄՁԾ դրամաշնորհի միջոցներով «Ակունք» ԷՄՀԿ ՀԿ-ն իրականացրել է «Ընտանեկան բռնությունները Հայաստանում» թեմայով սոցիոլոգիական հետազոտություն, որի ընթացքում հատուկ տեղ է հատկացվել նաև ընտանեկան բռնությունների նկատմամբ բնակչության վերաբերմունքի ուսումնասիրությանը:<sup>1</sup>

Այս հարցը կարևորվում է այն բանում, որ անձի կարծիքները և վերաբերմունքը մարդու վարքի կարևոր հոգեբանական կարգավորիչներ են և որոշակի պայմաններում կարող են դրդել տվյալ գործողությանը, այսինքն՝ հանդես գալ որպես դրդապատճառ: Բռնության էությունը բացահայտելու համար կարևորվում է դրա առաջանան պատճառների բացահայտումը: Այս հարցում կա երկու հիմնական մոտեցում: Առաջինը բռնությունը կապվում է մարդու, հատկապես, տղամարդու բնույթի հետ: Երկրորդ մոտեցմանը՝ բռնարարքը համարվում է մշակութային, սոցիոնորմատիվ բնույթի երևույթ:<sup>2</sup> Առ այսօր, առաջին տեսակետի կողմնակիցների թիվը գերիշխում է, սակայն վերջին տարիներս երկրորդի կողմնակիցների քանակը ստվարանում է:<sup>3</sup> «Ընտանեկան բռնություններ» որակումն ունեցող գործողություն-

<sup>1</sup> Ընտանեկան բռնությունները Հայաստանում, Սոցիոլոգիական հետազոտություն, Եր., 2002:

<sup>2</sup> Г.М.Брандт, Природ женщины, Екатеринбург, 2000; Роберт Коннел, Маскулинности и глобализация.-Учебные материалы Ереванской летней школы по гендерной культуре, Ер., 2002, с. 871; Самвел Сукасаян, Семья в условиях кризиса и ее неврозогенное значение.- Հոգեկան առողջությունը և քրիստոնեությունը, Եր., 2001: Olivier Galland, Adolescence, post-adolescence, jeunesse: retour sur quelques interpretations.- "Revue française de sociologie", 42-4, 2001.

<sup>3</sup> Пегги Ривз Сидней, Социально-культурный контекст насилия; Кросс - культурное исследование.- Гендерные исследования, 2001, 16, с. 88-113.

ների գնահատականները պաշտոնական շրջաններում հիմնվում են միջազգային ստանդարտներին համապատասխանող օրենսդրական դաշտի վրա: Դետևաբար բաց է մնում այն հարցը, թե առօրյա կյանքում բնակչության վերաբերմունքը և գնահատականներն արդյո՞ք համընկնում են վերոհիշյալ գնահատականների հետ: Գործնական մեծ կարևորություն ունի ընտանեկան բռնարարքների կոնկրետ տեսակների նկատմամբ վերաբերմունքի տեղական առանձնահատկությունների, բնակչության զանազան շերտերի ընկալման յուրահատկությունների բացահայտումը: Ուստի, այստեղ կշոշափվի այն հիմնահարցը, թե օրենսդրական ակտերով «ընտանեկան բռնարարք» համարվող երևույթների նկատմամբ ինչպիսին է հարցորդների վերաբերմունքը: Դամարվում են դրանք բռնարարք, թե՝ ոչ: Դայտնի է, որ կոնկրետ գործողության նկատմամբ անձի արմատացած կարծիքը և վերաբերմունքը կարող են ինքնաբերաբար նպաստել դրա վերարտադրությանը:

Ընդհանուր առմամբ, ֆիզիկական բռնությունների նկատմամբ հարցորդների վերաբերմունքը խիստ բացասական է: Ծեծելը՝ մարմնական վնասվածքներ հասցնելով, դանակով կամ այլ իրերով հարվածելը, սեռական բռնությունը հարցորդների շուրջ 99%-ը համարում է բռնություն, իսկ ահա ապտակելը և իրելը 7.1%-ը բռնություն չի համարում, իսկ 5.4%-ն էլ դժվարացել է պատասխանել: Այս հարցին կատեգորիկ «բռնություն է» տարբերակով պատասխանողների տեսակարար կշիռը կազմում է 76.1%: Այստեղ էական դեր է խաղում երեխաների նկատմամբ առօրյայում հաճախ կիրառվող պատժամիջոցների թույլատրելիությանը վերաբերող կարծիքը:

Դոգեբանական բռնությունների կոնկրետ տեսակների նկատմամբ հարցորդների վերաբերմունքն էապես տարբեր է. բռունցքներով սպառնալիքները բռնարարք չեն համարել հարցորդների 13.9%-ը, կենցաղային առարկաներով՝ 7.3%-ը, դանակով կամ այլ զենքով՝ 3.9%-ը: Տարբեր կարգի արգելքները բռնարարք չեն համարում հարցորդների 22%-ը, իսկ երեխաների հետ շփման արգելքը՝ ընդամենը 8.9%-ը: Վերջին բնրույթի նկատմամբ բացասական վերաբերմունքը պայմանավորված է երեխաների կարևոր դերով, որ ավանդաբար գո-

յություն ունի հայ հասարակության մեջ: Յարկ է նշել, որ ավանդական ընտանեկան դերերի բաշխումը Ենթադրում էր կնոջ տնային տնտեսութիւն լինելու հանգամանքը, ուստի երբեմն որոշակի արգելքներ կային կնոջ աշխատանքի նկատմամբ: Ավանդական այս պատկերացումներով է պայմանավորված աշխատանքի նկատմամբ որոշ հանդուժողական վերաբերմունքը:

Յամենատարար հանդուժողական վերաբերմունք է նկատվում «բառային» բռնությունների նկատմամբ: Թեթև վիճաբանությունները, ըստ եռթյան, զանգվածային բնույթ են կրում, և պատահական չեն, որ հարցորդների ընդամենը 1.6%-ն է ուղղակի նշել, որ դրանք բռնարար են: Անհարկի դիտողությունները, արհամարհանքի դրսւորումները, առանց հայինյանքի կոպիտ խոսելառը բռնարար է համարել 6-14%-ը: Յարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հայինյանքների նկատմամբ վերաբերմունքին: Յարցվողների 39.9%-ը հայինյանքը համարում է բռնություն, 25.6%-ը՝ մասամբ, 26.4%-ը բռնություն չի համարում, 8.1%-ը դժվարանում է պատասխանել: Յայինյանքի նկատմամբ վերաբերմունքը պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով՝ ո՞ւմ կողմից է կիրառվում, ո՞ւմ նկատմամբ հայինյանքի տեսակներով, արտաբերման ձևով և այլն: Միևնույն ժամանակ, հասարակության որոշ շերտերի շրջանում տարածված են զանազան ասացվածքներ, օրինակ՝ «Յայինյանք օրինանք է»: Շատերն անգամ հումորով են վերաբերվում այդ երևույթին:

Ընտանեկան բռնարարքների նկատմամբ բնակչության զանազան շերտերի վերաբերմունքի առանձնահատկությունների վերաբերյալ նյութերը վերլուծելիս, ընթացքում նկատվում են մի շարք օրինաչափություններ: Կանայք տղամարդկանց համեմատ ավելի բացասական վերաբերմունք ունեն բռնարարքների համարյա բոլոր ձևերի նկատմամբ: Սա բացատրվում է այն բանով, որ ընտանեկան բախումների հիմնական գոհերը կանայք են, ուստի բռնությունները նրանց վրա հոգեկան ավելի բարդ հետևանքներ են թողնում: Յատկանշական է, որ կանանց և տղամարդկանց կարծիքներում նկատվում են եական տարբերություններ բռնարարքների մի քանի ձևերի նկատմամբ՝ հայինյանքի, ծնողների և այլ ազգականների հետ շփման արգելքի, աշխատանքի արգելքի: Բռնարարքների այս տեսակները հավանաբար

կարելի է դիտարկել որպես ավանդական սոցիոնորմատիվ մշակույթի տարրեր, որոնք առավել առկա են տղամարդկանց վարքի և գիտակցության մեջ:

Դայ գիտական ու հրապարակախոսական շրջանակներին խիստ հոգում է այն հարցը, թե ընտանեկան բռնարարքների տարածվածությամբ ինչպիսին է Հայաստանի վիճակը այլ երկրների համեմատ: Բռնարարքների դրսերման կոնկրետ ծևերի վերաբերյալ այլ երկրների տվյալները դեռ վերլուծության կարիք են զգում, սակայն դրանց նկատմամբ վերաբերմունքի խնդրում ՌԴ-ում արված սոցիոլոգիական հետազոտությունների նյութերը տալիս են էթնոհամեմատությունների հնարավորություն:<sup>4</sup> Այդտեղ հարցորդների 71.8%-ն է ծեծը համարել բռնություն, իսկ Հայաստանում՝ 95.0%-ը, հայիոյանքը համապատասխանաբար՝ 30.1%-ը և 39.0%-ը, այս կամ այն գործով զբաղվելու արգելքները՝ 8-20%-ը և 55.1-78.6%-ը: Ինչպես վկայում են բերված թվերը բռնարարքների նկատմամբ Հայաստանի բնակչության վերաբերմունքն անհամեմատ բացասական է, քան Ռուսաստանում, որն անուղղակի ծևով մատնանշում է այդ բռնարարքների կիրառման հավանական չափերը:

Ընտանեկան բռնարարքների ընկալման օրինաչափություններից են նաև հետևյալները.

ա) կրթական բարձր մակարդակ ունեցողներն ավելի բացասական վերաբերմունք ունեն բռնարարքների նկատմամբ, քան ցածր մակարդակ ունեցողները: Այս օրինաչափությունը նկատվել է նաև ՌԴ-ում իրականացված հետազոտություններում:

բ) Ավագ տարիքային խմբերի և գյուղական բնակչության մեջ ավելի թույլ է դրսերվում բացասական վերաբերմունքը, քան երիտասարդների և քաղաքային բնակչության շրջանում: Այս փաստերը մեկ անգամ ևս ապացուցում են, որ ընտանիքի մասին ավանդական պատկերացումները, ըստ որի տղամարդն ընտանիքի գլխավորն է և հիմնական կերակրողը, իսկ կինը տնային տնտեսությի է և պետք է

<sup>4</sup> С.В.Кочеткова, Опыт анализа насилия в семье.- Социологические исследования, 1999, № 1.

Ենթարկվի ամուսնուն, բնակչության նշված շերտերի մեջ համեմատաբար ավելի մեծ չափով են պահպանվել:

Ընտանեկան բախումների լուծման ձևերի վերաբերյալ հասարակական կարծիքը նույնպես կարևոր նշանակություն ունի գործնական աշխատանքներ կազմակերպելու առումով: Ընտանեկան բռնարարքներն իրավապահ մարմինների միջոցով կանխարգելելու վերաբերյալ հարցորդների կարծիքները բավական միանման էին: Այն հարցին, թե «Ներընտանեկան բախումների դեպքում որքանով է ճիշտ դիմել իրավապահ մարմիններին», հարցորդների ընդամենը 1.8%-ն է պատասխանել «անհրաժեշտ է ծանր դեպքերում», 73.2%-ը՝ «անհրաժեշտ չէ», 7.6%-ը դժվարացել է պատասխանել, 1.0%-ն այլ պատասխան է տվել: Եվ այստեղ պատճառն իրավապահ մարմիններ դիմելու ֆինանսական ծախսերի անմատչելիությունը չէ, այլ ընտանեկան բախումները չտարածելու ծգտումը: Իրավապահ մարմիններին չդիմելու պատճառներից նշվում են «համարում են ընտանիքի ներքին խնդիր», 75.5%-ը, «ընտանիքի անդամների բացասական վերաբերմունքը», 4.1%, «շրջապատի բացասական վերաբերմունքը»՝ 5.2%, «այդ քայլը կարող է ավելի սրբել բախումը»՝ 10.6%, «դիմելուց հետո համատեղ կյանքն անհնարին կդառնա»՝ 10.6%, «ֆինանսական հնարավորությունների բացակայության պատճառով»՝ 1.9%, այլ պատճառներ է տվել հարցորդների 1.9%-ը (պատասխանների գումարը մեծ է 100%-ից, քանի որ ենթադրվում էր դրանց մի քանի տարբերակ): Այս հարցերի նկատմար բնակչության տարբեր շերտերի կարծիքները խիստ համընկնում են, ինչը վկայում է, որ ընտանիքի բոլոր անդամները ծգտում են ընտանեկան բախումները լուծել «տան պատերի ներսում» և թույլ չտալ դրանց հետագա խորացումն ու տարածումը:

## Մոհամմադ Մալեք-Մոհամմադի ԵՊԴ, (Իրան)

### ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՍԴՈՑ»-ՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ԴԵՎԵՐԻ ԵՎ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԷԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՉ

Յինգերորդ դարի փիլիսոփա Եզնիկ Կողբացու բարձրարժեք քննադատական երկը հատկապես առատ նյութ է պարունակում հիմ հայկական և իրանական (մասնավորապես՝ գրադաշտական) ժողովրդական հավատալիքների վերաբերյալ:<sup>1</sup>

Իր առաջին և երկրորդ գրքերում Եզնիկը հերքում է բուն հայկական ու օտար, բայց արդեն հայացած ժողովրդական ընթացումները, թեև հայերին գրեթե չի հիշատակում («ասեն», «վասն հարցնելոյ ոնանց թե...» և այլ արտահայտություններից պետք է եզնակացնել, որ խոսքը հայերին է վերաբերում): Եզնիկի հերքած գրեթե բոլոր հեթանոսական պատկերացումները կարելի է գտնել մերօրյա հայ ժողովրդական հավատալիքներում:<sup>2</sup>

<sup>1</sup> Եզնիկի ու նրա «Եղծ աղանդոց»-ի վերաբերյալ տես, Վ. Սոմունճեան, Կենացիր և նկարագիր Եզնկայ վարդապետի Կողբացու, «Բազմավեպ», 1893, էջ 8-16, 161-170, 273-281, 329-334, 345, 353-357: Սիմոն Վերեր, Եզնկայ «Եղծ աղանդոց» գրքի ժամանակն ու վավերականութիւնն, Բազմավեպ, 1897, դեկտեմբեր, Յավելուած, էջ 1-6, 1898, էջ 147-151, 261-266: Յովիհաննես Թորոսեան, Եզնիկ և իր երկասիրութիւնն, «Բազմավեպ», 1889, էջ 17-20, 108-110, 119-202, 313-318, 385-388: Ն. Ալոնց, Քննական նշանակություն Եզնիկի մասին, «Բազմավեպ», 1925, էջ 196-200, 294-298, 366-371, 1926, էջ 12-17, 69-72, 108-113: Մ. Խոստիկեան, Ազգագրական նիւթեր Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի մեջ, ԱՀ, XVI, 1917, էջ 137-149: Ա. Գարամանլեան, ժողովրդական հաւատքը Եզնիկի քով, «Հանդէս ամսօրեայ», 1931, էջ 231-246, 423-432, 489-517: Ա. Գարամանլեան, Երկրորդական աստուածներ և ոգիներ Եզնիկի քով, «Հանդէս ամսօրեայ», 1932, էջ 483-509, 588-613: Գ. Տեր-Մկրտչեան, Դ. Ածառեան, Քննութիւն և համենատութիւն Եզնկայ նորագիւտ ծեռագրին, Վիեննա, 1904: Ա. Ա. Արքահամյան, Եղծ աղանդոց, Եր., 1994: Մ. Մինասյան, «ճառք ընդդեմ աղանդոց», հ. 1, 2, Ժն., 1992: Եզնկայ Կողբացու Բագրեանդայ Եպիսկոպոսի Եղծ Աղանդոց, ի վեճնետիկ, ի սուրբն Ղազար, ՌՄԵ:

<sup>2</sup> Տես Մ. Արենցյան, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 12-13:

«Եղծ աղանդոց»-ում, բնականաբար, քննության է առնվում նաև միաստվածության հարցը, և այդ հիմքի վրա հերքվում են բազմաստվածությունից եկող երկրորդական կարգի աստվածները, ոգիները և այլ պաշտամունքային իրակույթներ: Եզնիկի երկում հանդիպում են նի կողմից՝ աստվածությունների անուններ, ինչպես՝ *Որմիզդ, Ահրիման (Խարաման), Դիոս, Մյուս* կողմից՝ ոգիների անվանումներ, ինչպես՝ արալեզ, շահապետ (Վայրաց), նահանգ, յուշկապարիկ, պարիկ, պայ, ծովացուլ, վիշապ, համբարու ևն: Այստեղ կփորձենք ընդհանուր ձևով անդրադառնալ Վերոհիշյալ ոգիներին. սկզբում կբերենք Եզնիկի վկայությունը և նրա վերաբերմունքն այդ ոգիների նկատմաբ, ապա ուրիշ ուսումնասիրությունների նյութն այս կապակցությամբ:

Դևերի տեսակները, ըստ Եզնիկի, բաժանված են չորս հիմնական խմբի.

1. Ժողովրդական երևակայական դևեր, որոնք իրականում գոյություն չունեն և սուսկ մարդու հորինվածքի արդյունք են (անգո դևեր). սրանք հաճախ պատկերացվում են կենդանակերպ.

2. Սատանա կամ դև, որը վոնդվել է աստծոն կողմից և մարդու ողջ կյանքի ընթացքում մասնակից է նրա բոլոր հակաաստվածային արարքներին. իսլամական՝ Շեյքան, Իբլիս.

3. դև, որպես մարդկային չարացած հոգի, Ներքին սատանա, իսլամական՝ Նաֆս.

4. անմարմին ոգիներ և նրանց աներևույթ աշխարհը. դրանք բոլորն ել զանազան երևույթների անծնավորումն են (գոյակ դևերը, արաք. Զին):

Եզնիկի երկում դեռ բառը նշանակում է չար ոգի, հուշկապարիկները՝ պարիկներն ու համբարուները նույնպես դևեր են: Ըստ իրանական վաղ աշխարհընկալման՝ daiwa-ները եղել են կարևոր աստվածություններ, ինչպես ხացա-ն, որ հետագայում դարձավ «աստված» ընդհանուր գաղափարի արտահայտիչը: Իսկ աշխարհի դուալիստական ընկալումն ավելի ուշ, գրադաշտական վարդապետության մեջ, արտացոլում գտավ Ահուրամազդա (Ahura-Mazda)-Ահրիման (Ahra-Mainyu) հակադրության սահմաններում:<sup>3</sup>

<sup>3</sup> Գ.Ասատրյան, Դիվականք, Իրան Նամե, Եր., 1995, էջ 29:

Անգոր դևերը կարող են լինել ամերկակայելի փոքր կամ, ընդհակառակը, չափազանց վիթխարի չափերի: Սրանց առաջին տեսակը, այսինքն՝ թզուկները, ժողովրդական հավատալիքներում կոչվում են ածուճ-պաճուճ կամ աջոջ-մաջոջ, որոնք Ալեքսանդրի գրուցի գոգ-մագոգներն են և Ղուրանի յաջուջ-մաջուջները: Ի տարբերություն թզուկների, հսկաները հայ ժողովրդական հավատալիքներում շատ ավելի մեծ տեղ են բռնում, նրանք հաճախ նաև կոչվում են դև:<sup>4</sup>

Առաջին կարգի դևերը մարդկանց կողմից հորինվել են աշխարհում տեղի ունեցող աղետների և ավերածությունների սաստկությունը ցույց տալու նպատակով, քանի որ ժողովուրդը հավատում էր, որ քաղաքներ և գյուղեր ավերելիս, այնտեղ դևեր են բնակվում ու հայտնվում շինուու կերպարանքներով (ինչպես բացատրում է Եզնիկը՝ «Բայց դրանք ասվում են ոչ թե նրանց գոյության համաձայն, այլ ըստ մարդկանց երևակայության...: Ուրեմն պարզ է, որ հուշկապարհիներն ու իշացուլերը անուններ են՝ առանց էակների...: Եվ դրանք ոչ թե ինչ-որ էակներ են, այլ ստահոդ անուններ ու դևերից մոլորված մտքերի ցնդարանություններ...»):<sup>5</sup>

Այսը, Յամբարուն, Յուշկապարհիկը, Պարիկը, Պայը, Արալեզը, Նահանգը և Շահապետը, որոնց մեծ մասն իրական ծագում ունեն, մեր դասակարգման առաջին կարգի դևերից են:

Դատկանշական է, որ շատ առասպելական կենդանիների ծննդավայրը, ըստ դիցարանական պատկերացումների, համարվում էր ջուրը կամ ծովը (ծովացուլեր, հրեղեն նժույգներ և այլն):

Եզնիկը, բերելով Աստվածաշնչի խոսքը, մատնանշում է դիվահանելու միակ միջոցը՝ «այդ ազգ ոչ ելամէ իւիք՝ եթե ոչ պահօք և աղօթիք»:<sup>6</sup>

«Աղօթում են նաև տարբեր առիթներով և խաչակնքումով, փոշտակիս՝ կարծելով, որ կարող են խուժել մարմնի մեջ»:<sup>7</sup>

<sup>4</sup> Մ.Աբեղյան, Երկեր, հ. Ե, էջ 89:

<sup>5</sup> Եղջ Աղանդոց, աշխատասիրությամբ Ա.Ա.Արրահամյանի, էջ 81:

<sup>6</sup> Մատթ. ԺԵ, 20, Սարկ, Թ, 29:

<sup>7</sup> Եր.Լալանան, ԱՅ, գ.Ա., 1895, գ.Բ., 1987:

Երկրորդ՝ սատանա կամ դեկան:

Եզնիկն այս կապակցությամբ մատնանշում է, որ դեկը՝ Սատանան, առանց Աստծու թույլտվության, մարդու մեջ մտնելու իրավունք չունի, և մեջ է բերում Աստվածաշնչի խոսքը Յուղայի վերաբերյալ, թե Սատանան պատահի հետ մտնում է նրա մեջ: Եվ հայտնում է, որ ճշմարիտ հավատացյալներին ոչ սատանան կարող է մոլորեցնել փորձություններով, ոչ էլ կախարդները՝ դևերով:<sup>8</sup>

Ըստ Եզնիկի՝ հրեշտակը և դեկը երկուսն էլ կոչվում են ոգի, բայց առաջինը սպասավոր ոգի է, իսկ Երկրորդը՝ չար ոգի: Եզնիկի այս բացատրության չափանիշը հնագանդ ու կամակատար լինելը, կամ հակառակը՝ անհնագանդ ու ապստամբ<sup>9</sup> լինելն է: Կողքացու այս խոսքը փոխարերաբար ակնարկում է բոլոր հրեշտակների հնագանդվելու, իսկ Սատանայի՝ անհնագանդվելու մասին:<sup>10</sup>

Երրորդ՝ դեկը որպես մարդու չարացած հոգին:

Եզնիկը հիմնվելով Աստծո խոսքի վրա, դիվահարից դեկին հանելու միակ միջոցը համարում է պաս պահելն ու աղոթելը, որի շնորհիվ մարդն արժանի է լինում սուրբ հոգու շնորհներին:<sup>11</sup> Ակնհայտ է, որ պաս պահելու և աղոթելու ամենակարևոր հետևանքը հոգու սրբությունն է: Այստեղ Եզնիկի նպատակը «դեկ հանելուց» հենց մարդկային չարացած և դեկ դարձած հոգին է, և նրա դեկ դառնալու պատճառը Եզնիկը տեսնում է մարդու անձնիշխանության մեջ:

Եզնիկը խոսում է նաև հրեշտակների և մարդկանց հոգիների նման անմարմին դևերի մասին,<sup>12</sup> որոնք ոչ ծնունդով ավելանում են, ոչ էլ մահով նրանց թիվը պակասում է: Այս կարգի դևերը հաստատ չեն կարող մեր բաժանմունքի առաջին կարգի՝ ժողովրդական երևակայական դևերի շարքում գտնվել, որոնց գոյությունը Եզնիկը նախօրոք հերքել է. այստեղ Եզնիկը, տվյալ դևերին հրեշտակների և մարդկային հոգիների հետ մի շարքում տեղադրելով և

<sup>8</sup> Եղջ Աղանդոց, 1994, էջ 71:

<sup>9</sup> Դ.Ամայանի, «Բարգիրք Յայոց»-ում, (Եր., 1975, էջ 77), դեկ բառը թարգմանվում է «անհնագանդ ու ապստամբ»: Ամայանի աղբյուրում դեկ բառի թարգմանության համար, անշուշտ, եղել է «Եղջ Աղանդոց»-ը:

<sup>10</sup> Եղջ Աղանդոց, 1994, էջ 75:

<sup>11</sup> Անդ, էջ 68:

<sup>12</sup> Եղջ Աղանդոց, էջ 75:

համեմատելով, հաստատում է այս կարգի դևերի գոյությունը և նրանց անմարմին լինելու հանգամանքը: Եզնիկը, մեջբերելով Աստվածաշնչի խոսքերը, նշում է նաև հրեշտակների և նրանց սպասավորների որպիսությունը, որը մի ուրիշ փաստ է այս կարգի դևերի գոյության վերաբերյալ:

Հրեշտակների մասին Գիրքն ասում է՝ «...իր հրեշտակներն ստեղծեց որպես հոգիներ,<sup>13</sup> իսկ իր սպասավորներին՝ (իսլամ. Զիններ) կրակի բոցերից»:<sup>14</sup>

<sup>13</sup> Ա.Արքահամյան, Եղծ աղանդոց, էջ 75, հնմտ. Ըստ իսլամական վարդապետության հրեշտակները լուսից-«նուր»-ից են ստեղծվել:

<sup>14</sup> Ըստ իսլամական վարդապետության Զինները կրակի բոցից-«նար»-ից են ստեղծվել:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԻ	Արվեստի ինստիտուտ
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԺԱԹ	Ժողովրդական արվեստի թանգարան
ՀԱԹ	Հայաստանի ազգագրության թանգարան
ՀԱԻ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՊԹ	Հայաստանի պատմության թանգարան
ՀՑԻԹ	Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան
Մ	Մատենադարան
ИАЭ	Институт Археологии и Этнографии

## Բովանդակություն

<b>Դարությունամ Սարգիս, Յայ Եկեղեցու, հայագիտության և ազգային մշակույթի անխոնջ նվիրյալը</b> .....	5
<b>Արքահամյան Հևոն, Բավիղ-լաբիրինթոս. արտավազյան առասպելը Կովկաս-Առաջավորասիական համատեքստում..</b>	13
<b>Ավանեսյան Լիյա, Օժիտի գորգերի ու կարպետների արական և իգական սկիզբ խորհրդանշող մի քանի պատկերի քննություն</b> .....	19
<b>Գարրիելյան Միհրար., Դարայան Արտակ., Սարգսյան Դամլետ, Շուշիում վերաբնակված ընտանիքների կառուցվածքը 1996-2000թթ.</b> .....	25
<b>Գալստյան Միհրան, Օրենքի հիմնախնդիրները հասարակական համագործակցության համատեքստում.....</b>	31
<b>Դալայան Տորք, Օսական Վարիսագի և հայկական Վահագնի մասին</b> .....	37
<b>Долженко Ирина, Современное состояние религиозных общин молокан Армении.....</b>	40
<b>Զաքարյան Եվա, Ոսկերիչը հայկական հերիաքններում .....</b>	45
<b>Իսրայելյան Աստղիկ, «Կապն» ու «կոխը» հայոց ժողովրդական հավատալիքներում.....</b>	51
<b>Խաչատրյան Ռախիս, Յայ ժողովրդական գովք-ձոներգերի կառուցվածքատիպարանական վերլուծության փորձ .....</b>	58
<b>Худавердян Анаит, Искусственная деформация черепов из антропических погребений Ширакской равнины .....</b>	65
<b>Դայրապետյան Թամար, Յայ բանահյուսությունն ու ազգագրությունը «Բիւրակն»-ի էջերում.....</b>	73
<b>Դորոյան Սուրեն, «Այգին» միջնադարյան հայերեն վիմագրերում..</b>	80
<b>Մարգարյան Նիկոլ, Անձնանունների ընտրության մոտիվները .....</b>	86

<b>Մարկոսյան Արտակ,</b> Արտագաղթը Հայաստանից 1996-2001թթ. ....	93
<b>Մարության Դարություն,</b> Սգո Երթերը, անմեղ զոհերի հիշատակի օրերը որպես ժողովրդական հավատալիքների դրսևորման ձևեր .....	98
<b>Մկրտչյան Սամվել,</b> Մեղրեցիների տոնածիսական վարքագծային փոփոխությունները վերջին հարյուրամյակում .....	103
<b>Պետրոսյան Արմեն,</b> Կորդվաց լեռը տարածաշրջանի հին ժողո- վուրդների տիեզերածնության և նարդածնության առաս- պելների կենտրոն .....	108
<b>Պիկիչյան Դոհիսիմե,</b> Երաժշտությունը հայոց ժամանակակից թաղման ծեսում .....	112
<b>Պողոսյան Սվետլանա,</b> Մեղրու ավանդական տարագի տոնա- ծիսական համալիրը .....	120
<b>Սահակյան Արծրունի,</b> Վրաց դարձի պատմության հերոսուհու անվանաբանությունը .....	126
<b>Սարգսյան Աննայա,</b> Փայտե չարխավիան պահպանակները հայոց ավանդական ծիսակարգում .....	131
<b>Սեղրոսյան Կարլ,</b> Շիրակի արհեստները XX-ից XXI դար անցման ժամանակաշրջանում .....	137
<b>Սվագյան Վերժիմե,</b> Հայոց ցեղասպանության ականատես-վկա- ների հուշերի ժամրային-տիպաբանական յուրահատ- կությունները .....	142
<b>Ստեփանյան Արմենուիկի,</b> Հայրենադարձների ու տեղացիների փոխընկալման լեզվական դրսևորումները .....	147
<b>Варданян Լулия,</b> Собирательско-полевая деятельность С.Д.Лисицына в 1920-е гг. ....	153
<b>Վարդանյան Սվետլանա,</b> Գևորգ Տեր-Ալեքսանդրյանց (1840-1890) .....	158
<b>Վարդումյան Արփի,</b> Հայկական և բյուզանդական հոգևոր եղանակները աղերսները .....	164
<b>Վարդումյան Դերենիկ,</b> Խաչիկ Սամվելյան .....	168

<i>Օհամջամյան Ռուբեն, Ընտանեկան բռնություններին վերաբերող</i> հարցեր .....	172
<i>Մոհամմադ Մալեք-Մոհամմադի, Եգիսիկ Կողըացու «Եղծ Աղանդոց»- ում վկայված դևերի և առասպելական էակների դասակարգ- ման փորձ .....</i>	177
<b>Դապավումներ .....</b>	<b>182</b>

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹ

XII

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՔԻ  
ՆՅՈՒԹԵՐ

Յամակարգային շարվածքը կատարվել է Յնագիտության և  
ազգագրության ինստիտուտում

Զնակումը՝ Ա.Սարգսյան

Ստորագրված է տպագրության 2004թ.  
Տառատեսակ «Arial Armenian», «Arial LatRus»:  
11.5 տպագրական մամուլ  
Տպաքանակը՝ 200, գինը՝ պայմանագրային

ԳԱԱՀԻՄՆԱՐԴԱՐ Գիտ. Գրադ.



220089863

A  
II  
89863